ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Գիտական հոդվածների ժողովածու

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2024

ՀՏԴ 93/94:070
ԳՄԴ 63+76.0
Հ 140

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ գիտական խորհուրդը:

Կազմողներ և խմբագիրներ՝
պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյան
պ.գ.թ., դոցենտ Տիգրան Ղանալանյան

Գրախոսներ՝
պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Հայրունի
պ.գ.դ., պրոֆեսոր Աշոտ Ներսիսյան

Գիտական հոդվածների սույն ժողովածուն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍՆ գիտության պետական կոմիտեի դրամաշնորհային մրցույթի արդյունքում ֆինանսավորման երաշխավորված «1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը 1920-1940-ական թթ. հայկական մամուլում», ծածկագիր 21T-6A269 (10.10.2021 – 10.10.2024) թեմայի շրջանակներում, հեղինակային խմբի կողմից (գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Է. Մինասյան, անդամներ՝ պ.գ.թ., դոցենտներ Մ. Գաբրիելյան, Հ. Մխոյան, Տ. Ղանալանյան):

Հ 140 1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը հայկական մամուլում: Գիտական հոդվածների ժողովածու.- Եր.: ԵՊՀ հրատ., 2024.- 238 էջ:

«1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը հայկական մամուլում» հոդվածների ժողովածուն ներառում է ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից ֆինանսավորվող 21T-6A269 ծածկագրով «1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը 1920-1940-ական թթ. հայկական մամուլում» դրամաշնորհի շրջանակում կատարված ուսումնասիրությունները: Հոդվածներում ուսումնասիրվում է Թիֆլիսի «Մշակ», Երևանի «Յառաջ», Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայն-Ժամանակ», Ալեքսանդրիայի «Արև», Բոստոնի «Հայրենիք» թերթերում պատերազմին ու դրան առնչվող իրադարձությունների լուսաբանումը: Ուշադրություն է դարձվում տեղեկատվության աղբյուրների, հասարակական ակնկալիքների, ապատեղեկատվության շրջանառության, պատերազմում պարտության մեղավորների ու այլ հանգամանքների վրա: Հոդվածների ժողովածուն նախատեսված է պատմաբանների ու ընթերցող լայն հանրության համար:

ՀՏԴ 93/94:070
ԳՄԴ 63+76.0

ISBN 978-5-8084-2685-6
https://doi.org/10.46991/YSUPH/9785808426856

© ԵՊՀ հրատ., 2024
© Կազմողների համար, 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ..... 5
Է. Գ. Մինասյան, Վ. Ի. Մենկովսկի, Մ. Ռ. Գաբրիելյան,
Հ. Խ. Մխոյան, Տ. Հ. Ղանալանյան
1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ 9
Էդիկ Մինասյան, Հայկ Մխոյան
ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ
(1920 Թ. ՄԱՅԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ) 29
Էդիկ Մինասյան
«ՄՇԱԿ» ԹԵՐԹԸ 1920 Թ. ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ
ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՄԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ 48
Էդիկ Մինասյան
1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ
ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ..... 68
Էդիկ Մինասյան
1920 ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ
«ՄՇԱԿԻ» ԷՋԵՐՈՒՄ.....94
Հայկ Մխոյան
1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ
ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ «ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ-ԺԱՄԱՆԱԿ»
ԹԵՐԹՈՒՄ 124
Տիգրան Ղանալանյան
1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ «ԱՐԵՒ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ 137
Տիգրան Ղանալանյան
1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ԲՈՍՏՈՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ.....189

ԱՌԱՋԱԲԱՆ

Հոդվածների սույն ժողովածուն ներառում է գիտական այն հոդվածները, որոնք պատրաստվել են ՀՀ բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ 21 T-6 A269 ծածկագրով («1920 թ. թուրք-հայկական պատերազմի արտացոլումը 1920-1940-ական թթ. հայկական մամուլում») գիտական թեմայի հետազոտության արդյունքում: Թեմայի շրջանակում հետազոտություն իրականացնող խումբը (ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյան, անդամներ՝ պ.գ.թ. թեկնածուներ, դոցենտներ Մխիթար Գաբրիելյան, Հայկ Մխոյան և Տիգրան Ղանալանյան) պատրաստել է ու ՀՀ ԲՈԿ-ի թույլատրելի ամսագրերում («Բանբեր Հայագիտության», «Պատմություն և մշակույթ», «Մ. Մաշտոցի անվան համալսարանի լրատու»), ինչպես նաև միջազգային գիտատեղեկատվական շտեմարաններում ընդգրկված Բելառուսի պետական համալսարանի «Պատմություն» ամսագրում հրատարակել 6 գիտական հոդված: Հ. Մխոյանի «1920 թ. թյուրք-հայկական պատերազմի արձագանքները Կոստանդնուպոլսի «Ժողովուրդի ձայն-ժամանակ» թերթում և Տ. Ղանալանյանի «1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում» հոդվածները հրատարակվում են առաջին անգամ:

Թեմայի ուսումնասիրության կարևորությունն ու արդիականությունը բացատրվում են այդ իրադարձությունների 100 տարի անց նման դեպքերի կրկնման հանգամանքով, անցյալի պատմությունից դասեր քաղելու հրամայականով: Տվյալ ժամանակահատվածում հետազոտվող հայկական պարբերականներում զետեղված նյութերի ուսումնասիրությունն ու դրանց վերլուծությունները միանգամայն նոր լույս են սփռում հիմնահարցի հանգամանալից հետազոտության վրա:

Հոդվածում քննական վերլուծության են ենթարկում քեմալական Թուրքիայի կողմից Հայաստան Հանրապետության դեմ հարձակման նախապատրաստական աշխատանքները, ինչպես նաև

սահմանային բախումների կազմակերպման, ընդհանուր հարձակման, ռազմական գործողությունների ընթացքի, հայկական բանակի պարտության պատճառների, քեմալա-բոլշևիկյան դաշինքի արդյունքում Հայաստանի տարածքների բաժանման և Հայաստանի խորհրդայնացման հիմնախնդիրները, որոնց լայնորեն անդրադարձել են հայկական պարբերականները և հատկապես «Մշակ», «Յառաջ», «Ժողովուրդի ձայն-ժամանակ», «Արև», «Հայրենիք» թերթերը, որոնք հանգամանալից ու արժեքավոր մանրամասներ են պարունակում վերոնշյալ իրադարձությունների վերաբերյալ:

Պարբերականներում զետեղված նյութերն ու դրանց վերլուծությունները հնարավորություն են տալիս կատարելու եզրակացություններ՝ նաև այսօրվա իրողություններից ելնելով: Այդ թերթերի նյութերի քննությամբ ցույց է տրվում, թե ինչպես Թուրքիայում 1919 թ. կեսերից ծավալված միլլի (ազգայնական) շարժման առաջնորդ Մ. Քեմալի ղեկավարությամբ 1920 թ. փետրվարից նախապատրաստական աշխատանքներ էին ընթանում՝ Հայաստանի Հանրապետության դեմ հարձակում կատարելու համար: Բոլշևիկյան Ռուսաստանի ու Քեմալական Թուրքիայի շահերի համընկնմամբ տեղի է ունենում այդ երկու երկրների մերձեցումը, որի զոհերից մեկը պետք է դառնար Հայաստանը: Հոդվածներում փորձ է արվում հիմնավորելու, որ հնարավոր չէր խուսափել պատերազմից, քանզի այն կախված չէր միայն Հայաստանի իշխանությունների կամքից, այլ թելադրվում էր քեմալականների հռչակած «Ազգային ուխտի» զավթողական ծրագրով, որին իր հեռագնա շահերի թելադրանքով, մեծ գումարով (ոսկով) և զենք-զինամթերքով օգնում ու օժանդակում էր Խորհրդային Ռուսաստանը՝ հույս ունենալով, որ ա) իբր թե քեմալական Թուրքիայի աջակցությամբ մուսուլմանական արևելքում համաշխարհային հեղափոխության ու սոցիալիզմի հաղթարշավը կտարածի, բ) Արևմուտքի իմպերիալիզմի (Անտանտի) դեմ միասնաբար կպայքարեն: Հոդվածներում համապատասխան նյութերի վերլուծությամբ բացատրվում են խորամանկ պետական գործիչ ու դիվանագետ Մ. Քեմալի նպատակները, որը, նախապատրաստելով

հարձակումը Հայաստանի Հանրապետության դեմ, խնդիր էր դրել պատռելու հայության համար նվիրական Սևրի պայմանագիրը՝ ջախջախիչ պարտության մատնելով դեռևս անփորձ հայկական բանակը, կործանելու միջազգայնորեն ճանաչված Հայաստանի Հանրապետությունը, դաշնակցելով Խորհրդային Ռուսաստանի հետ՝ բռնազավթելու ու իրար միջև բաժանելու ՀՀ տարածքները՝ մի մասը կցելով Թուրքիային, մյուսը՝ Խորհրդային Ռուսաստանին՝ մաս հանելով նաև ցեղակից Ադրբեջանին, շարունակելու երիտթուրքերի ցեղասպան քաղաքականությունը արդեն արևելահայության նկատմամբ:

Ցույց է տրվում, թե ինչպես նշված խնդիրներն իրագործելու համար Մ. Քեմալը կարողանում է սահմանային բախումներ հրահրել Հայաստանի դեմ, կազմակերպել թուրք-թաթարական խռովություններ, համագործակցել մահմեդական ազգաբնակչության ու Ադրբեջանի հետ, դիվանագիտորեն մեկուսացնելով Հայաստանի Հանրապետությանը, չեզոքացնելով Անտանտի երկրներ Անգլիային ու Ֆրանսիային, ապահովելով Վրաստանի չեզոքությունը, դաշինք կնքելով բոլշևիկյան Ռուսաստանի հետ՝ ռազմարշավ ձեռնարկել Հայաստանի դեմ:

Հայկական պարբերականներում զետեղված նյութերի վերլուծությամբ ներկայացվում են պատերազմի ընթացքը, թշնամու կողմից Սարիղամիշի, Կարսի, Ալեքսանդրապոլի գրավումը, բանակցությունների ընթացքն ու ավարտը հայկական բանակի պարտության պատճառները, Հայաստանի Հանրապետության թույլ տված սխալներն ու ռազմադիվանագիտական ձախողումները, որոնց պատմական փորձերի ու դասերի առումով կարող են ուսանելի լինել մեր նոր սերնդին՝ ներկայիս անվտանգության, հայկական բանակի այսօրվա ու վաղվա մարտունակության բարձրացման հեռանկարի իմաստով: Ուղիղ մեկ դար առաջ տեղի ունեցած պատմական այս իրադարձությունները շատ կողմերով արդիական են մեր ժամանակներում, քանզի ժամանակակից Թուրքիայի անմիջական օժանդակությամբ ու օգնությամբ ցեղակից, հարևան Ադրբեջանը 2020 թ.

սեպտեմբերի 27-ին սանձազերծեց 44-օրյա պատերազմը Արցախի Հանրապետության դեմ: Այն ընթացավ նույն կերպ, ինչ 100 տարի առաջ էր: Հայաստանի Հանրապետությունն ու Արցախը հայտնվեցին մեկուսացման մեջ, և թուրք-ադրբեջանական ուժերը կարողացան հաղթանակ տանել ու բռնազավթել Արցախի ազատագրված տարածքները, նաև Շուշին ու Հադրութը, դեռ ավելին՝ 2023 թ. սեպտեմբերի ռազմական ուժով բռնազավթել Արցախը, հայաթափել այն, ռեալ սպառնալիք ստեղծել ՀՀ-ի համար՝ նրա սահմաններում՝ Ջերմուկի ու հարակից տարածքներում ռազմական գործողություններ սկսելով: Դրա վկայությունն է ադրբեջանցիների կողմից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի ու Սյունիքի մարզերի որոշ հատվածներում ադրբեջանական զորք ապօրինի մտցնելը և մինչ օրս նրանց ներկայությունը այնտեղ: Այս համատեքստում խիստ արդիական է թեմայի ուսումնասիրությունը, քանզի 100 տարի առաջվա նույն դեպքերն ու իրադարձությունները կարծես կրկնվում են մեր օրերում, ուստի անհրաժեշտ է դասեր քաղել պատմությունից՝ նախկին սխալները չկրկնելու համար:

Սույն ժողովածուում զետեղված հոդվածների վերլուծություններն ու եզրակացությունները մեծապես կօգնեն հետագա հետազոտողներին ճիշտ եզրահանգումներ կատարելու առումով:

Էդիկ Մինասյան
պ.գ.դ., պրոֆեսոր,
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ

Է. Գ. Մինասյան, Վ. Ի. Մենկովսկի, Մ. Ռ. Գաբրիելյան,
Հ. Խ. Մխոյան, Տ. Հ. Ղանալանյան

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ[1]

Բանալի բառեր՝ *Սևրի պայմանագիր, Հայաստանի առաջին հանրապետություն, Թուրքիա, Խորհրդային Ռուսաստան, ռուս-թուրքական հարաբերություններ, Քեմալական շարժում:*

Ուսումնասիրվում է 1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հայկական մամուլում: Երևանի «Յառաջ», Թիֆլիսի «Մշակ», Ալեքսանդրիայի «Արև» և Բոստոնի «Հայրենիք» թերթերի 1920 թ. օգոստոս-1921 թ. փետրվար ժամանակահատվածում հրատարակված համարների բովանդակային վերլուծությունը թույլ է տալիս պարզել հայկական հասարակական-քաղաքական, նաև ժողովրդական շրջանակներում եղած պատկերացումներն ու ակնկալիքները թուրք-հայկական հարաբերությունների հնարավոր զարգացումների ու արդեն ընթացող պատերազմական գործողությունների վերաբերյալ: Ցույց է տրվում, որ հայկական քաղաքական վերնախավի մոտ առկա էր սեփական ուժերի գերագնահատում ու քեմալական Թուրքիայի հնարավորությունների թերագնահատում, ինչը մեծապես ազդեց կայացված քաղաքական որոշումների վրա: Ժամանակակից հայկական մամուլում լայնորեն քննարկվում էր նաև Խորհրդային Ռուսաստանի աջակցությունը Թուրքիային, Հայաստանի դաշնակից արևմտյան պետությունների անգործությունը:

Ընդդիմադիր մամուլը մեղադրում էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը ստեղծված իրավիճակի համար: Մյուս կողմից ՀՅԴ պարբերականները ջանում էին ցույց տալ, որ վճռորո-

[1] Առաջին անգամ հրատարակվել է՝
Minasyan E., Menkouski V., Gabrielyan M., Mkhoyan H., Ghanalanyan T., Reporting of the 1920 Turkish-Armenian War in the Armenian press, «Журнал Белорусского государственного университета. История», 2024, N 3, Минск, Белорусский государственный университет, pp. 41-48:

շը արտաքին գործոններն էին ու պատերազմում պարտությունը, փաստորեն, անխուսափելի էր: Հատկապես սփյուռքահայ մամուլը տեղեկատվություն ստանում էր էական ուշացմամբ ուստի երկար ժամանակ շրջանառվում էին հնացած, իսկ հաճախ նաև իրականությանը չհամապատասխանող լուրեր: Այդպիսի ամենահիշարժան օրինակներից է Կարս քաղաքը հայերի կողմից հետ գրավելու մասին տեղեկատվությունը:

Պատերազմին ժամանակակից հայկական մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ թե՛ Հայաստանի Հանրապետության կառավարությունը, թե՛ նրան ընդդիմադիր հիմնական ուժերը քաղաքական հաշվարկների հիմքում դնում էին ոչ թե տարածաշրջանային ու միջազգային դրության ադեկվատ գնահատումը, կատարում իրադարձությունները կանխատեսելու փորձեր, այլ գերազանցապես առաջնորդվում էին ցանկալին իրականի տեղ ընդունելով: Հենց նաև այդ պատճառով պատերազմի աղետալի հետևանքները սառը ցնցուղի ազդեցություն ունեցան հայ հանրության համար:

Ներածություն

Հայ-թուրքական հարաբերությունները սկզբունքային նշանակություն ունեին Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում (28.05.1918-02.12.1920): Հենց Օսմանյան կայսրությունը դարձավ առաջին պետությունը, որը ճանաչեց Հայաստանի անկախությունը 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով: Սակայն թե՛ պայմանագրի դրույթները, թե՛ հայ-թուրքական հարաբերությունների նախընթաց զարգացումները, այդ թվում՝ Հայոց ցեղասպանությունը [1], չէին կարող նպաստել երկու պետությունների միջև իրավահավասար ու ինքնիշխան հարաբերությունների ձևավորմանը: Դրան գումարվում էր այն հանգամանքը, որ այդ պահից սկսած մինչև 1918 թ. հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարը Թուրքիան դարձավ տարածաշրջանում գերիշխանություն ունեցող պետություն: Վերջինս, օգտվելով Ռուսաստանում տիրող իրավիճակից, ձեռնամուխ եղավ Հարավային

Կովկասում ուժերի այնպիսի հարաբերակցության ստեղծմանը, որը սկզբունքորեն հակասում էր Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության ու կենսունակ պետություն ունենալու ձգտումներին: Այնուամենայնիվ, այլ ելք չունենալով՝ տարածաշրջանում ուժի հիմնական կենտրոն Ռուսաստանի ըստ էության բացակայության պայմաններում ՀՀ ղեկավարությունը ստիպված էր համակերպվել իրավիճակին:

Դրությունը սկզբունքորեն փոխվեց Մուդրոսի զինադադարից հետո՝ Օսմանյան կայսրությունը դարձավ պարտված պետություն, որը ստիպված էր զորքերը դուրս բերել 1914 թ. գոյություն ունեցած ռուս-թուրքական սահմաններից: Մեծ տերություններից տարածաշրջանում գերիշխող դիրք զբաղեցրեց Մեծ Բրիտանիան: Սա մի ժամանակաշրջան էր, երբ աշխարհի քաղաքական կարևորագույն օրակարգը ձևավորվում էր Փարիզում՝ 1919 թ. հունվարին գումարված խաղաղության կոնֆերանսում: Հայերի հույսերը ևս անմիջականորեն կապված էին խաղաղության կոնֆերանսից: Միգուցե դրա արտահայտություն կարելի է համարել, այն որ նրանք մեկի փոխարեն երկու պատվիրակություն ուղարկեցին մասնակցելու դրան: Դրանցից մեկը ներկայացնում էր Հայաստանի Հանրապետությունը՝ Ավետիս Ահարոնյանի գլխավորությամբ, իսկ մյուսը ղեկավարում էր նշանավոր եգիպտահայ գործիչ Պողոս Նուբար փաշան (ում հայրը՝ Նուբար Նուբարյանը եղել էր Եգիպտոսի առաջին վարչապետը), որը հանդես էր գալիս արևմտահայության անունից:

Հարյուր հազարավոր հայեր Ռուսական կայսրության բանակների կազմում մասնակցել էին Օսմանյան կայսրության դեմ պատերազմին: Բացի այդ՝ մոտ 10 հազար կամավորներ էին միացել վերջիններիս: Կամավորական լեգեոն սփյուռքահայերը ձևավորել էին նաև ֆրանսիական բանակի կազմում, որը կրել է Արևելյան, ապա՝ Հայկական անունները: Թե՛ հայ քաղաքական շրջանակները, թե՛ Անտանտի պետությունները հայերին համարում էին դաշնակիցներ, որոնք կրել են ահռելի կորուստներ Առաջին աշխարհամարտի հետևանքով, ուստի այժմ պետք է ստանան փոխհատուցում ու խաղաղության կոնֆերանսը պետք է ընդառաջի նրանց դիմումներին:

Ակներև էր, որ նոր աշխարհում պետք է գոյություն ունենա անկախ հայկական պետություն, որի կազմում պետք է գտնվեին Օսմանյան կայսրության մեջ մտնող հայկական վիլայեթները, որոնց պետք է միանար նաև Ռուսահայաստանը (միգուցե այդ պետության մեջ կներառվեր նաև Կիլիկիան):

Ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, այս ակնկալիքները, դրանց արդարացի լինելու մեջ աներեր հավատը, հայ քաղաքական գործիչներին թույլ չտվեցին իրատեսորեն գնահատել տարածաշրջանում կատարվող վճռական տեղաշարժերը, ինչը ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի Հանրապետության համար: Մասնավորապես չափազանց վճռական նշանակություն ունեցավ Մուստաֆա Քեմալի գլխավորած միլլի շարժումը, որն ամեն ինչ արեց Թուրքիայի մասնատումը հնարավորին չափ կանխելու ու արևմտահայկական գավառները Հայաստանի Հանրապետությանը փոխանցելը բացառելու ուղղությամբ: Մյուս կողմից շուտով Քեմալի ու Ռուսաստանի բոլշևիկյան ղեկավարության միջև հաստատվեց սերտ համագործակցություն, որն ուղղվեց նաև Հայաստանի դեմ: Սեպտեմբերի 8-ին Էրզրում հասավ Ռուսաստանից որպես օգնություն ուղարկված 200 կիլոգրամ ոսկին: Արդեն սեպտեմբերի 20-ին Մուստաֆա Քեմալը ստորագրեց Հայաստանի վրա հարձակման հրամանը: Հարձակումը սկսվեց սեպտեմբերի 28-ին [2, էջ 75-76]:

Միաժամանակ Հայաստանի արևմտյան դաշնակիցներից որևէ մեկը գործնական քայլեր չկատարեց օժանդակելու Արևմտյան Հայաստանի ազատագրությանը, դրանում գտնվող թուրքական զորքերի զինաթափմանը, հայերի հայրենադարձության կազմակերպմանը: Չնայած վերոնշյալ հարցերի վերաբերյալ հարյուրավոր, գուցե հազարավոր, փաստաթղթաշրջանառված գրությունների առկայությանը՝ Անտանտի պետությունների դիվանագիտական ներկայացուցչությունների արխիվներում՝ հարցը մնաց չլուծված:

Հայաստանը որպես թուրք-հայկական սահմանի որոշման միակ տարբերակ ընդունում էր Սևրի պայմանագիրը, իսկ Քեմալի կառավարությունը ոչ մի դեպքում այն չէր ճանաչում: Պատերազմը

դարձավ անխուսափելի: Համոզվելով, որ արևմտյան պետությունները որևէ գործնական օգնություն Հայաստանին չեն տրամադրելու, ու կանաչ լույս ստանալով Ռուսաստանից՝ քեմալական զորքերը սեպտեմբերի վերջին ներխուժեցին Հայաստան[2]:

Մեթոդաբանություն

Հեղինակներն առաջնորդվել են պատմականության, օբյեկտիվության, համակողմանիության սկզբունքներով: Ուսումնասիրությունը կատարվել է պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ, ինչպես նաև թերթերի հոդվածների կոնտենտ-անալիզի միջոցով: Վերոնշյալ մեթոդաբանության ու փաստական նյութերի ներգրավման միջոցով հնարավոր է եղել լուծել հետազոտության առջև դրված նպատակները:

Սույն հոդվածում կփորձենք վերլուծել ոչ թե ռազմական բուն գործողությունները, պատերազմի ընթացքն ու հետևանքները, այլ դրանց արտացոլումը ժամանակակից հայկական մամուլում: Դրա քննարկումը թույլ է տալիս առավել ամբողջովին հասկանալ ժամանակի ոգին, հասարակության ու քաղաքական շրջանակների ունեցած ակնկալիքները, մտածելակերպը, ընթացիկ իրադարձությունների գնահատումը: Հետաքրքիր են տեղեկատվության աղբյուրների, ապատեղեկատվության, զանազան դերակատարների գնահատականները:

Ուսումնասիրվել են ժամանակի կարևորագույն հայկական թերթերից մի քանիսը՝ Երևանի «Յառաջ», Թիֆլիսի «Մշակ», Ալեքսանդրիայի «Արև» և Բոստոնի «Հայրենիք» թերթերի 1920 թ. օգոստոսից մինչև 1921 թ. փետրվարի համարները: Դրանք ենթարկվել են բովանդակային վերլուծության:

«Յառաջ» օրաթերթը հրատարակվել է 1919-1920 թթ. Երևանում: Այն ՀՅԴ բյուրոյի օրգանն էր, որի խմբագիրներն են եղել

---

[2] Թուրք-հայկական պատերազմի մասին [3-6]: Թուրքիայի պատմությամբ զբաղվողները հարցը հիմնականում դիտարկում են Քեմալ Աթաթուրքի գլխավորած «Անկախության համար պատերազմի» շրջանակում [7]:

Ս. Վրացյանը, Արտաշես Չիլինգարյանը (Ռուբեն Դարբինյան), Վահան Նավասարդյանը [8, էջ 34]: Թիֆլիսի «Մշակը» XIX դարավերջի և XX դարի արևելահայ իրականության կարևորագույն պարբերականներից է, որի դերակատարությունը հասարակական-քաղաքական կյանքում դժվար է գերագնահատել: Չնայած Թիֆլիսը գտնվում էր Հայաստանի Հանրապետությունից դուրս, սակայն թերթի տեղեկությունները զգալի չափով կարելի է դիտարկել որպես տեղական, քան արտասահմանյան խոսույթի համատեքստում:

Եգիպտոսն ու ԱՄՆ-ն Հայոց ցեղասպանության հետևանքով սկզբունքային հսկայական փոխակերպումների ենթարկվող ու որպես նոր համակարգ կայացող հայկական սփյուռքի կարևորագույն համայնքներից էին: Եգիպտոսի հայ համայնքը հանդիսացավ 1920-1930-ական թթ. Սփյուռքի հիմնական կենտրոններից մեկը: Միաժամանակ արտասահմանի ամենախոշոր հայկական համայնքներից մեկն ունեցող ԱՄՆ հայության կենտրոններից էր Բոստոնը[3], որտեղ հրատարակվող «Հայրենիք» օրաթերթը տասնամյակներ շարունակ հայկական ամենաազդեցիկ պարբերականներից էր:

Քաղաքական տեսանկյունից «Յառաջն» ու «Հայրենիքը» ՀՀ-ում իշխող ՀՅԴ օրաթերթեր էին, «Մշակը»՝ չեզոք, իսկ «Արևը» ժամանակի հայ իրականության ՀՅԴ-ին ընդդիմադիր ամենախոշոր ուժի՝ Ռամկավար կուսակցության ու վերջիններիս փաստացի առաջնորդ Պողոս Նուբարի տեսակետներն արտահայտողն էր:

Պատերազմի նախօրյակը

Սևրի պայմանագրի առաջ բերած ոգևորությունը շլացնում էր տարածաշրջանում տեղի ունեցող իրադարձությունները դիտարկող հայ քաղաքական գործիչների աչքերը: Դրա արտացոլումն էր հայկական մամուլում պայմանագրով Հայաստանին միացվելիք տարածքների սահմանափակ լինելու քննադատությունը: Օրինակ՝

[3] Լոս Անջելեսը ԱՄՆ հայության կարևորագույն կենտրոնը պետք է դառնար միայն XX դարի երկրորդ կեսին:

«Արևի»՝ 1920 թ. օգոստոսի 13-ի Սևրի պայմանագրի մասին ծանուցող առաջին հոդվածում գրված էր, որ ի տարբերություն հույների՝ հայերը չեն կարող շատ խանդավառվել, նախ քանի որ շատ մեծ գին վճարեցին տրվածի համար, և հետո դրա կարևոր մասը միայն դաշնագրով է հայերինը, ու դեռ նոր զոհողություններ պետք կլինեն՝ վերջնականապես այդ տարածքներին տիրանալու համար: Հույս էր հայտնվում, որ հույները կխորանան Անատոլիայում դեպի Անկարա ու Սվազ: Արձանագրվում էր, որ դարերի մեծ երազն է իրականանում, անթիվ զոհերը իզուր չէին: Մնում էր Կիլիկիայի հարցը[4]:

Օվկիանոսից այն կողմ՝ Բոստոնի «Հայրենիքի» էջեր այդքան սպասված պայմանագրի ստորագրման լուրը հասավ երկու օր անց՝ հենց այն ստորագրողի՝ ՀՀ պատվիրակության ղեկավար Ավետիս Ահարոնյանի խոսքերով. «Յանուն Հայաստանի Հանրապետութեան ստորագրեցի Թուրքիոյ հետ Խաղաղութեան Դաշնագիրը, որ կը նուիրագործէ Միացեալ Հայաստանի անկախութիւնը: Այս գերագոյն ժամուն, որ հայ ազգին առջեւ կը բանայ ազատութեան եւ յառաջադիմութեան նոր դարագլուխ մը, յուզմունքով կը վերյիշենք յիշատակը բոլոր անոնց, որոնք ընկան հայրենիքին համար»[5]:

Այս ընթացքում ակներև է հայկական բանակի ուժը գերագնահատելու ու քեմալական ուժերը թերագնահատելու մղումը: Դեռ օգոստոսի 5-ին «Հայրենիքը» մեջ է բերում Կ. Պոլսի «Ճակատամարտ» թերթին Ա. Խատիսյանի տված հարցազրույցից հատված. «Կարելի չէ մեր զօրքը տեսնել եւ չը խանդավառուիլ: Երկու ամբողջ տարիներ կէս-մերկ էր ու կէս-անօթի, բայց ամէն օր յաղթեց այն: Բոլորը վառուած են հայրենիքի սիրով, եւ յաղթելու հաւատքով: Ու հիմա որ անոր պակասները լրացուած են մեծ չափով, դուք վաղը պիտի տեսնեք թէ ի՛նչ կ՚արժէ Հայաստանի բանակը»[6]: Նույն ոգով է հանդես գալիս Նյու Յորքի հայ համայնքի մոտ 400 ներկայացու-

---

[4] Մ.Ս.Կ., Թրքական դաշնագրին ստորագրումը, «Արեւ», 13.08.1920, էջ 1:

[5] Ա. Ահարոնեան, Հայ-Թրքական Դաշնագիրը Ստորագրուած Ահարանեան կ՚ստորագրէ Հայաստանի Հանրապետութեան կողմէն, «Հայրենիք», 15.08.1920, էջ 1:

[6] Հայաստան եւ իր դրացիները Հայրենիքը պէտք ունի իր բոլոր զաւակներուն Զօրքը մեր յոյսերուն կռուանն է, «Հայրենիք», 05.08.1920, էջ 2:

ցիչների հետ հանդիպման ժամանակ՝ օգոստոսի 8-ին Հայաստանի Հանրապետության առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին. «...Կռի՛ւ, անվերջ կռի՛ւ, ցարդ մերոնք յաղթող են, պատերազմի մէջ ան՝ յաղթական դուրս կուգայ, որ տեւականօրէն կը կռուի, մենք պիտի կռուինք մինչեւ վերջնական յաղթանակ: Երկու երիտասարդ զաւակներ զոհ տուի, կայ երրորդը, ան եւս կը ծառայէ հայ բանակին մէջ, պէտք է երթալ ու կռուիլ, ամէնքիս պարտքն է այդ»[7]:

Մեկ դարի հեռավորությունից աներևակայելի անիրատեսական է հնչում Ավետիս Ահարոնյանի հայտարարությունը, որը հրատարակվում է պատերազմի նախօրյակին. «Ինչպէս ասացի թուրք վարիչների իմաստութենից է կախուած ժամ առաջ իրագործելով դաշնագիրը, խուսափիլ բոլոր այն ծանր հետեւանքներից, որոնք կարող են նրանց համար կործանարար լինել: ...Հակառակ այն անլուր վայրագութեան եւ այն անասելի խժդժութիւններին, որ թուրքերը կատարեցին հայ անմեղ ժողովրդի գլխին, ես հաւատում եմ, որ եթէ թուրքերը գէթ այսուհետեւ անկեղծօրէն աշխատեն մեզ մոռցնել իրանց կատարած անորակելի անիրաւութիւնները բարի հարեւանութեամբ, հայ ժողովուրդը արդար քրտինքի, ամենօրեայ վաստակի, ազնիւ աշխատանքի հետամուտ ըլլալով կամաց կամաց պիտի ընդունի այդ հարեւանութիւնը եւ չպիտի մտածէ երբէք այսքան արիւնի արիւնով պատասխանել»[8]:

Պատերազմի ընթացքը

Այսպես է Երևանի «Յառաջը» խոսում պատերազմի մեկնարկի մասին. «Սեպտեմբերի 28-ի գիշերը տաճիկները ուժեղ հարձակման դիմեցին Փէնեակի և Բարդուսի ճակատում: Մեր զօրամասերը սաստիկ դիմադրութիւն ցոյց տալով՝ ամրացան Վերիշէնի բարձունքների վրա: Նոյն սեպտեմբերի 28-ին տաճկական խոշոր ուժեր գրոհ

---

[7] Ողջերթի սեղան մը ի պատիվ Հայաստանի անդրանիկ նախարարապետ Յովի. Քաջազնունիի եւ Վեհ. Կաթողիկոսի լիզօր Խորէն սրբազանի, «Հայրենիք», 17.08.1920, էջ 2:

[8] Պ. Ահարոնեանի Յայտարարութիւնները, «Հայրենիք», 21.09.1920, էջ 1:

տւին դէպի Կարաուրգան, որտեղից մէր զօրքերը քաշւեցին Սողանլուխ լեռնաշղթան: Թշնամու ուժեր են երևացել նաև Քարաքուրթ շրջանում: Յայտնի է դարձել, որ տաճիկների անմիջական նպատակն է կտրել Սարիղամիշ–Կարս երկաթուղին և ազատութիւնից զրկել Սարիղամիշի և Կաղզւանի շրջանի մեր զօրքերն ու ժողովուրդը»[9]: Կառավարական հաղորդագրությունից պարզ է դառնում, որ լայնածավալ գործողությունների մեկնարկից հետո հայկական հրամանատարությունը սեպտեմբերի 29-ի գիշերը դատարկել է Սարիղամիշն ու Կաղզվանը, ինչը, ըստ հայտարարության, «անակնկալներից և զոհերից խուսափելու և աւելի յարմար դիրքեր գրաւելու նպատակով» է իրականացվել[10]:

Եթե «Յառաջը» պատերազմի մասին լուրեր սկսեց տպագրել սեպտեմբերի 30-ից, ապա Ալեքսանդրիայի «Արևը» այդ մասին առաջին լուրը հաղորդեց հոկտեմբերի 8-ին[11], իսկ «Հայրենիքը»՝ հոկտեմբերի 10-ին. «Քեազիմ Գարապէքիր Փաշան բանակի մը գլուխ անցած՝ Օլթիի ուղղութեամբ կը քալէ Հայաստանի վրայ: Հայկական բանակը քաջաբար կը դիմադրէ»[12]:

Պատերազմի սկզբից մինչև ավարտ «Յառաջի» առաջին էջում է հայտնվում «Դեպի Ֆրոնտ» գլխագիրը: Թերթի շապիկին և այլ էջերի տարբեր հատվածներում կարելի է տեսնել տարբեր կոչեր, որոնք ուղղված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին թշնամիներին դիմագրավելուն: Այսպես, հենց սեպտեմբերի 30-ի և հետագա բազմաթիվ համարներում տեսնում ենք հետևյալ կոչերը. «Մեր դարաւոր թշնամին նորից ոտքի է կանգնել: Նա ծեծում է մեր դռները կարմիր դրօշակներով: Նրա նպատակն է Հայաստանը ոտքի տակ տալ եւ միանալ բոլշեւիկներին», «Ներքին դաւաճաններն էլ սպա-

---

[9] Կառավարական հաղորդագրութիւն (սեպտեմբերի 30-ին). Հայաստանի քաղաքացիներին, «Յառաջ», 01.10.1920, էջ 1:

[10] Կառավարական հաղորդագրութիւն (սեպտեմբերի 30-ին). Հայաստանի քաղաքացիներին, «Յառաջ», 01.10.1920, էջ 1:

[11] Հայկական զինուց նոր յաղթանակը, «Արեւ», 8.10.1920, 3:

[12] Քեազիմ Գարապէքիր կը յարձակի Հայաստանի վրայ Հայաստանի բանակին հերոսական դիմադրութիւնը (սեփական հեռագիր), «Հայրենիք», 10.10.1920, էջ 3:

սում են նրանց գալստեան», «Պատրաստ, հա՛յ ժողովուրդ թրքական վտանգն է գալիս», «Ով մեզ հետ չէ... մեր թշնամին է», «Մահ, ներքին թշնամիներին, մահ, թշնամուն», «Սեղմենք շարքերը, ամրապնդենք ֆրօնտը», «Ճնշել ենք բոլշևիկյան խռովությունները. պիտի յաղթենք եւ արիւնկզակ թուրքին»[13]:

Պատերազմի սկզբնական շրջանում իրադրությունը անիրատեսորեն գնահատելու մասին են վկայում ընթացող մարտերի հետևանքով Արևմտյան Հայաստանը ազատագրելու հույսերը. «Պէտք է պատրաստուել ամբողջ թափով ոչ միայն մեր թշնամուն մեր երեկուայ սահմաններից դուրս քշելու համար, այլ և մի այնպիսի վերջնական հարուած հասցնելու նրան, որ այլեւս ոչ դիմադրութիւն նա ի վիճակի չլինի մեզ ցոյց տալ նաեւ Տաճկահայաստանում: Կռիւները Սարիղամիշի, Օլթիի և Իգդիրի ուղղութեամբ պէտք է կռիւներ լինին Էրզրումի, Վանի և Բիթլիսի համար: Համաձայն այդ գերագույն նպատակի՝ պիտի լինի նաև մեր հասցնելիք հարուածի թափն ու մեծութիւնը»[14]:

Թերթերը ներկայացնում են այն ոգևորությունը, որով Հայաստանում բնակչությունը կամավոր մեկնում էր ռազմաճակատ: Օրինակ՝ «Արևը» գրում է, որ մարդիկ ոտքով գնում են Կարս, տղամարդ փողոցներում չի մնացել, բոլորը գնում են պատերազմ[15]:

Աստիճանաբար աներեր ոգևորությունը փոխարինվում է առավել սթափ գնահատականներով: Խոսելով Սարիղամիշի և Մերդենեկի ուղղությամբ հոկտեմբերի 14-ի հայկական ուժերի հարձակողական գործողությունների անհաջողության մասին՝ Կարսից ուղարկված հոդվածում եզրակացվում է. «Նախ՝ մենք տեսանք, որ թշնամին արհամարհելի չէ, ուրեմն և չափազանց ինքնավստահութեամբ նայել նրա վրա իրաւունք չունինք, նա բավական զորեղ է, փորձուած պատերազմական արուեստի մէջ, զգույշ և կշռած իր անե-

[13] «Յառաջ», Երևան, 30.09.1920, էջ 1:
[14] Խմբագրական. Դէպի վճռական հարուած, դէպի վերջնական յաղթանակ, «Յառաջ», Երևան, 10.10.1920, էջ 2:
[15] Ոգեւորութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 8.10.1920, 2:

լիքների մէջ»[16]: Փաստորեն՝ առաջին անգամ «Յառաջի» էջերում պատերազմի սկսվելուց ի վեր տեսնում ենք, որ չի թերագնահատվում թշնամին, և կոչ է արվում զգույշ գործելու հաջորդ գործողություններում, ինչը նախորդ շաբաթների ընթացքում բացակայում էր:

Տիրան Փաշալյանն էլ «Հայրենիքի» էջերում կոչ է անում ո՛չ խիստ մտահոգվել անհաջողություններով, ո՛չ էլ խիստ ոգևորվել դրական լուրերով: Նա հայկական զորքերի նահանջը մեկնաբանում է որպես ժամանակավոր մարտավարական գործողություն. «Տեղեկագրուած հայկական նահանջը, ուրեմն, ոչ այլ ինչ է, բայց եթէ առժամեայ շարժում մը դէպի ամուր ու անառիկ վայրերը»[17]:

Նոյեմբերի 10-ին «Արև» հանդեսում հանդիպում ենք ընթացող պատերազմի մեկուկես ամիսների վերլուծությանը, որում ասվում էր, թե առաջին հաջողություններին թուրքերը հասան առանց լուրջ դիմադրության հանդիպելու: Առաջին իրական ճակատամարտները տեղի ունեցան Կարսի առջև ու Իգդիրի մոտ, որոնցում հայկական բանակը հաղթող եղավ: Դրանից հետո հայկական բանակը, օգտագործելով ժամանակը՝ պատրաստվելու համար, կամավորներ հավաքելով, ըստ վերջին հեռագրերի, Սարիղամիշի ու Իգդիրի մոտ թուրքերին ջախջախել է, և այդ քաղաքները վերագրավվել են հայերի կողմից[18]:

«Յառաջը» քննադատում է նաև Հայաստանի երբեմնի դաշնակիցներին. «...Մեծ ու փոքր դաշնակիցները թողել են հային, իրենց փոքրիկ դաշնակցին թշնամիների առաջ կեանքի ու մահուան պայքարի մէջ և դիւային սառնասրտութեամբ ու անտարբերութեամբ դիտում, թէ ինչպէս մենք արիւնաքամ ենք լինում, ինչպէս հայ փոքրիկ ժողովուրդը կամաց կամաց բնաջնջւում է»[19]: Մեծ քննադատության հատկապես արժանանում էին Ֆրանսիան ու Իտալիան.

---

[16] Հոկտեմբերի 14-ի յարձակման փորձի արժէքը, «Յառաջ», 23.10.1920, էջ 2:

[17] Զինուորական կացութիւնը Ոյժերու կշիռ, ենթադրութիւններ եւ հաւանականութիւններ, «Հայրենիք», 19.10.1920, էջ 1:

[18] Հայկական ճակատը, «Արեւ», 10.11.1920, էջ 2:

[19] Դրսեցի, Մենք եւ մեր դաշնակիցները, «Յառաջ», 17.10.1920, էջ 1:

«Մինչ թրքական հորթաները, արհամարհելով Սէվրի դաշնագրութիւնը, կը յառաջանան Հայաստանի վրայ, եւրոպական դիւանագիտութեան երկու ներկայացուցիչները - Ֆրանսիա եւ Իտալիա կը ջանան եպերելի ընթացքով մը բարոյական եւ նիւթական աջակցութիւն ընձեռել չորս տարի Գերմանիոյ կողքին կռուող թուրք աւազակներուն»[20]:

Նոյեմբերի 14-ին «Հայրենիքը» հրատարակեց Կարսի անկման լուրը, որը ստացվել էր նախորդ օրը Փարիզից. «Կարսը 4 օրուան կատաղի կռիւէ մը ետքը գրաւուած է հոկտեմբեր 31-ին թուրքերու կողմէ, որոնք կարեւոր քանակութեամբ օգնական ոյժեր ստացած էին: Մեր զօրագունդերը կռուելով նահանջած են դէպի Ալէքսանդրօփօլ»[21]:

Նոյեմբերի 22-ին կրկին հանդիպում ենք դաշնակիցների քննադատող հոդվածի, որում նշվում էր թե Հայաստանի պարտությունը պատերազմում անպատվաբեր կլինի դաշնակիցների համար[22]:

Ստիպված թուրքերի հետ զինադադարի համաձայնություն ձեռք բերելու մասին լուրերի հանդիպում ենք նոյեմբերի 24-ին հրատարակված, սակայն նոյեմբերի 7-ով թվագրվող տեղեկատվության մեջ: Դրանում ասվում էր. «Կարսի անկումէն յետոյ, թշնամիին յարատեւ ճնշման տակ, մեր զօրքերը ստիպուած էին քայլ առ քայլ նահանջել դէպի Ալեքսանդրաբօլ: Երէկ՝ նոյ. 6ին, թշնամի զօրքերը արդէն մօտեցած Ալեքսանդրապօլի և կ՚ըսպառնային քաղաքին:

Նկատի ունենալով մէկ կողմէն բնակչութեան սպառնացող վտանգը և միւս կողմէն այն հանգամանքը, որ ինչպէս մեր, նոյնպէս ալ Էնկիւրիի կառավարութեան կողմէ յայտնուած ցանկութիւնն է բանակցութիւններ սկսել հաշտութիւն կնքելու համար, Հայաստանի կառավարութիւնը դիմեց Էնկիւրիի կառավարութեան, առաջարկե-

---

[20] Խմբագրական. Հայ ժողովուրդին պատերազմը եւ եւրոպական դիւանագիտութիւնը I, «Հայրենիք», 17.10.1920, էջ 2:

[21] Զինադադարի պայմանները Սեփական հեռագիր «Հայրենիք»ի, «Հայրենիք», 14.11.1920, էջ 1:

[22] Հայաստանի խղճալի կացութիւնը, «Արեւ», 22.11.1920, էջ 3:

լով սկսիլ բանակցութիւններու. տեղն ու ժամանակը կ՚որոշուին շուտով»[23]:

Զինադադարի խախտումից հետո ռազմական գործողությունների վերսկսումը հույսեր էր ներշնչում, որ դրությունը փոխվելու է: Համեմատություններ են անցկացվում 1918 թ. մայիսյան հերոսամարտերի հետ. «Թող բոլորիս մտքերը սաւառնին դէպի ետ, դէպի վճռական ճակատամարտը Սարդարապատի, ուր այնքան անվեհեր խիզախումով մը 1918-ի մայիսին՝ այսօրուան մեր հերոսները հիմը դրին Հայաստանի քաղաքական եւ ազգային անկախութեան»[24]: Հույսը դրվում էր հայերի անկոտրում ոգու վրա. «Հայ ցեղին տոկունութեանը վրայ խոր համոզում ու հաւատք ունեցողներուն համար՝ անցնող մրրիկներ են միայն այս բոլոր պատահածները»[25]:

Մամուլում հայտնվում էին նաև կեղծ տեղեկություններ: Մասնավորապես շրջանառվում էին լուրեր թե հայերը հետ են գրավել Կարսը[26]:

Հետաքրքիր է, որ եթե պատերազմի սկզբում թուրքական զորքերի ուժը թերագնահատվում էր, ապա՝ արդեն պատերազմի վերջում, որպես անհաջողությունների պատճառ նշվում էր ճիշտ հակառակը: Ա. Ռշտունին Բոստոնի ՀՅԴ օրգանի էջերում գրում էր. «Հայաստան, իր քաջարի բանակով ակամայ պատերազմի մտած է իրմէ տասնապատիկ մեծ ոյժերու դէմ»[27]:

Ընդհատվող զինադադարների, սահմանային փոքր սրացումների, զորքերի տեղաշարժերի վերաբերյալ գրառումներից զատ «Յառաջը» պատերազմի վերջին օրերին անդրադարձներ է կատարում նաև Ալեքսանդրապոլում սկսված բանակցություններին: Սակայն հստակ տեղեկություններ չունենալու պատճառով թերթը ման-

---

[23] Զեկոյց հայկ. կառավարութեան Զինադադարը ինչպե՞ս կնքուեցաւ, «Արեւ», 24.11.1920, էջ 2:

[24] Դէպի Սարդարապատ, «Հայրենիք», 21.11.1920, էջ 2:

[25] Ամուր պահենք մեր սրտերը, «Հայրենիք», 25.11.1920, էջ 1:

[26] Հայեւթուրք պատերազմ, «Արեւ», 26.11.1920, էջ 3; Թուրքերը զինադադար կը խնդրեն Կարս վերագրաւուած հայկ. ոյժերուն կողմէ (սեփական հեռագիր «Հայրենիք»ի), «Հայրենիք», 28.11.1920, էջ 1:

[27] «Ապրի Գարապէքիրը», Հայրենիք, 01.12.1920, էջ 1:

ռամասներ տրամադրել չի կարողանում, այլ միայն որոշակի վերլուծություններով փորձում է հասկանալ ստեղծված իրադրությունն ու կանխատեսումներ անել: «Հայրենիքի» էջերում բանակցությունների մասին տեղեկությունը հայտնվում է դեկտեմբերի 1-ին[28]:

«Հայրենիքում» Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման մասին տեղեկատվություն հրատարակվեց դեկտեմբերի 11-ին[29]: «Արեւ» հանդեսում Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման մասին հրատարակվեց դեկտեմբերի 13-ին[30], իսկ դրա հոդվածները՝ միայն հունվարի 16-ին[31]:

Թուրք-ռուսական համագործակցության մասին

Դեռ պատերազմի նախօրյակին կային թուրք-ռուսական համագործակցության մասին տեղեկություններ. «Ներկա ամսվա կեսերին թուրքաց զորքերը, ցանկանալով գրավել քարածուխի հանքերը, մեզ գերազանցող ուժերով առաջացան Օլթիի շրջանի ուղղությամբ՝ հարկադրելով մեր զորամասերին նահանջել: Միաժամանակ խորհրդային ռուսական մի զորաբաժին, որ գտնվում էր հյուսիս-արևելյան սահմանում՝ Ղազախի շրջանում, առաջացավ և հետ մղեց հայկական զորախմբին: Հայաստանի զորքերը՝ դիմելով հակաարշավանքի, վանեցին հակառակորդին նրա գրաված դիրքերից և հետ խլեցին թշնամու ձեռք ձգած հայկական հողաբաժինը»[32]:

«Հայրենիքում» հոկտեմբերի 14-ին կարդում ենք. «Թուրք Ազգայնականներու կողմէ Հայաստանի վրայ գործուած յարձակումը թելադրուած է պոլշեւիկներէն»[33]: Մեկ օր անց նույն թերթում կար-

---

[28] Հաշտութիւն Պրէսթ-Լիթովսքի դաշնագրին սահմաններով?, «Հայրենիք», 01.12.1920, էջ 3:

[29] Խաղաղութիւն կնքուած Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, «Հայրենիք», 11.12.1920, էջ 5:

[30] Համաձայնութիւն Հայերու եւ Քէմալականներու միջեւ, «Արեւ», 13.12.1920, 3:

[31] Հայաստանի եւ Միլլիճիներու միջեւ կնքուած հաշտութեան ամօթալի դաշնագրին պատճենը. Նոր մանրամասնութիւններ, «Արեւ», 16.1.1921, 2:

[32] Վերջին ժամ, «Մշակ», 01.10.1920, էջ 2:

[33] Թուրքերն ու պոլշեւիկները կը գործակցին հայկ. բանակին դէմ, «Հայրենիք», 14.10.1920, էջ 3:

դում ենք ՀՅԴ նշանավոր գործիչներից Նիկոլ Աղբալյանի խիստ քննադատությունն ուղղված Խորհրդային Ռուսաստանի հասցեին. «Խորհրդային Ռուսաստանը, մտքով, հոգով եւ էութեամբ աղքատ այդ երկիրը ցանկանում է յառաջ խաղալ. օժանդակ ունենալով Մուսթաֆա Քէմալի ողորմելի զօրքերը: Նենգամիտ եւ դաժան Խորհրդային Ռուսաստանը, թուրքերու հետ միացած եւ զինակցած, այդ անկերպարան մարմինը, յետադէմ է հին Ռուսաստանի նման: Նա դաշնակցել է Տաճկաստանի հետ: Ընկերվարութիւնը կապուել է կարմիր արեան հետ»[34]:

«Յառաջի» պնդմամբ թուրքական և բոլշևիկյան ռադիոկայանների եռանդուն հարաբերությունները ապացույցն են այն բանի, որ «տաճկական արշաւանքը Հայաստանի վրա պատրաստել և կատարւում է բոլշևիկների գիտութեամբ և աջակցութեամբ»[35]: Հասկանալիորեն շատ ավելի մեծ քննադատության են արժանանում հայ բոլշևիկները. «Հայ բոլշևիկները, մեր ժողովրդի այդ այլասերւած տարրերը, այսօր արդէն բացարձակօրեն զինակցում են մեր դարեւոր թշնամիներին, և կոյրերն էլ կարող են համոզւել, որ նրանք մեր հայրենիքի բացահայտ դաւաճաններն են»[36]:

Բոստոնի «Հայրենիքը» ևս մեղադրում էր հայ բոլշևիկներին. «Լէնինի եւ Թրօցքիի պակասամիտ հետեւորդները, որոնք հայու անուն կը կրեն, բայց թուրքի եւ թաթարի սիրտ, հայ անձնուէր գործիչներն ու պետական անձնաւորութիւնները կը բաղդատեն իրենց տիրոջ - Լէնինի առաջնակարգ բարեկամներուն Էնվէրի եւ Թալէաթի հետ: Մենք այս էջերուն մէջ չպիտի ուզէինք մեղադրել ռուս պոլշեւիզմը այնքան որքան հայ պոլշեւիզմը, որ տօնքիշօթական յաւակնութիւններով կ՚ուզէ կապ հաստատել լէնինական շարժումին հետ, եւ հայ ժողովուրդին կենսական շահերը վտանգելու գնով աշխատիլ

[34] Ն. Աղպալեան կը խօսի, «Հայրենիք», 15.10.1920, էջ 1:
[35] Խմբագրական. Թուրք-Բոլշեւիկեան դաւադրութիւն, «Յառաջ», 3.10.1920, էջ 2:
[36] Խմբագրական. Համերաշխութիւն, «Յառաջ», 8.10.1920, էջ 2:

իտէալի մը համար, որուն ստուերը միայն գոյութիւն ունի հայ ցնորամիտներու ուղեղին մէջ»[37]:

Նոյեմբերի 8-ին «Արևը» հրատարակում է Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի նախարարության բարձրաստիճան պաշտոնյայի տեղեկությունը՝ հայտնած պառլամենտում այլ մասին, որ թուրք ազգայնականները զենք և ռազմամթերք են ստանում բոլշևիկներից, որը Տրապիզոնից և Սև ծովի մյուս նավահանգիստներից ցամաք է հասնում[38]:

Պարտության պատճառները

Պարտության պատճառներից մեկը «Յառաջը» համարում է թուրքերի լավ պատրաստությունը և լավ ռազմական դպրոց անցնելը: Թուրքական զորահրամանատարությունը նույնպես մեծ հմտությունների էր տիրապետում, իսկ զորքերը ավելի մեծաթիվ էին բոլոր ճակատներում, քան հայկական ուժերը:

Արդեն դեկտեմբերի 8-ին խոսելով պարտության պատճառների մասին՝ «Հայրենիքը» դրանում մեղադրում էր Հայաստանի դաշնակիցներին, որոնք չկատարեցին իրենց պարտականությունները[39]: Այդ միտքը զարգացվում է նաև հետագայում. «...Մեր արիւնով եւ գերագոյն զոհողութեամբ փորձի ենթարկեցինք եւրոպական դիւանագիտութիւնը, որ երկար դարեր մեր անմեղ արիւնը ծծած էր, բայց որ հաւատայինք, թէ այս անգամ չափով մը արդարամիտ եւ անկեղծ պիտի ըլլար մեզի հանդէպ, գոնէ քաւելու համար իրա անցեալ ահաւոր մեղքերը»[40]:

«Հայրենիքը» համարում էր, որ ՀՀ կառավարությունը արել է հնարավոր ամենը ուստի չպետք է քննադատվի պարտության համար. «Մեր կառավարութիւնն ու բանակը ըրին, ինչ որ մարդկօրէն հնարաւոր էր, պաշտպանելու համար հայրենիքին սահմանները,

---

[37] Հայութեան տականքները, «Հայրենիք», 23.10.1920, էջ 2:
[38] Մուսթաֆա Քէմալ եւ Պոլշէվիքները, «Արեւ», 8.11.1920, էջ 3:
[39] Խմբագրական Պատմութեան համար, «Հայրենիք», 08.12.1920, էջ 2:
[40] Վերանկատումներ III, «Հայրենիք», 11.12.1920, էջ 2:

ամէն ճշմարիտ հայ պէտք է ընդունի որ այս աշխարհի մէջ ոչ ոք կրնայ ընել այն, ինչ որ կարելի չէ մարդկօրէն»[41]: Այն նաև մեղադրում է ՀՅԴ-ին ընդդիմադիր տարրերին, որոնք օտար պետությունների մեղքը փորձում են գցել ՀՀ կառավարության վրա[42]: Էդուարդ Սահակյանն էլ պարտության հիմնական պատճառը համարում էր «Սօվիէթ Ռուսաստանի կատարած արշաւանքը Հայաստանի վրայ»[43]:

Ալեքսանդրիայի «Արևի» էջերում պարտության պատճառների առաջին վերլուծությանը հանդիպում ենք դեկտեմբերի 10-ին: Որպես թիվ մեկ պատճառ նշվում է թշնամու ուժերը թերագնահատելը[44]: Պատերազմից հետո քննարկվում է դավաճանության վարկածը: Պարտության մեջ մեղադրվում են ռուսահայերը. Ռուսահայ ապազգային ոգին կարևոր դեր է կատարել պարտության մեջ: Պատերազմը ցույց տվեց, թե հայկական բանակը չուներ հրամանատարություն: Մինչև Կարսի անկումը հայկական բանակի ոգևորությունը շատ մեծ է եղել, քանի որ լուրեր են տարածել, թե Անդրանիկը հույների հետ Տրապիզոն է գալու: Նույնիսկ ասվել է, թե նա 10 հազար հայ կամավորներով արդեն Բաթում է իջել: Հայերը մտածում էին, թե թուրքական բանակը քայքայված վիճակում է: Դրա համար սկզբում 50 հազար հոգի զորակոչվեց, բայց երբ տեսան թուրքերի հզորությունը, բարոյալքվեցին[45]:

Դեկտեմբերի 31-ին «Արևը» եգիպտական «The Egyptian Gazette»-ից արտատպությամբ կարծիք է հայտնում, թե պատերազմից կարելի էր խուսափել նախապես Սևրի պայմանագրից հրաժարվելու պարագայում[46]:

---

[41] Խմբագրական. Աղմկարարները գործի վրայ, «Հայրենիք», 15.12.1920, էջ 2:

[42] Խմբագրական. Կանգնեցէք ժողովուրդին կողքին, «Հայրենիք», 18.12.1920, էջ 2:

[43] Եդուարդ Սահակեան, Նոր կացութիւնը III Ռուսական քաղաքականութեան էութիւնը, «Հայրենիք», 1.1.1921, էջ 1-2:

[44] Հայկական պատրանքներ թուրքերու իրական զօրութեան մասին, «Արեւ», 10.12.1920, 2:

[45] Հայեւթուրք պատերազմին շուրջը. Յայտարարութիւններ, մանրամասնութիւններ, «Արեւ», 31.12.1920, 2:

[46] Հայաստան իրաւունք ուներ Պոլշեւիք ըլլալու (Խմբ. գիտ. «Էճիբշըն Կազէթ»ի Դեկտ. 27ի թիւնին), «Արեւ», 31.12.1920, 3:

Սմբատ Բորոյանի զինվորներից Լևոն Աշճյանն ու Զաքար Զարդարյանը պարտությունը բացատրում են ռուսահայ–թուրքահայ հակասություններով, և վերջիններիս նկատմամբ բացասական վերաբերմունքով: «Արեւի» խմբագրությունում նրանք պատմում են, որ Կարսում անկման ժամանակ դիոլ զուռնա ու հարսանիք կար: Այլասերումը շատ էր տարածվել Հայաստանում: Շատ վատ վերաբերմունք կար տաճկահայ կամավորների հանդեպ, որոնք եկել էին Կ. Պոլսից, Կիլիկիայից: Ուտելիք ու նույնիսկ զենք չէին տալիս արևմտահայ կամավորներին[47]:

Եթե ՀՅԴ-ի փոխարեն իշխանության ղեկին լինեին Պողոս Նուբարի, Գ. Նորատունկյանի, Հ. Գույումճեանի նման անձինք, ապա ելքն այլ կլիներ[48]:

Եզրակացություններ

Ժամանակակից հայկական մամուլի էջերում 1920 թ. թուրքհայկական պատերազմի լուսաբանումը զբաղեցնում էր կենտրոնական նշանակություն թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում: Դրա վերաբերյալ տեղեկությունները ստացվում էին պետական պաշտոնական աղբյուրներից, առանձին անձանց վկայություններից, արտասահմանում հրատարակվող պարբերականների պարագայում նաև տեղական ու եվրոպական լրատվամիջոցներից:

Պատերազմի նախօրյակին ու սկզբնական շրջանում գերիշխող էր լավատեսությունը, ինչի հիմքում ընկած էին սեփական ուժերի գերագնահատումն ու միաժամանակ թշնամու թերագնահատումը: Մեծ էին հույսերը, որ Սևրի պայմանագրի Հայաստանին վերաբերող դրույթները կիրագործվեն: Նույնիսկ երբեմն դրանք դիտարկվում էին որպես հնարավոր նվազագույն, և ակնկալիքներ կային, որ հնարավոր է հասնել ավելի մեծ տարածքների միացման Հայաստանին:

---

[47] Հայաստանէն լուրեր. Ինչպէս հայ զօրքը նահանջեց Ալէքսանդրապօլի յանձնումը. Թուրքահայ կամաւորներ. Ո՞վ կրկնար փրկել կացութիւնը, «Արեւ», 21.1.1921, 2:

[48] Փորձագետ, Խորհրդածութիւններ Հայաստանի աղէտին վրայ, «Արեւ», 9.2.1921, 1:

Պատերազմի առաջին ամսվա ընթացքում թերթերը կրկին դրսևորում են լավատեսություն, շեշտադրում բնակչության մեծ ոգևորությունը, կամավորների մեծ թիվը: Հաճախ փորձ է արվում ընտրելու առանձին փաստեր ու ներկայացնելու հանրությանը հենց դրանք՝ պակաս ուշադրություն դարձնելով անհաջողություններին:

Աստիճանաբար ակնհայտ դարձավ, որ հայկական կողմը պարտություններ է կրում, ու սառը ցնցուղի ազդեցություն գործեց Կարսի անկումը: Ուստի պատահական չէ, որ նույնիսկ դրանից հետո հայտնվում է ապատեղեկատվություն այն մասին, թե իբր հայերը այն հետ են գրավել: Պարտությունների մասին տեղեկությունները զուգակցվում էին դրանց պատճառները հասկանալու մղումով: Եթե ՀՅԴ մամուլը հակված էր դրանում տեսնելու առաջին հերթին ռուս-թուրքական համագործակցությունը, հայ բոլշևիկների հակապետական գործունեությունը նաև դաշնակիցների անգործությունը, ապա ընդդիմադիր կողմնորոշում ունեցող պարբերականները, վերոնշյալ հանգամանքներից բացի (կամ շատ ավելի), մեղադրում էին ՀՀ կառավարությանը՝ անխոհեմ քաղաքականություն վարելու համար: Հաճախ այդ քննադատությունը կարող էր հենված լինել՝ ոչ թե իրատեսական գնահատականների ու քաղաքական իշխանության կողմից դրանց հաշվի չառնելով, այլ նեղ կուսակցական շահերով պայմանավորված հանգամանքներով:

1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը հայկական մամուլում ցույց է տալիս, որ հասարակական-քաղաքական շրջանակները ռազմաքաղաքական իրադարձությունների վերաբերյալ գերազանցապես դատողություններ էին անում սեփական պատկերացումներին համապատասխան, արդարության հաստատման անխուսափելիության, բայց ոչ սառը հաշվարկների վրա: Հենց դա նաև պատճառ հանդիսացավ այն հանգամանքի, որ 1920 թ. Հայաստանն ունեցավ ահռելի տարածքային ու մարդկային կորուստներ: Չնայած իրականցվել են պատերազմի մասին պատմագիտական աշխատանքներ, սակայն խնդրի վերաբերյալ առավել ամբողջական պատկերացում կազմելուն լայնորեն օգնում է ժամա-

նակի հասարակության տարբեր շերտերում տիրապետող մտայնությունների ուսումնասիրությունը, ինչն օգնում է նաև առավել լավ հասկանալ իշխանությունների կայացրած որոշումների տրամաբանությունը:

Գրականության ցանկ

1. Kevorkian R., The Armenian Genocide A Complete History, London, I.B. Tauris & Co Ltd., 2011.
2. Սաֆրաստյան Ռ., Մուսթաֆա Քեմալ. Պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, 2019:
3. Hovannisian R. G., The Republic of Armenia: Between Crescent and Sickle: Partition and Sovietization. Vol. 4. Berkeley: University of California Press, 1996.
4. Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997:
5. Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը, Երևան, 2002,
6. Խուրշուդյան Լ., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002:
7. Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը 1920 թ., Երևան, 2022:
8. Kayali H., The Struggle For Independence, The Cambridge History of Turkey: Volume 4, Turkey in the Modern World, Ed. by R. Kasaba, Cambridge University Press, 2008, pp. 112-146.
9. Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Երևան, 2005:

Էդիկ Մինասյան
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պ.գ.դ.,
Պատմության ֆակուլտետի դեկան,
Հայկ Մխոյան
ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության
ամբիոնի դոցենտ, պ.գ.թ.

ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ (1920 Թ. ՄԱՅԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ)[1]

Բանալի բառեր՝ *թուրք-հայկական պատերազմ, սահմանային բախումներ, հայկական պարբերականներ, Զանգիբասար, Վեդիբասար, Օլթի, Մուստաֆա Քեմալ, Ռուբեն Տեր-Մինասյան, Քյազըմ Կարաբեքիր:*

Մուտք: Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի և նրա դաշնակիցների պարտությունը հանգեցրեց Օսմանյան կայսրության փլուզմանը: Պատերազմից հետո նրա տարածքների մեծ մասը բաժանվեց հաղթող երկրներից Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի միջև: Թվում էր, թե ոչ մի ուժ չէր կարող փրկել կործանվող կայսրությանը: Սակայն այդ ուժը գտնվեց: 1919 թ. կեսերից գեներալ, Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ Թուրքիայում սկիզբ առավ ազգայնական (միլի) շարժումը, որը Արամ Անտոնյանի բնութագրմամբ ապստամբական շարժում չէր, այլ «Հայասպան շարժում» (Անտոնյան, 1990, 259-261):

Քեմալական ցեղասպանության ծրագրային նպատակները պաշտոնական ձևակերպում ստացան 1919 թ. հուլիս-օգոստոսին Էրզրումում և նույն տարվա սեպտեմբերին Սվազում տեղի ունեցած խորհրդաժողովներում: Մահմեդական մոլեռանդ զանգվածներին գրգռելով քրիստոնյաների դեմ՝ համաժողովները պահանջում էին

[1] Առաջին անգամ հրատարակվել է՝
Մինասյան Է., Մխոյան Հ., Թուրք-հայկական սահմանային բախումների արձագանքները հայկական մամուլի էջերում (1920 թ. մայիս-սեպտեմբեր), «Պատմություն և մշակույթ», 2022, թիվ 2, էջ 61-72:

«ձեռք առնել բոլոր միջոցները՝ կանխելու համար այն փորձերը, որ հայերն ու հույները կարող են ձեռնարկել մեր հայրենիքին վնասելու նպատակով» (Սահակյան, 1970, 44): Վերոնշյալ համաժողովների որոշումներն ընկան 1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի Մեջլիսի (խորհրդարանի) կողմից ընդունված «Թուրքական ազգային ուխտի» հիմքում, որում Հայաստանի ոչնչացումը համարվում էր առաջնահերթ խնդիր:

Հայության նկատմամբ քեմալականների ոճրագործությունների գագաթնակետը 1920 թ. սեպտեմբերին նրանց ռազմարշավն էր Հայաստանի Հանրապետության դեմ: Թուրք-հայկական պատերազմում Մ. Քեմալի նպատակն էր «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը», ստիպել հայությանը հրաժարվել Սևրի պայմանագրից (Кемаль, 1934, 102):

1920 թ. ապրիլի վերջերից սկսված Խորհրդային Ռուսաստանը՝ Վ. Լենինի գլխավորությամբ, առաջինը ճանաչեց Մ. Քեմալի գլխավորած Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարությունը (Документы внешней политики СССР, 1958, 554-555, 725-726): Այսպիսով՝ 1920 թ. դրությամբ Հայաստանը դարձավ «սեպ» Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև: Երբ Հայաստանը որևէ արտաքին պաշտպանություն չուներ, իսկ դաշնակիցները հիմնականում կեղծ խոստումներով էին բավարարվում Քեմալի համար լայն դաշտ բացվեց հայությանը ճնշումների ենթարկելու համար: Այս առումով հատկանշական էր, որ արդեն 1920 թ. գարնանից Թուրքիան սկսեց բախումներ հրահրել հայ-թուրքական սահմանի երկայնքով:

Հայաստանի ու Թուրքիայի միջև փաստական պատերազմական դրություն գոյություն ուներ դեռևս 1920 թ. հունիսից, երբ սահմանային լուրջ ընդհարումներ սկսվեցին Օլթիի շրջանում: Բանն այն է, որ Մուդրոսի զինադադարի համաձայն՝ թուրքերը պետք է հետ քաշվեին ռուս-թուրքական 1914 թ. սահմանից այն կողմ, սակայն նրանք հրաժարվում էին մաքրել Օլթին՝ մեջտեղ բերելով Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը: Այդ հողի վրա սահմանային

բախումները չդադարեցին ընդհուպ մինչև թուրքական ընդհանուր արշավանքները: Կարևոր է նաև հայ-թուրքական սահմանի երկայանքով տեղակայված թուրքաբնակ բնակավայրերի հպատակեցման և ՀՀ օրինական իշխանություններին ենթարկելու խնդիրը, որը ևս հայկական բանակը վճռեց լուծել 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին: Հոդվածում քննության են առնվելու հենց այս սահմանային բախումները, որոնց լայնորեն անդրադարձել են հայկական պարբերականները և արժեքավոր մանրամասներ փոխանցել այդ ամիսների իրադարձությունների վերաբերյալ:

Հայաստանի վրա հարձակման նախապատրաստումը: Դեռևս 1920 թ. մարտի 16-ին թուրքական զորքերի հրամանատար Քյազըմ Կարաբեքիրը փորձում էր հստակեցնել Հայաստանի հանրապետության վրա հարձակման ժամանակը: Նա Մ. Քեմալին առաջարկում էր հարձակման համար սպասել ավելի նպաստավոր ժամանակի, քանզի նախապատրաստական աշխատանքներն ավարտված չէին և պետք էր հաշվի առնել նաև Հայկական լեռնաշխարհին բնորոշ ձմռան ցրտերը:

Արշավանքին նախապատրաստվելու ընթացքում Ք. Կարաբեքիրն առաջին դիվանագիտական հաջողությունն ունեցավ 1920 թ. ապրիլի 15-ին ՝ Էրզրումում փոխադարձ օգնության պայմանագիր կնքելով Ադրբեջանի զինվորական նախարարի օգնական գեներալ Աղա Օղլու Շիխլինսկու հետ: Պայմանագրի 7-րդ հոդվածը արձանագրում էր, որ Հայաստանի՝ Ադրբեջանի վրա հարձակվելու կամ Թուրքիայի արևելյան շրջանները (Արևմտյան Հայաստանը,- Է. Մինասյան) Հայաստանին հանձնվելու դեպքում «համաձայնության եկած երկու կողմերն էլ պաշտպանելու են միմյանց շահերը և գործելու են որպէս միացած բանակ» (Վրացյան, 1993, 474): Հավանաբար հենց այս դաշինքն էր ոգևորել Ք. Կարաբեքիրին, որն այդ նույն օրերին հոխորտալով հեռագրում է Անկարա, թե մոտ «օրերս պիտի ավետեմ, որ Հայաստանը սրբված է աշխարհի քարտեզից» (Սարգսյան, Սահակյան, 1963, 43): Ադրբեջանի խորհրդայնացումը ստիպեց քեմալականներին արագացնել Հայաստանի վրա հար-

ձակման նախապատրաստությունը, քանի որ նրանց ակնհայտորեն ձեռնտու չէր Հայաստանի խորհրդայնացումը առանց իրենց մասնակցության: Նրանք արդեն մայիսին արևելյան ճակատում կենտրոնացրել էին 22-հազարանոց բանակ՝ 69 թնդանոթով և 200 գնդացրով (Զոհրաբյան, 1997, 28): Թուրքական հարձակման նախապատրաստության մասին են վկայում նաև Մ. Քեմալի բերած հետևյալ տվյալները, քանի որ հայկական զորքերը հարմար պահի կփորձեն զավթել Էրզրումը, ուստի թուրքական զորամասերը Բրեստ-Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերով Թուրքիային անցած երեք սանջակների տարածքում պետք է զբաղեցնեն Սարիղամիշը ու Սողանլուղի լեռնաշղթան՝ հայկական բանակի նկատմամբ ռազմավարական նպաստավոր դիրքեր ունենալու համար» (Кемаль, 1966, 99): Թուրքական կառավարությունը, քննարկելով հարցը, հունիսի 6-ին արևելյան բանակի հրամանատարությանը հրամայում է նախապատրաստվել հարձակման: Հայաստանի վրա հարձակվելու համար հունիսի 9-ին հայտարարվում է զորահավաք, և Ք. Կարաբեքիրը նշանակվում է արևելյան ճակատի հրամանատար (Кемаль, 1934, 117): Սակայն արդեն հունիսի 20-ին Մ. Քեմալը ՌՍԴԽՀ արտգործնախարար Գ. Չիչերինի միջամտությամբ հարկադրված էր կարգադրել Ք. Կարաբեքիրին դադարեցնել ռազմական գործողությունները: Գ. Չիչերինը մայիսի վերջին բանակցություններ էր սկսել Մոսկվա ժամանած Լ. Շանթի պատվիրակության հետ՝ հույս ունենալով հայ-թուրքական հարաբերությունները լուծել ու ստանձնելով միջնորդի դեր (Геноцид армян: Ответственность Турции и обьязательства мирового сообщества, 2003, 69):

Ազգային մեծ ժողովի օգոստոսի 14-ի նիստում, անդրադառնալով Գ. Չիչերինի նամակին, որն Անկարա էր հասել հունիսի կեսերին, Մ. Քեմալն ասել էր, թե իրենք այն կարծիքին են, որ երեք սանջակների՝ Կարսի, Արդահանի և Բաթումի սահմաններում ռազմական գործողությունները Հայաստանի վրա հարձակում չեն նշանակում: Վերջինս հունիսի 20-ին հրամայել էր դադարեցնել ռազմական գործողությունները, բայց միաժամանակ հորդորել արագացնել

ընդհանուր հարձակման նախապատրաստական աշխատանքները: Թեև հունիսին Ռուսաստանի միջամտությամբ կանխվեց թուրքական զորքի հարձակման վտանգը, բայց այն ամբողջովին չվերացավ, քանզի քեմալականները չհրաժարվեցին Հայաստանի հանրապետության վրա հարձակվելուց, այլ ժամանակավորապես կանգնեցրին այն հետո վերսկսելու նպատակով: Այդ հարձակումը նրանք համաձայնեցրին Խորհրդային Ռուսաստանի հետ 1920 թ. օգոստոսի 24-ին երկու երկրների միջև նախաստորագրված մերձեցման գաղտնի պայմանագրով, որով քեմալականները Ռուսաստանից ստացան նյութական ու ռազմական անհրաժեշտ միջոցները: Թուրքերի կողմից պատերազմի նախապատրաստման այս ողջ ընթացքում հայ-թուրքական սահմանին դրությունը կայուն չէր: Պարբերաբար տեղի էին ունենում բախումներ, որոնք աստիճանաբար ավելի լայն ծավալ էին ընդգրկում:

Հայկական մամուլի անդրադարձները 1920 թ. ամռան ամիսների սահմանային բախումներին: 1920 թ. կեսերից սկսված սահմանային բախումներին լայն անդրադարձներ է կատարել հայկական մամուլը իր տարբեր, մեծ ու փոքր հրապարակումներով:

Զանգիբասարի (ներկայումս՝ Մասիսի շրջան) թուրքաբնակ շուրջ 15 գյուղեր, գտնվելով Երևանից ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա և չճանաչելով Հայաստանի իշխանությունը, շուրջ երկու տարի դարձել էին թուրք ու ադրբեջանական էմիսարների հավաքատեղի, բացահայտորեն զինվում էին, ստեղծում մարտական խմբեր, վնասում երկաթգիծը, փակում ճանապարհները, ստեղծում անապահով վիճակ: Ձեռնամուխ լինելով Ղարաբաղի վերջնական գրավմանը՝ Ադրբեջանը միաժամանակ Հայաստանի թուրքաբնակ շրջաններում ձգտում էր առաջ բերել խլրտումներ՝ Հայաստանի ուշադրությունը Ղարաբաղից շեղելու համար: «Մշակ», «Յառաջ», «Ժողովուրդի ձայն», «Ժողովուրդ» և հայկական մամուլի այլ օրգաններ տվյալ ժամանակաշրջանի համար բերում են բազմաթիվ օրինակներ թուրք-թաթարական հրոսակների կողմից սահմանային բախումները ցույց տալու համար:

Երևանի քթի տակ, Չարբախից սկսած, ստեղծվել էր մի դրություն, երբ գնացքով երթևեկելը նույնիսկ վտանգավոր էր: Ոչ մի պաշտոնյա չէր համարձակվում մուտք գործել այդ շրջան, իսկ Հայաստանի կառավարությունը երկար ժամանակ հանդուրժում էր դա: Վերջապես 1920 թ. հունիսին որոշվեց վերջ տալ այդ անբնական վիճակին և կարգ ու կանոն հաստատել: Ըստ որում՝ կառավարությունը սկզբում փորձեց հարցը լուծել խաղաղ ճանապարհով և առաջարկեց վերջ տալ թշնամական գործողություններին, ճանաչել Հայաստանի իշխանությունը, վճարել պետական հարկերը, բայց հաջողություն չունեցավ և ստիպված եղավ դիմել ավելի վճռական միջոցների: Հունիսի 18-ին ներկայացվեց վերջնագիր՝ պատասխանի համար տալով 6 ժամ: Այս մասին «Յառաջ» օրաթերթում կարդում ենք. «... Երեկ վերջնագիր ներկայացւեց զանգիբասարցիներին՝ զինաթափ լինելու և Հայաստանի հանրապետության իշխանութիւնը ճանաչելու մասին» («Յառաջ», 19.6.1920, 2): Բայց բացի Ուլանխանլուից (այժմ՝ Մասիս)՝ մնացածներից դարձյալ պատասխան չստացվեց, և հունիսի 19-ին կառավարությունը զորք ուղարկեց: Քննության առնելով վերջնագիրը՝ զանգիբասարցիները «որոշում են չզիջել երկրի օրինաւոր իշխանութեան ոչ մէկ և ոչ էլ միւս կէտում եւ օգտւելով մթութիւնից, բոլոր գծերի վրա խրամատներից ուժեղ կրակ են բաց անում հանրապետական զօրքերի վրա» («Յառաջ», 20.6.1920, 3): Թե ինչ աստիճանի կազմակերպված ու զինված էին զանգիբասարցիները թուրք սպաների ղեկավարությամբ, վկայում են «Յառաջ» թերթի հունիսի 24-ի ու «Մշակ» թերթի հուլիսի 4-ի համարներում տպագրված փաստերը: Համաձայն դրանց՝ կռիվները տևեցին շուրջ տասը ժամ, և որպես ռազմական ավար վերցվեց 2 թնդանոթ, 3 գնդացիր, 40000 փամփուշտ և այլ ռազմամթերք («Յառաջ», 24.6.1920, 1, «Մշակ», 4.7.1920, 2): Հակառակորդի ուժերի վերաբերյալ մեկ այլ տեղեկատվություն է հաղորդում գործողության ղեկավար գնդապետ Արսեն Շահմազյանը, ըստ որի՝ հակառակորդին վարժեցրել էին թուրքական հրամանատարները, որի արդյունքում կարողացել էին «ամենահամեստ հաշւարկով 4000-ից ոչ պակաս տեղական մարտիկներ և 600-800 ասկեարներ» պատ-

ռաստել («Յառաջ», 27.6.1920, 3-4): Ըստ «Յառաջի» վկայության՝ «մեր զօրքերին յաջողւեց կռւով տիրել բոլոր թուրքական գիւղերին գրեթէ մինչև Արաքսի ափը» («Յառաջ», 22.6.1920, 2): Նորագավիթի, Փարաքարի, Ղարխունի զորասյուները կարողանում են գրավել Հաջի-Էյլազ, Գոյքյումբեթ, Քելալի, Արբաթ, Թազա Ղարխուն, Չոբանքեարա, Մախմանդար և այլ գյուղեր («Յառաջ», 27.6.1920, 3-4): Իհարկե, որոշ բնակավայրերի պարագայում բավական դժվարություններ առաջացան: Հայկական զինված ուժերին միայն հունիսի 20-ի վաղ առավոտյան հաջողվեց հնազանդեցնել Չոբանքեարա ու Շարլու-Մեխմանդար թուրքական գյուղերը («Յառաջ», 22.6.1920, 2): Զանգիբասարի դեպքերը հավատով էին լցրել կառավարությանը սեփական ուժերի նկատմամբ: Վերջիններս խորապես համոզված էին, որ «նոյն վախճանը կունենան, և բոլոր նրանք, ովքեր դաւեր են լարում Հայաստանի ազատութեան դեմ («Յառաջ», 24.6.1920, 1): Հայ ժողովրդական կուսակցության պաշտոնաթերթ «Ժողովուրդը», ևս ներկայացնելով Զանգիբասարի դեպքերի մանրամասները, կարծում էր, որ օգտագործելով ժողովրդի հայրենասիրությունն ու հերոսական բանակի բարձր տրամադրությունը՝ պետք էր վերականգնել Հայաստանի իշխանությունը բոլոր ապստամբ վայրերում («Ժողովուրդ», 23.6.1920, 1):

Զանգիբասարի դեպքերին զուգահեռ այդ օրերին մարտական գործողություններ ծավալվեցին նաև Օլթիի շրջանում: Դրա համար առիթ ծառայեց հունիսի 18-ին թուրք-քրդական հրոսակախմբերի հայտնվելը Փանջուրեթի հատվածում: Մինչ այդ կառավարությունը արդեն որոշում ուներ Օլթիի քարածխի հանքերը զրավելու մասին, և այդ միջադեպը պարզապես օգտագործվեց՝ արդեն ծրագրված հարձակումը իրագործելու համար: Հայաստանի կառավարությունը ելնում էր այն բանից, որ Կարսի մարզի Օլթիի շրջանը մտնում էր Ռուսաստանի 1914 թ. սահմանների մեջ, իսկ Մուդրոսի զինադադարը նախատեսում էր թուրքական զորքերի հետքաշումը այդ սահմաններից և դրա միացումը Հայաստանին: Բացի այդ՝ Հայաստանը նավթի ու քարայուղի (մազութի) մեծ կարիք ուներ: Ադրբեջանի կողմից պարբերաբար իրականացվող արգելանքների ու շրջափակում-

ների հետևանքով հանրապետության տրանսպորտային միջոցները ու հատկապես երկաթուղին կանոնավոր չէին աշխատում: Այդ մեծ պակասը ինչ-որ չափով լրացնելու համար անհրաժեշտ էր դրան փոխարինող քարածուխ, իսկ այդպիսի հանքապաշար կար Օլթիի օկրուգում (Հակոբյան, 2022, 143): Ահա ինչու սկսելով հարձակում՝ Կարսի հայկական զորքերի հրամանատարությունը, կարծես թե ձգտելով խուսափել հետագա բարդություններից, միաժամանակ հարմար գտավ տեղեկացնել Կարաբեքիր փաշային, որ հայկական զորքերը 1914 թ. սահմանը չեն անցնի: Սակայն արդեն հունիսի 21-ին Կարաբեքիր փաշան մեր հրամանատարությանն ուղղած հեռագրով, իսկ հունիսի 24-ին Բեքիր Սամին արտգործնախարարությանն ուղարկած նոտայով պահանջում են հայկական զորքերը դուրս բերել գրաված շրջաններից (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 1): Նոտաների փոխանակություն կողմերի միջև կատարվեց նաև հուլիսին: Ըստ որում, եթե հայկական կողմը իր գործողությունները արդարացնելու համար վկայակոչում էր 1914 թ. սահմանները, Մուղրոսի զինադադարը, ապա թուրքական կողմը՝ Բրեստ Լիտովսկի ու Բաթումի պայմանագրերը: Այդ է պատճառը, որ կոնֆլիկտը ոչ միայն չհարթվեց, այլև գնալով խորացավ, և ընդհարումները, մերթ մարելով, մերթ բորբոքվելով, շարունակվեցին ընդհուպ մինչև թուրքական զորքերի սեպտեմբերյան ընդհանուր արշավանքը: Հայկական մամուլը ինչպես Զանգիբասարի դեպքում, այստեղ ևս ոգևորությամբ է արձագանքում Օլթիի շրջանում տեղի ունեցող դեպքերին: «Կարսի շրջանի զօրամասերի տարած փառաւոր յաղթանակը Օլթիի ուղղութեամբ եկաւ մի նոր ապացոյց տալու մեր քաջարի բանակի և նրա հրամանատարների աներեր վճռականութեան տէր դառնալու հայրենի երկրին» («Յառաջ», 25.6.1920, 2): Օլթիի շրջանում տարած հաղթանակին «Յառաջը» տալիս է նաև քաղաքական մեծ կարևորություն՝ նշելով, որ «Օլթիի յաղթանակը մի նոր ու լուսաւոր էջ է բաց անում Միացյալ Հայաստանի պատմութեան մեջ: Մենք կասկած չունին բնաւ, որ սկսուած գործը նման թափով և նոյն յաջողութեամբ առաջ կտարվի այսուհետև ևս» («Յառաջ», 25.6.1920,

2): Թերթը հույս էր հայտնում նաև, որ «Օլթիի շրջանը գրաւելով՝ մեր զորքերի առաջ բացւում են Արևմտեան Հայաստանի ճանապարհները» («Յառաջ», 25.6.1920, 2): Հայկական մամուլը կարևորում է նաև Օլթիի հանքավայրերի կարևորությունը և նշում, թե ինչ բնապահպանական խնդիրներ է լուծում այդ տարածքների անցումը Հայաստանին: Մասնավորապես կարևորվում է այն հանգամանքը, որ այլևս ստիպված չեն լինի չափազանց մեծ քանակությամբ փայտ օգտագործել էներգիայի համար, մանավանդ այն դեպքում, երբ երկիրը ունի անտառային տարածությունների խիստ պակասություն («Յառաջ», 29.6.1920, 2): Օլթիի ուղղությամբ հաջող գործողությունների մասին հայկական մամուլը հետագայում ևս ունենում է հրապարակումներ: Մասնավորապես «Յառաջի» հուլիսի 3-ի համարում կարդում ենք, որ «Օլթիի ուղղութեամբ մեր զօրամասերը, նկատելով թշնամու պարտրաստութիւնները, շարժւել են առաջ և գրաւել Մերջինիս, Կոտիկ և Վասկուտ գիւղերը» («Յառաջ», 3.7.1920, 4): Այս շրջանում տեղի ունեցող դեպքերը պահելով մշտական ուշադրության տակ՝ հայկական մամուլը տեղեկացնում էր նաև թուրքական զորքերի շարժերի մասին դեպի Օլթի: Մասնավորապես նշվում էր հատկապես Էրզրումից այստեղ տեղի ունեցող զորաշարժի մասին («Յառաջ», 7.7.1920, 4): Մեկ այլ հրապարակման մեջ հանդիպում ենք, որ թուրքական կանոնավոր մի զորամաս, որը բաղկացած էր 200 զինվորներից և 3 գնդացիրներից հուլիսի 18-ին գիշերային երկու գրոհ է կազմակերպել Օլթի-Փենալ խճուղու դիրքերի վրա և ետ մղվել («Յառաջ», 21.7.1920, 4):

Դրությունը շատ ավելի լուրջ էր Վեդիբասարում: Տեղի թուրքերը, ապավինելով մի կողմից Շարուր-Նախիջևանի իրենց հայրենակիցների օգնությանը, մյուս կողմից՝ պաշտպանության համար առկա բնական ամրություններին, սկզբից ևեթ չճանաչեցին Հայաստանի իշխանությունը: Թուրքական բանակի հեռանալուց հետո այստեղ մնացած սպաների ու ասկյարների օգնությամբ տեղի թուրքական տարրը զինվեց, կազմակերպվեց և մշտական կռիվներ սկսեց Հայաստանի դեմ՝ հայկական բանակի թիկունքում դառնալով

մշտական սպառնալիք: Ինչպես և Զանգիբասարի, այնպես էլ Վեդիբասարի թուրքերին մեծապես խրախուսում և ֆինանսական ու զինական օգնություն էր ցույց տալիս Թուրքիան ու Ադրբեջանը: Իսկ երբ Հայաստանի կառավարությունը փորձում էր ճնշել այդ խռովությունները, ապա մուսավաթական կառավարությունը իսկույն աղմկում էր հայերի կողմից մահմեդականներին կոտորելու մասին լուրերով, հրավիրում անգլիացիների միջամտությունը՝ կանխելով այն: Այդ նույն ժամանակ՝ 1920 թ. հունիս-հուլիսին, Թուրքիայի կողմից հարձակումներ էին սկսվել Մերդենեկի, Սարիղամիշի, Կաղզվանի, Իգդիրի, Խոր-Վիրապի ուղղությամբ: Միայն ուժերի ծայրահեղ լարումով Հանրապետությանը հաջողվեց հետ մղել թշնամական հարձակումներն ու շտկել դրությունը:

Ինչ վերաբերում է Վեդիբասարին, ապա նա հետագայում ևս մնաց որպես թրքության ամուր հենակետերից մեկը Հայաստանի դեմ նրա մղած պայքարում: Ահա ինչու 1920 թ. հունիսին՝ Զանգիբասարը հնազանդեցնելուց հետո, կառավարությունը, նման առաջարկ արեց նաև Վեդիբասարին: Բայց, ինչպես և պետք էր սպասել, ոչ մի պատասխան չստացվեց: Հուլիսի 10-ին հայկական զորքերը երկու՝ Ղամարլուի (Արտաշատ) ու Նոր-Բայազետի (գավառ) կողմերից գրոհ սկսեցին Վեդիբասարի վրա: Կռիվները տևեցին 2 օր: Հուլիսի 11-ին մեր զորքերը գրավեցին մի շարք գյուղեր, իսկ 12-ին մտան Վեդի: Այստեղ ևս թշնամին մարտի դաշտում թողել էր ոչ միայն սպանվածներ, այլև մեծաքանակ զենք ու զինամթերք: Հետապնդելով նահանջող թշնամուն՝ հայկական զորքերը հուլիսի 14-ին անցան Գայլի դրունքը և հաջորդ օրերին գրավեցին Բաշ-Նորաշենը, Ենգիջան, Թազաքենդը և Շարուրի մի շարք այլ գյուղեր: (Վրացյան, 1993, 324-326): Այս տարածքների ազատագրման մասին հանդիպում ենք նաև «Ժողովուրդ» օրաթերթում: Այստեղ կարդում ենք, որ իրենց հեղինակավոր աղբյուրների հաղորդմամբ քաջարի «զօրքերը գրաւել են Եայջի, Բաշնորաշեն և Ուլիանորաշէն գիւղերը» («Ժողովուրդ», 17.7.1920, 2): Այս տարածքների ազատագրման մասին թեև փոքր ծավալի, սակայն պարբերաբար հոդ-

վածներ են սկսում հրապարակել հայկական մամուլի այլ օրգաններ ևս: Այսպես «Յառաջը» գրում է. «Յուլիսի 14-ի ժամը 11 և 40 րոպէին, Ղամարլուի ուղղութեամբ մեր պանծալի զօրքերը ուժեղ կռւից յետոյ գրաւեցին «Գայլի դրունքը»: Թերթը տեղեկացնում է նաև 4 վիրավոր զինվորների և Արմիկ և Արխիս գյուղերի գրավման մասին («Յառաջը», 16.7.1920, 4, «Ժողովուրդ», 16.7.1920, 3):

Կ. Պոլսում հրատարակվող «Ժողովրդի ձայն» թերթը ևս տեղեկություններ է հաղորդել այդ օրերին տեղի ունեցող իրադարձությունների մասին՝ նշելով. «... Հայերը արեւելեան Հայաստանի մէջ մեծամեծ կորուստներ պատճառած են թուրքերուն ու թաթարներուն: Այս վերջինները ամբողջովին նահանջելու ստիպված են Պեօյիւք Վէտիի կարեւոր դիրքը կորսցնելէ յետոյ» («Ժողովուրդի ձայն», 21.7.1920, 3):

Հետաքրքրական է, որ 1920 թ. ամռան կեսերից հայկական մամուլում սկսում են առանձին բաժիններ հատկացնել սահմանային միջադեպերին և ներկայացնել իրավիճակը յուրաքանչյուր ուղղությամբ տարբեր օրերի դրությամբ: Սա պայմանավորված էր սահմաններում աճող լարվածությամբ ու հասարակության ուշադրության կենտրոնացմամբ այդ խնդիրների վրա: Այդ բաժինները հիմնականում կրում են «վերջին ժամ», «ռազմական հաղորդագրություն», «մեր ճակատը» վերնագրերը, չունեին որևէ վերլուծություն, ընդգրկում էին միայն մի քանի տող:

Նույն ժամանակի համար հայկական մամուլը լուրեր է ներկայացնում նաև հակառակորդի զորքերի վատ վիճակի, դասալքությունների, բանակում տարածված դժգոհությունների մասին («Յառաջ», 22.07.1920, 4): Զուգահեռ հոդվածներում գովերգվում է հայկական բանակի քաջագործությունները: Այս տեսանկյունից աչքի է ընկնում զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայաստանի Հանրապետության զորականությանն» ուղղված հրամանը, որտեղ փառաբանվում են 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին հայկական կանոնավոր զորքերի և կամավորական գնդերի քաջագործությունները (Տէր-Մինասեան Ռուբէն, «Յառաջ», 22.07.1920, 1):

Սահմանային բախումները պատերազմի նախօրյակին: Նախապատրաստվելով պատերազմի՝ քեմալական Թուրքիան Հայաստանի վրա կենտրոնացրել էր բազմահազարանոց բանակ: Ըստ «Մշակ» թերթի տվյալների՝ սեպտեմբերի 7-ին Անկարայում գումարված զինվորական բարձրաստիճան սպաների խորհրդում, որտեղ վճռվում էր Հայաստանի վրա լայնածավալ հարձակման հարցը, արևելյան ճակատի հրամանատար Ք. Կարբեքիրն ասել էր թե «ունի 4 դիվիզիա, որոնցից յուրաքանչյուրը կբաղկանա 8-9 հազար զինվորից և աջակցություն կստանա թուրքական և քրդական ուժերից: Բավական է նաև արտիլերիան» («Մշակ», 11.11.1920, 2):

Ըստ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի կազմած տեղեկագրի՝ հայկական բանակում կար շուրջ 40 հազար մարդ, որոնցից կանոնավոր ուժեր էին միայն 25 հազարը, մնացածը բաժին էր ընկնում ինտենդանտական, սանիտարական և օժանդակ այլ ծառայություններին (ընդհանուր թվաքանակի 30 տոկոսը) և կամավորական խմբերին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 280):

Սահմանային բախումները, թեև մերթ խիստ սրվում էին, մերթ որոշ չափով մեղմանում, բայց ընդհանուր առմամբ չդադարեցին և շարունակվեցին ընդհուպ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Սեպտեմբերի 10-ից սկսած՝ Վասկուտ լեռան վրայի ու Քերողլի լեռան վրայի Սարիղամիշի ջոկատի աջ թևի հայկական դիրքերը ամեն օր ենթարկվում էին հրետանային ռմբակոծության (Հովհաննիսյան, 2016, 218): Պատկերացում կազմելու համար այդ բախումների լրջության ու մասշտաբների մասին մեջբերենք հատկապես սեպտեմբերին տեղի ունեցած ընդհարումների մասին Հայաստանի հեռագրական գործակալության որոշ հաղորդագրություններ, որոնք տպվել են «Մշակ» թերթի 1920 սեպտեմբերի 15-ի համարում. «Զորական հաղորդագրություն սպարապետի շտաբից 11-ին՝ ժամը 10-ին: Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 9-ին՝ ժամը 14-ին, թուրքերը թնդանոթային կրակ բաց արին Վասկուտ սարի վրա, մեր հրետանին պատասխան տվեց նրան: Սեպտեմբերի 10-ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մոտեցավ մեր պահակախմբին, որ 5095

բարձրության վրա է գտնվում, Ղարադաղ գյուղից երկու վերստ հյուսիս է գտնվում, բայց հրետանու և գնդացրային կրակով հետ շպրտվեց: Սեպտեմբերի 10-ին՝ առավոտյան ժամը 8-ին, տաճկական 2 սավառնակներ թռիչք գործեցին Սարիղամիշի ճակատի երկարությամբ, և տաճիկները միաժամանակ թնդանոթային կրակ բաց արին մեր դիրքերի վրա՝ Բարդուսի դեմ: Մեր հրետանին պատասխանում էր: Նույն օրը՝ ժ. 15-ին, կրկին երևացին հակառակորդի 2 սավառնակներ, թուրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատների վրա՝ Կերօղլիբաշի սարի վրա: Սեպտեմբերի 9-ին՝ ժ. 18-ին և 45 րոպեին՝ երկօրյա կռիվներից հետո, մերոնք գրավեցին Կողբ գյուղը և աղահանքերը: Վերցված է մի լեռնային թնդանոթ, երկու հեռախոսային ապարատ, և ռազմական այլ ավարներ: Մեր կորուստները աննշան են: Փիրլու գյուղի մոտ սպանված է հակառակորդի հակագրոհը հետ վանելու ժամանակ Սասունի ձիավոր խմբի պետ Մանուկը» («Մշակ», 15.9.1920, 2):

Թերթը գրում է, որ «սեպտ. 13-ին թուրքական խոշոր ուժերը անսպասելի կերպով հարձակվեցին Սարիղամիշի հայ զորամասի ձախ թևի վրա, ճեղքեցին ճակատը և գրավեցին 4-րդ մարտկոցի երկու լեռնային թնդանոթները: Տեղի ունեցավ կատաղի կռիվ հայկական 4-րդ գնդի ու թուրքերի միջև, որտեղ առանձին համառություն ու քաջություն ցույց տվեց Գանթարջյանի գումարտակը: Տաք և արյունահեղ կռիվներով մեր զորամասերը նահանջեցին և սեպտ. 14-ի առավոտյան ամրացան Բեգլի-ԱՀմեդի դիրքերում: Ստիպված եղավ նահանջել և Կաղզվանի զորամասը (5-րդ գունդ, գնդապետ Շաղուբադյան) ու գրավել Բեռնայի դիրքերը: Հեռացավ և Կաղզվանի ազգաբնակչությունը»: Թուրքական զորքերի սեպտեմբերի 13-ի հարձակման մասին Հայաստանի արտգործնախարարությունը անմիջապես հեռագրեց Թիֆլիս՝ լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին. «Սեպտեմբերի 13-ի վաղ առավոտյան թուրքերը հարձակման են անցել Օլթիի ուղղությամբ, ինչպես նաև Սարիղամիշի ջոկատի աջ թևի վրա և գրավել են Վասկուտ սարն ու Բերդիխ գյուղը»,– ասված է հեռագրում: Հայկական թերթերը վկայում են, որ

արդեն սեպտեմբերի 14-ին Վանանդի նահանգում հայտարարվել է զինվորական դրություն («Յառաջ», 15.9.1920, 1, Հովհաննիսյան, 2016, 220):

«Թուրքերի հարձակումը շարունակվում է: Խնդրում եմ Ձեզ այդ մասին անհապաղ հաղորդել դաշնակցային բոլոր ներկայացուցիչներին Թիֆլիսում, ինչպես նաև Կոնստանդնուպոլսում ու Փարիզում և բողոքել թուրքերի գործողությունների դեմ, որոնք խախտում են Թուրքիայի կողմից ստորագրված հաշտության պայմանագրի բուն հիմքերը» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 226, Վրացյան, 1993, 418), Հայաստանի հեռագրական գործակալության մեկ այլ հաղորդագրության մեջ, որը տպագրվել է «Մշակի» սեպտեմբերի 18-ի համարում, ասված է, որ Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 13-ի և 14-ի կռիվների հետևանքով «մեր՝ զորամասերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ հետ քաշվեցին և բռնեցին Ագուբդիր և Քեդիր գյուղերի մոտի դիրքերը: Սարիղամիշի ուղղությամբ դրությունը անփոփոխ է: Կողբի շրջանում հետախույզների՝ մեզ համար հաջող գործողություններ են կանխատեսել....: Կարսի շրջանում հայտարարված է զինվորական դրություն: Գեներալ-նահանգապետ է նշանակված զորավար Փիրումյանը...» («Մշակ», 18.9.1920, 2): Ըստ «Մշակի» հրապարակումների՝ պարզ է դառնում, որ Օլթիի դեպքերից հետո Ալեքսանդրապոլում սկսել են կամավորներ տրամադրել հայկական բանակին ((«Մշակ», 19.9.1920, 2): Հաջորդող օրերին ևս («Մշակ» հրապարակում է կարճ հաղորդագրություններ, որոնք վկայում են, որ սահմանային միջադեպերը ընդհատումներով ու առանձին ուղղություններով շարունակվում էին: Այդ օրերի ռազմական գործողությունների մասին պաշտոնական հաղորդագրություն էր հրապարակել նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը: Նրանում ասված է, որ «ներկա ամսվա կեսերին թուրքաց զորքերը՝ ցանկանալով գրավել քարածուխի հանքերը, մեզ գերազանցող ուժերով առաջացան Օլթիի շրջանի ուղղությամբ՝ հարկադրելով մեր զորամասերին նահանջել: Միաժամանակ խորհրդային ռուսական մի զորաբաժին, որ գտնվում էր

հյուսիսարևելյան սահմանում՝ Ղազախի շրջանում, առաջացավ և հետ մղեց հայկական զորախմբին: Հայաստանի զորքերը, դիմելով հակաարշավանքի, վանեցին հակառակորդին նրա գրաված դիրքերից և հետ խլեցին թշնամու ձեռք ձգած հայկական հողաբաժինը» («Մշակ», 1.10.1920, 2): Օլթիի գործողության և դրան նախորդած իրադարձությունների մասին մեծաթիվ տեղեկություններ է հաղորդում նաև այդ օրերի խոշոր պետական ու քաղաքական գործիչներից Վահե Արծրունին, որի պնդմամբ արդեն սեպտեմբերի 15-ին Օլթիի բնագիծը քանդվել էր, իսկ ամենաուժեղ դիրքերը գրավվել էին հակառակորդի կողմից (Արծրունի, 2002, 82): Ընդհանուր հուսահատական վիճակ էր սկսվել այդ օրերին, և Օլթիի ճակատում որևէ մեկը չէր ցանկանում ստանձնել ճակատի պաշտպանության գործը:

Արծրունու վկայությամբ գնդապետ Մազմանյանը Մերդենեկի պարետությունը հանձնել էր սպա Անուշավան Դիլանեանին, որը, նկատի ունենալով կացության հուսահատական վիճակը, չէր ցանկանում ստանձնել նոր պաշտոնը, սակայն «հրամանատարին ստիպումին առաջ տեղի տուաւ՝ լաւ համոզուած, որ առանձին օգուտ մը պիտի չհասցնէր իր նոր պատասխանատուութիւնովը» (Արծրունի, 2002, 82): Ինչպես տեսնում ենք, այս հաղորդագրությունները իսկական ռազմական ամփոփագրեր են և վկայում են Հայաստանի և Թուրքիայի միջև պատերազմական դրության գոյության մասին դեռ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Հաղորդագրությունները նաև վկայում են, որ սահմանային միջադեպերը, ինչպես նաև խլրտումները Հայաստանի մուսուլմանաբնակ վայրերում, հրահրում էին քեմալականները՝ իրադրությունը միշտ լարված պահելու, միջամտության համար պատրվակ ունենալու և պատերազմ սանձազերծելու դեպքում մեղքը հայերի վրա բարդելու նպատակով: Հենց այդպես էլ նրանք վարվեցին հետագայում: Պատահական չէ, որ Ալեքսանդրապոլի կոնֆերանսում և Եվրոպա ու Ռուսաստան ուղարկած պաշտոնական այլ գրություններում անցկացրին այն վարկածը, որ իբր քեմալական բանակը ոչ թե հարձակման, այլ հակահարձակման է անցել: Այս սխալ տեսակետը թափանցել էր նաև

խորհրդային պատմագրության մեջ: Թուրք պատմաբանները ևս, թեև չեն ժխտում այն փաստը, որ սեպտեմբերի վերջերին Թուրքիան պատերազմ սկսեց Հայաստանի դեմ, բայց մեղքը բարդում են վերջինիս վրա, որն իբր մշտապես սպառնում էր թուրք ազգայնականներին թիկունքից, խանգարում Խորհրդային Ռուսաստանի ու Ադրբեջանի հետ կապին, կազմակերպում մուսուլմանների ջարդեր ու անընդմեջ հարձակումներ թուրքական սահմանի վրա և այլն: Սակայն, ինչպես տեսանք, թուրքերը մշտապես պատրաստվում էին ռազմական գործողությունների, և միայն աշխարհաքաղաքական որոշ խնդիրներն էին խանգարում ավելի վաղ սկսել ռազմական գործողությունները: Սա նվաճողներին բնորոշ հասկանալի վարքագիծ է: Պատմությունից հայտնի է, որ հաղթողները միշտ էլ պարտվողներին են մեղավոր հայտարարել:

Արդեն պատերազմի նախօրեին, երբ ակնհայտ էր, որ Օլթիի ու այլ ճակատներում հայկական բանակի դիրքերը դարձել են ոչ բարենպաստ հայկական մամուլը առանձին հրապարակումներով սկսեց դատապարտել հունիս-հուլիս ամիսներին հայկական բանակի հաջողությունները չզարգացնելը. «Ասացե՛ք, խնդրեմ, ի՞նչ պատահեց, ի՞նչ առիթ կար դադարեցնելու արշաւներն ու խաղաղ բանակցութիւն սկսել ծեծուած թշնամու հետ» («Յառաջ», 19.9.1920, 3):

Հարկ է նշել, որ հայ-թուրքական սահմանի երկարությամբ ընթացող սահմանային ընդհարումները շարունակվել են ընդհուպ մինչև սեպտեմբերի 28-ի թուրքական ընդհանուր հարձակումը և առանց հայտարարման պատերազմի սկիզբը (Հակոբյան, 2022, 149):

Եզրակացություններ: 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին հայկական զինուժի ձեռք բերած նկատելի հաջողությունները հայ-թուրքական սահմանի երկայնքով հօդս ցնդեցին արդեն նույն թվականի աշնանը, երբ թուրքական բանակի հրամանատար Քյազըմ Կարաբեքիրին վերջնականապես թույլատրեցին պատերազմ սկսել Հայաստանի Հանրապետության դեմ:

Սահմանային բախումները և Զանգիբասարի ու Վեդիբասարի՝ թուրքական տարրերի հետ բախումները կարևոր լիցք էին հայու-

թյան համար, քանզի վերջիններս հույսով էին լցվել հավատալով, որ հայությունը կկարողանա հաղթանակով ավարտել սկսած գործը: Այս առումով կարևոր էր հատկապես մամուլի դերը, որը հիմնականում միասնաբար էր հանդես գալիս և այս իրադարձությունների կապակցությամբ չէր տալիս խիստ հակասական տեղեկություններ: Մենք տեսնում ենք, որ մամուլի տարբեր օրգաններ գլխավորապես նույն մտքերն են զարգացնում և ներկայացնում են խիստ հավասարակշռված ու միանման տեղեկատվություններ, ինչը չենք կարող ասել արդեն թուրք-հայկական լայնածավալ գործողությունների ընթացքում տեղեկատվական հոսքերի մասին:

Մամուլի այս հրապարակումները աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն և արխիվային նյութերի ու հուշագրությունների հետ միասին կազմում են մեկ ամբողջություն՝ հնարավորություն ընձեռելով լիարժեքորեն վերականգնել այդ օրերի գործողությունները:

Ամփոփում

Նախապատրաստվելով Հայաստանի դեմ ռազմարշավի՝ Մ. Քեմալը, Ք. Կարաբեքիրի հետ միասին 1920 մայիս-սեպտեմբեր ամիսներին ՀՀ սահմանային շրջաններում՝ Կարսում, Սարիղամիշում, Զանգիբասարում, Վեդիբասարում, Օլթիում, Սուրմալուում, կազմակերպում էին խռովություններ, բախումներ՝ իհարկե, մեծապես օգտագործելով նաև Ադրբեջանի մարդկային ռեսուրսները: Թուրքթաթարները, ստանալով ֆինանսներ թուրքական կենտրոնական իշխանություններից, ներխուժում էին հայկական բնակավայրեր, ավերում, թալանում, սպանում տեղի հայ բնակիչներին: Այս իրավիճակին վերջ տալու համար էր 1920 թ. ամռանը հայկական զինվորական հրամանատարությունը ձեռնամուխ եղավ մի շարք տարածքներ թուրքերից մաքրելուն: Այս իրադարձությունները լայնորեն լուսաբանվեցին հայկական մամուլի մի շարք օրգաններում, որոնցից էին «Մշակը», «Յառաջը», «Ժողովուրդի ձայնը», «Ժողովուրդը» և այլն: Մյուս օրգանները հիմնականում արտատպում էին այս պար-

բերականների հրապարակումները: Դրանցում ներկայացված նյութը ցույց է տալիս սահմանային բախումների շարժառիթները, ընթացքը, տալիս է նաև որոշ վիճակագրական տեղեկություններ զոհերի, վիրավորների, ուժերի հարաբերակցության մասին: Հայկական մամուլի հենց այս հրապարակումներն են դարձել մեր հետազոտության հիմքը: Հոդվածում անդրադարձել ենք նաև այդ ամիսների արտաքին քաղաքական իրողություններին, որոնցով էր շատ դեպքերում պայմանավորված էին սահմանային տեղաշարժերը, բախումները, ինչի արդյունքում, ի վերջո, 1920 թ. սանձազերծվեց պատերազմ ՀՀ-ի դեմ, ինչն էլ իր հերթին կործանարար էր հայ ժողովրդի համար, քանզի հայությունը զրկվեց իր պատմական հայրենիքի մի հսկայական հատվածից:

Գրականության ցանկ

1. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 486, թ. 226;
2. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 602, թ. 1:
3. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 602, թ. 280:
4. Արծրունի Վ., 2002, Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայութիւնը: Շատախ, Երևան, 2002, 456 էջ:
5. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 259-261:
6. Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 28:
7. Кемаль А., Избранные речи и выступления, Москва, 1966, с. 99:
8. Սահակյան Ռ., Թուրք-Ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 44:
9. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 447-448:
10. Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 43:
11. Геноцид армян: Ответственность Турции и обьязательства мирового сообщества. Документы и комментарий. Под. ред. Ю. Г. Барсегов, т. 2, часть 1, 2003.
12. Кемаль М., Путь новой Турци, М., 1934, т. 3, стр. 117:

13. «Документывнешней политики ССС», М., 1958, т. 2, с. 554-555, 725-726.

14. Զանգիբասարը պիտի զինաթափ լինի, «Յառաջ», 19.6.1920, N 127, էջ 2:

15. Զանգիբասարը, «Յառաջ», 20.6.1920, N 128, էջ 3:

16. Քանդուեց Զանգիբասարի աւազակային որջը, «Յառաջ», 22.6.1920, N 129, էջ 2:

17. Կառավարական հաղորդագրութիւն Զանգիբասարի մասին, 24.6.1920, N 131, էջ 1:

18. Փառաւոր յաղթանակ, 25.6.1920, N 132, էջ 2:

19. Զանգիբասարի օպերացիայի ղեկավար գնդապետ Շահմազեանի հրամանից, 27.6.1920, N 134, էջ 3-4:

20. Օլթիի ածխահանքերը, 29.6.1920, N 135, էջ 2:

21. Օլթիի ուղղութեամբ, 3.7.1920, N 138, էջ 4:

22. Էրզրումից նոր ոյժեր դէպի Օլթի, 3.7.1920, N 141, էջ 4:

23. «Գայլի դրունքը» գրաւած, 16.7.1920, N 149, էջ 4:

24. Յուլիսի 18-ի ռազմական հաղորդագրութիւն, 21.7.1920, N 152, էջ 4:

25. Էրզրումը դատարկւում է, 22.7.1920, N 153, էջ 4:

26. Ռուբէն Տէր-Մինասեան, Հրաման Հայաստանի Հանրապետութեան զօրականութեան, 1920 թ. յուլիսի 20, Երևան, N 315, «Յառաջ», 22.7.1920, N 153, էջ 4:

27. Պաշտօնական, «Յառաջ», 15.9.1920, N 200, էջ 1:

28. Կոչ հայ զինուորութեան եւ աշխատաւորութեան, «Յառաջ», 19.9.1920, N 203, էջ 3:

29. «Մշակ», 15.9.1920, N 90, էջ 2:

30. «Մշակ», 18.9.1920, N 92, էջ 2:

31. «Մշակ», 19.9.1920, N 93, էջ 2:

32. «Մշակ», 1.10.1920, N 101, էջ 2:

33. Հայեր մեծ կորուստ կը պատճառեն թուրքերու եւ թաթարներու, «Ժողովուրդի ձայն», 21.7.1920, N 3845, էջ 3:

34. Զանգիբասարի անկումը, «Ժողովուրդ», 23.6.1920, N 97, էջ 1:

35. Զօրական հաղորդագրութիւն, «Ժողովուրդ», 16.7.1920, N 114, էջ 3:

36. Մեր զօրքերի առաջխաղութիւնը, 17.7.1920, N 115, էջ 2:

Էդիկ Մինասյան
պ. գ .դ., պրոֆեսոր
ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ

«ՄՇԱԿ» ԹԵՐԹԸ 1920 Թ. ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎՐԱ ՀԱՐՁԱԿՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ[1]

Ներածություն

Նախապատրաստելով հարձակումը Հայաստանի դեմ՝ Մ. Քեմալը, մի կողմից, օգտագործելով Խորհրդային Ռուսաստանի ու Անտանտի պետությունների միջև եղած հակասությունները, մյուս կողմից՝ շահարկելով «համաշխարհային հեղափոխության» մասին բոլշևիկյան վարդապետությունը, կարողացավ ստանալ Խորհրդային Ռուսաստանի նյութական, ֆինանսական ու ռազմական օգնությունը, որն ուղղվեց Հայաստանի Հանրապետության և Հունաստանի դեմ: 1920 թ. սեպտեմբերի 28-ին թուրքական բանակն անցավ ընդհանուր հարձակման: Սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը Հայաստանի համար անհաջող սկիզբ ու ավարտ ունեցավ: Քեմալա-բոլշևիկյան մերձեցումը, որը սկսվեց Մ. Քեմալի կողմից Վ. Լենինին ուղղված 1920 թ. ապրիլի 26-ի նամակով, ավարտվեց 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով՝ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև Հայաստանի վերաբաժանումով:

Հոդվածում քննության են առնվել քեմալական Թուրքիայի կողմից Հայաստանի դեմ հարձակման նախապատրաստման, սահմանային բախումների կազմակերպման հիմնահարցերը, որոնց լայնորեն անդրադարձել են հայկական պարբերականները և հատկապես «Մշակ» թերթը, որի էջերը արժեքավոր մանրամասներ են պարունակում վերոնշյալ իրադարձությունների վերաբերյալ: Պարբերականում զետեղված նյութերը նոր լույս են սփռում հիմնահարցի հետազոտության վրա:

---

[1] Minasyan E., “Mshak” Newspaper about the Preparation of Attack on Armenia by Kemalist Turkey in 1920, «Բանբեր հայագիտության», 2024, թիվ 1, էջ 82-97:

Քեմալա-բոլշևիկյան դաշինքը որպես քեմալականների կողմից Հայաստանի Հանրապետության դեմ հարձակման նախապատրաստման կարևոր գործոն

Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում իրականացրած ոճրագործություններից հետո, ձեռնամուխ լինելով արևելահայության ոչնչացմանն ու Արևելյան Հայաստանի տարածքների բռնագրավմանը, Մ. Քեմալը որոշեց դաշնակիցներ գտնել և մեկուսացնելով Հայաստանին՝ նախապատրաստվել նրա վրա հարձակման: Դուրս գալով Թուրքիան բաժանելու ու հայկական պետություն ստեղծելու «Անտանտի չար մտադրությունների» դեմ պայքարի, քեմալականները ակտիվացրին իրենց ջանքերը դաշնակիցներ ձեռք բերելու ուղղությամբ: Այդ ճանապարհին նրանց կարևոր դաշնակիցը հանդիսացավ հակաիմպերիալիստական պայքարի ջահակիր Խորհրդային Ռուսաստանը, որը 1920 թ. ապրիլին առաջինը ճանաչեց Մ. Քեմալի գլխավորած Թուրքիայի Ազգային մեծ ժողովի (ԹԱՄԺ) կառավարությունը: (Документы внешней политики СССР, т. II. 1958, с. 554-555): Պատահական չէր, որ Մ. Քեմալի ստորագրությամբ առաջին արտաքին քաղաքական փաստաթուղթը հանդիսացավ 1920 թ. ապրիլի 26-ի խիստ ազգայնամոլական նամակը՝ ուղղված Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, որտեղ Մ. Քեմալը առաջարկում և պատրաստակամություն էր հայտնում վարելու «ռազմական գործողություններ իմպերիալիստական Հայաստանի դեմ» (Документы внешней политики СССР, т. II. 1958, с. 725-726): Մյուս կարևոր դաշնակիցը Մ. Քեմալը համարում էր Կովկասի մուսուլմաններին: Այդ նպատակով դեռևս 1919 թ. վերջին և 1920 թ. սկզբներին Ադրբեջան, Դաղստան ու մուսուլմանական այլ շրջաններ գործուղվեցին բազմաթիվ էմիսարներ, որոնք ազատորեն գործում էին թուրք սպաների ղեկավարությամբ՝ կազմակերպելով զինված ջոկատներ, ծավալելով հակահայկական քարոզչություն: Շուտով Բաքվում գտնվող երիտթուրքերն ու քեմալական ազգայնականները ստեղծեցին, այսպես կոչված, «թուրքական շտաբ» և սերտ կապեր հաստատեցին ՌԿ(բ)Կ կովկասյան երկրային կոմիտեի հետ:

1920 թ. փետրվարի 6-ին Կարաբեքիրին հղած ծածկագիրը պահանջում էր «Կովկասյան պատվար համարվող Հայաստանի դեմ թիկունքից խորտակող կենտրոնացումներ անել՝ Ադրբեջանի ու Դաղստանի նման իսլամ պետությունների հետ անմիջական շփման մեջ մտնելով» (Արզումանյան Մ., 1973, 309):

Հայաստանի վրա նախապատրաստվող արշավանքի հարցում քեմալականներին խրախուսում էին նաև երիտթուրքական նախկին պարագլուխները, հատկապես Էնվերը, որը երազում էր Թուրքիայի Նապոլեոնը դառնալ: Չկարողանալով հանդուրժել հայկական պետություն ստեղծելու փաստը՝ դեռ 1918 թ. ամռանը Ստամբուլում հայ պատվիրակներին ասել էր, թե «Հայաստանը պետք է մի նոր Բուլղարիա դառնայ, եթէ Թիւրքիան այժմէից իսկ միջոցներ ձեռք չառնէ նրան իր համար անվնաս դարձնելու» («Մշակ», 16.11.1920): Պատահական չէ, որ նույն Էնվերը աջակցություն հայտնեց Բեռլինում 1920 թ. հունվարին Թալեաթի նախագահությամբ գումարված «Իսլամի ազատագրության լիգայի» ժողովին, որը, քննարկելով համաիսլամական խնդիրներ, որոշեց օժանդակություն ցույց տալ Անատոլիայում ծավալված ազգայնական շարժմանը և որպես առաջնահերթ խնդիր հռչակեց Հայաստանի ոչնչացումը: Դեռևս 1920 թ. մարտի 16-ին թուրքական զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրը փորձում էր հստակեցնել Հայաստանի հանրապետության վրա հարձակման ժամանակը: Նա Մ. Քեմալին առաջարկում էր հարձակման համար սպասել ավելի նպաստավոր ժամանակի, քանզի նախապատրաստական աշխատանքներն ավարտված չէին և պետք էր հաշվի առնել նաև Հայկական լեռնաշխարհին բնորոշ ձմռան ցրտերը:

Նշանավոր թուրքագետ Ռուբեն Սաֆրաստյանի կողմից թուրքական փաստաթղթերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու պատերազմի նախապատրաստման ուղղությամբ Մ. Քեմալի և Ք. Կարաբեքիրի իրականացրած գործնական քայլերի մասին: «Մասնավորապես, Կարաբեքիրը, որպես առաջին քայլ, հրապարակել էր մի հայտարարագիր, որը նպատակ

ուներ սահմանամերձ շրջաններում տարածելու հակահայկական տրամադրություններ ու համախմբելու մուսուլման բնակչությանը Հայաստանի Հանրապետության դեմ՝ ներկայացնելով վերջինիս որպես թշնամի: Հայտարարագրում նշվում էր մահմեդական ազգաբնակչության միասնական գործողությունների անհրաժեշտությունը՝ ձգտելով օգտագործել նաև քրդերին նախապատրաստվող պատերազմում»,– եզրակացնում է Ռ. Սաֆրաստյանը (Սաֆրաստյան, 2019, 68,69):

Միաժամանակ աշխատանքներ են տարվում Հայաստանի դեմ հարձակողական գործողությունների ծրագիրը նախապատրաստելու ուղղությամբ: Այդ ծրագիրը պատրաստելով երկու ամիս անց՝ 1920 թ. մայիսի 26-ին, ուղարկվեց Կարաբեքիրի հրամանատարության տակ գտնվող զորամասի ստորաբաժանումներին: Այստեղ որպես հարձակման թիրախ նշվում էին Իգդիրի գրավումը և Արաքս գետին հասնելը: Այն նախատեսում էր, որ հյուսիսից թուրքական զորքերը կստանան բոլշևիկների աջակցությունը, ինչը կհեշտացներ նրանց առաջխաղացումը: Հատուկ նշվում էր, որ պատերազմի նպատակն է լինելու ապահովել «Ազգային ուխտով» նախանշված Թուրիքայի սահմանները, որոնց մեջ մտնելու էին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլ նաև Կարսի, Արդահանի, Արդվինի նահանգները, ինչպես նաև Նախիջևանը և Իգդիրը: (Սաֆրաստյան, 2019, 69): Արշավանքին նախապատրաստվելու ընթացքում Ք. Կարաբերիրն առաջին դիվանագիտական հաջողությունն ունեցավ 1920 թ. ապրիլի 15-ին՝ Էրզրումում փոխադարձ օգնության պայմանագիր կնքելով Ադրբեջանի զինվորական նախարարի օգնական գեներալ Աղա Օղլու Շիխլինսկու հետ: Այդ պայմանագրի 7-րդ հոդվածը արձանագրում էր, որ Հայաստանի՝ Ադրբեջանի վրա հարձակվելու կամ Թուրքիայի արևելյան շրջանները (Արևմտյան Հայաստանը – Է. Մինասյան) Հայաստանին հանձնվելու դեպքում «համաձայնության եկած երկու կողմերն էլ պաշտպանելու են միմյանց շահերը և գործելու են որպէս միացած բանակ» (Վրացյան, 1993, 474): Հավանաբար հենց այս դաշինքն էր ոգևորել Ք. Կարա-

բեքիրին, որն այդ նույն օրերին հոխորտալով հեռագրում է Անկարա, թե մոտ «օրերս պիտի ավետեմ, որ Հայաստանը սրբված է աշխարհի քարտեզից» (Սարգսյան, Սահակյան, 1963, 43):

Ադրբեջանի խորհրդայնացումը ստիպեց քեմալականներին արագացնել Հայաստանի վրա հարձակման նախապատրաստությունը, քանի որ նրանց ակնհայտորեն ձեռնտու չէր Հայաստանի խորհրդայնացումը առանց իրենց մասնակցության: Նրանք արդեն մայիսին արևելյան ճակատում կենտրոնացրել էին 22-հազարանոց բանակ՝ 69 թնդանոթով ու 200 գնդացրով (Զոհրաբյան, 1997, 28): Թուրքական հարձակման նախապատրաստության մասին է վկայում նաև Մ. Քեմալի բերած հետևյալ արտահայտությունը. «Քանի որ հայկական զորքերը հարմար պահի կփորձեն զավթել Էրզրումը, ուստի թուրքական զորամասերը Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերով Թուրքիային անցած երեք սանջակների տարածքում պետք է զբաղեցնեն Սարիղամիշը և Սողանլուղի լեռնաշղթան՝ հայկական բանակի նկատմամբ ռազմավարական նպաստավոր դիրքեր ունենալու համար» (Кемаль, 1966, 99):

Թուրքական կառավարությունը, քննարկելով հարցը, հունիսի 6-ին արևելյան բանակի հրամանատարությանը հրամայում է նախապատրաստվել հարձակման: Հայաստանի վրա հարձակվելու համար հունիսի 9-ին հայտարարվում է զորահավաք, և Ք. Կարաբեքիրը նշանակվում է արևելյան ճակատի հրամանատար (Кемаль, 1934, 117): Թուրքական նոր կառավարության որոշումով ավարտվում է Մ. Քեմալի նախաձեռնությամբ ու ղեկավարության ներքո շուրջ կես տարվա ընթացքում Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստման վերջին փուլը: Սակայն արդեն հունիսի 20-ին Մ. Քեմալը ՌՍԴԽՀ արտգործնախարար Գ. Չիչերինի միջամտությամբ հարկադրված էր կարգադրել Ք. Կարաբեքիրին դադարեցնել ռազմական գործողությունները: Ահա թե ինչ է գրում այդ մասին «Մշակ» թերթն իր 1920 թ. հոկտեմբորի 21-ի համարում՝ անդրադառնալով Թուրքիայի ազգային մեծ ժողովում Մ. Քեմալի ելույթին. «Կարին հասնող ռուս գործակալ մը տեսակցութիւն մը ունեցաւ մեր

պատուիրակութեան հետ: Այդ տեսակցութիւնէն անմիջապես վերջ ստիպուած եղանք արգիլել մեր յարձակողականները» («Մշակ», 21.10.1920):

Փաստորեն՝ հենց իր Քեմալի խոստովանությամբ 1920 թ. ամռանը Հայաստանի վրա ծրագրված թուրքական արշավանքը տեղի չունեցավ Խորհրդային Ռուսաստանի դիրքի պատճառով: Հայտնի իրողություն է, որ Գ. Չիչերինը մայիսի վերջին բանակցություններ էր սկսել Մոսկվա ժամանած Լ. Շանթի պատվիրակության հետ՝ հույս ունենալով հայ-թուրքական հարաբերությունները լուծել, ստանձնելով միջնորդի դեր (Геноцид армян: Ответственность Турции и объязательства мирового сообщества, 2003, 69): Անկասկած է, որ Թուրքիայի ու Ադրբեջանի՝ Հայաստանի դեմ ագրեսիվ պատերազմ սանձազերծելու ձգտումներին մեծապես խանգարեցին նաև Շանթի պատվիրակության մեկնումը Մոսկվա և մայիսի վերջերին այնտեղ սկսված հայ-ռուսական բանակցությունները: Ադրբեջանցի կոմունիստների առաջնահերթ խնդիրը դարձավ այդ բանակցությունների ձախողումը: Ահա թե ինչ է գրում այդ մասին պատվիրակության ղեկավար Լևոն Շանթը. «... Բաքուից ամեն կերպ աշխատում են խանգարել պայմանագրի կնքումը,– ասված է Մոսկվայից Երևան ուղարկած նրա մի հեռագրում. Խորհրդային Ադրբեջանի վարիչները ցանկանում են օգտուել ռուսական հեղինակությունից և ռուս զորքից՝ իրագործելու համար մուսավաթական ծրագիրը՝ գրավել Ղարաբաղն ու Զանգեզուրը և անվիճելի հայկական հողերը՝ այդպիսով, ամրապնդելու համար իրենց դիրքերը ազգաբնակչության մեջ» («Մշակ», 17.07.1920):

Շանթի՝ «Մշակ» թերթի 1920 թ. հուլիսի 17-ի համարում հրապարակված Երևան ուղարկված հեռագրից տեղեկանում ենք, որ «Հայաստանը ցանկանում է ստանձնել իրաւարարի դեր՝ հայ-թաթար վեճը լուծելու համար, նաև Մոսկվայի կառավարությունը ընդունում է միջնորդութիւն Տաճկահայաստանի վերաբերմամբ Մ. Քեմալի և Հայաստանի միջև» («Մշակ» 17.07.1920): Բաքվի կողմից ճնշումը Չիչերինի վրա այնքան բացահայտ ու այնքան կոպիտ էր արվում, որ այդ բանը զգացել էին նաև Շանթի պատվիրակության

անդամները: Հուլիսի 1-ին Երևան ուղարկած հեռագրում Շանթը ընդգծում էր, որ «միակ դժվարությունը Ադրբեջանի սահմանն է, որովհետև Բաքվից ամեն կերպ աշխատում են խանգարել պայմանագրի կնքումը: Խորհրդային կառավարությունը ընդունում է մեր պահանջները իրավացի, չի փափագում գոհացում տալ Խորհրդային Ադրբեջանի և հայ բոլշևիկների բոլոր բաղձանքներին, այնուամենայնիվ, վերջիններիս համառ պնդումների ազդեցության տակ պայմանագրի կնքումը դանդաղում է» («Մշակ», 17.07.1920): Տերտերյանը ևս նախնական համաձայնությունից Չիչերինի աստիճանական նահանջը և, ի վերջո, բանակցությունների խզումը՝ դրանց Երևան փոխադրելու պատրվակով, կապում է Ադրբեջանի ղեկավարության ու նաև հայ կոմունիստների գործունեությանը: Ազգային մեծ ժողովի օգոստոսի 14-ի նիստում, անդրադառնալով Գ. Չիչերինի նամակին, որն Անկարա էր հասել հունիսի կեսերին, Մ. Քեմալն ասել էր, թե իրենք այն կարծիքին են, որ երեք սանջակների՝ Կարսի, Արդահանի և Բաթումի սահմաններում ռազմական գործողությունները Հայաստանի վրա հարձակում չեն նշանակում: Վերջինս հունիսի 20-ին հրամայել էր դադարեցնել ռազմական գործողությունները, բայց միաժամանակ հորդորել արագացնել ընդհանուր հարձակման նախապատրաստական աշխատանքները: Թեև հունիսին Ռուսաստանի միջամտությամբ կանխվեց թուրքական զորքի հարձակման վտանգը, բայց այն ամբողջովին չվերացավ, քանզի քեմալականները չհրաժարվեցին Հայաստանի Հանրապետության վրա հարձակվելուց, այլ ժամանակավորապես կանգնեցրին այն հետո վերսկսելու նպատակով:

«Մշակ» թերթը ՀՀ-ի լիակատար մեկուսացման ուղղությամբ քեմալականների կողմից ծավալած դիվանագիտական գործունեության մասին

Նախապատրաստվելով Հայաստանի Հանրապետության վրա հարձակման՝ քեմալականները դիվանագիտական լայն գործունեություն ծավալեցին ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի աջակցությունն ապահովելու, այլև Հայաստանին դիվանագիտո-

րեն մեկուսացնելու, հնարավոր դաշնակիցներից զրկելու համար: Նրանք համոզված էին, որ Անտանտը չի միջամտի ու իրական օգնություն ցույց չի տա Հայաստանին, քանի որ 1920 թ. գարնանը Անդրկովկասում անգլիական զորամասեր չէին մնացել՝ բացի Բաթումում գտնվող մի փոքրիկ ջոկատից, որը պատրաստվում էր հեռանալ: Բայց կար հարևան Վրաստանը, որը թուրքական վտանգից դրդված կարող էր օգնության հասնել Հայաստանին: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Մ. Քեմալը որոշեց պատվիրակություն ուղարկել Թիֆլիս և ապահովել թուրք-հայկական պատերազմում Վրաստանի չեզոքությունը: «Մշակ» թերթը 1920 թ. նոյեմբերի 11-ին համարում թարգմանաբար հրապարակել է «Մուստաֆա Քեմալն ու Վրաստանը» վերնագրով Անկարայի թղթակցի նամակը, որում խոսվում էր այն մասին, որ Մ. Քեմալի հանձնարարությամբ Արևելքի ժողովուրդների Բաքվի համագումարի մասնակցած թուրք գործիչների պատվիրակությունը Յուսուֆ Քեմալի գլխավորությամբ գաղտնի ժամանել է Թիֆլիս, հանդիպել վրաց ղեկավարներից Ն. Ժորդանիայի ու Ա. Գեգեչկորու հետ և ստացել հավաստիացում, որ թուրք-հայկական պատերազմի պարագայում Վրաստանը չեզոքություն կպահպանի («Մշակ», 11.11.1920):

Խորհրդային Ռուսաստանի հետ քեմալականների համաձայնությունը նույնպես հաջող ելք ունեցավ: Այդ ժամանակ Բաքուն Անկարա հետևյալ հեռագիրն ուղարկեց. «Ճանապարհները բաց են»: («Մշակ», 11.11.1920):

Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետության դաշնակիցներ Անգլիային ու Ֆրանսիային, ապա նրանք նախկինի պես միայն խոստումներ էին տալիս, խրախուսում հայերին շարունակել պայքարը բոլշևիկների ու քեմալականների դեմ, բայց օգնության հարցում որևէ գործնական քայլեր չէին ձեռնարկում: Չնայած Անգլիայի կառավարությունը 1920 թ. ամռանը շուրջ 1 մլն ֆունտ ստերլինգ վարկ էր տրամադրել ՀՀ-ին՝ Անգլիայում զենք ու զինամթերք գնելու համար, սակայն պատերազմը սկսվելու պահին գնված զինամթերքի միայն մի մասն էր հասել Հայաստան:

Փաստորեն՝ Հայաստանը 1920 թ. աշնան սկզբին՝ պատերազմի նախօրյակին, երեք կողմից շրջափակված էր թշնամիներով, չորրորդ՝ հյուսիսային հարևանը վիճելի տարածքներ ստանալու պայմանով համաձայնության մեջ էր մտել ՀՀ ոխերիմ թշնամի քեմալական Թուրքիայի հետ: Խորհրդային Ռուսաստանի հետ բանակցություններ վարելու համար Թուրքիայի արտաքին գործերի կոմիսար Բեքիր Սամիի գլխավորությամբ կազմված պատվիրակությունը հուլիսի 24-ին ժամանեց Մոսկվա, և դրանք շարունակվեցին շուրջ մեկ ամիս: Օգոստոսի 24-ին երկու երկրների միջև նախաստորագրվեց մերձեցման գաղտնի պայմանագիր, որը ստացավ «բարեկամության մասին» անվանումը՝ համալրելով հայ ժողովրդի դեմ ուղղված քաղաքական փաստաթղթերի շարքը: Պայմանագրով Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն խոստանում էր ֆինանսական օգնություն և զենքի, զինամթերքի մատակարարում, ինչը կարևոր էր թուրքական ռազմամոլների համար Հայաստանի դեմ պատերազմում, այլև ճանաչում էր թուրքական «ազգային ուխտը», որով Ռուսաստանը ընդունում էր Թուրքիայի իրավունքը Բաթումի, Կարսի ու Արդահանի նկատմամբ, այդ տարածքների միացումը Թուրքիային (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 176):

Յ. Քեմալը վերադարձավ Անկարա՝ իր հետ տանելով Բ. Սամիի զեկուցագիրը և մեկ մլն ռուբլի այն հինգ մլն-ից, որը խոստացել էր Ռուսաստանը Թուրքիային որպես օգնություն: Չնայած պայմանագիրը չստորագրվեց, բայց և այնպես Բ. Սամիի պատվիրակությունը հասավ դիվանագիտական լուրջ հաջողության, հատկապես որ Սարիղամիշն ու Շահթախթին գրավելու խնդրում Թուրքիան ստացավ Ռուսաստանի համաձայնությունը, որը օգտագործեց՝ դիվանագիտական եռանդուն գործունեություն ծավալելու Հայաստանը մեկուսացնելու ուղղությամբ և նրա նկատմամբ հաղթանակ ապահովելու համար: Հայաստանի վրա հարձակման նախապատրաստման ուղղությամբ Անկարան մեծ աշխատանք էր կատարել հատկապես 1920 թ. սեպտեմբերի սկզբին կոմունիստական երրորդ ինտերնացիոնալի նախագահությամբ Բաքվում գումարված Արևելքի ժողո-

վուրդների առաջին համագումարի օրերին և հասել լուրջ հաջողություններ: Համագումարի ամբիոնից կոչ արվեց ոչնչացնելու «Իմպերիալիստական Հայաստանը», որն իբրև թե կոալիցիա է ստեղծել Վրաստանի ու Պարսկաստանի հետ «հեղափոխական Թուրքիայի և Խորհրդային Ադրբեջանի վրա հարձակվելու համար: Քանի որ Թուրքիան ու Ադրբեջանը հռչակվել էին Արևելքի ճնշված ժողովուրդների ազատագրության համար առաջամարտիկներ, ուստի նրանց էր վերապահված Հայաստանին մահացու հարված հասցնելու առաքելությունը: Համագումարում կոչեր էին հնչում «վերջ տալ իմպերիալիզմի քսու շուն Հայաստանին, ավերել դաշնակների որջը և այլն» (Սիմոնյան, 1991, 390): Դրա շարունակությունը Բաքվում գործող Արևելքի ժողովուրդների քարոզչության ու գործողության խորհրդի նախագահության կողմից սեպտեմբերի 17-ին հաստատված «Եզրակացություն» կոչված ընդարձակ փաստաթուղթն էր, որը առաջարկությունների ձևով ներկայացվեց 3-րդ կոմինտերնի գործկոմի նախագահությանը և ՌԿ(բ)կ կենտրոնական կոմիտեին: Նրանում Հայաստանի Հանրապետությունը համարվում էր Անտանտի հարվածային ուժը, որի ոչնչացմամբ էր պայմանավորվում Արևելքում հեղափոխության հաղթանակի ճակատագիրը: Դրանով փորձում էին «հիմնավորել» Հայաստանի Հանրապետության վրա թուրքական ու ռուսական զորքերի հարձակման անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով խորհրդայնացնել Հայաստանը և փրկել «հեղափոխությունը Արևելքի երկրներում (Գալոյան, 1999, 292, 293):

«Մշակը» պատերազմի նախօրյակի սահմանային բախումների մասին

Նախապատրաստվելով պատերազմի՝ քեմալական Թուրքիան Հայաստանի վրա կենտրոնացրել էր բազմահազարանոց բանակ: Ըստ «Մշակ» թերթի տվյալների՝ սեպտեմբերի 7-ին Անկարայում գումարված զինվորական բարձրաստիճան սպաների խորհրդում, որտեղ վճռվում էր Հայաստանի վրա լայնածավալ հարձակման հարցը, արևելյան ճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրն ասել

էր, թե «ունի 4 դիվիզիա, որոնցից յուրաքանչյուրը կբաղկանա 8-9 հազար զինվորից և աջակցություն կստանա թուրքական ու քրդական ուժերից: Բավական է նաև արտիլերիան» («Մշակ», 11.11.1920): Այսպիսով՝ մոտավոր հաշվումներով անգամ Հայաստանի Հանրապետության դեմ արշավանքի ելած քեմալական զորքերի ընդհանուր թիվը անցնում էր 50 000-ից (Զոհրաբյան, 1997, 169):

Ըստ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի կազմած տեղեկագրի՝ հայկական բանակում կար ընդհանուր թվաքանակով շուրջ 40 հազար մարդ, որոնցից կանոնավոր ուժեր էին միայն 25 հազարը, մնացածը բաժին էր ընկնում ինտենդանտական, սանիտարական և օժանդակ այլ ծառայություններին (ընդհանուր թվաքանակի 30 տոկոսը) և կամավորական խմբերին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 280):

«Մշակ» թերթը բազմաթիվ հոդվածներ է պարունակում նաև ամռանը՝ հունիս-օգոստոս ամիսներին, սահմանային շրջաններում՝ Զանգիբասարում (Մասիս), Վեդիբասարում ու Նախիջևանում, Թուրքիայի և նրա ցեղակից Ադրբեջանի կողմից թուրք-թաթարական խռովություններ կազմակերպելու, Հայաստանի Հանրապետությունում անկայուն վիճակ ստեղծելու և նրա դեմ հարձակում նախապատրաստելու մասին:

Սահմանային բախումները, թեև մերթ խիստ սրվում էին, մերթ որոշ չափով մեղմանում, բայց ընդհանուր առմամբ չդադարեցին և շարունակվեցին ընդհուպ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Սեպտեմբերի 10-ից սկսած՝ Վասկուտ լեռան վրայի ու Քերողլի լեռան վրայի Սարիղամիշի ջոկատի աջ թևի հայկական դիրքերը ամեն օր ենթարկվում էին հրետանային ռմբակոծության (Հովհաննիսյան, 2016, 218): Պատկերացում կազմելու համար այդ բախումների լրջության ու մասշտաբների մասին մեջբերենք հատկապես սեպտեմբերին տեղի ունեցած ընդհարումների մասին Հայաստանի հեռագրական գործակալության որոշ հաղորդագրություններ, որոնք տպվել են «Մշակ» թերթի 1920 սեպտեմբերի 15-ի համարում: Զորական հաղորդագրություն սպարապետի շտաբից 11-ին՝ ժամը

10-ին: Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 9-ին ժամը 14-ին թուրքերը թնդանոթային կրակ բաց արին Վասկուտ սարի վրա, մեր հրետանին պատասխան տվեց նրան: Սեպտեմբերի 10-ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մոտեցավ մեր պահակախմբին, որը 5095 բարձրության վրա է գտնվում, Ղարադաղ գյուղից երկու վերստ հյուսիս է գտնվում, բայց հրետանու և գնդացրային կրակով հետ շպրտվեց: Սեպտեմբերի 10-ին՝ առավոտյան ժամը 8-ին, տաճկական 2 սավառնակներ թռիչք գործեցին Սարիղամիշի ճակատի երկարությամբ, և միաժամանակ, տաճիկները թնդանոթային կրակ բաց արին մեր դիրքերի վրա՝ Բարդուսի դեմ: Մեր հրետանին պատասխանում էր: Նույն օրը՝ ժ. 15-ին, կրկին երևացին հակառակորդի 2 սավառնակներ, թուրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատների վրա՝ Կերողլիբաշի սարի վրա: Սեպտեմբերի 9-ին՝ ժ. 18-ին և 45 րոպեին՝ երկօրյա կռիվներից հետո, մերոնք գրավեցին Կողբ գյուղը և աղահանքերը: Վերցված են մի լեռնային թնդանոթ, երկու հեռախոսային ապարատ և ռազմական այլ ավարներ: Մեր կորուստները աննշան են: Փիրլու գյուղի մոտ սպանված է հակառակորդի հակագրոհը հետ վանելու ժամանակ, Սասունի ձիավոր խմբի պետ Մանուկը» («Մշակ», 15.9.1920):

Թերթը գրում է. «Սեպտ. 13-ին թուրքական խոշոր ուժերը, անսպասելի կերպով, հարձակվեցին Սարիղամիշի հայ զորամասի ձախ թևի վրա, ճեղքեցին ճակատը և գրավեցին 4-րդ մարտկոցի երկու լեռնային թնդանոթները: Տեղի ունեցավ կատաղի կռիվ հայկական 4-րդ գնդի և թուրքերի միջև, ուր առանձին համառություն ու քաջություն ցույց տվեց Գանթարջյանի գումարտակը: Տաք և արյունահեղ կռիվներով մեր զորամասերը նահանջեցին և սեպտ. 14-ի առավոտյան ամրացան Բեգլի-Ահմեդի դիրքերում: Ստիպված եղավ նահանջել և Կաղզվանի զորամասը (5-րդ գունդ, գնդապետ Շաղուբադյան) և գրավել Բեռնայի դիրքերը: Հեռացավ և Կաղզվանի ազգաբնակչությունը» («Մշակ», 15. 9. 1920): Թուրքական զորքերի սեպտեմբերի 13-ի հարձակման մասին Հայաստանի արտգործնախարարությունը անմիջապես հեռագրեց Թիֆլիս՝ լիազոր ներկայա-

ցուցիչ Տ. Բեկզադյանին. «Սեպտեմբերի 13-ի վաղ առավոտյան թուրքերը հարձակման են անցել Օլթիի ուղղությամբ, ինչպես նաև Սարիղամիշի ջոկատի աջ թևի վրա և գրավել են Վասկուտ սարն ու Բերդիխ գյուղը»,– ասված է հեռագրում:

Նույն հեռագրում նշվում է, որ թուրքերի հարձակումը շարունակվում է: Խնդրում եմ Ձեզ այդ մասին անհապաղ հաղորդել դաշնակցային բոլոր ներկայացուցիչներին Թիֆլիսում, ինչպես նաև Կոնստանդնուպոլսում ու Փարիզում և բողոքել թուրքերի գործողությունների դեմ, որոնք խախտում են Թուրքիայի կողմից ստորագրված հաշտության պայմանագրի բուն հիմքերը» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 226: Վրացյան, 1993, 418): Հայկական թերթերը, մասնավորապես «Մշակը» արդեն սեպտեմբերի 14-ին գրում էր, որ Վանանդի նահանգում հայտարարվում է զինվորական դրություն (Հովհաննիսյան, 2016, 220):

Հայաստանի հեռագրական գործակալության մեկ այլ հաղորդագրության մեջ, որը տպագրվել է «Մշակի» սեպտեմբերի 18-ի համարում, ասված է, որ Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 13-ի և 14-ի կռիվների հետևանքով «մեր զորամասերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ հետ քաշվեցին և բռնեցին Ագուբդիր և Քեդիր գյուղերի մոտի դիրքերը: Սարիղամիշի ուղղությամբ դրությունը անփոփոխ է: Կողբի շրջանում հետախույզների՝ մեզ համար հաջող գործողություններ են կանխատեսել....: Կարսի շրջանում հայտարարված է զինվորական դրություն: Գեներալ-նահանգապետ է նշանակված զորավար Փիրումյանը...» («Մշակ», 18.9.1920): Ըստ «Մշակի» հրապարակումների՝ պարզ է դառնում, որ Օլթիի դեպքերից հետո Ալեքսանդրապոլում սկսել են կամավորներ տրամադրել հայկական բանակին («Մշակ», 19.9.1920): Հաջորդող օրերին ևս «Մշակը» հրապարակում է կարճ հաղորդագրություններ, որոնք վկայում են, որ սահմանային միջադեպերը ընդհատումներով ու առանձին ուղղություններով շարունակվում էին: Այդ օրերի ռազմական գործողությունների մասին պաշտոնական հաղորդագրություն էր հրապարակել նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական

ներկայացուցչությունը: Նրանում ասված է, որ «ներկա ամսվա կեսերին թուրքաց զորքերը, ցանկանալով գրավել քարածուխի հանքերը, մեզ գերազանցող ուժերով առաջացան Օլթիի շրջանի ուղղությամբ՝ հարկադրելով մեր զորամասերին նահանջել: Միաժամանակ խորհրդային ռուսական մի զորաբաժին, որ գտնվում էր հյուսիսարևելյան սահմանում՝ Ղազախի շրջանում, առաջացավ և հետ մղեց հայկական զորախմբին: Հայաստանի զորքերը, դիմելով հակաարշավանքի, վանեցին հակառակորդին նրա գրաված դիրքերից և հետ խլեցին թշնամու ձեռք ձգած հայկական հողաբաժինը» («Մշակ», 1.10.1920): Օլթիի գործողության և դրան նախորդած իրադարձությունների մասին մեծաթիվ տեղեկություններ է հաղորդում նաև այդ օրերի խոշոր պետական ու քաղաքական գործիչներից Վահէ Արծրունին, որի պնդման համաձայն՝ արդեն սեպտեմբերի 15-ին Օլթիի բնագիծը քանդվել էր, իսկ ամենաուժեղ դիրքերը գրավվել էին հակառակորդի կողմից (Արծրունի, 2002, 82): Ընդհանուր հուսահատական վիճակ էր սկսվել այդ օրերին և Օլթիի ճակատում որևէ մեկը չէր ցանկանում ստանձնել ճակատի պաշտպանության գործը: Արծրունու վկայությամբ գնդապետ Մազմանեանը Մէրդենեկի պարետությունը հանձնել էր սպա Անուշավան Դիլանեանին, որը, նկատի ունենալով կացության հուսահատական վիճակը, չէր ցանկանում ստանձնել նոր պաշտոնը, սակայն «հրամանատարին ստիպումին առաջ տեղի տուաւ՝ լաւ համոզուած, որ առանձին օգուտ մը պիտի չհասցնէր իր նոր պատասխանատուութիւնովը» (Արծրունի, 2002, 82): Ինչպես տեսնում ենք, այս հաղորդագրությունները իսկական ռազմական ամփոփագրեր են և վկայում են Հայաստանի ու Թուրքիայի միջև պատերազմական դրության գոյության մասին դեռ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Հաղորդագրությունները նաև վկայում են, որ սահմանային միջադեպերը, ինչպես նաև խլրտումները Հայաստանի մուսուլմանաբնակ վայրերում, հրահրում էին քեմալականները՝ իրադրությունը միշտ լարված պահելու, միջամտության համար պատրվակ ունենալու և պատերազմ սանձազերծելու դեպքում մեղքը հայերի վրա բարդելու

նպատակով: Հենց այդպես էլ նրանք վարվեցին հետագայում: Պատահական չէ, որ Ալեքսանդրապոլի կոնֆերանսում և Եվրոպա ու Ռուսաստան ուղարկած պաշտոնական այլ գրություններում անցկացրեցին այդ վարկածը, որ իբր քեմալական բանակը ոչ թե հարձակման, այլ հակահարձակման է անցել: Այս սխալ տեսակետը թափանցել էր նաև խորհրդային պատմագրության մեջ: Թուրք պատմաբանները ևս, թեև չեն ժխտում այն փաստը, որ սեպտեմբերի վերջերին Թուրքիան պատերազմ սկսեց Հայաստանի դեմ, բայց մեղքը բարդում են վերջինիս վրա, որն իբր մշտապես սպառնում էր թուրք ազգայնականներին թիկունքից, խանգարում Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի հետ կապին, կազմակերպում մուսուլմանների ջարդեր ու անընդմեջ հարձակումներ թուրքական սահմանի վրա և այլն: Սակայն ինչպես նշվեց վերևում, թուրքերը մշտապես պատրաստվում էին ռազմական գործողությունների, և միայն աշխարհաքաղաքական որոշ խնդիրներն էին խանգարում ավելի վաղ սկսել ռազմական գործողությունները: Սա նվաճողներին բնորոշ հասկանալի վարքագիծ է: Պատմությունից հայտնի է, որ հաղթողները միշտ էլ պարտվողներին են մեղավոր հայտարարել:

Արդեն պատերազմի նախօրեին, երբ ակնհայտ էր, որ Օլթիի ու այլ ճակատներում հայկական բանակի դիրքերը դարձել են ոչ բարենպաստ, հայկական մամուլը, մասնավորապես «Մշակը», առանձին հրապարակումներով սկսում է դատապարտել հունիս-հուլիս ամիսներին հայկական բանակի հաջողությունները չզարգացնելու փաստը:

Հարկ է նշել, որ հայ-թուրքական սահմանի երկարությամբ ընթացող սահմանային ընդհարումները շարունակվել են ընդհուպ մինչև սեպտեմբերի 28-ի թուրքական ընդհանուր հարձակումը և առանց հայտարարման պատերազմի սկիզբը (Հակոբյան, 2022, 149):

Այսպիսով՝ մամուլի, մասնավորապես «Մշակ» թերթի հրապարակումները աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն՝ արխիվային նյութերի ու հուշագրությունների հետ միասին կազմե-

լով մի ամբողջություն, որոնք հնարավորություն են տալիս լիարժեքորեն վերականգնելու քեմալական Թուրքիայի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ հարձակման մանրակրկիտ նախապատրաստումը: Փաստերի համակողմանի վերլուծությամբ հանգում ենք այն եզրակացության, որ Մ. Քեմալի ղեկավարությամբ Թուրքիայում ծավալված ազգայնական շարժումը առաջին հերթին ուղղված էր Հայաստանի ու հայության դեմ: Նախապատրաստելով հարձակումը Հայաստանի Հանրապետության դեմ՝ Մ. Քեմալը, օգտագործելով Խորհրդային Ռուսաստանի ու Անտանտի պետությունների միջև եղած հակասությունները և շահարկելով «համաշխարհային հեղափոխության» մասին բոլշևիկյան վարդապետությունը, կարողացավ ստանալ Խորհրդային Ռուսաստանի նյութական, ֆինանսական ու ռազմական օգնությունը, որն առաջին հերթին ուղղեց Հայաստանի հանրապետության դեմ:

«Մշակից» բերված փաստերի վերլուծությամբ բացահայտվում են Հայաստանի վրա հարձակման նախապատրաստվող քեմալական Թուրքիայի կողմից նրան մեկուսացնելու և դաշնակիցներ ձեռք բերելու ուղղությամբ ձեռնարկված քայլերը, որոնցից կարևորվում են ոչ միայն Խորհրդային Ռուսաստանի, այլև Կովկասի մուսուլմանների հետ դաշինքը, ՀՀ ներսում և սահմանամերձ շրջաններում՝ թուրք-թաթարական խռովությունների կազմակերպումը, պատերազմի դեպքում՝ հարևան Վրաստանի չեզոքության ապահովումը, Անտանտի երկրների կողմից Հայաստանին օգնելու փորձերի ձախողումը և այլն: Փաստերի համեմատական քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Մ. Քեմալի ու Կարաբեքիրի կողմից Հայաստանի դեմ նախապատրաստվող հարձակման ժամկետները մի քանի անգամ փոփոխվել են. սկզբում հունվար, փետրվար, մարտ ամիսներից տեղափոխվել են մայիս-հունիս ամիսներին, նույնիսկ հունիսի 9-ին հայտարարվել է զորահավաք, որով ավարտվել է շուրջ կես տարվա ընթացքում Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստման վերջին փուլը: «Մշակ» թերթում բերված Քեմալի խոստովանությամբ եզրակացվում է, որ 1920 թ. ամռանը Հայաս-

տանի վրա ծրագրված թուրքական արշավանքը տեղի չունեցավ Խորհրդային Ռուսաստանի դիրքի պատճառով, քանի որ Մոսկվայում շարունակվում էին բանակցությունները Լ. Շանթի պատվիրակության հետ՝ հույս ունենալով հայ-թուրքական հարաբերությունները լուծել՝ ստանձնելով միջնորդի դեր: Նախապատրաստվող թուրքական լայնածավալ արշավանքը իրականություն դարձավ միայն 1920 թ. սեպտեմբերին՝ այն բանից հետո, երբ 1920 թ. օգոստոսի 24-ին նախաստորագրվեց ռուս-թուրքական պայմանագրի նախագիծը, և սեպտեմբերի 17-ին Բաքվում կայացած արևելքի ժողովուրդների համագումարում հաստատված «Եզրակացություն» փաստաթղթով Հայաստանը համարվեց անտանտի հարվածային ուժը, որի ոչնչացմամբ պայմանավորվում էր արևելքում հեղափոխության հաղթանակի ճակատագիրը, և հիմնավորվում էր թուրքական ու ռուսական զորքերի հարձակման անհրաժեշտությունը, որով խորհրդայնացվելու էր Հայաստանը, և փրկվելու էր հեղափոխությունը Արևելքի երկրներում: Դրանով հիմնավորվում է այն եզրահանգումը, որ բոլշևիկ-քեմալական դաշինքը դարձավ Հայաստանի դեմ նախապատրաստվող հարձակման գլխավոր գործոններից մեկը:

Գրականության ցանկ

1. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 486, թ. 226:
2. ՀԱԱ, ֆ. 200, g.1, գ. 576, թ. 176:
3. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 602, թ. 1, 280:
4. Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայութիւնը, Շատախ, Երևան, Մուղնի, 2002, 456 էջ:
5. Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, «Ոսկան Երևանցի», 1997, 368 էջ:
6. Кемаль А., Избранные речи и выступления, Москва: «Прогресс», 1966, 439 с.
7. Վրացյան Ս., , Հայաստանի Հանրապետություն, Երևան, «Հայաստան», 1993, 704 էջ:
8. Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, ԵՊՀ, 1963, 96 էջ

9. Геноцид армян: Ответственность Турции и обьязательства мирового сообщества. Документы и комментарий, 2003, Под. Ред. Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, Москва: «Гардарики», 912 с.

10. Кемаль М., Путь новой Турци, М.: «Соцэкгиз», т. 3, 1934, 280 с.

11. «Документывнешней политики ССС», 1958, т. 2, М.: «Госполитиздат», 778 с.

12. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, «Հայաստան», 1973, 580 էջ:

13. Սաֆրաստյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ (1919-1921 թթ.), Երևան, «Տիր», 2019, 140 էջ:

14. «Մշակ», 17.07.1920:

15. «Մշակ», 15.9.1920:

16. «Մշակ», 18.9.1920:

17. «Մշակ», 19.9.1920:

18. «Մշակ», 1.10.1920:

19. «Մշակ», 16.11.1920:

20. «Մշակ», 21.10.1920:

21. «Մշակ», 11.11.1920:

22. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. 4, Երևան, «Տիգրան Մեծ», 2016, 572 էջ:

23. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, «Հայաստան», 1991, 630 էջ:

24. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան,ԳԱԱ «Գիտություն», 1999, 539 էջ:

Edik Minasyan, Doctor of History, Professor
Yerevan State University, Acting Head of Chair of Armenian History
Email: history@ysu.am

"Mshak" newspaper in 1920 about the preparation of attack on Armenia by Kemalist Turkey

Summary

Key words: *"Mshak" newspaper, Olti, Soganlugh mountain range, Shikhlinsky, B. Samir, Comintern Executive Committee, Kemala-Bolshevik Alliance, Merdenek, G. Chicherin, Entente, Kyazim Karabekir, Mustafa Kemal*

The article makes an attempt to justify that it was not possible to avoid the war, because it did not depend only on the will of the Armenian authorities, but

was dictated by the invasion plan of the "National Pact" proclaimed by the Kemalites, which, at the behest of its far-reaching interests, received a lot of money (gold), weapons and assistance from Soviet Russia, hoping that, first of all, with the support of the Kemalist Turkey, the victory of the world revolution and socialism would spread in the Muslim East, and, the second, they would jointly fight against the imperialism of the West (Entente). The analysis of the relevant materials in the article reveals the goal of the shrewd statesman and diplomat M. Kemal, who, while preparing the attack against the Republic of Armenia, set himself the task of abolishing the Treaty of Sevres, which was too dear to the Armenian people, inflicting a crushing defeat on the still inexperienced Armenian army, and destroying the internationally recognized Republic of Armenia by allying with Soviet Russia, to occupy and divide the territories of Armenia among themselves, annexing one part to Turkey, the other to Soviet Russia, giving some part of territory also to its ally Azerbaijan, to continue the genocidal policy of the Young Turks, in this case already towards Eastern Armenians. It is shown how in order to realize these plans, M. Kemal managed to incite border clashes against Armenia, organize Turkish-Tatar riots, cooperate with the Muslim population and Azerbaijan, diplomatically isolate the Republic of Armenia, sign an alliance with Bolshevik Russia, and launch a military campaign against Armenia. In this context, the study of the topic is very relevant, because the same events of 100 years ago seem to repeat in our days, so it is necessary to learn lessons from history in order not to repeat previous mistakes.

Эдик Минасян, доктор исторических наук, профессор
Ереванский государственный университет, и.о. заведующего кафедрой истории Армении
Эл. почта: history@ysu.am

Газета «Мшак», 1920 год о подготовке кемалистской Турции нападения на Армению

Резюме

Ключевые слова: *Газета «Мшак», Олти, горный массив Соганлух, Шихлинский, Б. Самир, Исполком Коминтерна, Кемальско-большевист-*

ский союз, Мерденек, Г. Чичерин, Антанта, Кязим Карабекир, Мустафа Кемаль

В статье делается попытка обосновать, что избежать войны было невозможно, поскольку она не зависела только от воли армянских властей, а была продиктована провозглашенным кемалистами планом вторжения «Национального обета», который в веление своих далеко идущих интересов, получил от Советской России много финансовых средств (золото), оружие и помощь, надеясь, что при поддержке кемалистской Турции, прежде всего, победа мировой революции и социализма распространяться на мусульманском Востоке, а, во-вторых, будет совместная борьба против империализма Запада (Антанты). Анализ соответствующих материалов в статье раскрывает цель проницательного государственного деятеля и дипломата М. Кемаля, который, готовя нападение на Республику Армения, поставил перед собой задачу отменить Севрский договор, который был дорог армянскому народу, нанеся сокрушительное поражение еще неопытной Армянской армии, а союзом с Советской Россией уничтожив международно признанную Республику Армения, оккупировать и поделить между собой территории Армении, присоединив одну часть к Турции, другую к Советской России, отдав часть территории также своему союзнику Азербайджану, для продолжения геноцидной политики младотурок, в данном случае уже по отношению к восточным армянам. Показано, как для реализации этих задач М. Кемалю удалось спровоцировать пограничные столкновения против Армении, организовать турецко-татарские беспорядки, наладить сотрудничество с мусульманским населением и Азербайджаном, дипломатически изолировать Республику Армения, подписать союз с большевистской Россией, и начать военную кампанию против Армении. В этом контексте изучение темы весьма актуально, ведь те же события 100-летней давности как бы повторяются в наши дни, поэтому необходимо извлекать уроки из истории, чтобы не повторять прежних ошибок.

Էդիկ Մինասյան
պ. գ .դ., պրոֆեսոր
ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ[1]

Ներածություն

Հայտնի իրողություն է, որ Օսմանյան կայսրությունը XIX դարի վերջին քառորդից պետական ուսմունք հռչակեց հայերի ցեղասպանությունը՝ որպես հայկական հարցի լուծման թուրքական եղանակ: Հայոց ցեղասպանության քաղաքականությունը սկսեց գործնականում կիրառվել 1890-ական թվականներից և մի քանի փուլերով շարունակվեց մինչև 1922 թվականը: Ցեղասպանության իրականացման պատասխանատուն թուրք պետականությունն է իր պարագլուխների ղեկավարությամբ: Այն իրագործվեց և՛ սուլթանական, և՛ երիտթուրքական, և՛ քեմալական վարչակարգերի կողմից: Բայց այն, ինչ կատարվեց Առաջին աշխարհամարտի տարիներին, աննախադեպ էր թե՛ իր ծավալներով և թե՛ իրագործման նողկալի միջոցներով: 1914-1918 թթ. պաշտոնական Թուրքիան գործադրեց ամենամյա բծախնդրությամբ մշակված պանթուրքիզմի (համաթուրքականության) ծրագիրը, հայերի ցեղասպանությունը, որն իր ալիքների մեջ էր առել և՛ Արևմտյան Հայաստանը, և՛ Պարսկահայաստանը, և՛ Արևելյան Հայաստանը: Բնաջնջվեց կամ հայրենազրկվեց ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Օսմանյան կայսրության ողջ տարածքում ապրող բովանդակ հայությունը: Հայոց մեծ եղեռնին զոհ գնաց ավելի քան 1,5 մլն արևմտահայ, ամբողջովին հա-

[1] Առաջին անգամ հրատարակվել է՝
Մինասյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմի և Հայոց ցեղասպանության քեմալական ծրագրի իրականացման արձագանքները հայկական մամուլում, «Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու», 2022, թիվ 2, էջ 74-90:

յազրկվեց Արևմտյան Հայաստանը, իսկ Արևելյան Հայաստանից թուրքական յաթաղանին զոհ գնաց շուրջ 500 հազար հայություն: 1920-1922 թթ. Հայոց ցեղասպանության ծրագիրը շարունակաբար իրագործվեց երիտթուրքական կուսակցության նախկին անդամ Մուստաֆա Քեմալի կողմից: Թուրքիայում 1919 թվականին ծավալվեց գեներալ Մուստաֆա Քեմալի գլխավորած թուրք-ազգայնական շարժումը, որը Արամ Անտոնյանի բնութագրմամբ «ապստամբական» շարժում չէր, այլ «Հայասպան» շարժում մը... Այդ շարժումը, ձեռք ձեռքի տուած Կովկասի բոլոր ոճրագործ իսլամ տարրերուն հետ, կը միտի խեղդել Կովկասի հայութիւնը»[2]:

Քեմալական շարժման սկիզբը Փոքր Ասիայի արևմուտքում պայմանավորված էր երկու հանգամանքով՝ հատկապես 1919 թ. մայիսին հույների կողմից Իզմիրը գրավելուց հետո հակահունական պայքար ծավալելու, իսկ Արևելքում՝ հայերի ցեղասպանության միջոցով «Մեծ Թուրանի» ծրագիրն իրականացնելու անհրաժեշտությամբ: Քեմալական ցեղասպանության ծրագրային նպատակները պաշտոնական ձևակերպում ստացան 1919 թ. հուլիսի 23-ից օգոստոսի 6-ը Էրզրումում և նույն տարվա սեպտեմբերի 4-11-ը Սվազում տեղի ունեցած «Արևելյան նահանգների իրավունքների պաշտպանության» և «Անատոլիայի ու Ռումելիայի իրավունքների պաշտպանության կազմակերպությունների» խորհրդաժողովներում: Հայերի ու հույների կողմից ստեղծելով մուսուլմանների իրավունքների և օսմանյան սուվերենության համար երևակայական սպառնալիքի ուրվական ու դրանով մահմեդական մոլեռանդ զանգվածներին գրգռելով քրիստոնյաների դեմ՝ համաժողովները պահանջում էին «ձեռք առնել բոլոր միջոցները՝ կանխելու համար այն փորձերը, որ հայերն ու հույները կարող էին ձեռնարկել մեր հայրենիքին վնասելու նպատակով»[3]: Համաժողովների որոշումները կասկած չէին հարուցում,

---

[2] Անտոնյան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ Փաշա, Երևան, 1990, էջ 259-261:

[3] Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 44:

որ քեմալականները ոչ միայն չեն հրաժարվելու սուլթանական և երիտթուրքական կառավարությունների հայաջինջ քաղաքականությունից, այլև դառնալու են դրա անմիջական շարունակողը: Պատահական չէ, որ Մ. Քեմալը 1919 թ. սեպտեմբերի 10-ին սուլթանին հղած հեռագրում շեշտում էր, թե անհնար է «մեր վիլայեթների հողերի գեթ մեկ թիզը հանձնել Հայաստանին կամ որևէ այլ պետության»[4]: Վերոնշյալ համաժողովների որոշումներն էլ ընկան 1920թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի Մեջլիսի (խորհրդարանի) կողմից ընդունված «Թուրքական ազգային ուխտի հիմքում, որտեղ Հայաստանի ոչնչացումը համարվում էր առաջնահերթ խնդիր»:

Փաստորեն՝ իր ձևավորման պահից սկսած՝ թուրք ազգայնական շարժումը չէր փորձում թաքցնել իր հայատյաց վարքագիծը: Երիտթուրքերի նման քեմալականները նույնպես իրենց ցեղասպանության ծրագրի իրականացման առաջին թիրախը դարձրին Կիլիկիան, որտեղ կար հայահոծ բազմություն՝ շուրջ 200 000 հայություն: Օգտվելով ֆրանսիական կառավարության երկդիմի քաղաքականությունից՝ 1920 թ. ընթացքում քեմալականները կոտորեցին ու բռնագաղթի ենթարկեցին Մարաշի, Զեյթունի, Հաճնի, Այնթապի և Կիլիկիայի այլ վայրերի տասնյակ հազարավոր հայերի, դրանով տապալեցին Կիլիկիայում «հայկական օջախ» ստեղծելու դաշնակիցների «մտադրությունները»:

Կիլիկիայում քեմալականների իրականացրած վայրագությունները, ցեղասպանությունը լայն արձագանք ստացան ժամանակի հայկական և եվրոպական մամուլում: «Մշակի», «Յառաջի», «Ժողովուրդ», «Հայաստանի կոչնակ» թերթերի տարբեր համարներում, «Էջմիածին» շաբաթաթերթում, «Հայրենիք» ամսագրում, «Նոր աշխարհ» հանդեսում ներկայացված են ոչ միայն Մարաշի զանգվածային կոտորածները (Մարաշի սանջակում և քաղաքում բնակություն հաստատած հայերից սրի քաշվեց 13600-ը, 8 հազարն արտաքսվեց քեմալական իշխանությունների կողմից), այլև Հաճնի 8-ամյա հերոսամարտից հետո 6 հազարից ավելի հաճընցիների

[4] Սահակյան Ռ., նշվ. աշխ., էջ 52:

տմարդի ոչնչացման, Այնթապի և Զեյթունի հայերի ինքնապաշտպանությունների ու հազարավոր հայերի զանգվածային բնաջնջման մասին: Թերթերից մեկում հիշատակված ֆրանսիացի ականատես Մատերն Մյուրենի վկայությամբ իրենք «Մարաշում ապրել են դժոխային օրեր, ավերածությունների ու կոտորածների օրեր, որոնք Ձեզ խելակորույս կդարձնեն, եթե դրանց մանրամասները ծավալվեն Ձեր աչքերի առջև կինոֆիլմերում»: Քեմալականները ոչ միայն շարունակեցին տեղում մնացած հայերի բնաջնջումը Կիլիկիայում, կայսրության այլ տարածքներում, այլև շուտով ձեռնամուխ եղան արևելահայության ոչնչացմանն ու Արևելյան Հայաստանի տարածքների բռնազավթմանը: Ուստի պատահական չէ, որ Մ. Քեմալի ստորագրությամբ առաջին արտաքին քաղաքական փաստաթուղթը հանդիսացավ 1920 թ. ապրիլի 26-ի նամակը՝ ուղղված Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը: Այս ազգայնական փաստաթղթում Մ. Քեմալը պաշտոնապես առաջարկում էր և պատրաստակամություն հայտնում վարելու «ռազմական գործողություններ իմպերիալիստական Հայաստանի դեմ»[5]: Մ. Քեմալը ծրագրել էր վերացնել «Մեծ Թուրանի» ճանապարհին մխրճված հայկական սեպը: Քեմալականների գերագույն նպատակը Օսմանյան կայսրության նախկին սահմանների վերականգնումն էր: Մ. Քեմալը, մի կողմից, օգտագործելով Խորհրդային Ռուսաստանի և Անտանտի պետությունների միջև եղած հակասությունները, մյուս կողմից շահարկելով «համաշխարհային հեղափոխության» մասին բոլշևիկյան վարդապետությունը, կարողացավ ստանալ Խորհրդային Ռուսաստանի նյութական, ֆինանսական ու ռազմական օգնությունը, որն ուղղվեց Հայաստանի Հանրապետության ու Հունաստանի դեմ: Քեմալաբոլշևիկյան մերձեցումը, որը սկսվեց Մ. Քեմալի կողմից Վ. Լենինին ուղղված 1920 թ. ապրիլի 26-ի նամակով, ավարտվեց 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով՝ Թուրքիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև Հայաստանի վերաբաժանումով:

---

[5] Геноцид армян: отвественность Турции… т. 2, ч. 1, М., 2005, д. 669, с.51.

Հայության նկատմամբ քեմալականների ոճրագործությունների գագաթնակետը նրանց ռազմարշավն էր Հայաստանի Հանրապետության դեմ 1920թ. սեպտեմբերին: Թուրք-հայկական պատերազմում Մ. Քեմալի նպատակն էր «ոչնչացնել հայկական բանակն ու հայկական պետությունը», ստիպել հայությանը հրաժարվել Սևրի պայմանագրից[6]:

Թուրքական ուժերը զգալի գերազանցություն ունեին (50 հազար) հայկական ուժերի (կանոնավոր զինված ուժերը 25 հազար) նկատմամբ, և բացի դրանից՝ Հայաստանը շրջափակում էր 4 ռազմաճակատ՝ Կարս-Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Նախիջևանի և Դիլիջան-Ղազախի: Ահա թե ինչու թուրքական գլխավոր ուղղություններում (Կարս, Սուրմալու) հայերին չհաջողվեց ուժերի գերազանցություն ստեղծել:

1920 թ. սեպտեմբերի 27-ին թուրքական բանակն անցավ ընդհանուր հարձակման: Սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը Հայաստանի համար անհաջող սկսվեց: Հակառակորդի գերակշիռ ուժերին դիմակայելով հանդերձ՝ հայկական ուժերը սեպտեմբերի 29-ին թշնամուն հանձնեցին Սարիղամիշն ու Կաղզվանը: Հատկապես կատաղի մարտեր ընթացան Սուրմալուի ճակատում, որտեղ հոկտեմբերի 20-ին ձեռնարկած թուրքական հարձակումը հետ մղելով՝ հայկական ուժերն այստեղ հոկտեմբերի 26-ին հակահարձակման անցան: Սակայն դեպքերն այլ կերպ ընթացան Կարսի ճակատում, որտեղ հոկտեմբերի 14-ին հայկական ուժերի հարձակման փորձը հաջողություն չունեցավ: Նախաձեռնությունն անցավ հակառակորդին, որը, համալրելով ու վերադասավորելով ուժերը, հոկտեմբերի 28-ին դիմեց ընդհանուր հարձակման: Ցավոք, Կարսը ցույց չտվեց սպասվող դիմադրությունը, և հոկտեմբերի 30-ի առավոտյան հակառակորդը մտավ Կարս: Շուրջ 2000 զինվոր և զինվորական ու քաղաքացիական բարձրաստիճան գործիչներ գերի ընկան: Միայն Կարսի մարզում քեմալական զորքերը կոտորեցին գերության քշեցին տասնյակ հազարավոր հայերի, չխնայեցին անգամ

[6] Кемаль М., Путь новой Турции, т. 3, М., 1932, с. 102.

Մերձավոր Արևելքում ամերիկյան նպաստամատույց կոմիտեի խնամքի տակ գտնվող 6 հազար որբ հայ երեխաներին: Քեմալա-բոլշևիկյան ագրեսիան Հայաստանի Հանրապետությունում առաջացրեց քաղաքական ճգնաժամ, որի հետևանքով իշխանությունը խաղաղ կերպով հանձնվեց բոլշևիկներին:

Կարծիքներ

1920 թ. թուրք-հայկական պատերազմի սկզբի օրվա վերաբերյալ

Թե ե՞րբ է սկսվել թուրք-հայկական պատերազմը, և ինչպիսին էր ուժերի հարաբերակցությունը, այդ մասին սկզբնաղբյուրները տարբեր տեղեկություններ են հաղորդում: Որոշ աղբյուրների համաձայն՝ պատերազմը սկսվել է սեպտեմբերի 21-ին, որոշ աղբյուրներում հիշատակվում են 22-ը, 23-ը, 24-ը, 27-ը, 28-ը և այլն: Օրինակ, եթե Ստամբուլում լույս տեսնող «Ժուռնալ դը Օրիանը» 1920 թ. հոկտեմբերի 19-ի համարում գրում է, թե քեմալական արշավանքը սկսվել է սեպտեմբերի 22-ին, ապա Հայաստանի վրա արշավող թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան 11-րդ կարմիր բանակի հրամանատարությանն ուղարկած 1920 թ. նոյեմբերի 3-ի հեռագրում ասում է, թե իր զորքերի «հակահարձակումը» սկսվել է սեպտեմբերի 24-ին[7]: Որ Կարաբեքիրը կեղծում է իրականությունը՝ իր զորքերի հարձակումը ներկայացնելով որպես հակահարձակում, դրա վրա չպետք է զարմանալ: Դա սովորական բան է ագրեսորների համար: Քեմալը ավելի մեծ կեղծիք է կատարում՝ հայտարարելով, թե թուրքերի «հակահարձակումը» սկսվել է սեպտեմբերի 28-ին: Թուրքական մեջլիսում արտասանած իր հայտնի ճառում (1927 թ.) նա ասել է, թե «Զորակոչից երեք և կես-չորս ամիս հետո հայերը հարձակվեցին մեր ուժերի վրա, որոնք կենտրոնացած էին Քեթեկի և Բարդիզի ճակատում: …Հայերը մեր դեմ ձեռնարկեցին ընդհանուր հարձակում՝ անսպասելիորեն սկսե-

[7] *М. Кемаль*, *Путь новой Турции*, *т.* 3, *с.* 117.

լով այն 1920 թ. սեպտեմբերի 24-ի առավոտյան Բարդիզի ճակատում: Հայերը հետ շպրտվեցին սեպտեմբերի 28-ի առավոտյան, մեր բանակը սկսեց իր հարձակումը»[8]:

Ինչպես տեսնում ենք, Քեմալը փորձում է գործը այնպես ներկայացնել, որ իբր իրենք պաշտպանական պատերազմ են մղել: Հայկական աղբյուրներն էլ տարբեր թվեր են նշում. այսպես, Լևոն Շանթի պատվիրակության անդամ, դեպքերի ականատես Համբարձում Տերտերյանը հետագայում իր հուշերում նշում է, որ «թուրքերը սեպտեմբերի 23-ին առանց պատերազմ հայտարարելու հարձակում գործեցին մեր զորամասերի վրա ու մտան մեր երկրի սահմանները: Սկսվեց հայ-թրքական պատերազմը»[9]: Նույնն է ասում նաև Ս. Վրացյանը. «Սեպտեմբերի 23-ին, առանց պատերազմի հայտարարության, թուրքական բանակը դիմեց ընդհանուր հարձակման Հայաստանի դեմ: Սկսվեց հայ-թուրքական պատերազմը»[10], իսկ արտգործնախարարության ավագ քարտուղար Հակոբ Տեր-Հակոբյանը նշում է՝ թուրքական «ընդհանուր հարձակումը սկսավ սեպտեմբերի 21-ին»[11]: Բոլորովին այլ կարծիք է հայտնում մեկ այլ ժամանակակից ու ականատես՝ Շիրակի նահանգապետ Կ. Սասունին: Վերջինս սեպտեմբերի 14-ն է համարում պատերազմի սկիզբը՝ նկատի ունենալով Սարիղամիշի ուղղությամբ ձեռնարկված թուրքական խոշոր հարձակումը: Նա գրում է. «Սեպտեմբեր 14-ին թուրքական ուժեղացրած զորամասերը Գարակուրդի ճակատեն յարձակուեցան Սարիղամիշի վրա»[12]:

Փաստորեն՝ տարբեր են պատերազմի սկզբի մասին տվյալները: Դեռ ավելին՝ Գ. Վ. Չիչերինին ուղարկած սեպտեմբերի 30-ի հեռագրում Հայաստանի Հանրապետության վարչապետ և արտգործնախարար Համո Օհանջանյանը գրում է. «Հայտնում եմ Ձեզ, որ

---

[8] Է. Զոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 160:

[9] Հ. Տերտերյան, Շանթի պատվիրակությունը, «Հայրենիք» ամսագիր, մայիս 1954, էջ 6:

[10] Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Փարիզ, 1928, էջ 418:

[11] Հ. Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 26:

[12] «Հայրենիք», փետրվար, 1926, էջ 60, 76:

չնայած Ձեր հայտարարություններին՝ ընթացիկ սեպտեմբերի 28-ից սկսած թուրքական ազգային ուժերը ընդհանուր հարձակման են անցել Հայաստանի Հանրապետության զորքերի դեմ Օլթիի, Բարդուսի, Կարաուրգանի և Կարակուրտի շրջաններում»[13]:

«Մշակ» թերթը նույնպես սույն տեսակետն է արտահայտում պատերազմի սկզբի մասին: Այս տեսակետների առկայությունը պայմանավորված էր նրանով, որ Թուրքիան պաշտոնապես պատերազմ չէր հայտարարել Հայաստանին, բացի դրանից՝ պատերազմական դրություն Հայաստանի ու Թուրքիայի միջև գոյություն ուներ, փաստորեն, 1920 թ. ամռանից՝ հունիսից, երբ սահմանային բավականին լուրջ ընդհարումներ սկսվեցին հատկապես Օլթիի շրջանում: Հայտնի է, որ Մուդրոսի զինադադարի համաձայն՝ թուրքերը պետք է հետ քաշվեին ռուս-թուրքական 1914 թ. սահմանից այն կողմ, մինչդեռ Օլթին նրանք չէին մաքրել, ուստի հայկական կողմը այս հարցում ակտիվացրեց իր մասնակցությունը, երկու կողմից էլ կանոնավոր զորքերի զորամիավորումներ էին մասնակցում:

Այստեղ «Կոնֆլիկտը չհարթվեց,– գրում է Մշակը,– թեև երկու կառավարությունների և նրանց զորահրամանատարների միջև նոտաների մի շարք փոխանակություն կատարվեց»[14]: Հայկական կողմը պահանջում էր, որ թուրքերը իրենց զորքերը հետ քաշեն Օլթիից, սակայն 1914 թ. սահմանից այն կողմ վերջիններս էլ վկայակոչում էին Բրեստ-Լիտովսկի և Բաթումի պայմանագրերը ու պահանջում, որ կողմերի միջև հարաբերությունների հիմքում դրվեն դրանցից բխող պայմանները: Սահմանային այդ բախումները, թեև մերթ խիստ սրվում էին, մերթ որոշ չափով մեղմանում, բայց ընդհանուր առմամբ չդադարեցին և շարունակվեցին ընդհուպ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Պատկերացում կազմելու համար այդ բախումների լրջության ու մասշտաբների մասին, մեջբերենք հատկապես սեպտեմբերին տեղի ունեցած ընդհարումների մասին Հայաստանի հեռագրական գործակալության որոշ հաղոր-

[13] ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1129, թ. 2:
[14] «Մշակ», 15 սեպտեմբերի, 1920 թ.:

դագրություններ, որոնք տպվել են «Մշակ» թերթի 1920 սեպտեմբերի 15-ի համարում. «Զորական հաղորդագրություն սպարապետի շտաբից 11-ին՝ ժամը 10-ին: Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 9-ին՝ ժամը 14-ին, թուրքերը թնդանոթային կրակ բաց արին Վասկուտ սարի վրա, մեր հրետանին պատասխան տվեց նրան: Սեպտեմբերի 10-ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մոտեցավ մեր պահակախմբին, որ 5605 բարձրության վրա է գտնվում, Ղարադաղ գյուղից երկու վերստ հյուսիս է գտնվում, բայց հրետանու և գնդացրային կրակով հետ շպրտվեց: Սեպտեմբերի 10-ին՝ առավոտյան ժամը 8-ին, տաճկական 2 սավառնակներ թռիչք գործեցին Սարիղամիշի ճակատի երկարությամբ, և միաժամանակ տաճիկները թնդանոթային կրակ բաց արին մեր դիրքերի վրա՝ Բարդուսի դեմ: Մեր հրետանին պատասխանում էր: Նույն օրը՝ ժամը 15-ին, կրկին երևացին հակառակորդի 2 սավառնակներ, թուրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատների վրա՝ Կերօղլիբաշի սարի վրա: Սեպտեմբերի 9-ին՝ ժամը 18-ին և 45 րոպեին՝ երկօրյա կռիվներից հետո, մերոնք գրավեցին Կողբ գյուղն ու աղահանքերը: Վերցված են մի լեռնային թնդանոթ, երկու հեռախոսային ապարատ և ռազմական այլ ավարներ: Մեր կորուստները աննշան են: Փիրլու գյուղի մոտ սպանված է հակառակորդի հակագրոհը հետ վանելու ժամանակ Սասունի ձիավոր խմբի պետ Մանուկը»[15]:

Թերթը գրում է, որ «Սեպտ. 13-ին թուրքական խոշոր ուժերը անսպասելի կերպով հարձակվեցին Սարիղամիշի հայ զորամասի ձախ թևի վրա, ճեղքեցին ճակատը և գրավեցին 4-րդ մարտկոցի երկու լեռնային թնդանոթները: Տեղի ունեցավ կատաղի կռիվ հայկական 4-րդ գնդի ու թուրքերի միջև, ուր առանձին համառություն ու քաջություն ցույց տվեց Գանթարջյանի գումարտակը: Տաք և արյունահեղ կռիվներով մեր զորամասերը նահանջեցին և սեպտ. 14-ի առավոտյան ամրացան Բեգլի-Ահմեդի դիրքերում: Ստիպված եղավ նահանջել և Կաղզվանի զորամասը (5-րդ գունդ, գնդապետ Շաղուբաղյան) և գրավել Բեռնայի դիրքերը: Հեռացավ և Կաղզվանի ազ-

[15] Նույն տեղում:

գաբնակչությունը»: Թուրքական զորքերի սեպտեմբերի 13-ի հարձակման մասին Հայաստանի արտգործնախարարությունը անմիջապես հեռագրեց Թիֆլիս՝ լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկվադյանին. «Սեպտեմբերի 13-ի վաղ առավոտյան թուրքերը հարձակման են անցել Օլթիի ուղղությամբ, ինչպես նաև Սարիղամիշի ջոկատի աջ թևի վրա և գրավել են Վասկուտ սարն ու Բերդիխ գյուղը»,– ասված է հեռագրում:

Թուրքերի հարձակումը շարունակվում է: Խնդրում եմ Ձեզ այդ մասին անհապաղ հաղորդել դաշնակցային բոլոր ներկայացուցիչներին Թիֆլիսում, ինչպես նաև Կոնստանդնուպոլսում ու Փարիզում և բողոքել թուրքերի գործողությունների դեմ, որոնք խախտում են Թուրքիայի կողմից ստորագրված հաշտության պայմանագրի բուն հիմքերը»[16]: Հայաստանի հեռագրական գործակալության մեկ այլ հաղորդագրության մեջ, որը տպագրվել է «Մշակի» սեպտեմբերի 18-ի համարում, ասված է, որ Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 13-ի ու 14-ի կռիվների հետևանքով «մեր զորամասերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ հետ քաշվեցին և բռնեցին Ագուբդիր ու Քեդիր գյուղերի մոտի դիրքերը: Սարիղամիշի ուղղությամբ դրությունը անփոփոխ է: Կողբի շրջանում հետախույզների՝ մեզ համար հաջող գործողություններ են կանխատեսել....: Կարսի շրջանում հայտարարված է զինվորական դրություն: Գեներալ-նահանգապետ է նշանակված զորավար Փիրումյանը...»[17]: Այդ օրերի ռազմական գործողությունների մասին պաշտոնական հաղորդագրություն է հրապարակել նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը: Նրանում ասված է, որ «ներկա ամսվա կեսերին թուրքաց զորքերը, ցանկանալով գրավել քարածուխի հանքերը, մեզ գերազանցող ուժերով առաջացան Օլթիի շրջանի ուղղությամբ՝ հարկադրելով մեր զորամասերին նահանջել: Միաժամանակ խորհրդային ռուսական մի զորաբաժին, որը գտնվում էր հյու-

[16] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 226, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, էջ 418:
[17] «Մշակ», 18 սեպտեմբերի, 1920:

սիսարևելյան սահմանում՝ Ղազախի շրջանում, առաջացավ և հետ մղեց հայկական զորախմբին: Հայաստանի զորքերը, դիմելով հակաարշավանքի, վանեցին հակառակորդին նրա գրաված դիրքերից և հետ խլեցին թշնամու ձեռք ձգած հայկական հողաբաժինը»[18]: Ինչպես տեսնում ենք, այս հաղորդագրությունները իսկական ռազմական ամփոփագրեր են և վկայում են Հայաստանի ու Թուրքիայի միջև պատերազմական դրության գոյության մասին դեռ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Հաղորդագրությունները նաև վկայում են, որ սահմանային միջադեպերը, ինչպես նաև խլրտումները Հայաստանի մուսուլմանաբնակ վայրերում, հրահրում էին քեմալականները՝ իրադրությունը միշտ լարված պահելու, միջամտության համար պատրվակ ունենալու ու պատերազմ սանձազերծելու դեպքում մեղքը հայերի վրա բարդելու նպատակով: Հենց այդպես էլ նրանք վարվեցին հետագայում: Պատահական չէ, որ Ալեքսանդրապոլի կոնֆերանսում և Եվրոպա ու Ռուսաստան ուղարկած պաշտոնական այլ գրություններում անցկացրին այդ վարկածը, որ իբր քեմալական բանակը ոչ թե հարձակման, այլ հակահարձակման է անցել: Այս սխալ տեսակետը թափանցել էր նաև խորհրդային պատմագրության մեջ: Թուրք պատմաբանները ևս, թեև չեն ժխտում այն փաստը, որ սեպտեմբերի վերջերին Թուրքիան պատերազմ սկսեց Հայաստանի դեմ, բայց մեղքը բարդում են վերջինիս վրա, որն իբր մշտապես սպառնում էր թուրք ազգայնականներին թիկունքից, խանգարում Խորհրդային Ռուսաստանի ու Ադրբեջանի հետ կապին, կազմակերպում մուսուլմանների ջարդեր և անընդմեջ հարձակումներ թուրքական սահմանի վրա և այլն: Սա նվաճողներին բնորոշ հասկանալի վարքագիծ է: Պատմությունից հայտնի է, որ հաղթողները միշտ էլ պարտվողներին են մեղավոր հայտարարել:

Այսպիսով, եթե ամփոփենք վերը շարադրվածը և փորձենք կանգ առնել մի որևէ ամսաթվի վրա՝ նշելու թուրքական ընդհանուր արշավանքի սկիզբը, ապա, ըստ «Մշակի» տվյալների, այդպիսին

[18] «Մշակ», 1 հոկտ., 1920:

պետք է համարենք սեպտեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը[19]: Եվ դա ոչ միայն նրա համար, որ այդ թվին սկզբնաղբյուրներում ավելի հաճախ ենք հանդիպում, այլև հատկապես նրա, որ դա, փաստորեն, համընկնում է և՛ Կարաբեքիրի, և՛ Մուստաֆա Քեմալի նշած ամսաթվին: Ճիշտ է, Կարաբեքիրի հեռագրում խոսվում է սեպտեմբերի 24-ի մասին, բայց, եթե հիշենք, որ այն սկսվել է 23-ից լույս 24-ի գիշերը, ապա ամեն ինչ պարզ կլինի: Իսկ Մուստաֆա Քեմալը դարձյալ ռազմական լայնամասշտաբ գործողությունների սկիզբը համարում է սեպտեմբերի 24-ը, թեև հարձակման նախաձեռնությունը, ինչպես տեսանք, վերագրում է հայերին, որոնց իրենք իբր «հետ են շպրտել սեպտեմբերի 28-ի առավոտյան» և սկսել հակահարձակումը:

Անցնելով ուժերի հարաբերակցությանը՝ հենց սկզբից պետք է նշել, որ «Մշակում» պահպանվել են խիստ արժանահավատ տվյալներ, որոնք վկայում են, որ այն ամբողջովին Թուրքիայի օգտին էր: Այդ մասին տեղեկություններ կան նաև թուրք առանձին զինվորական գործիչների, այդ թվում՝ և թուրքական արևելյան ճակատի գլխավոր հրամանատարի՝ Կարաբեքիր փաշայի հուշերում և ներկայիս թուրք ուսումնասիրողների աշխատություններում: Թուրք պատմաբան Թեֆիկ Բիլիքլիօղլու վկայությամբ արդեն 1920 թ. գարնանը քեմալականները Հայաստանի Հանրապետության սահմանների վրա կենտրոնացրել էին շուրջ 22-հազարանոց մի բանակ՝ 69 թնդանոթով ու 200 գնդացրով: Հետագայում համալրելով արևելյան ռազմաճակատը՝ քեմալականները Հայաստանի դեմ նետեցին բավական մեծաթիվ մի բանակ, որն ի վիճակի էր կոտրելու հայկական բանակի դիմադրությունը և ներխուժելու երկրի խորքը: Հայաստանի վրա հարձակման նախօրեին Անկարայում զինվորական բարձրաստիճան սպաների խորհրդում բարձրացված հարցին թե Կարաբեքիրը «ունի 4 դիվիզիա, որոնցից յուրաքանչյուրը կազմված էր 8-9 հազար զինվորից և աջակցություն կստանար թուրքական ու քրդական ուժերից: Բավական է նաև արտիլերիան...»[20]:

---

[19] «Մշակ», 5 նոյեմբերի, 1920:
[20] Նույն տեղում:

Այսպիսով՝ արդեն նշված հետիոտն և հեծյալ զորքերի ընդհանուր թիվը կազմում էր մոտ 20 հազար: Իսկ եթե այդ թվին ավելացնենք նաև քրդական և տեղական ոչ կանոնավոր այլ ուժերը (մոտ 5-7 հազար), որոնք թալանի մոլուցքով բռնված միացել էին թուրքական արշավող բանակներին, զորքերի մյուս տեսակները՝ սակրավորներ, հրետանավորներ, օդաչուներ (3000-5000), ինչպես նաև սանիտարական ու օժանդակ այլ զորամասերը (ընդհանուր թվի 30 տոկոսը), ապա կստանանք, որ Հայաստանի վրա արշավող զորքերի ընդհանուր թիվը անցնում էր 50 հազարից[21]: Ականատեսների վկայությամբ թուրքական զորքերի հարձակումները համարյա միշտ ուղեկցվել են ինքնաթիռներով, մինչդեռ հայկական բանակը ուներ ընդամենը 3 ինքնաթիռ, որոնցից երկուսը չէին գործում: Ընդհանրապես թուրքական բանակը բավականին լավ էր սպառազինված: «Շնորհիվ եվրոպական աջակցության,– գրում է Թիֆլիսի «Աշխատավոր» թերթը իր 1920 թ. նոյեմբերի 19-ի համարում,– տաճիկ զորքը շատ լավ զինված էր, յուրաքանչյուր զորամաս ուներ մեծաքանակ իտալական տիպով թնդանոթներ ու գնդացիրներ, և զգեստներն էլ եվրոպական ծագում ունեին»:

Հայկական կանոնավոր մարտական ուժերը, 25000 հոգի էր ավելացնելով դրանց նաև թիկունքում ծառայողներին, բեռնակիրներին, կառապաններին, սպայակույտը, առողջապահական սպասավորների ընդհանուր թվի 30 տոկոսը, կստանանք բանակի ամբողջ կազմը՝ 3400 հոգի, խմբերի հետ միասին՝ մոտ 40000 հոգի[22]»,– գրում է «Մշակը» 1920 թ. դեկտեմբերի 22-ին[23]:

Տարօրինակ ու զարմանալի կլիներ, որ Քեմալի և Կարաբեքիրի նման փորձված զինվորականները Հայաստանի վրա հարձակում ձեռնարկեին առանց նախապես ուժերի գերազանցություն ստեղծելու, ինչը հաղթանակի միակ ռեալ երաշխիքը կարող էր լինել: Իրականությունը բոլորովին այլ էր. հայկական բանակը ոչ միայն թվապես, այլև մարտական պատրաստությամբ էլ զիջում էր թշնամուն:

---

[21] Տե՛ս Է. Զոհրաբյան, նշվ. աշխ., էջ 221:

[22] «Մշակ», 22 դեկտեմբերի, 1920:

Այսպիսով՝ քեմալական բանակը ամեն տեսակետներից գերազանցում էր հայկական բանակին, և այդ է պատճառը, որ սեպտեմբերի վերջին օրերին տեղի ունեցած մի շարք արյունահեղ ու կռիվներից հետո վերջինս սկսեց նահանջել և արդեն սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը, իսկ 30-ին՝ նաև Մերդենեկը:

Ռազմական գործողությունների ընթացքը

Դեռ սեպտեմբերի կեսերին սկսված թուրքական հարձակման ճնշման տակ Սարիղամիշի ճակատի փոքրաթիվ հայկական զորամասը (շուրջ 500 զինվոր ու 300 կամավոր) մի քանի օր տևած կռիվներից հետո հետ էր քաշվել ընդհուպ մինչև Սարիղամիշ և ամրացել նոր դիրքերում: Դա լրջորեն չէր անհանգստացրել հրամանատարությանը, քանի որ այդ օրերին սահմանային նման կռիվները սովորական երևույթ էին, և չէին կարծում, թե թուրքերը կգրոհեն նաև Սարիղամիշ քաղաքի վրա: Համալրումը, որ ուղարկվել էր Սարիղամիշին, շոշափելիորեն վիճակը փոխել չէր կարող և ազգաբնակչությունը, կանխատեսելով վտանգը, սկսել էր գաղթել՝ դրանով իսկ խուճապ առաջացնելով նաև զինվորների շրջանում: Սեպտեմբերի 27-ին՝ լույս 28-ի գիշերը, թուրքերը նոր գրոհ սկսեցին Սարիղամիշի վրա, և մեկ օր տևած համառ կռիվների հետևանքով մեր պաշտպաններին հարկադրեցին թողնել քաղաքը: Ահա թե ինչ է ասված այդ օրերի իրադարձությունների մասին «Մշակի» հոկտեմբերի 1-ի հաղորդագրության մեջ. «Լույս սեպտեմբերի 28-ի գիշերը թուրքերը խոշոր ուժերով առաջացան Սարիղամիշ քաղաքի ուղղությամբ' միաժամանակ Բարդուսի կողմից և Կարակուրթի վրայով. հակառակորդի ճնշման տակ մեր զորքերը նահանջում են դեպի Սարիղամիշ: Թուրքերի կողմից գործում են երկու ամբողջ դիվիզիաներ:

Լույս սեպտեմբերի 29-ի գիշերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ մենք թողինք Սարիղամիշ քաղաքը: Հանդիպելով Վերիշեն գյուղի մոտ համառ դիմադրության՝ թուրքերը չկարողացան անցնել Սարիղամիշը պաշտպանող զորքերի թիկունքը, և նահանջ կատարվեց: Իգդիրի շրջանում քրդերն ու թուրքերը ցույց

տվեցին ակտիվ գործողություններ: Սեպտեմբերի 28-ին հակառակորդի հետախույզները երևացին Արգաջի գյուղի շրջանում: Սելիմի շրջանում կռիվները շարունակվում էին: Թուրքերը Հարամ-Վարդան գյուղի մոտ առաջացել էին: Միջոցներ էին ձեռք առնված դիմադրելու: Հոկտեմբերի 1-ին Նոր Սելիմի շրջանում կռիվները, շարունակվում էին նախկին դիրքերում[24]:

«Սեպտեմբերի 30-ին՝ գիշերը ժամը 12-ին, հակառակորդը թնդանոթային կրակի օգնությամբ առաջացավ Օլիսլու գյուղի մոտ, բայց մեր զորամասերը հետ մղեցին»,– գրված է Մշակի 1920 թ. հոկտեմբերի 5-ի համարում»[25]:

Թուրքերի կողմից Սարիղամիշի և Մերդենեկի գրավումով ավարտվեց պատերազմի առաջին շրջանը: Պատերազմը, ելնելով ռազմական, գործողությունների բնույթից, ըստ «Մշակ» թերթի, պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի, որոնցից առաջինը տևեց մինչև սեպտեմբերի 30-ը, երկրորդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև 28-ը և երրորդը՝ հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 18-ը: Այս փուլում հաջողությունն ամբողջովին թուրքերի կողմն էր. օգտագործելով գիշերային հարձակումների ու թևերից շրջանցելու մարտավարությունը, ինչպես նաև ուժերի գերազանցություն ստեղծելով հարձակման հիմնական ուղղություններում՝ նրանք ոչ միայն կարողացան նախաձեռնությունը պահել իրենց ձեռքում, այլև որոշակի հաջողության հասան՝ գրավելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Սարիղամիշը: Սակայն ռազմաճակատի մյուս մասերում, հատկապես Իգդիրի շրջանում, նրանք առաջխաղացում չունեցան: Պատկերը համարյա նույնն էր նաև Շահթախթիի շրջանում, որտեղ թեև անընդհատ ընդհարումներ էին տեղի ունենում, բայց խոշորամասշտաբ գործողություններ չէին ծավալվել:

Սեպտեմբերի 30-ին Հայաստանի կառավարությունը արտակարգ նիստում երկիրը հայտարարեց պատերազմական դրության մեջ: Մինչև 35 տարեկանները զենքի տակ առնվեցին, խիստ օրենք-

[24] «Մշակ», 1 հոկտեմբերի, 1920:
[25] «Մշակ», 5 հոկտեմբերի, 1920:

ներ սահմանվեց դասալիքների դեմ: Զինվորական նախարարությանը տվեցին արտակարգ լիազորություններ, նրան ենթարկվեցին երկաթուղիները, ռադիոկայանները և փոխադրության միջոցները: Որոշվեց շրջաններում հեղինակավոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով նախարարների մի մասին և մի շարք գործիչներ ռազմաճակատ ու գավառներ ուղարկել: Կենտրոնում մնացին Հ. Օհանջանյանն ու Ռ. Տեր-Մինասյանը: Կառավարությունը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին: Զինվորական նախարարի հրամանով Երևանի ու Կարսի հրապարակներում կանգնեցվեցին կախաղաններ: Կառավարության հետ միասին ամբողջ երկիրը ևս լարում էր իր ուժերը դիմադրելու համար թշնամուն»[26]:

«Մշակը» մեջբերում է. Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության պաշտոնական հաղորդագրությունը, որում ասված էր, որ «օրվա հերթական լոզունգն է Հայաստանում՝ «Հայրենիքը վտանգի մեջ է, ամեն ինչ դեպի զորաճակատ, ամեն ինչ զորաճակատի համար: Ամենուրեք հայտարարվում է կամավորների ցուցակագրություն»[27]:

Արդեն հոկտեմբերի 13-ի համարում «Մշակը» հայտնում է, որ երեկ՝ «հոկտեմբերի 12-ին՝ առավոտյան ժամը 5-ին, Թիֆլիսից Ալեքսանդրապոլ մեկնեցին 21 վագոններով 800 հայ կամավորներ»[28]: Առավել ակտիվություն ցուցաբերեց Ջավախքի հայությունը: Կամավորներ, բայց ոչ մեծ թվով, եկան նաև սփյուռքի հայաշատ այլ երկրներից: Հարկավոր է նշել, որ Հայաստանում գործող մյուս քաղաքական կուսակցությունները ևս՝ սոցիալիստ-հեղափոխականները, սոցիալ-դեմոկրատները, ռամկավարները նմանապես կոչ արեցին մի կողմ թողնել կուսակցական տարաձայնությունները և ուժերը միավորել՝ անարգ թշնամուն հակահարված տալու, հայ ժողովրդի գլխին կախված անմիջական վտանգը վերացնելու համար:

Նախաձեռնությունը պահելով իրենց ձեռքում՝ թուրքերը հարձակման հիմնական ուղղություններում կարողանում էին ստեղծել

---

[26] Նույն տեղում:

[27] Նույն տեղում:

[28] «Մշակ», 13 հոկտեմբեր, 1920:

ուժերի գերազանցություն: Դա ավելի էր բարդացնում խնդիրը, քանի որ հաջող պաշտպանությունը պահանջում է մեծ կազմակերպվածություն: Բայց, դժբախտաբար, այս տեսանկյունից էլ հայոց բանակում գործերը բարվոք չէին:

«Թե՛ բերդի և թե՛ դաշտային մասերը թույլ էին կազմակերպված, զինվորների մեծ մասը նոր էր հավաքված և չէր մերվում գնդերում: Սպաների ու զինվորների փոխհարաբերությունները շատ մասերում մտերմական չէին: Լավ չէին զորավար Փիրումյանի ու զորավար Հովսեփյանի, ինչպես նաև նահանգապետ Ղորղանյանի հարաբերությունները, ինչը անդրադառնում էր շրջապատի վրա: Զորքերի մի մասը շտապ կերպով զինված էր Անգլիայից նոր ստացված «Ռոս» հրացաններով, որոնց վարժ չէր տիրապետում: Թիկունքը լավ կազմակերպված չէր»,– գրել է «Մշակն» իր նոյեմբերի 1-ի ու 2-ի համարներում:

Պատերազմի ավարտական փուլը

Հոկտեմբերի 28-ին սկսվեց թուրք-հայկական պատերազմի երրորդ՝ վերջին շրջանը, որին անդրադառնում է «Մշակը» հոկտեմբերի 29-ին: Այդ օրը Կարաբեքիր փաշայի համալրված ու վերախմբավորված ուժերը Կարսի ճակատում անցան հարձակման երկու թևերում և ամբողջ օրը տևած «տաք կռիվներից» հետո ձախ թևում կարողացան գրավել Վեզինքոյի բարձունքները, շրջանցել Կարսի պաշտպանությունը արևելքից ու ռեալ վտանգ ստեղծել քաղաքի համար: Մարտերը շատ համառ էին, երկու կողմի կորուստները՝ մեծ: Եվ այստեղ դարձյալ ստիպված ենք կշտամբանքի խոսքեր ասելու մեր հրամանատարության հասցեին: Բանն այն է, որ հայկական բանակի հրամանատարությունը աչքաթող էր արել Կարսը հարավ-արևելքից շրջանցելու և թիկունքից հարվածելու թուրքական բանակի հնարավորությունը: Դրա համար էլ Մեծ Մազնի ու Փոքր Մազնի լեռների բարձունքները և Սուբատան գյուղը թողնվել էր, փաստորեն, անպաշտպան: Այս մասին գրում է «Մշակը». «Կարաբեքիրն էլ, որը քաջատեղյակ էր տեղանքին (1918 թ. ևս գլխավորել

էր Կարսի վրա գրոհող զորամասը) ու գիտեր, որ Կարսը առավել խոցելի է հենց բերդի արևելյան մասում գտնվող Լազարևի ամրոցի կողմից, որոշեց տիրանալ Վեզինքոյին և այդտեղից գրոհել Կարսը[29]: Օգտվելով հոկտեմբերի 25-ի արյունահեղ ճակատամարտից հետո հաստատված համեմատական դադարից՝ Կարաբեքիրը կենտրոնից՝ Բեգլի-Ահմեդի ճակատից, երկու գումարտակ (շուրջ 2000 հոգի) աննկատ փոխադրեց դեպի Սուբատան գյուղը և Մեծ Մազնի լեռը: «Կարսի մեր հրամանատարությունը հոկտեմբերի 27-ին հետախուզության միջոցով պարզում է, որ թշնամական ուժերի մի մասը կենտրոնից հետ է քաշված, բայց թե ո՛ւր, չի կարողանում պարզել: Մեր հրամանատարությունը կարծում էր, թե Բեգլի-Ահմեդից հետ քաշված թուրքական զորամասերը նահանջել են դեպի Սարիղամիշ: Եվ միայն հոկտեմբերի 28-ին, երբ այդ ուժերը արդեն դուրս էին եկել Վեզինքոյի վրա, հասկացավ, որ սխալվել էր: Թշնամին արդեն տիրացել էր Մեծ ու Փոքր Մազնի լեռների բարձունքներին և առաջապահներ հաստատել Վեզինքոյում: Դրանով թուրքերը ոչ միայն հնարավորություն էին ստանում հարվածելու Լազարևի ամրոցին, այլև սպառնալիք ստեղծելու Կարս–Ալեքսանդրապոլ երկաթգծի և խճուղու համար»,– եզրակացնում է թերթը[30]. Գիտակցելով հանդերձ ստեղծված վտանգի լրջությունը՝ մեր հրամանատարությունը, այնուամենայնիվ, մնացել էր այն համոզման, որ թուրքերը Կարսը կփորձեն գրավել Հարամ-Վարդանի և Վլադի-Կարսի կողմից, իսկ Վեզինքոյի գրավումը համարում էին ուշադրությունը շեղելուն ուղղված ռազմական զորաշարժ: Դրա համար էլ հիմնական ուժերը պահելով նշված գծի դեմ՝ Փիրումյանը Վեզինքոյի դեմ ուղարկեց գնդապետ Մազմանյանի գունդը՝ միաժամանակ խնդրելով Սիլիկյանին օգնական ուժեր ուղարկել Մեծ Մազնիի դեմ՝ թշնամուն թիկունքից ևս հարվածելու նպատակով: Դժբախտաբար, այս վերջին մտադրությունը չիրականացավ, քանի որ օգնության ուղարկված գնդապետ Հասան Փաշայանի զորամասը ուշացավ ճա-

[29] «Մշակ», 29 հոկտեմբերի, 1920:
[30] «Մշակ», 30 հոկտեմբերի, 1920:

նապարհին, իսկ Մազմանյանի գունդը ոչ միայն չկարողացավ դուրս շպրտել թշնամուն Վեզինքոյից, այլև պարտվեց ու բռնեց նահանջի ճանապարհը:

Նկարագրելով Կարսի անկումը՝ «Մշակը» գրում է. «Սպարապետ Նազարբեկյանը և ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը Կարսի անկումից ճիշտ 2 ժամ առաջ հեռագիր կստանան զորավոր Փիրումյանից, որը կավետի, թե զորքի բարոյական ու մարտական ոգին բարձր է: Այս հեռագրից 2 ժամ անց հորիզոնի վրա մի օդանավ կերևա: Սպարապետ Նազարբեկյանը, պատուհանից նայելով, կնշմարի հայկական օդանավը և կցնցվի՝ բնազդով զգալով, որ Կարսին աղետ է պատահել, և դառնալով ներկաներին՝ ասում է՝ Կարսը ընկած է: Իսկապես, օդանավը կիջնի՝ ազդարարելով Կարսի անկումը»:

Ըստ «Մշակ» թերթի տվյալների՝ «գերի են ընկել 30-ի չափ զանազան աստիճանի սպաներ և շուրջ 3000-ից ավելի զինվորներ. գերի են հանձնվել 3 գեներալ, 6 գնդապետ, 12 փոխգնդապետ, 100-ից ավելի սպա ու ենթասպա և 2000-ից ավելի զինվոր: Քանի մը հարյուր հազար փութ ցորեն, այլուր, բրինձ, մոտ 50000 փութ շաքար, ահագին քանակությամբ ռազմամթերք-թնդանոթներ, ռումբեր, հրացաններ, փամփուշտներ թշնամու ձեռքը կը մնան»[31]:

Ըստ Կարաբեքիրի՝ թուրքերը Կարսում «առած են 377 թնդանոթ (լավ վիճակի մեջ) և 399 նորոգության կարոտ թնդանոթներ, միլիոններով ռումբ և փամփուշտ ձեռք գցած են»[32]: Գերի ընկած զինվորներին քշեցին դեպի Անատոլիայի խորքերը, որտեղ ծանր, անմարդկային պայմանների հետևանքով նրանց մեծագույն մասը ոչնչացավ: Բայց Կարսի խաղաղ ազգաբնակչության ճակատագիրն էլ պակաս ողբերգական չեղավ:

«Ամեն մեկը պարտավոր է 48 ժամվա ընթացքում հանձնել բոլոր ավարը և հրազենները, ռումբեր և ուժանակներ, բացի որսորդական հրացաններից: Այդ ժամանակը լրանալուց հետո, ում մոտ

[31] «Մշակ», 5 նոյեմբերի, 1920:
[32] Նույն տեղում:

կը գտնվի զենք, կամ թե տների մեջ կը թագնվեն հայ զորամասերի օֆիցերներ և չի հայտնվի իշխանություններին, հանցավորները կստանան ամենախիստ պատիժ: Բացի սրանից, ամեն տեսակ գործակալներ և լրտեսներ, ինչպես անձամբ, այնպես էլ նրանց թաքցնողները կկախվեն,– հայտարարում էր Կարաբեքիր փաշան»,– գրում է «Մշակն» իր 1920 թ. նոյեմբերի 18-ի համարում»[33]:

Սակայն թուրքական զորքերը ոչ թե 48, այլ 4 ժամ էլ չէին սպասել իրենց պահանջների կատարման համար: Քաղաք մտնելուն պես սկսվեցին հայերի թալանն ու կոտորածը: Դեպքերի ականատես Արամ Եսայանը գրում է. «Հինգ օրվա ընթացքում արյունռուշտ ասկյարները և քրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին իրենց բոլոր գազանությունները, որոնք վեր են մարդու երևակայությունից: Բոլոր պահեստները, մառանները, թաքստոցները լիքն էին թաքնված երեխաների, կանանց և երիտասարդների դիակներով: Եղան ընտանիքներ, որոնցից և ոչ մի մարդ չազատվեց: Մոտ 500-600 հոգի ազատվեցին ամերիկյան, հիմնարկություններում: 5-6 օրվա ընթացքում 50-60 սայլ դիակներ դուրս տարան քաղաքից: Սպանում էին բացառապես հայերին: Բացի կոտորածից՝ թալանեցին ժողովրդի բոլոր ունեցած-չունեցածը...»[34]: Սարսափելի կոտորածին հաջորդեցին խմբական ձերբակալությունները հայերի մեջ: Ձերբակալման ժամանակ աչքի առաջ չէին ունենում ո՛չ հասակը, ո՛չ ծագումը և ո՛չ էլ կուսակցական անցյալը:

«Մշակ» թերթի 1920 թ. նոյեմբերի 18-ի 20, 21, 22-ի համարներում նկարագրվում են հայ գերիներին Էրզրում տաժանակիր աշխատանքի ուղարկելու, մոտ 2000 հայ երիտասարդների վագոններով Անատոլիայի խորքերը ուղարկելու, թալանի, կողոպուտի, բռնաբարությունների մասին: Թերթի հաղորդմամբ ու ականատեսների վկայությամբ Կարսում սպանվել են ոչ թե 8000 հայ կին, երեխա ու տղամարդ, այլև 10-12 հազար մարդ[35]:

---

[33] «Մշակ», 18 նոյեմբերի, 1920:
[34] Նույն տեղում:
[35] «Մշակ», 22 նոյեմբերի, 1920:

Թալանը, կողոպուտը և խաղաղ բնակչության բնաջնջումը էլ ավելի մեծ չափեր ընդունեցին Ալեքսանդրապոլի գավառում, որին անդրադարձել է թերթն իր նոյեմբերի 8-18-ի գրեթե բոլոր համարներում:

Նոյեմբերի 6-8-ի զինադադարը և պատերազմի վերսկսումը նոյեմբերի 11-ին ներկայացված են «Մշակի», «Ժողովրդի ձայն», «Վերջին լուր», «Ժողովուրդ», «Յառաջ» թերթերի այդ օրերի գրեթե բոլոր համարներում: Թերթերում ներկայացված է ոչ միայն Ալեքսանդրապոլի գավառում, այլև մարտերը Ջաջուռի և Աղինի շրջանում: Հաստատված զինադադարով միայն նոյեմբերի 18-ի դրությամբ թուրքական զորքը մնում էր իր գրավված դիրքերում՝ Ջաջուռից մինչև Սոգութլու (Սառնաղբյուր) և Աղին: Պատերազմը ավարտվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով և Հայաստանի խորհրդայնացումով: Պայմանագիրը, թերթերը իրենց դեկտեմբերի 3-6-ի համարներում համարում են հայ ժողովրդի համար աղետալի ու կորստաբեր: Անդրադառնալով տարածքային կորուստներին՝ նշվում էր, որ «Հայաստանը զրկվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Կարսի մարզից, Սուրմալուից և Նախիջևանի գավառից, սահմանն անցնում էր Արաքս-Ախուրյան գետերով: Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, զրկվում էր զորք պահելու իրավունքից (կարող էր ունենալ միջև 1500 զինվոր), երկաթուղիներն ու ճանապարհները դրվում էին թուրքերի վերահսկողության տակ: Գրեթե բոլոր վերոնշյալ թերթերը պայմանագիրը Հայաստանի համար համարվում են նվաստացուցիչ ու կորստաբեր:

Եզրակացություն

Փաստորեն՝ թե՛ թուրք-հայկական պատերազմի ընթացքում և թե՛ 1920 թ. նոյեմբերից 1921 թ. դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում քեմալական ցեղասպանության ծրագրի իրագործման մանրամասներ են պարունակում այդ տարիներին և դրանից հետո հրատարակված հայկական բազմաթիվ թերթերի, հանդեսների,

ամսագրերի համարներն ու մի շարք հուշագրեր: Դրանցից կարելի է առանձնացնել 1920-1921 թթ. «Մշակ», «Ժողովրդի ձայն», «Առավոտ», «Վերջին լուր», «Ազգ», «Կոմունիստ» թերթերի, «Հայրենիք» ամսագրի 1926 թ., «Նոր աշխարհ» հանդեսի 1921 թ., «Զարթոնքի» 1966 թ. «Հայաստանի կոչնակի» 1921 թ. համարները: Նրանցում ներկայացված են հայերի բնաջնջման համար կիրառվող դաժան և անմարդկային միջոցներն ու ձևերը: Վերոնշյալ պարբերականների դիտարկումներով Կարսում կոտորվել է 8-12 հազար հայություն: Ըստ հայկական մամուլի տվյալների՝ քեմալական թուրքերի վայրագություններն առավել մեծ չափերի հասան նրանց կողմից գրաված Ալեքսանդրապոլ քաղաքում ու գավառում: 1920 թ. նոյեմբեր – 1921 թ. ապրիլ ամիսներին այդտեղ կոտորվեցին, գերության քշվեցին, սովամահ եղան ավելի քան 120 հազար հայեր: Քեմալականների հայաջինջ քաղաքականությունը շարունակվեց 1921 թ. նաև Ախալքալաքի գավառում, իսկ 1922 թ.՝ Թուրքիայի արևմտյան շրջաններում: Առավել սահմռկեցուցիչ ընթացք ստացավ Իզմիրում (Զմյուռնիա) 1922 թ. աշնանը տեղի ունեցած ցեղասպանությունը: Ըստ վերոնշյալ պարբերական մամուլի նյութերի՝ մի քանի օր շարունակվող վայրագությունների հետևանքով Զմյուռնիայում ցեղասպանվեցին մոտ 30 հազար հայեր, տասնյակ հազարավոր հույներ, իսկ ծաղկուն քաղաքը հրի մատնվեց:

Այսպիսով 1920-1922 թթ. քեմալականները շարունակեցին հայերի բռնագաղթի ու ցեղասպանության քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում, Կիլիկիայում, Իզմիրում, Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մի շարք նահանգներում, որին զոհ գնացին շուրջ 500 հազար հայեր: Իրականացրած ցեղասպանությամբ քեմալականներին ոչ միայն հաջողվեց Թուրքիայի կազմում պահել Արևմտյան Հայաստանն ու Կիլիկիան, այլև հայ ժողովրդից բռնազավթել նրա արևելյան տարածքների զգալի մասը:

Edik Minasyan, Doctor of History, Professor
Dean of YSU History Faculty

Reactions to the Turkish-Armenian War of 1920 and the Implementation of the Kemalist Plan of the Armenian Genocide in the Armenian Press

It is a well-known fact that from the last quarter of the 19th century, the Ottoman Empire declared the Genocide of the Armenians as a state doctrine, as the Turkish variant of solving the Armenian Question. The Armenian Genocide policy began to be put into practice in the 1890s and continued in several stages until 1922.

In 1920-1922 the Armenian Genocide plan was continuously implemented by Mustafa Kemal, a former member of the Young Turks Party. The Turkish-nationalist movement, headed by General Mustafa Kemal, arose in Turkey in 1919, which was due to two circumstances, especially after the occupation of Izmir by the Greeks in May of 1919, and with the need to carry out the "The Great Turan" program through the genocide of Armenians in the east.

Like the Young Turks, the Kemalists also made Cilicia the first target of their genocide plan, where there was an Armenian population of around 200,000 Armenians. Taking advantage of the two-faced policy of the French government, in 1920 in the meantime, the Kemalists massacred and deported tens of thousands of Armenians from Marash, Zeytun, Hachn, Ayntap and other places in Cilicia, thereby defeating the allies' "intentions" to create an "Armenian hearth" in Cilicia.

The atrocities and the genocide committed by the Kemalists in Cilicia, received a wide response in the Armenian press of the time: in the various issues of newspapers "Mshak", "Yaraj", "Zhoghovurd", "Hayastani Kochnak", weekly newspaper "Etchmiadzin", journals "Hayrenik" and "New World".

The peak of the crimes, committed by Kemalists against Armenians was their campaign against the Republic of Armenia in September of 1920. In the Turkish-Armenian war M. Kemal's goal was to "destroy the Armenian army and the Armenian state", to force Armenians to abandon the Treaty of Sevres.

Only in the Kars Province, the Turkish troops massacred tens of thousands of Armenians and did not spare even 6 thousand orphaned Armenian children in the care of the American welfare committee in the Middle East. The Kemal-Bolshevik aggression caused a political crisis in the Republic of

Armenia, as a result of which the power was peacefully handed over to the Bolsheviks.

Both during the Turkish-Armenian war and in 1920-1922 many Armenian newspapers, journals, and periodicals, published in those years and after that, contain details of the implementation of the Kemal's Genocide program. Among them, it is possible to single out issues of "Mshak", "Zhoghovrdi Dzayn", "Aravot", "Verjin Lur", "Azg", "Communist" newspapers, journals "New World", "Hayrenik" and "Hayastani Kochnak". They present the cruel and inhumane methods used for the extermination of Armenians.

With the genocide carried out, the Kemalists not only managed to keep Western Armenia and Cilicia within Turkey, but also to seize a significant part of its eastern territories from the Armenian people.

Эдик Минасян, доктор исторических наук, профессор
Декан исторического факультета ЕГУ

Реакция на турецко-армянскую войну 1920 года и осуществление кемалистского плана геноцида армян в армянской прессе

Общеизвестно, что с последней четверти XIX века Османская империя провозгласила Геноцид армян государственной доктриной, турецким вариантом решения Армянского вопроса. Политика Геноцида армян начала претворяться в жизнь в 1890-х годах и продолжалась в несколько этапов до 1922 года.

В 1920-1922 годах план Геноцида армян последовательно осуществлял Мустафа Кемаль, бывший член Партии Младотурок. Турецко-националистическое движение во главе с генералом Мустафой Кемалем возникло в Турции в 1919 г., что было связано с двумя обстоятельствами, особенно после оккупации Измира греками в мае 1919 г., и с необходимостью претворения в жизнь программы «Великого Турана» посредством геноцида армян на востоке.

Как и младотурки, кемалисты также сделали Киликию первой целью своего плана геноцида, где проживало около 200 000 армян. Пользуясь двуличной политикой французского правительства, кемалисты тем временем в 1920 г. вырезали и депортировали десятки тысяч армян из Мараша,

Зейтуна, Ачна, Айнтапа и других районов Киликии, тем самым разбив «намерения» союзников для создания в Киликии «армянского очага».

Зверства и геноцид кемалистов в Киликии получили широкий резонанс в армянской прессе того времени: в различных номерах газет «Мшака», «Яраджа», «Жоговурда», «Айастани Кочнака», еженедельника «Эчмиадзин», журналов «Айреник» и «Новый мир».

Вершиной преступлений, совершенных кемалистами против армян, стала их военная кампания против Республики Армения в сентябре 1920 г. В турецко-армянской войне М. Кемаля целью было «уничтожить армянскую армию и армянское государство», заставить армян отказаться от Севрского договора.

Только в провинции Карс турецкие войска вырезали десятки тысяч армян и не пощадили даже 6 тысяч осиротевших армянских детей, находившихся на попечении американского благотворительного комитета на Ближнем Востоке. Кемальско-большевистская агрессия вызвала политический кризис в Республике Армения, в результате которого власть мирным путем перешла к большевикам.

Как во время турецко-армянской войны, так и в 1920-1922 гг. многие армянские газеты, журналы и периодические издания, издававшиеся в те годы и в последующие годы, содержат подробности реализации кемалевской программы геноцида. Среди них можно выделить номера газет «Мшак», «Жоговрди Дзайн», «Аравот», «Верджин Лур», «Азг», «Коммунист», журналы «Новый мир», «Айреник» и «Айастани Кочнак». В них представлены жестокие и бесчеловечные методы истребления армян.

Осуществив геноцид, кемалистам удалось не только удержать Западную Армению и Киликию в составе Турции, но и отобрать у армянского народа значительную часть его восточных территорий.

Գրականության ցանկ

1. ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1129, թ. 2:

2. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 226, Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, էջ 418:

3. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ Փաշա, Երևան, 1990, էջ 259-261:

4. Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 44:

5. Геноцид армян: отвественность Турции… т. 2, ч.1, М., 2005, д. 669, с. 51.

6. Кемаль М., Путь новой Турции, т. 3, М., 1932, с. 102:

7. Է. Զոհրաբյան, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 160:

8. Հ. Տերտերյան, Շանթի պատվիրակությունը, «Հայրենիք» ամսագիր, մայիս 1954, էջ 6:

9. Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետությունը, Փարիզ, 1928, էջ 418:

10. Հ. Տեր-Հակոբյան, Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, էջ 26:

11. «Հայրենիք», փետրվար, 1926, էջ 60, 76:

12. «Մշակ», 1920, 15 սեպտեմբերի, 18 սեպտեմբերի, 1 հոկտեմբերի, 5 հոկտեմբերի, 13 հոկտեմբերի, 29 հոկտեմբերի, 30 հոկտեմբերի, 5 նոյեմբերի, 18 նոյեմբերի, 22 նոյեմբերի, 22 դեկտեմբերի:

Էդիկ Մինասյան

1920 ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ «ՄՇԱԿԻ» ԷՋԵՐՈՒՄ

Ներածություն

Առաջին համաշխարհային պատերազմում պարտություն կրած Թուրքիան ճակատագրական օրեր էր ապրում: Հաղթանակած Անտանտի երկրները նպատակ ունեին մասնատելու, բաժան-բաժան անելու Օսմանյան կայսրությունը: Թուրքական լծից ազատագրվում էին արաբական երկրները: Հերթի էր դրված Արևմտյան Հայաստանի ազատագրության և այն Արևելյան Հայաստանում արդեն գոյություն ունեցող անկախ հանրապետության հետ միավորելու և միացյալ ու անկախ Հայաստանի ստեղծման ծրագիրը: Իր լուծումն էր սպասում քրդական հարցը անկախ Քրդստան ստեղծելու միջոցով: Հունաստանը պետք է տեր կանգներ իր պատմական տարածքների մի մասին: Օսմանյան կայսրության մասնատման հաշվին իրենց խնդիրներն ունեին լուծելու Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան: Թվում էր, թե նման պայմաններում Օսմանյան կործանվող կայսրությունը ոչ մի բան չի կարող փրկել: Սակայն այդ փրկության ելքը գտնվեց հանձին երիտթուրք գեներալ Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ 1919 թ. կեսերին Թուրքիայում սկիզբ առած ազգայնական, միլլիական շարժման, որն ուղղված էր Հայաստանի ու Հունաստանի դեմ: Քեմալական շարժումը դեռ իր արյունոտ խանձարուրի մեջ պարզորոշ ցույց էր տալիս, որ այն նոր աղետներ էր բերելու երկրի ոչ թուրք ժողովուրդներին: Հավատարիմ մնալով թուրքական պատմության արյունոտ ավանդույթներին՝ քեմալականները հենց սկզբից ոտնահարեցին հայերի, հույների, արաբների և այլոց մարդկային տարրական իրավունքներն ու նրանց ազատագրական ձգտումները: Դեռևս շարժման ձևավորման ժամանակ Մուստաֆա Քեմալը, թուրք ազգին առանձնացնելով երկրի մյուս ազգերից,

գրում էր, թե «թուրքը օժտված է մեծ ու բարձր հատկություններով»[86]:

Սկզբնական շրջանում քեմալական շարժումը տարերային էր, սակայն 1919 թ. կեսերից հանդես եկավ որպես կազմակերպված ուժ, որն իր առջև դրել էր երիտթուրքերի պանթուրքական ձգտումները, հաշվի առնելով նրանց սայթաքումներն ու դասերը և միջազգային քաղաքական դրությունը՝ փորձում էր դեռևս աննվաճ տարածքները միավորել ազգային ամբողջության մեջ: Այդ նպատակին հասնելու համար ազգային շարժումը, կորցրած համարելով Արաբական երկրներն ու Թրակիան, ձգտում էր առաջին հերթին վերագրավել Հունաստանի տիրապետության տակ գտնվող փոքրասիական թերակղզու ամբողջ արևմտյան մասը՝ Իզմիրի հետ միասին, ապա՝ Պոլիսն ու նեղուցները՝ դաշնակից զորքերից, վերագրավել նաև Կիլիկիան, Արևմտյան Հայաստանից տարածքային ոչ մի զիջում չանել հայությանը, ամեն կերպ արգելել Արևելյան Հայաստանի ամրապնդումը ու շարունակել ջանքերը հայ ժողովրդին ասպարեզից վերջնականապես վերացնելու համար: Դեռ նոր էր սկսվել միլլիական շարժումը (1919 թ. գարուն), երբ նրա ղեկավարները հայտարարեցին, թե «Արևելյան Անատոլիայի բնակչությունը պատրաստ է մինչև մահ դիմադրել հայոց պետությանը, ամեն ձևով արգելակել արևելյան նահանգների կցումը Հայաստանին»[87]:

Պատահական չէր, որ 1919 թ. հուլիսին և սեպտեմբերին հրավիրված Էրզրումի ու Սվալի կոնգրեսներում քեմալականները պաշտոնապես ձևակերպեցին իրենց անզիջում հակահայկական քաղաքականությունը՝ Արևմտյան Հայաստանի հայկական վեց վիլայեթներում «հայկական համայնքի ստեղծման» արգելումը թուրքերի համար հռչակվելով իբրև սրբազան գործ»[88]:

---

[86] Мустафа Кемаль, Путь Новой Турции, т. 1, М., 1929, с.15

[87] Զարեվանդ, ի՞նչ կծրագրեն Թուրքերը միացյալ, անկախ Թուրանիա, էջ 162:

[88] Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 47:

Հոդվածը նվիրված է ավելի քան մեկ դար առաջ տեղի ունեցած Հայաստանի ու հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցած 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքի, Հայաստանի բանակի անհաջողությունների, Կարսի անկման պատճառների և դրա արդյունքում Հայաստանի առաջին հանրապետության անկման ուսումնասիրությանն ու ժամանակին դրանց արձագանքները հայկական մամուլում, մասնավորապես «Յառաջ» պարբերականում:

«Մշակի» անդրադարձները 1920 թ. ամռան ամիսների սահմանային բախումներին: 1920 թ. կեսերից սկսված սահմանային բախումներին լայն անդրադարձներ է կատարել հայկական մամուլը, մասնավորապես «Մշակն» իր տարբեր, մեծ ու փոքր հրապարակումներով:

Զանգիբասարի (ներկայումս՝ Մասիսի շրջան) թուրքաբնակ շուրջ 15 գյուղեր, գտնվելով Երևանից ընդամենը մի քանի կմ հեռավորության վրա և չճանաչելով Հայաստանի իշխանությունը, շուրջ երկու տարի դարձել էին թուրք ու ադրբեջանական էմիսարների հավաքատեղի, բացահայտորեն զինվում էին, ստեղծում մարտական խմբեր, վնասում երկաթգիծը, փակում ճանապարհները, ստեղծում անապահով վիճակ: Ձեռնամուխ լինելով Ղարաբաղի վերջնական գրավմանը՝ Ադրբեջանը միաժամանակ Հայաստանի թուրքաբնակ շրջաններում ձգտում էր առաջ բերել խլրտումներ՝ Հայաստանի ուշադրությունը Ղարաբաղից շեղելու համար: «Մշակն» ու հայկական մամուլի այլ օրգաններ տվյալ ժամանակաշրջանի համար բերում են բազմաթիվ օրինակներ թուրք-թաթարական հրոսակների կողմից սահմանային բախումները ցույց տալու համար:

Երևանի քթի տակ, Չարբախից սկսած, ստեղծվել էր մի դրություն, երբ գնացքով երթևեկելը նույնիսկ վտանգավոր էր: Ոչ մի պաշտոնյա չէր համարձակվում մուտք գործել այդ շրջան, իսկ Հայաստանի կառավարությունը երկար ժամանակ հանդուրժում էր դա: Վերջապես 1920 թ. հունիսին որոշվեց վերջ տալ այդ անբնական

վիճակին և կարգ ու կանոն հաստատել: Ըստ որում՝ կառավարությունը սկզբում փորձեց հարցը լուծել խաղաղ ճանապարհով և առաջարկեց վերջ տալ թշնամական գործողություններին, ճանաչել Հայաստանի իշխանությունը, վճարել պետական հարկերը, բայց հաջողություն չունեցավ և ստիպված եղավ դիմել ավելի վճռական միջոցների: Հունիսի 18-ին ներկայացվեց վերջնագիր՝ պատասխանի համար տալով 6 ժամ: Քանի որ պատասխան չստացվեց, հունիսի 19-ին կառավարությունը զորք ուղարկեց: Թե ինչ աստիճանի կազմակերպված ու զինված էին զանգիբասարցիները թուրք սպաների ղեկավարությամբ, վկայում են «Մշակ» թերթի հուլիսի 4-ի համարում տպագրված փաստերը: Համաձայն դրա՝ կռիվները տևեցին շուրջ տասը ժամ, և որպես ռազմական ավար վերցվեց 2 թնդանոթ, 3 գնդացիր, 40000 փամփուշտ և այլ ռազմամթերք («Մշակ», 4.7.1920): Հակառակորդի ուժերի վերաբերյալ մեկ այլ տեղեկատվություն է հաղորդում գործողության ղեկավար գնդապետ Արսեն Շահմազյանը, ըստ որի՝ հակառակորդին վարժեցրել էին թուրքական հրամանատարները, որի արդյունքում կարողացել էին «ամենահամեստ հաշվարկով 4000-ից ոչ պակաս տեղական մարտիկներ և 600-800 ասկեարներ» պատրաստել («Յառաջ», 27.6.1920, 3-4): Ըստ «Յառաջ» և «Մշակ» թերթերի հունիսի 22-ի հրապարակումների՝ հայկական զինված ուժերին միայն հունիսի 20-ի վաղ առավոտյան հաջողվել է հնազանդեցնել Չոբանքեարա և Շարլու-Մեխմանդար թուրքական գյուղերը («Մշակ», 22 6, 1920, 2), («Յառաջ», 22 6,1920, 2):

Զանգիբասարի դեպքերին զուգահեռ այդ օրերին մարտական գործողություններ ծավալվեցին նաև Օլթիի շրջանում: Դրա համար առիթ ծառայեց հունիսի 18-ին թուրք-քրդական հրոսակախմբերի հայտնվելը Փանջուրեթի հատվածում: Մինչ այդ կառավարությունը արդեն որոշում ուներ Օլթիի քարածխի հանքերը գրավելու մասին, և այդ միջադեպը պարզապես օգտագործվեց՝ արդեն ծրագրված հարձակումը իրագործելու համար: Ինչպես վերը նշվել է, Հայաստանի կառավարությունը ելնում էր այն բանից, որ Կարսի մարզի

Օլթիի շրջանը մտնում էր Ռուսաստանի 1914 թ. սահմանների մեջ, իսկ Մուդրոսի զինադադարը նախատեսում էր թուրքական զորքերի հետքաշումը այդ սահմաններից ու դրա միացումը Հայաստանին: Բացի դրանից՝ Հայաստանը նավթի ու քարայուղի (մազութի) մեծ կարիք ուներ: Ադրբեջանի կողմից պարբերաբար իրականացվող արգելանքների ու շրջափակումների հետևանքով հանրապետության տրանսպորտային միջոցներն ու հատկապես երկաթուղին կանոնավոր չէին աշխատում. վառելիքի այդ մեծ պակասը ինչ-որ չափով լրացնելու համար անհրաժեշտ էր դրան փոխարինող քարածուխ, իսկ այդպիսի հանքապաշար կար Օլթիի օկրուգում (Հակոբյան, 2022, 143): Ահա ինչու սկսելով հարձակում՝ Կարսի հայկական զորքերի հրամանատարությունը, կարծես թե ձգտելով խուսափել հետագա բարդություններից, միաժամանակ հարմար գտավ տեղեկացնել Կարաբեքիր փաշային, որ հայկական զորքերը 1914 թ. սահմանը չեն անցնի: Սակայն արդեն հունիսի 21-ին Կարաբեքիր փաշան մեր հրամանատարությանն ուղղած հեռագրով, իսկ 24-ին Բեքիր Սամին արտգործնախարարությանն ուղարկած նոտայով պահանջեցին հայկական զորքերը դուրս բերել գրաված շրջաններից (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 1):

Նոտաների փոխանակություն կողմերի միջև կատարվեց նաև հուլիսին: Սակայն կոնֆլիկտը ոչ միայն չհարթվեց, այլ գնալով խորացավ, և ընդհարումները, մերթ մարելով, մերթ բորբոքվելով, շարունակվեցին ընդհուպ մինչև թուրքական զորքերի սեպտեմբերյան ընդհանուր արշավանքը: Հայկական մամուլն ու հատկապես «Մշակը», ինչպես Զանգիբասարի դեպքում, այստեղ ևս ոգևորությամբ էին արձագանքում Օլթիի շրջանում տեղի ունեցող դեպքերին: Օլթիի ուղղությամբ հաջող գործողությունների մասին հայկական մամուլը, մասնավորապես «Մշակը» ուներ բազմաթիվ հրապարակումներ: Այս շրջանում տեղի ունեցող դեպքերը պահելով մշտական ուշադրության տակ՝ «Մշակը» տեղեկացնում էր նաև թուրքական զորքերի շարժերի մասին դեպի Օլթի: Մասնավորապես նշվում էր Էրզրումից այստեղ տեղի ունեցող զորաշարժի մասին, և որ թուր-

քական կանոնավոր մի զորամաս, որը բաղկացած էր 200 զինվորներից ու երեք գնդացիրներից, հուլիսի 18-ին գիշերային երկու գրոհ է կազմակերպել Օլթի–Փենալ խճուղու դիրքերի վրա և ետ մղվել («Մշակ», 21.7.1920, 4):

«Մշակը», իր 1920 թ. հոկտեմբերի 21-ի համարում արձանագրելով մեր զորքերի կողմից Օլթիի գրավման փաստը և նրա կարևորությունը, մեջբերում է Մ. Քեմալի խոսքերը. «Հայերը յաջողեցան գրաւել Օլթիի ածխահանքերը, վասնզի մեր ուժերը այդ կողմը անբավարար էին՝ անմիջապես այդ յարձակողականը կասեցնելու: Ասոր համար մեր բանակը, ձախ կողմեն սահմանն անցնելով, աղահանքերուն գիծը բռնեց և միւս կողմէ Բայազիտեն դեպի Արաքս անցնող մեր ուժերուն հետ միանալով՝ յաջողեցան բոլոր կողմերեն ալ յառաջխաղացումները խափանել» («Մշակ», 21.7.1920):

Փաստորեն՝ քեմալականները, թեև Խորհրդային Ռուսաստանի միջամտության պատճառով 1920 թ. հունիսին ստիպված եղան կանգնեցնել Հայաստանի վրա ծրագրված արշավանքը, բայց չհրաժարվեցին այդ մտքից, շարունակեցին հետևողականորեն նախապատրաստվել պատերազմի՝ ռազմավարական կարևոր դիրքեր գրավելով ու զորքեր կենտրոնացնելով և սպասելով այդ հարցի լուծմանը Մոսկվայում: Նրանք փորձեցին 11-րդ Կարմիր բանակին ևս ներքաշել Հայաստանի դեմ պայքարի մեջ Զանգեզուրում ու Նախիջևանում, և պետք է ասել որոշ հաջողությունների հասան («Մշակ», 21.10.1920):

Քեմալը, ըստ էության, հետևողականորեն իրագործում էր Հայաստանի օղակումը արևմուտքից ու հարավից: Ճիշտ գնահատելով Նախիջևանի ռազմավարական դիրքը՝ պանթուրքիզմի ծրագրերի իրագործման ու Հայաստանի դեմ պայքարի հարցում նա միջոց ու եռանդ չէր խնայում այդ երկրամասի ռազմականացման համար: «Հայերը,– ասել է Մուստաֆա Քեմալը,– կարմիր բանակներուն իրենց սահմաններէն քաշուելէն (նկատի ունի նրանց մի մասի լեհական ճակատ փոխադրվելը) օգուտ քաղելով, յունիսին Օլթիի ու Զանգեզուրի ուղղութեամբ զինուորական գործողութիւններու ձեռ-

նարկեցին: Մեր դիւանագիտական ներկայացուցիչներուն միջոցով Երևանի մէջ ձեռնարկներ ըրինք, միւս կողմէ ամեն վայրկեան յարձակման պատրաստ մեր բանակներով կարգ մը միջոցներ ձեռք առանք («Մշակ», 21.10.1920):

Դրությունը շատ ավելի լուրջ էր Վեդիբասարում: Տեղի թուրքերը, ապավինելով, մի կողմից, Շարուր-Նախիջևանի իրենց հայրենակիցների օգնությանը, մյուս կողմից՝ պաշտպանության համար առկա բնական ամրություններին, սկզբից ևեթ չճանաչեցին Հայաստանի իշխանությունը: Թուրքական բանակի հեռանալուց հետո այստեղ մնացած սպաների ու ասկյարների օգնությամբ տեղի թուրքական տարրը զինվեց, կազմակերպվեց և մշտական կռիվներ սկսեց Հայաստանի դեմ՝ հայկական բանակի թիկունքում դառնալով մշտական սպառնալիք: Ինչպես և Զանգիբասարի, այնպես էլ Վեդիբասարի թուրքերին մեծապես խրախուսում և ֆինանսական ու զինական օգնություն էին ցույց տալիս Թուրքիան ու Ադրբեջանը: Իսկ երբ Հայաստանի կառավարությունը փորձում էր ճնշել այդ խռովությունները, ապա մուսավաթական կառավարությունը իսկույն աղմկում էր հայերի կողմից մահմեդականներին կոտորելու մասին լուրերով, հրավիրում անգլիացիների միջամտությունը և կանխում այն:

Վեդիբասարը հետագայում ևս մնաց որպես թրքության ամուր հենակետերից մեկը Հայաստանի դեմ նրա մղած պայքարում: Ահա թե ինչու 1920 թ. հունիսին՝ Զանգիբասարը հնազանդեցնելուց հետո, կառավարությունը հնազանդության առաջարկ արեց նաև Վեդիբասարին: Բայց, ինչպես և պետք էր սպասել, ոչ մի պատասխան չստացվեց: Հուլիսի 10-ին հայկական զորքերը երկու՝ Ղամարլուի (Արտաշատ) և Նոր-Բայազետի (գավառ) կողմերից գրոհ սկսեցին Վեդիբասարի վրա: Կռիվները տևեցին 2 օր: Հուլիսի 11-ին մեր զորքերը գրավեցին մի շարք գյուղեր, իսկ 12-ին մտան Վեդի: Այստեղ ևս թշնամին մարտի դաշտում թողել էր ոչ միայն սպանվածներ, այլև մեծաքանակ զենք ու զինամթերք: Հետապնդելով նահանջող թշնամուն՝ հայկական զորքերը հուլիսի 14-ին անցան Գայլի դրունքը և հաջորդ օրերին գրավեցին Բաշ-Նորաշենը, Ենգիջան, Թազա-

քենդը և Շարուրի մի շարք այլ գյուղեր (Վրացյան, 1993, 324-326): Այս տարածքների ազատագրման մասին թեև փոքր ծավալի, սակայն պարբերաբար հոդվածներ է հրապարակել «Մշակն» իր տարբեր համարներում:

Հետաքրքրական է, որ 1920 թ. ամռան կեսերից հայկական մամուլում, այդ թվում՝ «Մշակ» թերթում սկսում են առանձին բաժիններ հատկացնել սահմանային միջադեպերին և ներկայացնել իրավիճակը յուրաքանչյուր ուղղությամբ տարբեր օրերի դրությամբ: Սա պայմանավորված էր սահմաններում աճող լարվածությամբ և հասարակության ուշադրության կենտրոնացմամբ այդ խնդիրների վրա: Այդ բաժինները հիմնականում կրում են «վերջին ժամ», «ռազմական հաղորդագրություն», «մեր ճակատը» վերնագրերը, չունեին որևէ վերլուծություն, ընդգրկում էին միայն մի քանի տող:

Նույն ժամանակի համար հայկական մամուլը լուրեր է ներկայացնում նաև հակառակորդի զորքերի վատ վիճակի, դասալքությունների, բանակում տարածված դժգոհությունների մասին: Զուգահեռ հոդվածներում գովերգվում են հայկական բանակի քաջագործությունները: Այս տեսանկյունից աչքի է ընկնում զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայաստանի Հանրապետության զորականությանն» ուղղված հրամանը, որտեղ փառաբանվում են 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին հայկական կանոնավոր զորքերի և կամավորական գնդերի քաջագործությունները:

«Մշակը» պատերազմի նախօրյակին և սկզբի ռազմական գործողությունների մասին

Թուրքիան Հայաստանի վրա կենտրոնացրել էր բազմահազարանոց բանակ: Ըստ «Մշակ» թերթի տվյալների՝ սեպտեմբերի 7-ին Անկարայում գումարված զինվորական բարձրաստիճան սպաների խորհրդում, որտեղ վճռվում էր Հայաստանի վրա լայնածավալ հարձակման հարցը, արևելյան ճակատի հրամանատար Ք. Կարաբեքիրն ասել է՝ «ունի 4 դիվիզիա, որոնցից յուրաքանչյուրը կբաղկանա 8-9 հազար զինվորից և աջակցություն կստանա թուրքական և քրդական ուժերից: Բավական է նաև արտիլերիան» («Մշակ»,

11.11.1920, 2): Այսպիսով՝ մոտավոր հաշվումներով անգամ Հայաստանի Հանրապետության դեմ արշավանքի ելած քեմալական զորքերի ընդհանուր թիվը անցնում էր 50 000-ից (Զոհրաբյան, 1997, 169):

Ըստ զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի կազմած տեղեկագրի՝ հայկական բանակում կար ընդհանուր թվաքանակով շուրջ 40 հազար մարդ, որոնցից կանոնավոր ուժեր էին միայն 25 հազարը, մնացածը բաժին էր ընկնում ինտենդանտական, սանիտարական և օժանդակ այլ ծառայություններին (ընդհանուր թվաքանակի 30 տոկոսը) ու կամավորական խմբերին (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 280):

Սահմանային բախումները, թեև մերթ խիստ սրվում էին, մերթ որոշ չափով մեղմանում, բայց ընդհանուր առմամբ չդադարեցին և շարունակվեցին ընդհուպ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Սեպտեմբերի 10-ից սկսած՝ Վասկուտ լեռան վրայի ու Քերողլի լեռան վրայի Սարիղամիշի ջոկատի աջ թևի հայկական դիրքերը ամեն օր ենթարկվում էին հրետանային ռմբակոծության (Հովհաննիսյան, 2016, 218): Պատկերացում կազմելու համար այդ բախումների լրջության ու մասշտաբների մասին մեջբերենք հատկապես սեպտեմբերին տեղի ունեցած ընդհարումների մասին Հայաստանի հեռագրական գործակալության որոշ հաղորդագրություններ, որոնք տպվել են «Մշակ» թերթի 1920 սեպտեմբերի 15-ի համարում: «Զորական հաղորդագրություն սպարապետի շտաբից 11-ին՝ ժամը 10-ին: Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 9-ին՝ ժամը 14-ին, թուրքերը թնդանոթային կրակ բաց արին Վասկուտ սարի վրա, մեր հրետանին պատասխան տվեց նրան: Սեպտեմբերի 10-ի գիշերը հակառակորդի մի մեծ խումբ մոտեցավ մեր պահակախմբին, որը 5095 բարձրության վրա է գտնվում, Ղարադաղ գյուղից երկու վերստ հյուսիս է գտնվում, բայց հրետանու և գնդացրային կրակով հետ շպրտվեց: Սեպտեմբերի 10-ին՝ առավոտյան ժամը 8-ին, տաճկական 2 սավառնակներ թռիչք գործեցին Սարիղամիշի ճակատի երկարությամբ, և միաժամանակ տաճիկները թնդանոթային կրակ բաց արին մեր դիրքերի վրա՝ Բարդուսի դեմ: Մեր հրետանին պա-

տասխանում էր: Նույն օրը՝ ժամը 15-ին, կրկին երևացին հակառակորդի 2 սավառնակներ, թուրքերը հրացաններով կրակում էին մեր խրամատների վրա՝ Կերօղլիբաշի սարի վրա: Սեպտեմբերի 9-ին՝ ժամը 18-ին և 45 րոպեին՝ երկօրյա կռիվներից հետո, մերոնք գրավեցին Կողբ գյուղը և աղահանքերը: Վերցված են մի լեռնային թնդանոթ, երկու հեռախոսային ապարատ և ռազմական այլ ավարներ: Մեր կորուստները աննշան են: Փիրլու գյուղի մոտ սպանված է հակառակորդի հակագրոհը հետ վանելու ժամանակ Սասունի ձիավոր խմբի պետ Մանուկը» («Մշակ», 15.9.1920, 2):

Թերթը գրում է, որ «սեպտ. 13-ին թուրքական խոշոր ուժերը, անսպասելի կերպով, հարձակվեցին Սարիղամիշի հայ զորամասի ձախ թևի վրա, ճեղքեցին ճակատը և գրավեցին 4-րդ մարտկոցի երկու լեռնային թնդանոթները: Տեղի ունեցավ կատաղի կռիվ հայկական 4-րդ գնդի և թուրքերի միջև, ուր առանձին համառություն ու քաջություն ցույց տվեց Գանթարջյանի գումարտակը: Տաք և արյունահեղ կռիվներով մեր զորամասերը նահանջեցին և սեպտ. 14-ի առավոտյան ամրացան Բեգլի-Ահմեդի դիրքերում: Ստիպված եղավ նահանջել և Կաղզվանի զորամասը (5-րդ գունդ, գնդապետ Շաղուբադյան) և գրավել Բեռնայի դիրքերը: Հեռացավ և Կաղզվանի ազգաբնակչությունը» («Մշակ», 15. 9. 1920, 2): Թուրքական զորքերի սեպտեմբերի 13-ի հարձակման մասին Հայաստանի արտգործնախարարությունը անմիջապես հեռագրեց Թիֆլիս՝ լիազոր ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին. «Սեպտեմբերի 13-ի վաղ առավոտյան թուրքերը հարձակման են անցել Օլթիի ուղղությամբ, ինչպես նաև Սարիղամիշի ջոկատի աջ թևի վրա և գրավել են Վասկուտ սարն ու Բերդիխ գյուղը»,– ասված է հեռագրում:

Նույն հեռագրում նշվում է, որ Թուրքերի հարձակումը շարունակվում է: Խնդրում եմ Ձեզ այդ մասին անհապաղ հաղորդել դաշնակցային բոլոր ներկայացուցիչներին Թիֆլիսում, ինչպես նաև Կոնստանդնուպոլսում ու Փարիզում և բողոքել թուրքերի գործողությունների դեմ, որոնք խախտում են Թուրքիայի կողմից ստորագրված հաշտության պայմանագրի բուն հիմքերը» (ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 226: Վրացյան, 1993, 418): Հայկական թերթերը,

մասնավորապես «Մշակը» հայտնում են՝ սեպտեմբերի 14-ին Վանանդի նահանգում հայտարարվում է զինվորական դրություն (Հովհաննիսյան, 2016, 220):

Հայաստանի հեռագրական գործակալության մի այլ հաղորդագրության մեջ, որը տպագրվել է «Մշակի» սեպտեմբերի 18-ի համարում, ասված է, որ Օլթիի ուղղությամբ սեպտեմբերի 13-ի և 14-ի կռիվների հետևանքով «մեր զորամասերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ հետ քաշվեցին և բռնեցին Ագուբդիր և Քեդիր գյուղերի մոտի դիրքերը: Սարիղամիշի ուղղությամբ դրությունը անփոփոխ է: Կողբի շրջանում հետախույզների՝ մեզ համար հաջող գործողություններ են կանխատեսել....: Կարսի շրջանում հայտարարված է զինվորական դրություն: Գեներալ-նահանգապետ է նշանակված զորավար Փիրումյանը...» («Մշակ», 18.9.1920, 2):

Ըստ «Մշակի» հրապարակումների՝ պարզ է դառնում, որ Օլթիի դեպքերից հետո Ալեքսանդրապոլում սկսել են կամավորներ տրամադրել հայկական բանակին («Մշակ», 19.9.1920, 2): Հաջորդող օրերին ևս «Մշակը» հրապարակում է կարճ հաղորդագրություններ, որոնք վկայում են, որ սահմանային միջադեպերը ընդհատումներով ու առանձին ուղղություններով շարունակվում էին: Այդ օրերի ռազմական գործողությունների մասին պաշտոնական հաղորդագրություն էր հրապարակել նաև Թիֆլիսում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչությունը: Նրանում ասված է, որ «ներկա ամսվա կեսերին թուրքաց զորքերը, ցանկանալով գրավել քարածուխի հանքերը, մեզ գերազանցող ուժերով առաջացան Օլթիի շրջանի ուղղությամբ՝ հարկադրելով մեր զորամասերին նահանջել: Միաժամանակ խորհրդային ռուսական մի զորաբաժին, որը գտնվում էր հյուսիսարևելյան սահմանում՝ Ղազախի շրջանում, առաջացավ և հետ մղեց հայկական զորախմբին: Հայաստանի զորքերը, դիմելով հակաարշավանքի, վանեցին հակառակորդին նրա գրաված դիրքերից և հետ խլեցին թշնամու ձեռք ձգած հայկական հողաբաժինը» («Մշակ», 1.10.1920, 2): Օլթիի գործողության և դրան նախորդած իրադարձությունների մասին մեծաթիվ տեղեկություններ է հաղոր-

դում նաև այդ օրերի խոշոր պետական ու քաղաքական գործիչներից Վահէ Արծրունին, որի պնդմամբ արդեն սեպտեմբերի 15-ին Օլթիի բնագիծը քանդվել էր, իսկ ամենաուժեղ դիրքերը գրավվել էին հակառակորդի կողմից (Արծրունի, 2002, 82): Ընդհանուր հուսահատական վիճակ էր սկսվել այդ օրերին և Օլթիի ճակատում որևէ մեկը չէր ցանկանում ստանձնել ճակատի պաշտպանության գործը: Արծրունու վկայությամբ գնդապետ Մազմանեանը Մէրդենեկի պարետությունը հանձնել էր սպա Անուշավան Դիլանեանին, որը, նկատի ունենալով կացության հուսահատական վիճակը, չէր ցանկանում ստանձնել նոր պաշտոնը, սակայն «հրամանատարին ստիպումին առաջ տեղի տուաւ՝ լաւ համոզուած, որ առանձին օգուտ մը պիտի չհասցնէր իր նոր պատասխանատուութիւնովը (Արծրունի, 2002, 82): Ինչպես տեսնում ենք, այս հաղորդագրությունները իսկական ռազմական ամփոփագրեր են և վկայում են Հայաստանի և Թուրքիայի միջև պատերազմական դրության գոյության մասին դեռ մինչև թուրքական ընդհանուր արշավանքը: Հաղորդագրությունները նաև փաստում են, որ սահմանային միջադեպերը, ինչպես նաև խլրտումները Հայաստանի մուսուլմանաբնակ վայրերում հրահրում էին քեմալականները՝ իրադրությունը միշտ լարված պահելու, միջամտության համար պատրվակ ունենալու և պատերազմ սանձազերծելու դեպքում մեղքը հայերի վրա բարդելու նպատակով: Հենց այդպես էլ նրանք վարվեցին հետագայում: Պատահական չէ, որ Ալեքսանդրապոլի կոնֆերանսում և Եվրոպա ու Ռուսաստան ուղարկած պաշտոնական այլ գրություններում անցկացրին այդ վարկածը, որ իբր քեմալական բանակը ոչ թե հարձակման, այլ հակահարձակման է անցել: Այս սխալ տեսակետը թափանցել էր նաև խորհրդային պատմագրության մեջ: Թուրք պատմաբանները ևս, թեև չեն ժխտում այն փաստը, որ սեպտեմբերի վերջերին Թուրքիան պատերազմ սկսեց Հայաստանի դեմ, բայց մեղքը բարդում են վերջինիս վրա, որն իբր մշտապես սպառնում էր թուրք ազգայնականներին թիկունքից, խանգարում Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի հետ կապին, կազմակերպում մուսուլ-

մանների ջարդեր և անընդմեջ հարձակումներ թուրքական սահմանի վրա և այլն: Սակայն, ինչպես նշվեց վերևում, թուրքերը մշտապես պատրաստվում էին ռազմական գործողությունների, և միայն աշխարհաքաղաքական որոշ խնդիրներն էին խանգարում ավելի վաղ սկսել ռազմական գործողությունները: Սա նվաճողներին բնորոշ հասկանալի վարքագիծ է: Պատմությունից հայտնի է, որ հաղթողները միշտ էլ պարտվողներին են մեղավոր հայտարարել:

Արդեն պատերազմի նախօրեին, երբ ակնհայտ էր, որ Օլթիի և այլ ճակատներում հայկական բանակի դիրքերը դարձել են ոչ բարենպաստ, հայկական մամուլը, մասնավորապես «Մշակը» առանձին հրապարակումներով սկսում է դատապարտել հունիս-հուլիս ամիսներին հայկական բանակի հաջողությունները չզարգացնելու փաստը:

Հարկ է նշել, որ հայ-թուրքական սահմանի երկարությամբ ընթացող սահմանային ընդհարումները շարունակվել են ընդհուպ մինչև սեպտեմբերի 28-ի թուրքական ընդհանուր հարձակումը և առանց հայտարարման պատերազմի սկիզբը (Հակոբյան, 2022, 149):

Այսպիսով՝ 1920 թ. հունիս-հուլիս ամիսներին հայկական զինուժի ձեռք բերած նկատելի հաջողությունները հայ-թուրքական սահմանի երկայնքով հօդս ցնդեցին արդեն նույն թվականի աշնանը, երբ թուրքական բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին վերջնականապես թույլատրեցին պատերազմ սկսել Հայաստանի Հանրապետության դեմ:

Մամուլի մասնավորապես «Մշակի» հրապարակումները աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն և արխիվային նյութերի ու հուշագրությունների հետ միասին կազմում են մեկ ամբողջություն և հնարավորություն են ընձեռում լիարժեքորեն վերականգնելու նաև պատերազմական գործողությունների ընթացքն ու ավարտը: Հայկական բանակը ոչ միայն թվապես, այլև մարտական պատրաստությամբ էլ զիջում էր թշնամուն:

«Մշակը» ռազմական գործողությունների ընթացքի մասին

Քեմալական բանակը ամեն տեսանկյունից գերազանցում էր հայկական բանակին, և այդ է պատճառը, որ սեպտեմբերի վերջին օրերին տեղի ունեցած մի շարք արյունահեղ ու կռիվներից հետո վերջինս սկսեց նահանջել, և արդեն սեպտեմբերի 29-ին թուրքերը գրավեցին Սարիղամիշը, իսկ 30-ին՝ նաև Մերդենեկը:

Դեռ սեպտեմբերի կեսերին սկսված թուրքական հարձակման ճնշման տակ Սարիղամիշի ճակատի փոքրաթիվ հայկական զորամասը (շուրջ 500 զինվոր ու 300 կամավոր) մի քանի օր տևած կռիվներից հետո հետ էր քաշվել ընդհուպ մինչև Սարիղամիշ և ամրացել նոր դիրքերում: Դա լրջորեն չէր անհանգստացրել հրամանատարությանը, քանի որ այդ օրերին սահմանային նման կռիվները սովորական երևույթ էին, և չէին կարծում, թե թուրքերը կգրոհեն նաև Սարիղամիշ քաղաքի վրա: Համալրումը, որ ուղարկվել էր Սարիղամիշին, շոշափելիորեն վիճակը փոխել չէր կարող, և ազգաբնակչությունը՝ կանխատեսելով վտանգը, սկսել էր գաղթել՝ դրանով իսկ խուճապ առաջացնելով նաև զինվորների շրջանում: Սեպտեմբերի 27-ին՝ լույս 28-ի գիշերը, թուրքերը նոր գրոհ սկսեցին Սարիղամիշի վրա և մեկ օր տևած համառ կռիվների հետևանքով մեր պաշտպաններին հարկադրեցին թողնել քաղաքը: Ահա թե ինչ է ասված այդ օրերի իրադարձությունների մասին «Մշակի» հոկտեմբերի 1-ի հաղորդագրության մեջ. «Լույս սեպտեմբերի 28-ի գիշերը թուրքերը խոշոր ուժերով առաջացան Սարիղամիշ քաղաքի ուղղությամբ' միաժամանակ Բարդուսի կողմից և Կարակուրթի վրայով. Հակառակորդի ճնշման տակ մեր զորքերը նահանջում են դեպի Սարիղամիշ: Թուրքերի կողմից գործում են երկու ամբողջ դիվիզիաներ:

Լույս սեպտեմբերի 29-ի գիշերը հակառակորդի գերազանց ուժերի ճնշման տակ մենք թողինք Սարիղամիշ քաղաքը: Հանդիպելով Վերիշեն գյուղի մոտ համառ դիմադրության՝ թուրքերը չկարողացան անցնել Սարիղամիշը պաշտպանող զորքերի թիկունքը, և նահանջ կատարվեց: Իգդիրի շրջանում քրդերը և թուրքերը ցույց են տալիս ակտիվ գործողություններ: Սեպտեմբերի 28-ին հակառակորդի հետախույզները երևացին Արգաջի գյուղի շրջանում: Սելիմի շրջանում կռիվները շարունակվում են: Թուրքերը Հարամ-Վարդան

գյուղի մոտ առաջացել են: Միջոցներ են ձեռք առնված դիմադրելու: Հոկտեմբերի 1-ին Նոր Սելիմի շրջանում կռիվները շարունակվում էին նախկին դիրքերում» («Մշակ», 01.10.1920):

«Սեպտեմբերի 30-ին՝ գիշերը ժամը 12-ին, հակառակորդը թնդանոթային կրակի օգնությամբ առաջացավ Օլիսլու գյուղի մոտ, բայց մեր զորամասերը հետ մղեցին»,– գրված է «Մշակի» 1920 թ. հոկտեմբերի 5-ի համարում («Մշակ», 05.10.1920):

Թուրքերի կողմից Սարիղամիշի և Մերդենեկի գրավումով ավարտվում է պատերազմի առաջին շրջանը: Պատերազմը, ելնելով ռազմական, գործողությունների բնույթից, պայմանականորեն կարելի է բաժանել երեք շրջանի, որոնցից առաջինը տևում է մինչև սեպտեմբերի 30-ը, երկրորդը՝ հոկտեմբերի 1-ից մինչև 28-ը, երրորդը՝ հոկտեմբերի 28-ից նոյեմբերի 18-ը: Այս փուլում հաջողությունն ամբողջովին թուրքերի կողմն էր. օգտագործելով գիշերային հարձակումների ու թևերից շրջանցելու մարտավարությունը, ինչպես նաև ուժերի գերազանցություն ստեղծելով հարձակման հիմնական ուղղություններում՝ նրանք ոչ միայն կարողացան նախաձեռնությունը պահել իրենց ձեռքում, այլև որոշակի հաջողության հասան՝ գրավելով ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Սարիղամիշը: Սակայն ռազմաճակատի մյուս մասերում, հատկապես Իգդիրի շրջանում, նրանք առաջխաղացում չունեցան: Պատկերը համարյա նույնն էր նաև Շահթախթիի շրջանում, որտեղ թեև անընդհատ ընդհարումներ էին տեղի ունենում, բայց խոշորամասշտաբ գործողություններ չէին ծավալվել:

Սեպտեմբերի 30-ին Հայաստանի կառավարությունը արտակարգ նիստում երկիրը հայտարարեց պատերազմական դրության մեջ: Մինչև 35 տարեկանները զենքի տակ առնվեցին, խիստ օրենքներ սահմանվեցին դասալիքների դեմ: Զինվորական նախարարությանը տվեցին արտակարգ լիազորություններ, նրան ենթարկվեցին երկաթուղիները, ռադիոկայանները և փոխադրության միջոցները: Որոշվեց շրջաններում հեղինակավոր ներկայացուցիչներ ունենալու նպատակով նախարարների մի մասին և մի շարք գործիչներ ռազ-

մաճակատ ու գավառներ ուղարկել: Կենտրոնում մնացին Հ. Օհանջանյանը և Ռ. Տեր-Մինասյանը: Կառավարությունը մի սրտառուչ կոչ ուղղեց ժողովրդին: «Զինվորական նախարարի հրամանով Երևանի ու Կարսի հրապարակներում կանգնեցվեցին կախաղաններ: Կառավարության հետ միասին ամբողջ երկիրը ևս լարում էր իր ուժերը՝ դիմադրելու համար թշնամուն»[89]:

«Մշակ» մեջբերում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցչության պաշտոնական հաղորդագրությունը, որում ասված էր, որ «օրվա հերթական լոզունգն է Հայաստանում. «Հայրենիքը վտանգի մեջ է, ամեն ինչ դեպի զորաճակատ, ամեն ինչ զորաճակատի համար: Ամենուրեք հայտարարվում է կամավորների ցուցակագրություն» («Մշակ», 14.10.1920):

Պատերազմի առաջին օրերից Հայաստանի կառավարությունը կոչով դիմեց եվրոպական պետություններին՝ խնդրելով օգնություն՝ հայ ժողովրդին սպառնացող վտանգը վերացնելու համար: Սեպտեմբերի 28-ին Հ. Օհանջանյանը հեռագրում է Վրաստանում դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզարյանին, որպեսզի վերջինս օգնության խնդրանքով անմիջապես դիմի Անգլիայի, Ֆրանսիայի, Հունաստանի ու Վրանգելի ներկայացուցիչներին (զենք ու զինամթերք տրամադրել կամ Տրապիզոնի մոտ դեսանտ ափ հանել), (Հ. Ա. Ա., ֆ. 200, գ. 1, գ. 486, մաս. դ., թ. 260, Զոհրաբյան, 1997, 182):

«Մշակ» թերթի 1920 թ. հոկտեմբերի 8-ի համարում հրապարակվել է հայ ժողովրդի անունից ՀՀ կառավարության դիմումը քաղաքակիրթ մարդկությանը՝ հուսալով, որ «հայ ժողովրդի իր հայրենիքի պատվի, ազատության և անկախության համար մղած սրբազան կռվում չի մնա առանց նրանց աջակցության» («Մշակ», 14.10.1920):

Փարիզում ՀՀ պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը կառավարության հանձնարարությամբ տեսակցել է ԱՄՆ, Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ներկայացուցիչներին և խնդրել իրա-

---

4

կան օգնություն: Նույն խնդրով հոկտեմբերի 14-ին դիմել է նաև Մարշալ Ֆոշին, որպեսզի նա ազդեցություն գործի իր կառավարության վրա («Մշակ», 14.10.1920): Սակայն ո՛չ ԱՄՆ-ն, ո՛չ էլ Եվրոպան՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, գործնականորեն ոչ մի իրական քայլ չեն ձեռնարկել՝ վկայակոչելով մեկ այն, որ քեմալական Թուրքիան «կազմակերպված պետություն չէ», նրա վրա «տնտեսական կամ որևէ այլ միջոցով ճնշում գործադրել հնարավոր չէ», մեկ էլ այն, որ «ազգերի լիգան իր տրամադրության տակ ուժեր չունի» և այլն («Մշակ», 14.10.1920):

«Մշակի» 1920 թ. հոկտեմբերի 10-ի համարում տպագրվել է Անդրկովկասում Ֆրանսիայի գերագույն կոմիսարի պաշտոնակատարի պատասխանը, «թե ներկայումս ստեղծվել է այնպիսի դրություն, որը դաշնակիցներին թույլ չի տալիս իրենց ուժերն ուղարկել Անատոլիա՝ հայկական ուժերին անմիջական ռազմական օգնություն ցույց տալու համար» («Մշակ», 10.10.1920):

«Մշակի» այդ նույն համարում հրապարակվել են Իտալիայի քաղաքական գործակալի պաշտոնակատար Ֆրանգոնիի հավաստիացումները այն մասին, որ «համաձայնության պետությունները միջոցներ կգտնեն, որպեսզի հարկադրեն քեմալականներին հարգել Հայաստանի անկախությունը» («Մշակ», 10.10.1920): Սակայն իրականում Իտալիայի գտած միջոցներից մեկն էլ այն էր, որ Սամսունի վրայով զենք ու զինամթերք էր մատակարարում քեմալականներին («Մշակ», 10.10.1920): Անգլիան բավարարվում է միայն բանավոր խոստումներով՝ չցանկանալով ոչ մի գործնական քայլերի դիմել: Դրա լավագույն օրինակը Քերզոնի հեռագիրն է՝ հոկտեմբերի 29-ին ուղղված Անդրկովկասում բրիտանական ներկայացուցչին Ստոքսին: Հեռագրում նա գրում է. «Խոսք չի կարող լինել Հայաստանի ռազմական օժանդակության մասին Տրապիզոնում կամ որևէ այլ տեղ» («Մշակ», 29.10.1920): ԱՄՆ դիրքը ոչնչով չէր տարբերվում Անգլիայից: ԱՄՆ նախագահ Վիլսոնը հայտնեց, որ ինքը «չի կարող նահանգների զորքերը տնօրինել Հայաստանին ռազմական օգնության ցույց տալու նպատակով և չի կարող առանց կոնգրեսի (որն

այն ժամանակ նիստեր չէր գումարում) ֆինանսական օգնություն ցույց տալ նրան...» (ՀԱԱ., ֆ. 114, ց. 2, գ. 37, թ. 15):

Արդեն հոկտեմբերի 13-ի համարում «Մշակը» հայտնում է, որ երեկ՝ «հոկտեմբերի 12-ին՝ առավոտյան ժամը 5-ին, Թիֆլիսից Ալեքսանդրապոլ մեկնեցին 21 վագոններով 800 հայ կամավորներ» («Մշակ», 13.10.1920): Առավել ակտիվություն ցուցաբերում էր Ջավախքի հայությունը: Կամավորներ, բայց ոչ մեծ թվով, եկան նաև սփյուռքի հայաշատ այլ երկրներից: Հարկավոր է նշել, որ Հայաստանում գործող քաղաքական մյուս կուսակցությունները ևս՝ սոցիալիստ-հեղափոխականները, սոցիալ-դեմոկրատները, ռամկավարները, նմանապես կոչ արեցին մի կողմ թողնել կուսակցական տարաձայնությունները և ուժերը միավորել՝ անարգ թշնամուն հակահարված տալու, հայ ժողովրդի գլխին կախված անմիջական վտանգը վերացնելու համար:

Նախաձեռնությունը պահելով իրենց ձեռքում՝ թուրքերը՝ հարձակման հիմնական ուղղություններում կարողանում էին ստեղծել ուժերի գերազանցություն: Դա ավելի էր բարդացնում խնդիրը, քանի որ հաջող պաշտպանությունը պահանջում էր մեծ կազմակերպվածություն: Բայց, դժբախտաբար, այս տեսանկյունից էլ հայոց բանակում գործերը բարվոք չէին:

«Թե՛ բերդի և թե՛ դաշտային մասերը թույլ էին կազմակերպված, զինվորների մեծ մասը նոր էր հավաքված և չէր մերվում գնդերում: Սպաների և զինվորների փոխհարաբերությունները շատ մասերում մտերմական չէր: Լավ չէին զորավար Փիրումյանի և զորավար Հովսեփյանի, ինչպես նաև նահանգապետ Ղորղանյանի հարաբերությունները, ինչն անդրադառնում էր շրջապատի վրա: Զորքերի մի մասը շտապ կերպով զինված էր Անգլիայից նոր ստացված «Ռոս» հրացաններով, որոնց վարժ չէր տիրապետում: Թիկունքը լավ կազմակերպված չէր»,– գրում է «Մշակն» իր հերթական համարներում:

«Մշակը» պատերազմի ավարտական փուլի պարտության պատճառների և Ալեքսանդրապոլի.... մասին

Հոկտեմբերի 28-ին սկսվեց թուրք-հայկական պատերազմի երրորդ՝ վերջին շրջանը, որին անդրադարձել է «Մշակը» հոկտեմբերի 29-ին: Այդ օրը Կարաբեքիր փաշայի համալրված ու վերախմբավորված ուժերը Կարսի ճակատում անցան հարձակման երկու թևերում և ամբողջ օրը տևած «տաք կռիվներից» հետո ձախ թևում կարողացան գրավել Վեզինքոյի բարձունքները, շրջանցել Կարսի պաշտպանությունը արևելքից ու ռեալ վտանգ ստեղծել քաղաքի համար: Մարտերը շատ համառ էին, ու երկու կողմի կորուստներն էլ՝ մեծ: Եվ այստեղ դարձյալ ստիպված ենք կշտամբանքի խոսքեր ասելու մեր հրամանատարության հասցեին: Բանն այն է, որ հայկական բանակի հրամանատարությունը աչքաթող էր արել Կարսը հարավ-արևելքից շրջանցելու ու թիկունքից հարվածելու թուրքական բանակի հնարավորությունը: Դրա համար էլ Մեծ Մազնի ու Փոքր Մազնի լեռների բարձունքները և Սուբատան գյուղը, փաստորեն, թողնվել էր անպաշտպան: Այս մասին գրում է «Մշակը». «Կարաբեքիրն էլ, որը քաջատեղյակ էր տեղանքին (1918 թ. ևս գլխավորել էր Կարսի վրա գրոհող զորամասը) ու գիտեր, որ Կարսը առավել խոցելի է հենց բերդի արևելյան մասում գտնվող Լազարևի ամրոցի կողմից, որոշեց տիրանալ Վեզինքոյին և այդտեղից գրոհել Կարսը («Մշակ», 29.10. 1920):

Օգտվելով հոկտեմբերի 25-ի արյունահեղ ճակատամարտից հետո հաստատված համեմատական դադարից՝ Կարաբեքիրը կենտրոնից՝ Բեգլի-Ահմեդի ճակատից, երկու գումարտակ (շուրջ 2000 հոգի) աննկատ փոխադրեց դեպի Սուբատան գյուղը և Մեծ Մազնի լեռը: «Կարսի մեր հրամանատարությունը հոկտեմբերի 27-ին հետախուզության միջոցով պարզում է, որ թշնամական ուժերի մի մասը կենտրոնից հետ է քաշված, բայց թե ո՛ւր, չի կարողանում պարզել: Մեր հրամանատարությունը կարծում էր, թե Բեգլի-Ահմեդից հետ քաշված թուրքական զորամասերը նահանջել են դեպի Սարիղամիշ: Եվ միայն հոկտեմբերի 28-ին, երբ այդ ուժերը արդեն դուրս էին եկել Վեզինքոյի վրա, հասկացավ, որ սխալվել էր: Թշնամին արդեն տիրացել էր Մեծ և Փոքր Մազնի լեռների բարձունքնե-

ին և առաջապահներ հաստատել Վեզինքոյում: Դրանով թուրքերը ոչ միայն հնարավորություն էին ստանում հարվածելու Լազարևի ամրոցին, այլև սպառնալիք ստեղծել Կարս–Ալեքսանդրապոլ երկաթգծի և խճուղու համար»,– եզրակացնում է թերթը» («Մշակ», 29.10.1920): Գիտակցելով հանդերձ ստեղծված վտանգի լրջությունը՝ մեր հրամանատարությունը, այնուամենայնիվ, մնացել էր այն համոզման, որ թուրքերը Կարսը կփորձեն գրավել Հարամ-Վարդանի և Վլադի-Կարսի կողմից, իսկ Վեզինքոյի գրավումը համարում էին ուշադրությունը շեղելուն ուղղված ռազմական շարժ: Դրա համար էլ հիմնական ուժերը պահելով նշված գծի դեմ՝ Փիրումյանը Վեզինքոյի դեմ ուղարկեց գնդապետ Մազմանյանի գունդը՝ միաժամանակ խնդրելով Սիլիկյանին օգնական ուժեր ուղարկել Մեծ Մազնիի դեմ՝ թշնամուն թիկունքից ևս հարվածելու նպատակով: Դժբախտաբար, այս վերջին մտադրությունը չիրականացավ, քանի որ օգնության ուղարկված գնդապետ Հասան Փաշայանի զորամասը ուշացավ ճանապարհին, իսկ Մազմանյանի գունդը ոչ միայն չկարողացավ դուրս շպրտել թշնամուն Վեզինքոյից, այլև պարտվեց ու բռնեց նահանջի ճանապարհը:

Նկարագրելով Կարսի անկումը՝ «Մշակը» գրում է. «Սպարապետ Նազարբեկյանը և ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը Կարսի անկումից ճիշտ 2 ժամ առաջ հեռագիր կստանան զորավոր Փիրումյանից, որը կավետի, թե զորքի բարոյական ու մարտական ոգին բարձր է: Այս հեռագրից 2 ժամ անց հորիզոնի վրա մի օդանավ կերևա: Սպարապետ Նազարբեկյանը, պատուհանից նայելով, կնշմարի հայկական օդանավը և կցնցվի՝ բնազդով զգալով, որ Կարսին աղետ է պատահել, և դառնալով ներկաներին՝ ասում է՝ Կարսը ընկած է: Իսկապես, օդանավը կիջնի՝ ազդարարելով Կարսի անկումը»:

Ըստ «Մշակ» թերթի տվյալների՝ գերի են ընկել 30-ի չափ զանազան աստիճանի սպաներ և շուրջ 3000-ից ավելի զինվորներ (գերի են հանձնվել 3 գեներալ, 6 գնդապետ, 12 փոխգնդապետ, 100-ից ավելի սպա ու ենթասպա և 2000-ից ավելի զինվոր): «Քանի մը հարյուր հազար փութ ցորեն, ալյուր, բրինձ, մոտ 50000 փութ

շաքար, ահագին քանակությամբ ռազմամթերք-թնդանոթներ, ռումբեր, հրացաններ, փամփուշտներ՝ թշնամու ձեռքը կը մնան» («Մշակ», 05.11.1920):

Կարսի անկումից հետո ռազմաճակատում ծավալված իրադարձությունները ևս գտնվում էին«Մշակի» ուշադրության կենտրոնում: Մասնավորապես նոյեմբերի 15-ին լույս տեսած համարում կարդում ենք, որ նոյեմբերի 11-ին հակառակորդը գրավել է Դուզքենդ, Դիրաքլեար, Կարաքլիս, Ղոնախդրան և Բայանդուր գյուղերը («Մշակ», 5.11.1920): Արդեն հաջորդ համարից տեղեկանում ենք, որ «Ջաջուռի լեռնանցքում կռուի ժամանակ նոյեմբերի 14-ին հայերը տուել են կորուստներ 100 սպանուած և վիրաւորուած» («Մշակ», 17.11.1920):

Պատերազմի նկարագրությունները գրեթե բոլոր համարներում առկա են: Պատերազմի վերջին շրջանի անհաջողությունների կողքին «Մշակը» հաճախ ներկայացնում է նաև հայկական զորքերի հաջողությունների դրվագներ. «Նոյեմբերի 14-ին մենք վերցրին Կիրիխ գիւղը և Ադին կայարանը» («Մշակ», 18.11.1920):

Այնուամենայնիվ, սկսած նոյեմբերի 19-ի համարներից՝ «Մշակի» դադարեցվում են ռազմական գործողությունների նկարագրություններ և սկսում են ներկայացնել բանակցային գործընթացն ու թուրքական կողմի պահանջները:

«Ըստ Կարաբեքիրի՝ թուրքերը Կարսում «առած են 377 թնդանոթ (լավ վիճակի մեջ) և 399 նորոգության կարոտ թնդանոթներ, միլիոններով ռումբ և փամփուշտ ձեռք գցած են»: Գերի ընկած զինվորներին քշեցին դեպի Անատոլիայի խորքերը, որտեղ ծանր, անմարդկային պայմանների հետևանքով նրանց մեծագույն մասը ոչնչացավ: Բայց Կարսի խաղաղ ազգաբնակչության ճակատագիրն էլ պակաս ողբերգական չեղավ:

«Ամեն մեկը պարտավոր է 48 ժամվա ընթացքում հանձնել բոլոր ավարը և հրազենները, ռումբեր և ուժանակներ՝ բացի որսորդական հրացաններից: Այդ ժամանակը լրանալուց հետո, ում մոտ կը գտնվի զենք, կամ թե տների մեջ կը թագնվեն հայ զորամասերի

օֆիցերներ և չի հայտնվի իշխանություններին, հանցավորները կստանան ամենախիստ պատիժ: Բացի սրանից՝ ամեն տեսակ գործակալներ և լրտեսներ, ինչպես անձամբ, այնպես էլ նրանց թաքցնողները կկախվեն,– հայտարարում էր Կարաբեքիր փաշան»,– գրում է «Մշակն» իր 1920 թ. նոյեմբերի 18-ի համարում» («Մշակ», 18.11. 1920)

Սակայն թուրքական զորքերը ոչ թե 48, այլ 4 ժամ էլ չէին սպասել իրենց պահանջների կատարման համար: Քաղաք մտնելուն պես սկսվեց հայերի թալանն ու կոտորածը: Դեպքերի ականատես Արամ Եսայանը գրում է. «Հինգ օրվա ընթացքում արյունռուշտ ասկյարները և քրդերը խաղաղ ժողովրդի գլխին գործադրեցին իրենց բոլոր գազանությունները, որոնք վեր են մարդու երևակայությունից: Բոլոր պահեստները, մառանները, թաքստոցները լիքն էին թաքնված երեխաների, կանանց և երիտասարդների դիակներով: Եղան ընտանիքներ, որոնցից և ոչ մի մարդ չազատվեց: Մոտ 500-600 հոգի ազատվեցին ամերիկյան հիմնարկություններում: 5-6 օրվա ընթացքում 50-60 սայլ դիակներ դուրս տարան քաղաքից: Սպանում էին բացառապես հայերին: Բացի կոտորածից՝ թալանեցին ժողովրդի բոլոր ունեցած-չունեցածը... : Սարսափելի կոտորածին հաջորդեցին խմբական ձերբակալությունները հայերի մեջ: Ձերբակալման ժամանակ աչքի առաջ չէին ունենում ո՛չ հասակը, ո՛չ ծագումը և ո՛չ էլ կուսակցական անցյալը:

«Մշակ» թերթի 1920 թ. դեկտեմբերի վերջին համարներում նկարագրվում են հայ գերիներին Էրզրում տաժանակիր աշխատանքի ուղարկելու, մոտ 2000 հայ երիտասարդների վագոններով Անատոլիայի խորքերը ուղարկելու, թալանի, կողոպուտի, բռնաբարությունների մասին: Թերթի հաղորդմամբ, ականատեսների վկայությամբ Կարսում սպանվել է ոչ թե 8000 հայ կին, երեխա ու տղամարդ, այլև 10-12 հազար մարդ («Մշակ», 22.10.1920):

Թալանը, կողոպուտը և խաղաղ բնակչության բնաջնջումը էլ ավելի մեծ չափեր ընդունեցին Ալեքսանդրապոլի գավառում, որին անդրադարձել է թերթն իր դեկտեմբերի վերջի համարներում:

«Մշակ» թերթում ներկայացված է ոչ միայն Ալեքսանդրապոլի գավառում, այլև մարտերը Ջաջուռի և Աղինի շրջանում: Հաստատված զինադադարով միայն նոյեմբերի 18-ի դրությամբ թուրքական զորքը մնում էր իր գրավված դիրքերում՝ Ջաջուռից մինչև Սոգութլու (Սառնաղբյուր) և Աղին: Կարաբեքիր փաշան, Ալեքսանդրապոլում խորհրդային պատվիրակության հետ հանդիպման առաջին օրը (նոյեմբերի 24-ին) մեծ պարծենկոտությամբ իր հաղթանակի պատմությունն անելով հանդերձ, միաժամանակ խոստովանել էր, թեև «ամենայն մանրամասնությամբ մենք գիտեինք, թե ինչ է կատարվում հայերի մոտ, ինչ ուժ ունեն նրանք, որտեղ են տեղավորված նրանց զորամասերը, բայց և այնպես չէինք կարող ենթադրել, թե այդքան շուտ մեզ պիտի տեսնենք Արփաչայի ափին կանգնած» («Մշակ», 22.12.1920):

Պատերազմը ավարտվեց 1920 թ. դեկտեմբերի 2-ի Ալեքսանդրապոլի պայմանագրով և Հայաստանի խորհրդայնացումով: Պայմանագիրը թերթը իր դեկտեմբերի 22-ի համարում համարում է հայ ժողովրդի համար աղետալի և կորստաբեր: Անդրադառնալով տարածքային կորուստներին՝ նշվում էր, որ «Հայաստանը զրկվում էր ոչ միայն Արևմտյան Հայաստանից, այլև Կարսի մարզից, Սուրմալուից և Նախիջևանի գավառից, սահմանն անցնում էր Արաքս-Ախուրյան գետերով: Հայաստանը հրաժարվում էր Սևրի պայմանագրից, զրկվում էր զորք պահելու իրավունքից (կարող էր ունենալ միջև 1500 զինվոր), երկաթուղիները և ճանապարհները դրվում էին թուրքերի վերահսկողության տակ: Գրեթե բոլոր վերոնշյալ թերթերը պայմանագիրը Հայաստանի համար համարվում են նվաստացուցիչ ու կորստաբեր:

Եզրակացություն

Այսպիսով՝ «Մշակ» թերթի 1920 թ. հրապարակումների և այլ սկզբնաղբյուրների ու գրականության վերլուծության հիման վրա կարելի է եզրակացնել, որ թուրք և խորհրդահայ պատմագրության մեջ տարածված այն կարծիքը, թե իբրև հայկական կողմն է սկսել

թուրք-հայկական պատերազմը հերքվում է, ցույց է տրվում, որ դա ակնհայտ կեղծիք է քեմալականների կողմից առաջ քաշված տեսակետ՝ իրենց ոճրագործությունը Հայաստանի դեմ արդարացնելու համար: Ակնհայտ փաստերով հիմնավորվում է Մ. Քեմալի և Ք. Կարաբեքիրի կողմից դեռևս 1920 թ. փետրվար-մարտ ամիսներին Հայաստանի Հանրապետության դեմ նախապատրաստվող հարձակման մասին: Դրա հետաձգումը կապվում է քեմալա-բոլշևիկյան դաշինքի ձևավորման ավարտի և Խորհրդային Ռուսաստանի կողմից քեմալական Թուրքիային տրվող նյութական ու ռազմական (զենք, զինամթերք) օգնության, Հայաստանը խորհրդայնացնելու և տարածքը միմյանց միջև բաժանելու համաձայնության կայացման, ինչպես նաև աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխման, ՀՀ դիվանագիտական մեկուսացման և մեծ տերությունների կողմից գործնական որևէ օգնություն ցույց չտալու հետ: «Մշակ» թերթից բերված տվյալներով ցույց են տրվում Մ. Քեմալի՝ քեմալական Թուրքիայի և նրա ցեղակից Ադրբեջանի կողմից սահմանային բախումներ հրահրելու, ՀՀ տարածքում թուրք-թաթարական խռովություններ կազմակերպելու և ՀՀ սուվերեն տարածքի վրա արշավանքներ ձեռնարկելու ու վերջապես սեպտեմբերի 28-ին ընդհանուր հարձակման միջոցով Հայաստանի Հանրապետության և նրա բանակը ոչնչացնելու պանթուրքիստական ծրագիրը իրագործելու նպատակները, ռազմական գործողությունների ընթացքն ու ավարտը, ՀՀ պարտությունն ու Ալեքսանդրապոլի պայմանագիրը, պարտության պատճառներն ու Հայաստանի խորհրդայնացումը: Վերջում ՀՀ պարտության պատճառների վերլուծությամբ կարևորվում է արդի իրավիճակում այն չկրկնելու, պատմությունից դասեր քաղելու և հաշվի առնելու հրամայականը:

Գրականության ցանկ

1. ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 37, թ. 15:
2. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 486, թ. 226:
3. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 1, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 576, թ. 176:

4. ՀԱԱ, ֆ. 200, g. 1, գ. 602, թ. 280:

5. Արծրունի Վ., Հայ-տաճկական պատերազմը: Հայ սպայութիւնը: Շատախ, Երևան, 2002, 456 էջ:

6. Անտոնյան Ա., Մեծ ոճիրը, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 259-261:

7. Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973:

8. Զոհրաբյան Է., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 28:

9. Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999:

10. Кемаль А., 1966, Избранные речи и выступления, Москва, с. 99:

11. Սահակյան Ռ., Թուրք-Ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 44:

12. Սաֆարյան Ռ., Մուստաֆա Քեմալ. պայքար Հայաստանի Հանրապետության դեմ 1919-1921 թթ., Երևան, 2019:

13. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 447-448:

14. Սիմոնյան Հ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1991:

15. Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 43:

16. Геноцид армян: Ответственность Турции и обьязательства мирового сообщества. Документы и комментарий. Под. Ред. Ю. Г. Барсегов, т. 2, часть 1, 2003.

17. Кемаль М., Путь новой Турци, М., 1934, т. 3, с. 117:

18. «Документывнешней политики ССС», М. 1958, Т. 2, с. 554-555, 725-726.

19. Զանգիբասարը պիտի զինաթափ լինի, «Յառաջ», 19.6.1920, N 127, էջ 2:

20. Զանգիբասարը, «Յառաջ», 20.6.1920, N 128, էջ 3:

21. Քանդուեց Զանգիբասարի աւազակային որջը, «Յառաջ», 22.6.1920, N 129, էջ 2:

22. Կառավարական հաղորդագրութիւն Զանգիբասարի մասին 24.6.1920, N 131, էջ 1:

23. Փառաւոր յաղթանակ, 25.6.1920, N 132, էջ 2:

24. Զանգիբասարի օպերացիայի ղեկավար գնդապետ Շահմազեանի հրամանից, 27.6.1920, N 134, էջ 3-4:
25. Օլթիի ածխահանքերը, 29.6.1920, N 135, էջ 2:
26. Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական դրությունը 1920 թ., Երևան, 2022:
27. Օլթիի ուղղութեամբ, 3.7.1920, N 138, էջ 4:
28. Էրզրումից նոր ոյժեր դէպի Օլթի, 3.7.1920, N 141, էջ 4:
29. «Գայլի դրունքը» գրաւած, 16.7.1920, N 149, էջ 4:
30. Յուլիսի 18-ի ռազմական հաղորդագրութիւն, 21.7.1920, N 152, էջ 4:
31. Էրզրումը դատարկւում է, 22.7.1920, N 153, էջ 4:
32. Ռուբէն Տէր-Մինասեան, Հրաման Հայաստանի Հանրապետութեան զօրականութեան, 1920 թ. յուլիսի 20, Երևան, N 315:
33. «Յառաջ», 22.6.1920, 27.6.1920:
34. Կոչ հայ զինուորութեան եւ աշխատաւորութեան, «Յառաջ», 19.9.1920, N 203, էջ 3:
35. «Մշակ», 15.9.1920:
36. «Մշակ», 18.9.1920:
37. «Մշակ», 19.9.1920:
38. «Մշակ», 1.10.1920:
39. «Մշակ», 4.07.1920:
40. «Մշակ», 22.06.1920:
41. «Մշակ», 21.07.1920:
42. «Մշակ», 17.07.1920:
43. «Մշակ», 10.10.1920:
44. «Մշակ», 13.13.1920:
45. «Մշակ», 14.10.1920:
46. «Մշակ», 21.10.1920:
47. «Մշակ», 29.10.1920:
48. «Մշակ», 5.11.1920:
49. «Մշակ», 11.11.1920:
50. «Մշակ», 16.11.1920:
51. «Մշակ», 18.11.1920:
52. «Մշակ», 22.12.1920:
53. Հայեր մեծ կորուստ կը պատճառեն թուրքերու եւ թաթարներու, «Ժողովուրդի ձայն», 21.7.1920, N 3845 էջ 3:
54. Զանգիբասարի անկումը, «Ժողովուրդ», 23.6.1920, N 97 էջ 1:

55. Զօրական հաղորդագրութիւն, «Ժողովուրդ», 16.7.1920, N 114 էջ 3:
56. Մեր զօրքերի առաջխաղութիւնը, 17.7.1920, N 115 էջ 2:

Edik Minasyan, Doctor of History, Professor
Yerevan State University, Dean of the Faculty of History,
Acting Head of Chair of Armenian History
Email: history@ysu.am

Reflection of 1920 Turkish-Armenian War in the Newspaper "Mshak"
Summary

Key words: *Milli (nationalist) movement, Mustafa Kemal, Kyazim Karabekir, Republic of Armenia, Turkish army, Entente countries, Sarighamish, Kars, Treaty of Alexandrapol, Soviet Russia*

The article makes a focus on the preparations of the attack by Kemalist Turkey against the Republic of Armenia, as well as the issues of organizing border clashes, the attack itself, the course of military operations, the reasons for the defeat of the Armenian army, the division of the territories of Armenia as a result of the Kemalist-Bolshevik alliance, and the Sovietization of Armenia, which have been widely discussed by the Armenian periodicals and especially "Mshak" newspaper, which contains detailed and valuable details about the above mentioned events. The materials included in the periodical and their analysis spread a completely new light on the research process of the issue.

The analysis of the materials of "Mshak" newspaper shows how, under the leadership of Kemal, the leader of the Milli (nationalist) movement in Turkey since mid-1919, preparations were underway for an attack against the Republic of Armenia beginning with February 1920. With the coincidence of the interests of Bolshevik Russia and Kemalist Turkey, the rapprochement of these two countries takes place, one of the victims of which was to become Armenia. The article makes an attempt to justify that it was not possible to avoid the war, because it did not depend only on the will of the Armenian authorities, but was dictated by the invasion plan of the "National Pact" proclaimed by the Kemalites, which, at the behest of its far-reaching interests, received a lot of money (gold), weapons and assistance from Soviet Russia, hoping that, first of all, with the support of the Kemalist Turkey, the victory of the world revolution and socialism would spread in the Muslim East, and, the

second, they would jointly fight against the imperialism of the West (Entente). The analysis of the relevant materials in the article reveals the goal of the shrewd statesman and diplomat M. Kemal, who, while preparing the attack against the Republic of Armenia, set himself the task of abolishing the Treaty of Sevres, which was too dear to the Armenian people, inflicting a crushing defeat on the still inexperienced Armenian army, and destroying the internationally recognized Republic of Armenia by allying with Soviet Russia, to occupy and divide the territories of Armenia among themselves, annexing one part to Turkey, the other to Soviet Russia, giving some part of territory also to its ally Azerbaijan, to continue the genocidal policy of the Young Turks, in this case already towards Eastern Armenians. It is shown how in order to realize these plans, M. Kemal managed to incite border clashes against Armenia, organize Turkish-Tatar riots, cooperate with the Muslim population and Azerbaijan, diplomatically isolate the Republic of Armenia, sign an alliance with Bolshevik Russia, and launch a military campaign against Armenia. The analysis of the materials published in "Mshak" newspaper presents the course of the war, the capture of Sarighamish, Kars, Alexandropol by the enemy, the course and end of the negotiations, the reasons for the defeat of the Armenian army, the mistakes made by the Republic of Armenia and military-diplomatic failures, which can be instructive in terms of historical experiments and lessons for our new generation, in the sense of the security of the RA and Artsakh, the perspective of increasing the combat capability of the Armenian army in future. The historical events that took place exactly a century ago are in many ways relevant in our time, because with the direct assistance and support of modern Turkey, the neighboring Azerbaijan unleashed a 44-day war against the Republic of Artsakh on September 27, 2020. All was in the same way as it was 100 years ago. The Republic of Armenia and Artsakh found themselves in isolation and the Turkish-Azerbaijani forces were able to win and occupy the liberated territories of Artsakh, including Shushi and Hadrut, creating even more of a real threat to the Republic of Armenia, as evidenced by the illegal occupation by the Azerbaijanis of some parts of the Gegharkunik and Syunik provinces of the Republic of Armenia nowadays. In this context, the study of the topic is very relevant, because the same events of 100 years ago seem to repeat in our days, so it is necessary to learn lessons from history in order not to repeat previous mistakes.

Эдик Минасян, доктор исторических наук, профессор
Ереванский государственный университет, декан исторического факультета, и.о. заведующего кафедрой истории Армении
Эл. почта: history@ysu.am

Отражение турецко-армянской войны 1920 года в газете «Мшак»

Резюме

Ключевые слова: *Милли (националистическое) движение, Мустафа Кемаль, Кязим Карабекир, Республика Армения, турецкая армия, страны Антанты, Сарыгамыш, Карс, Александропольский договор, Советская Россия.*

В статье основное внимание уделяется подготовке нападения кемалистской Турции на Республику Армения, а также вопросам организации пограничных столкновений, самому наступлению, ходу боевых действий, причинам поражения армянской армии, разделу территории Армении в результате кемалистско-большевистского союза и советизации Армении, которые были широко освещены армянскими периодическими изданиями и особенно газетой «Мшак», содержащей подробные и ценные подробности о вышеупомянутых событиях. Материалы, вошедшие в журнал, и их анализ проливают совершенно новый свет на процесс исследования вопроса.

Анализ материалов газеты «Мшак» показывает, как под руководством Кемаля, лидера милли (националистического) движения в Турции с середины 1919 года, с февраля 1920 года шла подготовка к нападению на Республику Армения. При совпадении интересов большевистской России и кемалистской Турции происходит сближение этих двух стран, одной из жертв чего должна была стать Армения. В статье делается попытка обосновать, что избежать войны было невозможно, поскольку она не зависела только от воли армянских властей, а была продиктована провозглашенным кемалистами планом вторжения «Национального обета», который в веление своих далеко идущих интересов, получил от Советской России много финансовых средств (золото), оружие и помощь, надеясь, что при поддержке кемалистской Турции, прежде всего, победа мировой революции и социализма распространяться на мусульманском Востоке, а, во-вторых, будет совместная борьба против империализма Запада (Антанты). Анализ соответствующих материалов в статье раскрывает цель проницательного

государственного деятеля и дипломата М. Кемаля, который, готовя нападение на Республику Армения, поставил перед собой задачу отменить Севрский договор, который был дорог армянскому народу, нанеся сокрушительное поражение еще неопытной Армянской армии, а союзом с Советской Россией уничтожив международно признанную Республику Армения, оккупировать и поделить между собой территории Армении, присоединив одну часть к Турции, другую к Советской России, отдав часть территории также своему союзнику Азербайджану, для продолжения геноцидной политики младотурок, в данном случае уже по отношению к восточным армянам. Показано, как для реализации этих задач М. Кемалю удалось спровоцировать пограничные столкновения против Армении, организовать турецко-татарские беспорядки, наладить сотрудничество с мусульманским населением и Азербайджаном, дипломатически изолировать Республику Армения, подписать союз с большевистской Россией, и начать военную кампанию против Армении. В анализе материалов, опубликованных в газете «Мшак», представлен ход войны, взятие противником Сарыгамыша, Карса, Александрополя, ход и завершение переговоров, причины поражения армянской армии, ошибки со стороны Республики Армения и военно-дипломатические неудачи, которые могут быть поучительны с точки зрения исторических экспериментов и уроков для нашего нового поколения, в смысле безопасности РА и Арцаха, перспективы повышения боеспособности Армянской армии в будущем. Эти исторические события, произошедшие ровно столетие назад, во многом актуальны и в наше время, ведь при непосредственной помощи и поддержке современной Турции соседний Азербайджан 27 сентября 2020 года развязал 44-дневную войну против Республики Арцах. Все было так же, как и 100 лет назад. Республика Армения и Арцах оказались в изоляции, а турецко-азербайджанские силы смогли одержать победу и оккупировать освобожденные территории Арцаха, в том числе Шуши и Гадрут, создав еще более реальную угрозу для Республики Армения, о чем свидетельствует незаконная оккупация азербайджанцами некоторых частей Гегаркуникской и Сюникской областей Республики Армения в настоящее время. В этом контексте изучение темы весьма актуально, ведь те же события 100-летней давности как бы повторяются в наши дни, поэтому необходимо извлекать уроки из истории, чтобы не повторять прежних ошибок.

Հայկ Մխոյան

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ «ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ-ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՐԹՈՒՄ

Հոդվածում քննարկվում է Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայնը-Ժամանակ» թերթի էջերում 1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը: Ներկայացվում են պատերազմի վերաբերյալ ակնկալիքները, դրա ընթացքի նկարագրությունը: Թերթը փորձում է շատ չմիջամտել միջկուսակցական պայքարին: Անդրադարձ կա բոլշևիկների ու դաշնակիցների ունեցած դերակատարությանը: Նկատվում է լավատեսություն հատկապես պատերազմի սկզբնական շրջանում: Թերթում տեղ են գտել նաև կեղծ տեղեկություններ, որոնք հետաքրքիր են ժամանակին շրջանառված տեղեկատվական մթնոլորտը պատկերացնելու համար:

«Ժամանակը», որ Հայոց ցեղասպանությունից հետո էլ «հակառակ իր լճացած բովանդակութեան կը շարունակէր մտնել Իսթանպուլահայ ընթերցողներուն մեծամասնութեան տունէն ներս», պոլսահայ մամուլի ամենահին օրգաններից է, որ հիմնադրվել է 1908 թ. հոկտեմբերի 28-ին Արա Գոչունյանի և իր եղբայր Սարգիս Գոչունյանի ջանքերով[1]*, շարունակվում է տպագրվել մինչ օրս: Հիմնադրման առաջին տարիներին թերթին թղթակցել են ժամանակի հայ անվանի մտավորականներ Երվանդ Օտյանը, Զապել Եսայանը, Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը: Թերթի տպաքանակը եղել է 15 հազար: 1920 թվականին միավորվել է «Ժողովրդի ձայն» թերթի հետ և որոշ ժամանակ (մինչև 1924 թ.) կոչվել է «Ժողովրդի ձայն-Ժամանակ», իսկ 1935 թ. մի քանի ամիս կոչվել է «Ժամանակ-Թուրքիա»: Այսօր թերթի տպաքանակը 1500 օրինակ է և տարած-*

[1] Քասիմ (Միսաք Գոչունեան), Կեանքի տեսարաններ, Իսթանպուլ, 2009, էջ 10:

վում է Ստամբուլի հայաբնակ թաղամասերում: Խմբագիրն է Արա Գոչունյանը[2]*:*

Մինչ պատերազմական հաջողություններ

Հոդվածում ներկայացվում են 1918, 1919 թթ. աշունների ողբերգական ժամանակները, հույսով լի է 1920 թ. աշունը. բերքը առատ է, գյուղացին իր աշխատանքներով է զբաղված, ռուսական վտանգը հեռու է թվում, ինչից Հայաստանը կարողանում է շունչ քաշել: Հատկանշական է, որ ռուս-թուրքական պատերազմից օրեր առաջ հոդվածի հեղինակը վտանգ է համարում միայն Ռուսաստանը: Շարունակելով միտքը՝ հեղինակը նշում է. «Հայ բանակը պիտի պատրաստուի դէպի հայրենիք «սրբազան արշաւ»ի մը համար, որուն այնքան կարօտագին աչքեր կան յառած ու այնքան սիրտեր կան սպասող, և որու համար անշուշտ հայութիւնը չպիտի քաշուի իր մեծագույն զոհողութիւնը բերելու»[3]:

Սահմանային բախումների առաջին օրերից «Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթը նշում է, որ Քեմալը Մոսկվայի իշխանությունների հետ նպատակ ունեն գրավել Կարսն ու Արդահանը, որով կկարողանան վերացնել «հայկական պատուարը, որ Կովկասի ու Անատոլուի միջեւ հաղորդակցութեանց արգելք կ'լլայ»[4]: Թերթը նշում է, որ այս ծրագրին բոլշևիկները չեն ընդդիմանա, քանզի դեռևս Բրեստ-Լիտովսկի պայմանագրով համաձայնել են սրան: Մեկ այլ համարում թերթը ժխտում է, որ բոլշևիկները կարող են օգնել թուրքերին, քանզի իրենք ևս օգնության կարիք ունեն: Մասնավորապես 1920 թ. հոկտեմբերի 1-ին Փարիզից Հ. Պողոսեանը նշում է. «Գարապէքիրի յարձակումը կը վերագրէի յուսահատական փորձի մը, որպէսզի Սովևէթներու անկումը չիրականացած անոն հեռաւոր

---

[2] Միրզոյան Է., Պոլսահայ մամուլի պատմությունը. համառոտ ակնարկ

[3] Օգսէն, Հայաստանի երեք աշունները, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3894, 17/30 սեպտեմբերի, էջ 1:

[4] Պօղոսեան Հ., Հայաստանի ճակատը: Նոր յարձակողականը չի կրնար յաջողիլ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3903, 27 սեպտեմբեր/10 հոկտեմբեր, էջ 1:

բռեսթիժը շահագործէ վերջին վայրկեանին»[5]: «Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթի հաջորդ համարներում ևս տեսնում ենք նույն տեսակետի զարգացումը: Մասնավորապես թերթի ռազմական խնդիրների մասին հոդվածների հեղինակ Գ. Նավասարդյանը նշում է, որ «Հայաստանի դեմ մղուած էնվեր-Քեմալական շարժումը «պ'լֆ» մըն է», և այս հարձակումը Հայաստանի դեմ կհամարեր արկածախնդրություն և անարդյունք «հիմնուած միմիայն պաշտպանողական նպատակի մը վրայ»[6]:

«Ժողովրդի ձայնը-Ժամանակ» թերթի կարծիքով ինչպես 1914-1915 թթ. ձմռանը հիմնականում հայերից բաղկացած փոքրաթիվ բանակը ջախջախեց Սարիղամիշում թուրքերին, այնպես էլ այժմ պիտի տեղի ունենա[7]: Թերթն իր վերլուծականում նշում է նաև, որ Հայկական բարձրավանդակում նոյեմբերի վերջից սկսում է սաստիկ ցրտեր, ինչին Էնվերը ուշադրություն չդարձրեց. բավական է հայերը կարողանան դիմադրել մինչև ձմեռային ցրտերը, այդ պահից սկսած՝ պատերազմը աննպաստ կլինի թուրքերի համար:

Կոստանդնուպոլսի թերթերի հաղորդած տեղեկություններից հատկապես կարևոր են նրանք, որոնք վերաբերում են քեմալականների զորաշարժերի, զորահավաքների մասին: Այսպես «Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթի հոկտեմբերի 1-ի համարում կարդում ենք, որ Սև ծովի ափին գտնվող քաղաքներից հավաքագրվել է 6700-հոգանոց զորք Հայաստանի ուղղությամբ ուղարկելու համար[8]: Հաջորդ համարում տեսնում ենք, որ Մեհմեդ, Նեշեթ և Զիյա անունով զորականները յուրաքանչյուրը 1000-ական ուժերով տեղափոխվել

---

[5] Թրքական նոր յարձակումներուն առթիւ հայկական կառավարութեան բողոքը դաշնակից պետութեանց, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3906, 1/14 հոկտեմբեր, էջ 2:

[6] Նաւասարդեան Գ., Էնվէր-Քէմալական յարձակողականը կատարել «պլըֆ» մըն է, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3908, 3/16 հոկտեմբեր, էջ 1:

[7] Նույն տեղում:

[8] Միլլիական յարձակումը Հայաստանի դէմ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3906, 1/14 հոկտեմբեր, էջ 3:

են Սամսուն Օլթիի վրա հարձակվելու համար[9]: Թերթը նույն հոդվածում կարծիք է հայտնում նաև առ այն, որ Միլլի շարժման պատերազմ սկսելու նպատակն է Հայաստանի դեմ հաղթանակներն օգտագործել Անատոլիայում այդ շարժման դեմ սկսված դժգոհությունները հանդարտեցնելու համար[10]:

Եթե մինչև հոկտեմբերի 4-ի համարներում ոգևորիչ հոդվածներ էին տպագրվում, ապա հոկտեմբերի 6-ից սկսած՝ «Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթը սկսում է տպագրել հոդվածներ, բանակի կարիքների և օրհասական մարտերի մասին: Շատ են տպագրվում նաև պետական պաշտոնյաների շրջաբերականներ ու հրամաններ, որոնք վկայում են բանակի ծանր կացության մասին. «Այժմ տեղի կ'ունենան օրհասական ծանր կռիւներ, որոնց ելքէն կախուած է Ղարսի նահանգի և ամբողջ Հայաստանի բախտը»[11]: «Դաւադիրներուն յաջողուած է մեծ ոյժեր հաւաքելով Հայաստանի սահմաններուն վրայ յանկարծակիի բերել մեր յառաջապահ զինուորները և ետ մղել զանոնք Օլթիէն, Սարըքամիշէն և Կաղզուանէն: Ուրեմն մեր արիւնարբու թշնամին Հայաստանի նուիրական հողին վրայ է»[12]:

Բանակի մասին խոսելիս ևս հոդվածագիրը թերահավատ է և նշում է, որ դրանք կարող են լինել միայն նախկին ավազակային քրդական ցեղերի մնացորդները: Իսկ այն խնդրին, թե ինչպես կկարողանան օգնել Ատրպատականի թաթարները, այսինքն՝ ադրբեջանցիները», հեղինակը կարծում է, որ քանի որ ցարիզմի ժամանակ նրանք զրկված են եղել զենք կրելու իրավունքից որպես անվստահելի տարրեր, հետևաբար լավ ընդունակ են միայն «փախ-

---

[9] Արշաւանք Հայաստանի դէմ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3907, 2/15 հոկտեմբեր, էջ 3:

[10] Միլլիական յարձակումը Հայաստանի դէմ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3906, 1 /14 հոկտեմբեր, էջ 3:

[11] Հայաստանի ներքին գործոց նախարարի շրջաբերականը, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3910, 6 /19 հոկտեմբեր, էջ 1:

[12] Խմբագրական, Դէպի ճակատ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3910, 6 /19 հոկտեմբեր, էջ 2:

չելու»[13]: Թուրքական հարձակման պլանն ի սկզբանե ձախողված համարելով՝ թերթը կարծում է, որ Էնվերն ու Մուստաֆա Քեմալը չեն կարողանա ներկա քաղաքական և աշխարհագրական պայմաններում անհրաժեշտ չափով զորքեր հավաքել[14]:

Հայկական բանակ

Բանակային խնդիրները ևս թերթի ուշադրության կենտրոնում են: «Ժողովրդի ձայնը-Ժամանակ» թերթի կարծիքով հայկական բանակը անկախության երկու տարիներին կարողացել է կազմակերպել այն և «առիթ ունեցած է օգտուելու արտաքին աշխարհի զանազան աղբիւրներէն»: Թերթը ռազմական թղթակիցը խիստ կարևորում է նաև Կարսի պաշտպանողական կարևորությունը՝ համարելով այն «հայկական ոյժերու լաւագոյն հիմնակէտ»[15]:

Էական է նաև նախարարի հրամանի ներկայացումը, որը ուշագրավ տեղեկություն է պարունակում այդ ժամանակաշրջանի հայկական բանակի մասին: Մասնավորապես նախարարի հրամանի համաձայն՝ հայկական բանակի սպաները իրենց հագուստների վրա չեն կրել սպայական աստիճանները վկայող տարբերանշանները: Շատ են սպաները, որոնք առանց զենքի շրջել են քաղաքում: Բավական շատ են եղել անկարգապահությունները, մասնավորապես հրամանում նշվում է բանտարկել երկու սպայի՝ Բոգդան Քոչարյանին և Սեթ Տեր-Սարգսյանին, որոնք, գալով Երևան, չեն ներկայացել զինվորական վարչություն: Նախարարի մեկ այլ հրաման վերաբերում է պահեստի զինվորների գողություններին: Մասնավորապես Գրիգոր Մկրտիչեանի և Սենեքերիմ Հարությունյանի կողմից խաղող գողանալու դեպքին[16]:

---

[13] Նաւասարդեան Գ., Էնվէր-Քէմալական յարձակողականը կատարել «պլըֆ» մըն է, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3908, 3/16 հոկտեմբեր, էջ 1:

[14] Նաւասարդեան Գ., Էնվէր-Քէմալական յարձակողականը կատարել «պլըֆ» մըն է, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3908, 3/16 հոկտեմբեր, էջ 1:

[15] Նաւասարդեան Գ., Էնվէր-Քէմալական յարձակողականը կատարել «պլըֆ» մըն է, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3908, 3/16 հոկտեմբեր, էջ 1:

[16] Հրաման Հայաստանի պատերազմ. նախարարին, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3909, 4/17 հոկտեմբեր, էջ 1:

Հարձակման պատճառներ

Հարձակման պատճառների շարքում թերթը կարևոր տեղ է հատկացնում Սևրի դաշնագրի գործադրումը. «Սէվռի դաշնագիրը, բաւական զօրաւոր Հայաստան մը ստեղծելով, արգելք կը հանդիսանայ այս ծրագրին իրագործման, հետեւաբար համաթուրանականները անկարելի է, որ իրենց յօժար կամքով ընդունին այդ դաշնագրին գործադրութիւնը»[17]: Ըստ թերթի՝ երկրորդ պատճառը համաիսլամական միության ստեղծումն է, որը Բաքվի Արևելքի ժողովուրդների համագումարում քննության է առնվել: Երրորդը բոլշևիկների հետ միանալու ձգտումն է: Մեկդարյա հեռավորությունից կարելի է եզրակացնել, որ Կ. Պոլսում հրատարակվող թերթը արդեն այդ ժամանակ բավական ճշգրիտ եզրահանգումներ է կատարում այդ օրերի դեպքերի վերաբերյալ:

Ռազմական գործողություններ

Սկզբնական շրջանում թերթում համեմատաբար քիչ են ռազմական գործողությունների նկարագրությունները: Միայն որոշակի համարներում ամփոփ պատկեր է տրվում: Ակնհայտ է, որ մեծ տեղեկատվական հոսքերի մեջ թերթը որոշում է տեղադրել ճշգրիտ տեղեկություններ, դա է պատճառը, որ ամենօրյա ոչ ճշգրիտ նյութերը չեն տեղադրվում: Օրինակ՝ սահմանային սեպտեմբերյան բախումների մասին նյութերի համառոտ նկարագրությունը տեսնում ենք միայն հոկտեմբերի սկզբի համարներից մեկում[18]: Եվ պատճառը այն չէ, որ չունեն տեղեկություններ, այլ այն, որ դրանք ճշգրտելու կարիք են զգում, քանի որ մի շարք տեղերում հանդիպում ենք նյութերի, որոնցում նշում են, որ նյութերի հոսքի մեջ ստիպված էին տեղադրել միայն սա, քանզի միայն սա էր ստուգված:

---

[17] Խմբագրական. պատճառներ եւ հետեւանքներ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3909, 4/17 հոկտեմբեր, էջ 2:

[18] Հայկ. մեծ սպայակոյտի զինուորական զեկոյցները, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3909, 4/17 հոկտեմբեր, էջ 2:

Կառավարության հայտարարություններ

«Ժողովրդի ձայնը-Ժամանակ» թերթը, հոկտեմբերի 6-ից սկսած, սկսում է տպագրել նաև ռազմաճակատի տարբեր հատվածներում տեղի ունեցող գործողությունների վերաբերյալ պաշտոնական հարցումների տվյալները: Դրանք հիմնականում վերաբերում էին պատերազմի սկզբից ի վեր ռազմաճակատում Սուրմալուի, Սարիղամիշի, Օլթիի, Իգդիրի շրջանում տեղի ունեցած դեպքերին ու բախումներին:

Արտատպումները թերթի հիմնականում Փարիզի և Լոնդոնի թերթերից են, իսկ հայկական տեղական մամուլից գրեթե չկան կամ օգտվում են միայն պաշտոնական լրահոսից. այն է՝ կառավարական հայտարարություններ, ռազմաճակատին վերաբերող օրենքներ և այլն: Տպավորություն է առաջանում, որ թերթը շատ չի ցանկանում մտնել կուսակցական պայքարի մեջ:

Լավատեսություն

Պատերազմի առաջին օրերին «Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթը նշում է, որ ստացած հեռագրերի համաձայն՝ հայկական նորակազմ բանակը կորովի կերպով դիմադրում է, սակայն առանց օգնության չի կարողանա դիմակայել: Թերթի կարծիքով սա բոլշևիկների ծրագիրն է, որը Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան պետք է թույլ չտան[19]:

Հայկական բանակի հաջողությունների մասին ներկայացնող հոդվածները ևս բավական շատ տեղ են զբաղեցնում թերթի համարներում: «Բանակը բաւական չափով ռազմանիւթ ունի եւ Կարսի առջեւ Հայկական բանակի օդանաւերը ջարդ տուեր եւ փախուստի մատներ են յարձակող հրոսակախմբերը»[20]:

---

[19] Հայաստանի ճակատը: Նոր յարձակողականը չի կրնար յաջողիլ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3903, 27 սեպտեմբեր/10 հոկտեմբեր, էջ 2:

[20] Հայկական բանակին ուժգին դիմադրութիւնը, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3909, 4/17 հոկտեմբեր, էջ 3:

Կամավորության կոչ Կ. Պոլսի հայությանը

«Ժողովրդի ձայնը-Ժամանակ» թերթը կամավորության կոչեր է նաև հնչեցնում հատկապես Կ. Պոլսի հայությանը՝ նշելով, որ եթե հայերը ակտիվորեն կռվում էին հունական զորքի կազմում ընդդեմ Միլլի շարժման, ապա ինչպես կարող են չկռվել սեփական հայրենիքի համար: Կոչ է անում հարուստներին կազմակերպել այդ գործը և կարծում է, որ տասնյակ անգամ շատ երիտասարդներ կներգրավվեն այդ գործում[21]: Հետագայում ևս անդրադարձ կա Պոլսի հայության շրջանում կամավորական աշխատանքներ չտանելուն. «... Այս ուղղութեամբ դեռ քայլ մըն իսկ առած չենք Պոլսոյ մէջ: Հայաստան աշխատող բազուկներ կ'ուզէ, Պոլսոյ մէջ 20 000 է աւելի երիտասարդներ կան այսօր, որոնցմէ շատերը պարապութենէ կը ձանձրանան և նոյն իսկ յոռի ճամբաներու կրնան մղուիլ: Ինչո՞ւ անմիջապես չկարենան հոս զօրաւոր կազմակերպութիւն մը ստեղծել այս երիտասարդները Հայաստան ղրկելու համար»[22]:

Կեղծ տեղեկություններ

Թերթում տպվում են նաև որոշ ստահոդ լուրեր: Մասնավորապես ուշագրավ է Քյազիմ Կարաբեքիր փաշայի սպանության լուրը, սակայն ի տարբերություն մամուլի այլ օրգանների՝ «Ժողովրդի ձայն-Ժամանակը» շատ զգույշ է և նշում է նյութի չճշտված լինելու մասին[23]:

Ըստ թերթի մեկ այլ հրապարակման, որի տեղեկությունը ներկայացրել է Արտակ Դարբինեանը, որը Հայ ռամկավար կուսակցության անդամ է, թուրքական ուժերը չէին անցնում 10 000-ից[24]:

---

[21] Խմբագրական, Հայեր ի զէն, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3908, 3/16 հոկտեմբեր, էջ 2:

[22] Խմբագրական, Դէպի ճակատ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3910, 6 /19 հոկտեմբեր, էջ 2:

[23] Քեազիմ Գարա Պէքիր Սպաննուած, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3909, 4/17 հոկտեմբեր, էջ 3:

[24] Ականատեսի մը պատմուածքը Հայաստանի մասին, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3910, 6/19 հոկտեմբեր, էջ 2:

Հատկանշական է, որ թերթը ինքը ևս տեղեկություններ է տալիս թուրքական թերթերի կեղծ լուրերի մասին, որոնցից մեկը, օրինակ, վերաբերում էր Կարսի անկմանը: Դրա կեղծ լինելու վերաբերյալ նյութը տպագրել է «Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթը իր հոկտեմբերի 7-ի համարում: Ժխտելով լուրը, սակայն, հայկական թերթը կատարում է հետևյալ եզրակացությունը, որ ոչ միայն չեն գրավել Կարսը, այլև հայերը մոտ օրերին կկարողանան շարժվել դեպի Սարիղամիշ և Օլթի[25]: Կարսի անկման լուրերի հերքումը թերթը շարունակում է նաև հաջորդ համարներում:

«Ժողովրդի ձայն» թերթը, հոկտեմբերի 9-ին տեղի ունեցած մեծ հաղթանակի մասին խոսելով, նշում է 8000 գերի և չճշտված քանակությամբ ավարի ձեռքբերման մասին: Գերիների թվում նաև երկու գնդապետ ու գերմանացի հազարապետ են հիշվում[26]:

Հոկտեմբերի 2-րդ կեսին, երբ Կարսի շուրջ իրադրությունը սրվում էր, երբ մոտ էր Կարսի անկումը, երբ բանակում տարածված էր դասալքությունը թերթում կարդում ենք. «Հայոց կռուելու ոգին կը մնայ խիստ բարձր, որոնք այսօր կռիւի դաշտին վրայ ունին առնուազն 50 000 զինուոր և կամաւորները կը շարունակեն մեծ թիւով բանակը յորդել»[27]:

Լոնդոնի «Թայմզ» ամսագրից կատարված արտատպման արդյունքում թերթը ևս մեկ իրականությունից շեղված նյութ հրապարակում է այն մասին, որ հայերի թիվը հասել է քեմալականների ուժերի թվին[28], և որ դասալքությունը շատ մեծ չափերի է հասել թուրքական բանակում:

Կարսի անկման լուրերը դեռ դեկտեմբերին բոլշևիկների իշխանության հաստատումից հետո քննարկվում են մի հարցազրույցում,

---

[25] Կարս ինկած, Հայաստանի կէսը գրաւուած???, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3911, 7/20 հոկտեմբեր, էջ 3:

[26] Հայկական մեծ հաղթանակ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3913, 9/22 հոկտեմբեր, էջ 3:

[27] Հայկ. ճակատին յաջողութունները, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3920, 17/30 հոկտեմբեր, էջ 3:

[28] Միլլիճի զօրքերը դասալիք, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3922, 20 հոկտեմբերի /2 նոյեմբերի, էջ 3:

որը տպագրվել է դեկտեմբերի 8-ին: Հայաստանից եկած ականատեսը պնդում է, որ Կարսը չի ընկել:

Դաշնակիցների օգնություն

«Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթը ևս մեծ հույսեր է կապում Սևրի պայմանագրի հետ և նշում է, որ եթե նույնիսկ նրանց հաջողվի գրավել Հայաստանը, ապա «դիւանագիտական ձախողունքը կ'ոչնչացնէ ռազմական փայլուն յաղթանակները»[29]: Որպես օրինակ թերթը բերում է սերբերին, որոնք տարիներ շարունակ գրավված էին Գերմանիայի կողմից: Իհարկե, հենց նույն համարում թերթը գրում է, որ միայն զենքով կարելի է պաշտպանել մեր գոյությունը, քանի որ «մեր թշնամիները անկարող են բանականութեան ձայնը լսելու»[30]: Այնուամենայնիվ, թերթի համարներում գրեթե մշտապես տեսնում ենք դաշնակից համարվող պետություններից ակնկալիքի հույսեր: Մասնավորապես թերթի 1920 թ. հոկտեմբերի 4-ի համարի առաջին էջում մեծադիր պատկերված է Թովմաս Նազարբեկյանը իր եվրոպացի գործընկերների հետ[31]:

Թերթը պատերազմի առաջին օրերից ներկայացնում է նաև Վրաստանի հետ դաշնակցելու և միացյալ կռվելու ձգտումների, ցանկությունների և ժամանակի պահանջի մասին: Հատկապես Վրաստանի համար կարևոր էր Օլթիի ածխահանքերի շրջանից ստացվող ածուխը, որը Վրաստանի համար կենսական էր, այդ պատճառով թերթը կարծում է, որ Վրաստանը շուտով կմիանա պայքարին: Բացի դրանից, ըստ թերթի, եթե Կարաբեքիրի դեմ հայերը միայնակ էլ կարող են պայքարել, ապա եթե նրանց միանան թաթար-բոլշևիկները, ապա Վրաստանը, միանալով Հայաստանին, պետք է փորձի դիմակայել այս ուժերին: Սակայն թերթը կարծում է

---

[29] Նաւասարդեան Գ., Էնվէր-Քէմալական յարձակողականը կատարել «պլըֆ» մըն է, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3908, 3/16 հոկտեմբեր, էջ 1:

[30] Խմբագրական, Հայեր ի զէն, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3908, 3/16 հոկտեմբեր, էջ 2:

[31] «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3909, 4/17 հոկտեմբեր, էջ 1:

նաև, որ հույները պետք է օգնության շտապեն այս երկու ժողովուրդներին, եթե դրսի այլ երկրներ չեն կարողանում օգնել. «Եւ եթէ դուրսէն որևէ կերպով անկարելի ըլլայ կամ տրամադրութիւն չյայտնուի այդ օգնութիւնը ընելու, գոնէ պէտէ է թոյլ տան հելլէն բանակին որ յաջողութեամբ ձեռնարկէ գործի և վտանգի ներքեւ գտնուղ այս երկու հանրապետութիւնները փրկէ»[32]: Հաջորդ համարներում ևս հայ-վրացական դաշինքին կարևոր տեղ է հատկացվում և նշվում, որ «Վրաստանի և Հայաստանի յարաբերութիւնները աւելի լաւ են քան որևէ մօտիկ անցեալին մէջ»[33]: Սակայն հայտնի է, որ հենց հայ-թուրքական պատերազմի շրջանում էր, որ Վրաստանը ռազմակալեց Լոռու չեզոք գոտու մի շարք բնակավայրեր և միայն Վրաստանի խորհրդայնացումից հետո դուրս եկավ այդ բնակավայրերի մի մասից: Վրաստանի հետ դաշնակցելու կամ վրացական օգնությունը ակնկալելու այս հույսերը ամենայն հավանականությամբ կապված են վրացական մամուլի բավական բուռն և կոշտ արձագանքի հետ, որ ներկայացվել է վրացական մամուլում պատերազմի սկզբից ի վեր: Թիֆլիսում հոկտեմբերի 8-ին տեղի ունեցած (ըստ թերթի հաղորդման 50 000-անոց) ցույցի մասին խոսելիս թերթը կրկին նշում է. «Ընդհանուր վտանգը կը թելադրէ Հայաստանին և Վրաստանին լարել ամբողջ իրենց եռանդը և պահպանել ազգային ազատութիւնը, զոր ձեռք բերած են լաւագոյն որդուց արիւնով: Նենգ թշնամին վանելու համար մենք պէտք է հաստատենք զինուորական դաշինք»[34]:

«Ժողովրդի ձայնը», սակայն, շուտով սկսում է իր հոդվածներում նույնքան խանդավառ չվերաբերել միջազգային հանրությանը, և իրատես լինելու կոչեր են հնչեցնում. «Այժմ պէտք է ընել փորձ մը իջնելու այս աշխարհի իրականութիւններու խորքը, քննելու անցքե-

---

[32] «Գոնե թոյլ տալու է հելլեն բանակին օգնելու Հայաստանի», «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3909, 4/17 հոկտեմբեր, էջ 3:

[33] Ականատեսի մը պատմուածքը Հայաստանի մասին, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3910, 6/19 հոկտեմբեր, էջ 2:

[34] Հայկական մեծ ցոյց Թիֆլիզի մէջ: Վրաց խորին համակրութիւնը հայերուն հանդէպ, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3913, 9/22 հոկտեմբեր, էջ 1:

ը և երեւոյթները առանց զգացումի և գունաւորման և տեսնելու իրադարձութիւնները ո՛չ թէ ինչպէս նպաստաւոր կամ հաճելի է մեզ, այլ ինչպէս որ կը տեսնեն ուրիշներ, աւելի զօրաւորներ, որոնք ունին ոյժ և կարողութիւն»[35]:

Վրաստանի հետ հարաբերություններում ևս տեսնում ենք խանդավառ չեն հատկապես նոյեմբերի համարներում, երբ օգտվելով իրավիճակից՝ վրացիները ռազմակալել էին հայկական որոշ բնակավայրեր և ստիպված էին բանակցել՝ այդ ուղղությամբ ևս վրացական զորքերը երկրից դուրս քաշելու համար:

Բանակցություններ

Թերթը ավելի զգուշավոր է. չի պաշտպանում կուսակցություններին, շատ ընդդիմադիր է բոլշևիկներին և յուրաքանչյուր գործընթաց կապում է նրանց գործունեությանը, նյութերի մեծ մասը հենց նվիրված է թուրք-բոլշևիկյան համագործակցությանը: Ներքին լուրերը հիմնականում դրական են ներկայացվում, զորքերի հաջողությունների մասին լուրերը մշտական են: Գոհացուցիչ է համարվում նաև տնտեսական ու ռազմական կացությունը: Չկան նյութեր զորքերի քիչ լինելու, դասալքության, զենքերի բացակայության մասին: Նշելի է նաև այն, որ, օրինակ, բրիտանական ու ֆրանսիական զենքերը առաքվել էին մասամբ, սակայն դա գործածելու հմտություններ զորքերը չունեին, իսկ օրինակ Վրանգելից և մյուսներից ստացած զենքերի մի մասը ժանգոտված էր և անպիտան ու ոչ գործածական:

Շատ են նյութերը արտասահմանից ակնկալվող օգնության: Շատ են նաև հարցազրույցները, որոնք կտրված են իրականությունից, բայց իրենց վրա կրում են այդ ժամանակաշրջանի ոգին և գործընթացները ու ժողովրդի մտածումները:

---

[35] Սաֆրաստեան Ա., Հայաստանի ճակատագիրը և արտաքին ցույցերի աստիճանական նուազումը, «Ժողովրդի ձայնը-Ժամանակ», ԺԳ տարի թիւ 3912, 8/21 հոկտեմբեր, էջ 1:

Այսպիսով՝ ուսումնասիրելով 1920 թ. թուրք-հայկական պատերազմի շրջանում «Ժողովրդի ձայն-Ժամանակ» թերթի համարները՝ կարելի է եզրակացնել, որ թերթը հնարավորինս ձգտել է անաչառ տեղեկատվություն փոխանցել իր ընթերցողին: Բավական շատ է զգուշությունը, երբեք չեն խուսափում սխալ հոդվածների վերաբերյալ հերքումներ տալուց: Հատկապես կարևոր է թերթի ազդեցությունը այդ շրջանում Կոստանդնուպոլսի հասարակական մտքի ձևավորման վրա:

Hayk Mkhoyan

Responses to the 1920 Turkish-Armenian War in Constantinople's "Zhoghovurdi Dzayn-Zhamanak" Newspaper

The article analyses the manner in which the 1920 Turkish-Armenian war was covered in the pages of the Constantinople newspaper, the “Zhoghovurdi Dzayn-Zhamanak”. The article presents the expectations regarding the war and describes its course. It attempts to avoid becoming overly involved in the inter-party struggle. There are references to the roles played by the Bolsheviks and the allies. Optimism is observed, particularly during the initial period of the war. The newspaper also included false information, which provides insight into the information atmosphere that was prevalent at the time.

Айк Мхоян

Освещение турецко-армянской войны 1920 года в константинопольской ежедневной газете "Жоховурди Дзайн-Жаманак"

В статье рассматривается освещение турецко-армянской войны 1920 года на страницах константинопольской газеты «Жоховудри Дзайн-Жаманак». Представлены ожидания от войны и ее ход. Газета старается не слишком вмешиваться в межпартийную борьбу. Упоминаются роли большевиков и союзников. Наблюдается оптимизм, особенно в начальный период войны. В газете встречалась и ложная информация, что интересно для понимания информационной атмосферы, царившей в то время.

Տիգրան Ղանալանյան

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ «ԱՐԵՒ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ1

Բանալի բառեր՝ *պատերազմ, զինված ուժեր, մամուլ, Հայաստան, Թուրքիա, Կարսի անկում, Եգիպտոսի հայ համայնք, 2020 թ. արցախյան պատերազմ:*

Սևրի պայմանագրի ստորագրումը, թուրք-հայկական պատերազմը, Հայաստանի խորհրդայնացումը և զուգահեռ այլ իրադարձություններ լայն արձագանք գտան սփյուռքահայ մամուլում: 1920 թ. այն տեղեկատվություն ստանալու անփոխարինելի սկզբնաղբյուր էր, այդ թվում՝ բազմահազար եգիպտահայերի համար:

Ալեքսանդրիայում հրատարակվող «Արեւ» օրաթերթում լույս են տեսել բազմաթիվ հոդվածներ, վերլուծություններ, հեռագրական հաղորդումներ, արտատպություններ, որոնք առնչվում են թուրք-հայկական պատերազմին, երկու պետությունների միջև հարաբերություններին, այդ թվում՝ Սևրի պայմանագրին, սահմանի որոշման խնդրին և այլն:

Ակնհայտ է, որ հայկական շրջանակներում կային չհիմնավորված լավատեսություն, իրականության սխալ գնահատական, ինչի հետևանքով ակնկալվում էր, որ Թուրքիայի դեմ պատերազմ սկսելու դեպքում Հայաստանի Հանրապետությունը կկարողանա ազատագրել Արևմտյան Հայաստանի նահանգները:

Այս տրամադրությունները շարունակվում էին նաև պատերազմի առաջին շաբաթներին, երբ տիրապետող էին լավատեսական լուրերը, այնինչ իրականությունը ամբողջությամբ հակառակն էր: Հետաքրքրական են Կարսի անկման պարագան, ու հատկապես դրա վերագրավման մասին ասեկոսեները:

---

[1] Առաջին անգամ հրատարակվել է՝
Ղանալանյան Տ., 1920 թ. թուրք–հայկական պատերազմի լուսաբանումը Ալեքսանդրիայի «Արեւ» օրաթերթում, «Պատմություն և մշակույթ», 2023, թիվ 1, էջ 72-103:

Պատերազմի վերջին փուլում ու դրանից հետո սկսվում է պարտության մեջ մեղավորներ գտնելու փնտրտուքը, որտեղ կուսակցական հակասությունները կարևոր նշանակություն ունեին:

1920 թ. պատերազմի ընկալումն ու մեկնաբանումը որոշակի զուգահեռներ ունեն 2020 թ. արցախյան պատերազմի հետ (սեփական ուժերի անհիմն գերագնահատում ու հակառակորդի զորքերի թերագնահատում, դավաճանների ու մեղավորների փնտրտուք և այլն):

Մուտք

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը Ալեքսանդրիայի «Արեւ» օրաթերթում: Սա մաս է ջանքերի ուղղված ընդհանրապես սփյուռքահայ իրականությունում պատերազմի մասին իրազեկվածության ու պատկերացումների, գնահատականների ու մեկնաբանությունների բացահայտմանը: Հետազոտության շրջանակներում խնդիր է դրվում ուսումնասիրելու.

- ի՞նչ աղբյուրներից էին ստացվում պատերազմին վերաբերող լուրերը,
- որքանո՞վ էին լույս տեսնող տեղեկությունները հավաստի,
- որքա՞ն ժամանակ անց են տեղեկությունները հասել եգիպտահայ համայնք,
- ինչպե՞ս էր ազդում քաղաքական/կուսակցական գործոնը պատերազմի իրողությունների մեկնաբանության վրա,
- ինչպիսի՞ քննարկում կար եգիպտահայ համայնքում պատերազմի վերաբերյալ,
- 1920 թ. թուրք-հայկական և 2020 թ. 44-օրյա պատերազմների մեկնաբանման ու գնահատման համեմատությունը:

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար ուսումնասիրվել են «Արեւ» օրաթերթի 1920 թ. օգոստոսից մինչև 1921 թ. մարտն ընկած ժամանակահատվածի բոլոր 89 համարները (այս շրջանում լույս է տեսել շաբաթական երեք համար): Դրանք ենթարկվել են բովան-

դակային վերլուծության, ու կատարվել են եզրակացություններ պատմական ու պատմահամեմատական մեթոդների կիրառմամբ:

Հարկ է նկատի առնել, որ եգիպտահայ համայնքը այս ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական կարևոր կենտրոններից մեկն է: Այստեղ բավականին ազդեցիկ էր նոր ձևավորվող Ռամկավար ազատական կուսակցությունն ու իրեն հարող շրջանակը: Ուստի ՀՅԴ-ին ընդդիմադիր այս հոսանքի պարբերականում թուրք-հայկական պատերազմի լուսաբանման ուսումնասիրությունը թույլ կտա պարզել ժամանակի ընդդիմադիր քաղաքական ուժի կողմից դրա ընկալումն ու գնահատումը:

Պատերազմի նախօրյակին

Թուրք-հայկական պատերազմի մեկնարկից առաջ տրամադրությունները թե՛ Հայաստանում, թե՛ Սփյուռքում բավականին լավատեսական էին: Ակնհայտ է, որ կար ուժերի հարաբերակցության ու իրատեսական գնահատման ահռելի պակաս: Նույնիսկ պատերազմի մեկնարկից շաբաթներ անց ստացվող տեղեկությունները Հայաստանում տեղի ունեցող ռազմական գործողությունների վերաբերյալ հիմնականում վկայում էին հայկական բանակի հաջողությունների մասին, որը հեշտությամբ կարողանում էր վտարել թշնամուն տարբեր շրջաններից:

Կային ակնհայտորեն անիրատեսական ակնկալիքներ Հայաստանի ապագա սահմանների վերաբերյալ: Սևրի դաշնագրով Հայաստանի ստանալիք նահանգների վերաբերյալ ոգևորության հետ միասին կար նաև անսքող դժգոհություն, քանի որ հաճախ կարդում ենք, թե հայկական պետությանը պետք է տրվեին շատ ավելի մեծ տարածքներ:

Սևրի պայմանագրի ստորագրման մասին առաջին տեղեկությունը հրատարակվեց օգոստոսի 11-ին (Թուրք դաշնագիրը վերջապէս ստորագրուեցաւ, «Արեւ», 11.8.1920, 3), որն ավելի մանրամասն կերպով արդեն ներկայացվեց ամսի 13-ին: Ասվում էր, որ ի տարբերություն հույների՝ հայերը չեն կարող շատ խանդավառվել, նախ

քանի որ շատ մեծ գին վճարեցին տրվածի համար, և հետո դրա կարևոր մասը միայն դաշնագրով է ՀՀ-ինը, դեռ նոր զոհողություններ պետք կլինեն վերջնականապես այդ տարածքներին տիրանալու համար (Թրքական դաշնագրին ստորագրումը, «Արեւ», 13.8.1920, 1)[2]:

Նույն համարում կարդում ենք հայկական բանակը գովերգող լուրեր, որոնց սկզբնաղբյուրը «Հայաստանէն եկած և զինուորական գործերու մօտէն տեղեակ» անձնավորություն է: Ըստ այդմ, ի տարբերություն նախորդ տարվա, հայկական զորքը ներկայանում է որպես կարգապահ ու իսկական բանակ (Հայկական բանակը միշտ բարձր կը մնայ իր դիրքին մէջ, «Արեւ», 13.8.1920, 2): Այս ժամանակաշրջանում շատ են վերջինս հզոր, հաղթական ու գրեթե անպարտելի ներկայացնող նյութերը: Ակնհայտորեն դրանք բթացնում էին իրականության զգացումն ու անիրատեսական լավատեսություն ներշնչում:

Բացի հայկական բանակի հնարավորությունները գերագնահատելուց՝ զուգահեռաբար թերագնահատվում են թուրքական զորքերը: Մասնավորապես նույն օգոստոսի 13-ի համարում կարդում ենք այն մասին, որ Քեմալի դիրքերը թուլացել են: Նա Քյազըմ Քարաբեքիրին հրամայել է հարձակվել Հայաստանի վրա, բայց Էրզրումում գտնվող բանակը լրիվ կազմալուծված վիճակում է, և երկար ժամանակ հավանական չէ, որ որևէ գործողություն կարողանա կատարել (Սօվիէթները, Կովկասը եւ թուրք ազգայնականները, «Արեւ», 13.8.1920, 3): Նույն օրվա մեկ այլ հոդվածում էլ ասվում է,

---

[2] Ի դեպ, պայմանագրի ստորագրման առթիվ եգիպտահայոց առաջնորդ Թորգոմ եպիսկոպոսը, հաշվի առնելով Եգիպտոսի քաղաքական «փափուկ» վիճակը, հանձնարարում է ազգակիցներին զգուշանալ աղմկալի կերպով իրենց ուրախությունը արտահայտելուց (Թրքական դաշնագրին ստորագրումը, «Արեւ», 13.8.1920, 1): 1919 թ. ապրիլին Եգիպտոսի անկախության պաշտպանության շրջանակում Կահիրեում տեղի էին ունեցել եվրոպացիների դեմ ելույթներ, որոնց ժամանակ թալանվել էին նաև հայերին պատկանող խանութներ: Ցուցարարները մտել էին նաև հայերի տներ ու սպանել մի քանիսին: Թեմական իշխանությունները այդժամ դիմել էին Վաֆդ կուսակցությանը, որի միջոցով արյունահեղությունը վերջացել էր (Թոփուզյան, 1978; Մկրտիչեան Լեւոն, Ցաւալի թիւրիմացութիւն մը, «Արեւ», 11.4.1919, 1):

որ միլլի շարժումը գործնականում գոյություն չունի (Ազատեան Թ. Ս., Թուրք բարբարոսութեան մէկ նոր գիւտը. Գավառի հայութեան վիճակը, «Արեւ», 13.8.1920, 3):

Խորհրդային Ռուսաստանի հետ զինադադարի կնքման լուրը հասավ ավելի ուշ, քան Սևրինը: Այդ մասին կարդում ենք միայն օգոստոսի 16-ին (Հայաստան եւ սօվէթները, «Արեւ», 16.8.1920, 3):

Իրականության ընկալման ցուցիչ է նաև օրինակ Պողոս Նուբարի կողմից Սևրի պայմանագիրը չստորագրելու հանգամանքը: Այդ մասին «Արեւում» կարդում ենք, թե դաշնակից տերությունները սկզբունքորեն ընդունել էին Պ. Նուբարի որպես թուրքահայոց և արտասահմանի հայոց ներկայացուցիչ դաշնագիրը ստորագրելը, սակայն թուրքական պատվիրակությունը բողոքեց: Դաշնակիցները հարցը քննելուց հետո խնդրեցին Նուբարին չստորագրել դաշնագիրը: Վերջինս էլ հանուն հայոց շահերի համաձայնեց (Ազգ. պատուիրակութեան մէկ զեկոյցը, «Արեւ», 16.8.1920, 3; Մ. Ս. Կ., Ազգ. պատուիրակութեան բողոքը վեհաժողովին, «Արեւ», 10.9.1920, 1): Այսպիսով՝ դաշնակից տերությունները խնդրողի դերում են, իսկ Նուբար Փաշան ընդառաջում է նրանց:

Հայկական պահանջատիրության դրսևորումները նույնպես լավագույն վկայությունն են այդ շրջանում առկա իրական հնարավորությունների չգիտակցման ու կանխատեսումներ իրականացնելու անկարողության: Մասնավորապես նույն Պողոս Նուբարի ղեկավարած պատվիրակությունը օգոստոսի 14-ին բողոք էր ներկայացրել Կիլիկիայի ու Խարբերդի վերաբերյալ՝ նշելով որ կիլիկիահայերը չեն համակերպվի Թուրքիայի տիրապետության տակ ապրելու հետ (Մ. Ս. Կ., Ազգ. պատուիրակութեան բողոքը վեհաժողովին, «Արեւ», 8.9.1920, 1): Խարբերդի նահանգը Հայաստանին տալու վերաբերյալ Փարիզում ԱՄՆ դեսպանին տեղեկագիր է հանձնում նաև Ա. Ահարոնյանը: Դրանում ազգագրական, պատմական, տնտեսական, ռազմական և երկրաբանական տեսանկյուններից հիմնավորվում էր նահանգը Հայաստանին տալու անհրաժեշտությունը (Արամեան Հայկազուն, Պ. Ահարոնեան յիշատակագիր մը կը յանձնէ

Բարիզի ամերիկեան դեսպանին (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 13.9.1920, 3):

Հայերի ունեցած ակնկալիքների մասին են խոսում Ա. Խատիսյանի Եգիպտոս այցը լուսաբանող հոդվածները: Նախկին վարչապետը, ելույթ ունենալով Ալեքսանդրիայի հայ առևտրական դասի ներկայացուցիչների, առաքելական ու կաթոլիկ հայոց առաջնորդների առաջ, խոսում է Տրապիզոնի նահանգի կեսի և Խարբերդի Հայաստանին միացվելու հնարավորության մասին, մինչդեռ Կարինի, Վանի (առանց Հաքյարիի) ու Բաղեշի (առանց Սղերդի) վերաբերյալ որևէ կասկած չկա: Ապատեղեկացված լինելու մասին է վկայում նույն ելույթի շարունակությունը, որտեղ Ա. Խատիսյանն ասում է, թե իր ունեցած տեղեկությունների համաձայն՝ տաճիկները սկսել են պարպել Թրքահայաստանը և հեռանալ Էրզրումից: Նա հավելում է, որ այժմ ունենք դաշնակիցների աջակցությունը, լավ հանդերձավորված ու սպառազինված բանակ, որը պատրաստ է առաջին նշանը ստանալուն պես գրավել դաշնագրով մեզ հասանելիք տարածքները (Պ. Աղեքս. Խատիսեանի ճառը, «Արեւ», 20.8.1920, 2-3):

Հիշարժան է նաև այս ելույթում հայոց զորքերի ու ոչ մի թիզ հող չզիջելու վճռականության վերաբերյալ պնդումը: Խոսելով Սևրի պայմանագրի հաջողության մասին՝ նա դա բացատրում է հայ զինվորի խիզախությամբ՝ ասելով, թե մենք մեր բոլոր նվաճումներով պարտական ենք հայ զինվորի քաջությանը: Ու շարունակում է, որ հայ ժողովուրդը, զինյալ հայ գյուղացիությունը սովից կմահանան, հիվանդություններից կմեռնեն, բայց ոչ մի թիզ հող չեն զիջի (Պ. Աղեքս. Խատիսեանի ճառը, «Արեւ», 20.8.1920, 3):

Օգոստոսի 22-ին Կահիրեի Ամերիկյան Քօզմոկրաֆում հավաքված ժողովրդի առջև ելույթ ունենալով՝ Ա. Խատիսյանը նորից կարևորում է բանակի դերը՝ եզրակացնելով, որ հույսը պետք է դնել հայկական բանակի վրա, որովհետև ազգը իր ազատությունը ձեռք է բերում ոչ թե թղթերով, կոնֆերանսներով, այլ արյունով, անվերջ կռվով: Մեր թշնամին միայն զենքի լեզուն է հասկանում: Դիվանա-

գիտության կողքին պետք է կանգնած լինի բանակը, որպեսզի բանակցությունները արդյունավետ լինեն (Սեւակ, Պ. Ալ. Խատիսեան Գահիրէի մէջ Պատմական միթինկ Ամերիկեան Քօզմօկրաֆի մէջ, «Արեւ», 3.9.1920, 1):

Օգոստոսի վերջի-սեպտեմբերի սկզբի համարներում հանդիպում են հայկական զորքերի հաջողությունների մասին վկայող տեղեկություններ (Նախիջեւանի գրաւումը, «Արեւ», 23.8.1920, 3; Զանգեզուրի գրաւումը, «Արեւ», 23.8.1920, 3; Նախընթաց բանակցութիւնները, «Արեւ», 23.8.1920, 3; Ուրիշ յաջողութիւններ, «Արեւ», 23.8.1920, 3; Հայկական ճակատին վրայ, «Արեւ», 1.9.1920, 3): Խոսվում է Նախիջևանում, Զանգեզուրում, Վեդիում հաջող ռազմագործողությունների մասին, նշվում, որ դասալքության դեպքեր չկան, ընդհակառակը՝ կամավորների եռանդը հազիվ է հնարավոր չափավորել (Ոգեւորութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 23.8.1920, 3): Նախիջևանում հայկական զորքերի հաջողությունները բնորոշվում են այսպես. «Հայաստանի զօրքերի խորտակիչ հարուածներից մէկը միւսի հետեւից սկսեցին ոչնչանալ թուրք ապստամբների որջերը...», կամ «Մեր զօրքերի շեշտակի յառաջխաղացման շնորհիւ...» (Կացութիւնը Նախիջեւանի մէջ, «Արեւ», 23.8.1920, 3):

Հայկական բանակի հանդերձանքի ու ռազմամթերքի բավարար վիճակի մասին է վկայում դրանց Բրիտանիայից ուղարկված խմբաքանակների ստացման մասին տեղեկությունը («Արեւ», 23.8.1920, 3): Սեփական ուժերով թշնամիներին հաղթելու ունակ բանակի մասին է խոսում նաև պատերազմի մեկնարկից տասը օր առաջ՝ սեպտեմբերի 17-ին հրատարակված հայկական կուսակցությունների համատեղ հայտարարությունը (Հայկական փոխառութիւնը. Չորս քաղաքական կուսակցութեանց կոչը թուրքահայերուն, «Արեւ», 17.9.1920, 1):

Այսպիսով՝ հայկական բանակն ունի բավարար ռազմամթերք, հաղթում է թշնամիներին՝ շեշտակի ու ջախջախիչ առաջխաղացումներ արձանագրելով: Քաղաքական ընտրանին, ըստ այդմ, ձևակերպում է այնպիսի ակնկալիքներ, որոնք չեն բավարարվում չորս վի-

լայեթներով: Զուգահեռաբար թուրքերը, ըստ «ստացված տեղեկությունների», թողնում են Էրզրումը (ռազմավարական կարևորագույն հենակետ, որի՝ Հայաստանին հանձնելու հարցը երկար քննարկումներ էր առաջ բերել դեռևս Սան Ռեմոյի կոնֆերանսում):

Հայկական բանակը խիստ դրական գույներով է ներկայացնում նաև Ամերիկյան նպաստամատույցի գործիչներից մեկը. հայ բանակը շատ վստահելի է, պաշտոնյա, թե զինվոր շատ լուրջ են վերաբերվում իրենց պարտականություններին: Միաժամանակ, սակայն, նա եզրակացնում է, որ Հայաստանի համար մեկ ծրագիր կարող է լինել՝ խաղաղ քաղաքականություն: Պատերազմը խիստ վնասակար է, և հայ կյանքը խիստ թանկագին (Կէվրէկեան Բերկրուհի Յ., Հայաստանի վրայ Տօքթ. Մէքալըմ իր ականատեսի տպաւորութիւնները կը պատմէ, «Արեւ», 8.9.1920, 2):

Պատերազմի լուսաբանման թեմայի շրջանակում հետաքրքրական է «Արեւի» սեպտեմբերի 3-ի խմբագրականը: Խոսվում է «ռազմաճակատ» ու «թիկունք» հասկացությունների մասին, և կատարվում է եզրակացություն, որ ամբողջ Հայաստանը պետք է համարել «առաջցք» կամ «ռազմաճակատ». «Այո՛, Հայաստանը, իր ամբողջ ժողովրդովը,- կառավարութիւն, զինուորական, քաղաքացի, գիւղացի, զինուորական, այր, կին, տղայ,- կը ներկայացնէ զազգիս հայութեան ռազմաճակատը: Ան... կը կռուի անդադար զէնքով, հաւատքով, կամքով, չարքաշութեամբ, ամէն տեսակ զոհաբերութեամբ, ամէն ազգէ և տեսակէ թշնամիներու դէմ. թուրքին, թաթարին, պոլշեվիկին, սովին, աղքատութեան, բոլոր երեւակայելի և աներեւակայելի դժուարութեանց դէմ...»: Իսկ որպես թիկունք դիտարկվում է Սփյուռքը, որը գրեթե ոչինչ չի արել ռազմաճակատի համար. «Ան սքանչեցաւ, խանդավառուեցաւ, խանդաղատեցաւ, ու հազիվ մերթ ընդ մերթ, ուրուագծեց եղբայրական օգնութեան և քաջալերանքի աննշան ժէսթեր»: Սակայն թիկունքը պետք է զորավիգ լինի ռազմաճակատին, ու դրա համար բավարար է, որ արտասահմանի հայությունը մասնակցի Անկախության փոխառությանը (Մ. Ս. Կ., Ռազմաճակատը եւ թիկունքը, «Արեւ», 3.9.1920, 1):

Նույն համարում կարդում ենք Հայաստանում իրականացվող զորակոչի մասին: Եթե նախկինում զենքի տակ էին կանչվում մինչև 32, ապա այժմ մինչև 36 տարեկանները (Նոր զինակոչ Հայաստանի մէջ, «Արեւ», 3.9.1920, 3):

Տասը օր անց՝ սեպտեմբերի 13-ին, հրատարակվում է վարչապետ Հ. Օհանջանյանի օգոստոսի 2-ի ելույթը խորհրդարանում: Այն վկայում է պատերազմի նախօրյակին Հայաստանի բանակի մարտունակության ու հնարավորությունների անիրատեսական ու գերագնահատված մոտեցման մասին: Վերջինս նշում է, որ հայոց քաջարի զորքը զբաղվեց սահմանների բոլորման խնդրով և այդ արեց մեծ հաջողությամբ, տարավ մի շարք հաղթանակներ ապստամբ շրջաններում: Ապստամբների կողմից կռիվներին մասնակցում էին ադրբեջանական զորքերի մի մասը, թուրքական սպաներ և կանոնավոր զինվորներ՝ թնդանոթներով ու գնդացիրներով: Բայց հայկական, հիացմունքի արժանի, քաջարի զորքն իր ղեկավարներով կարողացավ ընկճել թշնամուն ու հաղթել: Այժմ մեր առջև կանգնած են ոչ միայն տեղական ուժեր, այլև Ռուսաստանի ու Տաճկաստանի կարմիր թափթփուկները: Նա մեծ ոգևորությամբ է ներկայացնում Օլթիի գրավումը: Դրանից հետո Բեքիր Սամին բանակցությունների մեջ է մտել այդտեղից հայկական զորքը դուրս բերելու շուրջ: Վերջինս խոսում է Բրեստ Լիտովսկում, Բաթումում ու Տրապիզոնում կնքված դաշինքների խախտման մասին, մյուս կողմից չի մոռանում նշել հայ-թուրքական բարեկամության մասին՝ ասելով, որ թուրքը երբեք հային թշնամի չէ: Նա առաջարկում է զորքը հանել Օլթիից և սկսել բանակցություններ: Հ. Օհանջանյանը նշում է. «Մենք պատասխանեցինք, որ բարի դրացիական կապեր ստեղծելու համար պետք չէ խօսիլ ո՛չ Պրեստի, ո՛չ Պաթումի և ո՛չ Տրապիզոնի դաշնագրերի անունով, որ բանակցելու համար պէտք է բոլորովին այլ լեզու գտնել, իսկ եթե այդ լեզուն կամովին չի գտնուի, զայն գտնելը կը յաջողցնէ, այո՝ հայկական քաջարի բանակը (բուռն ծափեր)» (Հայաստ.ի խորհրդարանին օգոստոս 2ի նիստը Վարչապետ Պ. Օհանջանեանի ճառը, «Արեւ», 13.9.1920, 2):

Խոսելով Խորհրդային Ռուսաստանի մասին՝ նա ասում է. «Սովետական Ռուսաստանը թէև պատրաստակամութիւն յայտնեց մեզ հետ բանակցելու և խօսքերով շատ «բարեացակամ» տրամադրուած է դէպի մեզ, բայց գործով և իրականին մէջ նա ոչ մի բանով չի տարբերիր Ադրբեջանէն: Ըստ երեւոյթին, բարեացակամ վերաբերմունքի մենք կհանդիպենք միայն մեր զօրքի միջոցով (աղմկալից ծափեր):

...Մենք ցոյց կը տանք, որ հայ ժողովուրդը գիտէ բանակցիլ ո՛չ միայն խօսքով, այլ նաև զէնքով:

...Վերջապէս պարզ է, որ Ռուսաստանը կը ձգտի գրաւել Օլթի, Կարսը, Դարալագյազը: Ես հաւատացած եմ, որ նման երազկոտութիւնը յօդս կը ցնդի:

Մեր ժողովուրդը և բանակը ոտքի են կանգնած և մահուան գնով որոշած են ազատ ապրիլ (որոտընդոստ ծափեր)» (Հայաստ.ի խորհրդարանին օգոստոս 2ի նիստը Վարչապետ Պ. Օհանջանեանի ճառը, «Արեւ», 15.9.1920, 2):

Պատերազմի կանխատեսման տեսանկյունից հետաքրքրական է Հայաստանի հեռագրական գործակալության օգոստոսի 14-ի հաղորդումը: Նշվում է, որ Հայաստանի դեմ նոր արշավանք է նախապատրաստվում, վտանգված է ոչ միայն Հայաստանի անկախությունը, այլև հայ աշխատավորների ֆիզիկական գոյությունը ու հավելում՝ պետք է նորից հասկանանք, որ ինքնօգնությունից դուրս այլ օգնություն չկա: Պիտի կազմակերպենք մեր բոլոր ուժերը (Հայ եւ ռուս համաձայնութիւնը խզուած Հայաստանը կը բողոքէ, «Արեւ», 13.9.1920, 3):

Օգնություն հայկական բանակին

«Արեւում» լույս են տեսնում հայկական բանակին նյութական օգնություն տրամադրելու, տարբեր հանգանակությունների վերաբերյալ հայտարարություններ: Այսպես, օրինակ, ռամկավարները կոչ են անում եգիպտահայերին օգնել ՀՀ-ին ռազմաօդային տորմիղ

ձևավորելու հարցում (Ռամկավար օդային տորմիղը, «Արեւ», 17.9.1920, 3):

Հաճախ են անկախության փոխառությանը մասնակցելու հորդորները, որոնք ևս բացատրվում են բանակին օգնելու հարցով: Ասվում է, որ ինչպես կարողացել ենք հնազանդեցնել Զանգիբասարն ու Շարուրը, այնպես էլ սեփական ուժերի վրա հույս դրած ու ներքին կուռ համերաշխությամբ կկարողանանք Միացյալ Հայաստանի մյուս գավառները խլել օտարներից: Միակ բանը, որ պակասում է սա անելու համար ոսկին է, որ գնենք ռազմամթերք, հագուստ և հաց մեր քաջարի բանակին: Այդ ոսկին մենք կարող ենք ձեռք բերել այս փոխառությամբ (Զթենց, Անկախութեան փոխառութիւնը եւ Հայաստանի մամուլը, «Արեւ», 22.9.1920, 1): Փոխառությանը մասնակցելը բնորոշվում է նաև որպես քննություն ամբողջ աշխարհի առջև (Մ. Ս. Կ., Քննութիւն աշխարհի առջեւ, «Արեւ», 27.9.1920, 1):

Հոկտեմբերի 4-ին, դեռևս ռազմական գործողությունների ծավալումից անտեղյակ, «Հայ ռազմիկների դեղորէից առաքման միությունը» և «Հայուհյաց յառաջադիմասեր տիկնանց ընկերակցությունը» կազմակերպում են նվերների հավաքում հայկական բանակի զինվորներին նոր տարվա առթիվ ուղարկելու համար (Կոչ, «Արեւ», 4.10.1920, 3):

«Արեւ» թերթը պատերազմի սկզբում

Արդեն պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 8-ին, «Արեւը» արտատպում է «Յուսաբերիի»՝ Փարիզի թղթակցից ստացված տեղեկատվությունը.

«*Ալեքսանդրոբոլի եւ Կարսի գիծը վտանգէ զերծ է*» (ընդգծումը թերթինն է – Տ.Ղ.)

Այս լուրը ոչ միայն կը սրտապնդէ մեզ, այլ արդար հպարտութեամբ կ'ուռեցնէ մեր Հայու կուրծքերը: Հայկական անպարտելի դիւցազնութիւնն է որ անգամ մը ևս կը ցցուի ամեհօրէն ցեղին անճիտումը ուխտած անհաշտ ու աիւնռուշտ թշնամիներուն դէմ և որ անգամ մը ևս պիտի փրկէ զայն, ժամանակ տալով մեր պաշտպան-

ներուն իրենց խոստացած օգնութիւնը հասցնելու, անդարմանելի չարիք մը դեռ չի պատահած:

... Մեր և ամբողջ ազգին ալ ակնկալութիւնը ահա՛ իրականանալու վրայ է: Մինչ հայ բանակը կը շարունակէ կռուիլ դիւցազնաբար, ամենայոռի պայմաններու մէջ, գերագոյն վտանգին ներշնչած անձնազոհութեան վսեմ ոգւովը, ահա՛ Ադլանտեանէն կը հասնին մօտալուտ օգնութեան աւետաբեր ձայներ:

Կեցցե՛ն ուրեմն հայ անընկճելի մարտիկները, որ Հայութեան գոյութիւնը կը փրկեն և փառքի նոր դափնիներ կ՚աւելցնեն անոր արդէն փառապանծ ճակատին» (Հայկական զինուց նոր յաղթանակը, «Արեւ», 8.10.1920, 3):

Նույն օրը՝ հոկտեմբերի 8-ին, տպագրվում է «Արեւի» արտոնատեր Լ. Մկրտիչյանի հեռագիրը, համաձայն որի՝ ԱՄՆ-ում քննարկվում է Հայաստան 20 հազար զինվորներ ուղարկելու հարցը: Նույն էջում հրատարակված մեկ այլ աղբյուրի համաձայն՝ ուղարկվելիք բանակի թիվը 150 հազար է (Հայկական զինուց նոր յաղթանակը, «Արեւ», 8.10.1920, 3):

Հոկտեմբերի 11-ին՝ պատերազմը սկսվելուց երկու շաբաթ անց, խոսվում է սեպտեմբերի 19-22-ը Օլթիի ու Ղազախի շրջաններում թուրքական ու ռուսական զորքերի դեմ հաջողությունների մասին (Հայկական յաղթանակ թուրքերու եւ ռուսներու դէմ, «Արեւ», 11.10.1920, 3):

Հոկտեմբերի 13-ին լույս է տեսնում սկսված թուրք-հայկական պատերազմին վերաբերող առաջին հրապարակումը. «Եգիպտահայե՛ր սրբազան պատերազմը հրատարակուած է Թուրքին դէմ, օ՛ն փութացէք ձեր դրամովը օգնել մեր առյուծասիրտ զինուորներուն, որպէսզի յաղթութիւնը կատարեալ ըլլայ» («Արեւ», 13.10.1920, 1):

Նույն օրն արտատպվում են Ռոյթերս լրատվական գործակալությունից քաղված լուրերը, համաձայն որոնց՝ թուրքերի հարձակումից հետո Հայաստանը պատերազմ է հայտարարել Թուրքիային (Հայաստան պատերազմ կը հայտարարէ թուրք ազգայնականներուն դէմ, «Արեւ», 13.10.1920, 3): «Արեւի» այս համարում հրատա-

ракվում է նաև հոկտեմբերի 5-ով թվագրվող հեռագիր, ըստ որի՝ հայ զորքերի բարոյական կորովը շատ բարձր էր, ամեն կողմից հասնում էին կամավորներ (Քէմալական գործողութիւնները Հայաստանի դէմ, «Արեւ», 13.10.1920, 3):

Հոկտեմբերի 15-ին հրատարակվում է Ա. Խատիսյանի հայտնած տեղեկատվությունը պատերազմի մեկնարկի, հայկական զորքերի արդյունավետ գործելու հույսերի վերաբերյալ: Վերջինս նաև հորդորում է արտասահմանի հայերին՝ շինարարներին, ձեռներեցներին, մասնագետներին, ներգաղթել Հայաստան (Միլլիճիները յարձակողականի կ'սկսին Հայաստանի դէմ, «Արեւ», 15.10.1920, 2):

Վերլուծելով պատերազմի իրողությունը՝ հոկտեմբերի 18-ին կարևորվում է դիվանագիտության դերը, որը պետք է աշխարհին պարզ դարձներ Հայաստանի վիճակը («Արեւ», 18.10.1920, 2):

Ռազմական գործողություններ

Ռազմական գործողություններին անմիջականորեն վերաբերող տեղեկության առաջին անգամ հանդիպում ենք հոկտեմբերի 20-ին: Նշվում է, թե Կարսի շրջանում հայերը զորավոր կերպով դիմադրում են թշնամուն (Կռիւներ հայկական ճակատին վրայ, «Արեւ», 20.10.1920, 2):

Արդեն հոկտեմբերի 25-ից կտրուկ ավելանում են տեղեկությունները թուրք-հայկական պատերազմի մասին: Տեղեկատվության աղբյուրներ են եվրոպական լրատվամիջոցները, հայկական թերթերը, որոնք լույս են տեսնում Թիֆլիսում, Կ. Պոլսում, ինչպես նաև թուրքական աղբյուրները:

Հոկտեմբերի վերջին պատկերը ներկայանում է միանգամայն լավատեսական: Օրինակ՝ ամսի 25-ին կարդում ենք, թե մարդիկ ոտքով մեկնում են Կարս, տղամարդ փողոցներում չի մնացել, բոլորը գնում են պատերազմ (Ոգեւորութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 25.10.1920, 2): Իսկ Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունն ասում է, որ հայկական սավառնակները Նոր Սելիմում ռումբեր են նետել թշնամու վրա, զորակոչը ընթանում է մեծ հաջո-

ղությամբ (Հայկական սաւառնակներ Նօվօ Սելիմի վրայ, «Արեւ», 25.10.1920, 2): Մեծ ոգևորությամբ ամեն տեղ արձանագրվում են կամավորներ, օրվա կարգախոսն է. «Հայրենիքը վտանգի մէջ է. ամեն ինչ դէպի ճակատ, ամէն բան ճակատի համար» (Պաշարման վիճակ Հայաստանի մէջ, «Արեւ», 25.10.1920, 3): Պոլսից ստացվում են լուրեր, որ հայկական զորքերը կանգնեցրել են թուրքերին, Կարսը ամրացվում է, ժողովրդի եռանդը չի մարում (Արշաւանք Հայաստանի վրայ, «Արեւ», 25.10.1920, 3): «The Times»-ի թղթակիցը Պոլսից գրում է, թե հայկական զեկույցի հիման վրա լուրեր կան, որ հայերը հետ են գրավել Օլթին (Օլթիի վերագրաւումը, «Արեւ», 25.10.1920, 3): Լութֆի Ֆիքրի Պէյի կողմից կազմվել է «Հաշտության միություն», որը դիմել է Մ. Քեմալին՝ համոզելու, որ Օսմանյան կայսրության համար վատ դրություն է ստեղծվում Հայաստանի դեմ պատերազմելով և պետք է դադարեցնել ռազմական գործողությունները (Լութֆի Ֆիքրիի նոր ձեռնարկը, «Արեւ», 25.10.1920, 3):

Արդեն երկու օր անց պարզ է, որ ինչպես Սեպուհն է բնորոշում, Հայաստանի բանալին՝ Կարսը, վտանգի մեջ է: Նա կոչ է անում 18-30 տարեկաններին աճապարել զենքով, գերանդիով, մանգաղով, քանի որ եթե տվինք Կարսը, կտանք Հայաստանը (Զօր. Սեպուհի հեռագիրը Կարսէն «Մեր գործը լաւ է», «Արեւ», 27.10.1920, 1):

Իրադարձությունների բավական ուշ հասնելու մասին է վկայում, որ հոկտեմբերի 1-ի լուրերը հրատարակվում են հոկտեմբերի 27-ին (Կարսի Հ. Սպայակոյտի զեկոյցը Հոկտ. 2 թիւով, «Արեւ», 27.10.1920, 1): Սարիղամիշի անկման մասին տեղեկությունը ևս հրատարակվում է այդ օրը (Կացութիւնը ռազմաճակատներու վրայ Մեծ Սպայակոյտին պաշտօնական Զեկոյցները, «Արեւ», 27.10.1920, 2):

Նույն օրը «Ժողովուրդի ձայնից» արտատպումը վկայում է, որ Պոլսում իմացել են հարձակման մասին միայն հոկտեմբերի 13-ին: Հոկտեմբերի 12-ի դրությամբ Կարսում ընդհանրապես մտահոգություն չկա, մարդիկ առօրյա գործերով են զբաղված, նոր եկող զինվորները պարապում են: Բացի վարչապետից՝ կառավարության մյուս անդամները ճակատի տարբեր մասերում են: Կարսում թշնա-

մու առաջխաղացման վտանգ չեն տեսնում (Հայաստանի կացութիւնը յուսալից. Հայ բանակին գրաւումները, «Արեւ», 27.10.1920, 2):

Հոկտեմբերի 11-ին Ժողովրդի բարձր ոգու մասին է գրում «The Times»-ի Պոլսի թղթակիցը (Պոլսահայ թերթերէն. Կացութիւնը Հայաստանի ճակատին վրայ, «Արեւ», 1.11.1920, 2): Ամսի 29-ին նույն թերթի թղթակիցը հաղորդում է, որ Իգդիրում ընթանում են խրամատային մարտեր. հայերն ունեն մեծաքանակ ռազմամթերք, այդ թվում՝ օդանավեր, մինչդեռ թուրքերը զուրկ են այդ ամենից (Հայեւ-թուրք պատերազմ, «Արեւ», 3.11.1920, 3):

Տեղեկատվությունը հաճախ հասնում էր շաբաթներ անց, նույնիսկ մեկ ամսից ավելի ուշ: Այսպես ՀՀ կառավարության սեպտեմբերի 30-ի որոշումը ամբողջ Հայաստանում ռազմական դրություն մտցնելու մասին հրատարակվում է նոյեմբերի 5-ին (Զօրակոչի օրէնք Հայաստանի մէջ, «Արեւ», 5.11.1920, 2), իսկ Հայաստանի բանակին նոյեմբերի 8-ին ներկայացված զինադադարի պայմանները՝ միայն նոյեմբերի 29-ին (Մ. Քէմալի կողմէ Հայաստանի առաջարկուած եօթը պայմանները, որոնք տեղի տուին կռիւներու վերսկսման, «Արեւ», 29.11.1920, 3):

Անիրատեսական լավատեսություն

Դեռ նոյեմբերի սկզբին անհաջողությունները մեկնաբանվում են որպես մարտավարական քայլեր: Տ. Բեկզադյանի հոկտեմբերի 20-ի հեռագիրը հաղորդում է, որ հրամանատարությունը, հաշվի առնելով ճակատի մեծացումը, հրամայել է պարպել Կաղզվանը, Սարիղամիշն ու Արդահանը (Հ.Հ. Պաշտօնական զեկոյցը, «Արեւ», 3.11.1920, 3):

Նոյեմբերի 2-ին Կարսի ճակատում գործողությունների մասին նշվում է, թե հայերը փայլուն կերպով են կռվում, նրանց օժանդակում է օդային (Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 5.11.1920, 3): Սա այն պարագայում, երբ Կարսն արդեն ընկել էր թշնամու ձեռքը:

Նոյեմբերի 3-ին կարդում ենք, որ Կարսի ճակատի վրա կացությունը ավելի լավ է, հայերը շահելու վրա են: Կատաղի կռիվներ են

տեղի ունեցել Իգդիրի մոտ: Նոյեմբերի 5-ի դրությամբ հայկական բանակը հարձակման է անցել ու քեմալականներին ստիպել նահանջել մինչև Սարիղամիշ (Հայկական յաղթանակներ Հայկ. բանակը յարձակման կ'սկսի «Արեւ», 8.11.1920, 3):

Չնայած նոյեմբերի 10-ի համարում կարդում ենք, որ Ռոյթերսի թղթակիցը հաղորդել է թուրքերի կողմից Կարսի գրավման մասին, սակայն նշվում է, որ դա պետք է վերապահությամբ ընդունել (Հայկական ճակատը, «Արեւ», 10.11.1920, 2), քանի որ այդ տեղեկությունը հակասում էր ընդհանուր վիճակի ու իրադարձությունների զարգացման վերաբերյալ պատկերացումներին: Այնինչ ստացված լուրը հավաստի էր և կանխատեսումը, թե Կարսից թուրքերը շարժվելու են Ալեքսանդրապոլ, իրականություն դարձավ (Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 10.11.1920, 3):

Մյուս կողմից առաջին անգամ կարծես գիտակցվում է, որ դրությունը լուրջ է, ուստի եզրակացվում, որ եթե արտաքին օգնություն չլինի վիճակը կարող է ծայրահեղ վտանգավոր դառնալ (Հայկական ճակատը, «Արեւ», 10.11.1920, 2): Նույն օրը նոյեմբերի 10-ի համարում տպվում է հոկտեմբերի 19-ին «The Times»-ի Պոլսի թղթակցի հաղորդած տեղեկությունը, թե 20 հազար կամավորներ են միացել հայկական բանակին (20,000է աւելի կամաւորներ, «Արեւ», 10.11.1920, 3):

Դառը իրականությունը

Նոյեմբերի 12-ին կարդում ենք, որ մինչ այդ Հայաստանից եկող լուրերը միայն հայկական կողմի հաղթանակների մասին էին: Ճիշտ է, կառավարությունը անընդհատ նշում էր Հայաստանի վիճակի վերին աստիճանի վտանգավոր լինելու մասին, բայց չկային տեղեկություններ, որոնք մատնանշեին աստիճանաբար հասունացող վտանգի մասին (Հայկական ճակատը, «Արեւ», 12.11.1920, 2):

Եգիպտահայերը Կարսի անկման մասին լուրը ճշտելու համար դիմում են Կ. Պոլսի «Ճակատամարտին» և նոյեմբերի 11-ին ստանում պատասխան, որ Կարս պարպուած է (Զինադադարը, «Արեւ», 12.11.1920, 3):

Նոյեմբերի 24-ին կարդում ենք պատերազմի ժամանակ ՀՀ բանակի թիկունքում գործած ուժերի մասին: Խոսքը վերաբերում էր Հայաստանի քրդերին ու տաճիկներին, ինչպես նաև մալականներին (Ինչպէս ինկաւ Կարսը (անկումէն առաջ եւ վերջը), «Արեւ» 24.11.1920, 2):

Առաջին անգամ իսկապես պատկերավոր կերպով պատերազմական օրերի Հայաստանի վերաբերյալ հոդվածի հանդիպում ենք թուրք-հայկական պատերազմի ավարտի նախօրյակին՝ դեկտեմբերի 1-ին: Դա կամավորականի նամակ է, որում խոսվում է Հայաստանում հաղորդակցության դժվարությունների, պաշտոնյաների ծուլության մասին: Ասվում է, որ ռազմաճակատը պահողն ու ներքին բոլշևիկներին զսպողը արևմտահայերն են: Նամակագիրը խորհուրդ է տալիս չհավատալու լավատեսական լուրերին, իսկ տաճկահայ նահանգների գրավման հնարավորությունը՝ բնորոշում անհավանական (Հայաստանէն նամակ մը. Հայրենիքի վիճակի մասին անկողմնակալ տեղեկություններ, «Արեւ», 1.12.1920, 3):

Միայն դեկտեմբերի 10-ին է հրատարակվում, որ իրականում Կարսը գրավվել է ոչ թե 4 օրվա, այլ մի քանի ժամվա ընթացքում (Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 10.12.1920, 3): Նոյեմբերի 21-ի թղթակցությունում, որը հրատարակվել է «Արեւ» հանդեսում դեկտեմբերի 17-ին, կարդում ենք, թե Երևանից բոլոր եկողները գովում էին հայկական բանակը, և շատ զարմանալի էր, որ 3-4 օրում կորցրել են Կարսի նման անառիկ քաղաքը: Հուսահատությունը բարոյալքումի վերածվեց, երբ իմացվեց նոյեմբերի 8-ին Քեմալի հետ նվաստացուցիչ պայմաններով զինադադարի կնքման մասին (Շավարշ, Պոլսական նամականի (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 17.12.1920, 2):

Եթե պատերազմի ժամանակ չափազանցվում էին կամավորականների թիվն ու ոգևորությունը, ապա հունվարի 5-ին, հղելով «Աշխատավորին», «Արեւը» գրում է, որ Օշականում ժողովուրդը հարձակվել և ծեծի է ենթարկել 30 դասալիքների (Հայ ժողովուրդը կը պատժէ դասալիքները, «Արեւ» 5.1.1921, 3):

Հունվարի 12-ին հրատարակվում է Հայաստանից վերադարձած թղթակցի հոդվածը, որում խոսվում է զոհերի, թուրքերի իրագործած ջարդերի, տասնյակ հազարավոր գաղթականների տեղեհանության մասին (Հայաստանի կացութիւնը, «Արեւ», 12.1.1921, 3):

Ալեքսանդրապոլի պայմանագիրը

«Արեւում» Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման մասին հրատարակվեց միայն դեկտեմբերի 13-ին (Համաձայնութիւն Հայերու եւ Քէմալականներու միջեւ, «Արեւ», 13.12.1920, 3): Միաժամանակ, դրան փաստորեն հակասելով, դեկտեմբերի 27-ին արտատպվում է «Ճակատամարտի» դեկտեմբերի 12-ի հոդվածը, որում ասվում է, թե թուրքերի հետ դեռևս հաշտություն չի կնքվել, և ամեն րոպե հնարավոր է նոր հարձակում (Հայաստան վերջնագիր կուտայ Վրաստանի եւ Գարապէքիրի. Ամենավէրջին դահլիճին կազմը, «Արեւ», 27.12.1920, 3): Ալեքսանդրապոլի պայմանագրի հոդվածները «Արեւում» հրատարակվում են միայն հունվարի 16-ին (Հայաստանի եւ Միլլիճիներու միջեւ կնքուած հաշտութեան ամօթալի դաշնագրին պատճենը. Նոր մանրամասնութիւններ, «Արեւ», 16.1.1921, 2):

1921 թ. հունվարի սկզբում գոյություն է ունեցել տեսակետ, թե Ալեքսանդրապոլի պայմանագրի մեկամյակի լրանալու առթիվ այն պետք է վավերացվեր, սակայն դա տեղի չի ունենա, ինչի հետևանքով հավանական է պատերազմի վերսկսումը (Հայաստանէն նոր լուրեր. Հայ եւ թուրք նոր պատերազմի մը վախը. Թուրքերը կը մերժեն պարպել Ալեքսանդրապօլը. Սովը կ՚սպառնայ դարձեալ հայ ժողովուրդին, «Արեւ», 4.2.1921, 3):

Փետրվարին հրատարակվում են Ստեփան Ղորղանյանի հաղորդած տեղեկությունները Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրման մասին (Լ., Ալէքսանդրօպոլի հաշտութիւնը, «Արեւ», 23.2.1921, 2, տե՛ս նաև Լ., Ալէքսանդրօպոլի հաշտութիւնը, «Արեւ», 25.2.1921, 2):

Կառավարության քննադատություն

Պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 7-ին, Ա. Ահարոնյանը ընդունում է, որ երբեմն կառավարությանն ուղղված քննադատությունը հիմքեր ունի, սակայն հենված է լինում արձագանքների վրա, ուստի ամերիկահայ մամուլը ավելի բուռն է քննադատում, քան պոլսահայը: Կան մտավորականներ, որոնք փախչում են Հայաստանից, մինչդեռ իշխանությունը քննադատվում է, որ նրանց նախարարի պաշտոն չի տալիս: Այսինքն՝ նա ընդունում է, որ կառավարությունում առկա են պաշտոնյաներ, որոնցից ավելի արժանավոր թեկնածուներ կան, սակայն փաստացի կառավարիչների վաստակն այն է, որ վերջիններս մնում են և գործում հայրենիքում: Այս տեղեկատվությունը լուսաբանելիս «Արեւի» խմբագրությունը որպես հակափաստարկ ծանոթագրությունում հարց է հղում, թե արդյոք չկար Ռ. Տեր-Մինասյանից ավելի արժանավոր ռազմական նախարար (Պօղոսեան Յովհ., Թրքական նոր յարձակումներուն առթիւ Հայկական կառավարութեան բողոքը Դաշնակից պետութեանց, «Արեւ», 29.10.1920, 2):

Նոյեմբերի 1-ին «Արեւը» արտատպում է «Ժողովուրդի ձայնի» հոդվածը, որում խոսվում էր խորհրդարանում ընդդիմության առկայության նախընտրելի լինելու մասին, հնարավոր է համարվում կոալիցիան (Պօղոսեան Յովհ., Թրքական նոր յարձակումներուն առթիւ Հայկական կառավարութեան բողոքը Դաշնակից պետութեանց (շար. նախորդ թիւէն եւ վերջ) Քօալիսիօնի խնդիրը, «Արեւ», 1.11.1920, 2):

Նոյեմբերի 12-ին «Արեւն» արտատպում է Կ. Պոլսի հնչակյանների «Առավոտի»՝ ՀՅԴ-ին քննադատող հոդվածը: Վերջինս պատերազմի ժամանակ միայն այդ ուղղությամբ գործելու փոխարեն քննադատում է ազգային պատվիրակությանը կամ բոյկոտում Կ. Պոլսի երեսփոխանական ժողովը (Միտք բերենք թէ Հայաստան պատերազմի մէջ է, «Արեւ», 12.11.1920, 1): Այն մեղադրվում է նաև Վրաստանի (Անուղղելի են, Արեւ, 26.11.1920, 1-2), ինչպես նաև Խորհրդային Ռուսաստանի (Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ

Հայաստանը, Դ., «Արեւ», 10.12.1920, 1) հետ արդյունավետ հարաբերություններ հաստատել չկարողանալու մեջ:

Ներկայացնելով ԱՄՆ ռամկավարների պատգամավորական ժողովի արդյունքները՝ հայտնվում է այն տեսակետը, որը Հայաստանը պետք է ունենա կոալիցիոն կառավարություն (Փլէթֆորմ Ազգային Ռամկավարական կուսակցութեան Ամերիկայի շրջանակին ընդունած երկրորդ պատգամաւորական ժողովին մէջ եւ հաղորդուած ընդհանուր պատգամաւորական ժողովին, «Արեւ», 26.11.1920, 2):

Դեկտեմբերի 1-ին կարդում ենք ՀՅԴ ղեկավարությունից դժգոհության մասին. առկա իրավիճակի մասին պետք է իրազեկ պահել հանրության լայն շերտերին, այլ ոչ թե միայն Հայաստանի խորհրդարանի ՀՅԴ խմբակցությանը (Յովհանջանեան Ռ., Ի՞նչ կըսէ կովկասահայ ընդդիմադիր մամուլը օրէցօր, «Արեւ», 1.12.1920, 2):

Դեկտեմբերի 3-ին «Արեւը» արտատպում է «Մշակի» հոկտեմբերի 18-ի հոդվածը, որում կոչ է արվում դրությունը փրկելու համար ստեղծել կոալիցիոն կառավարություն (Կալխաս, Կովկասահայ ընդդիմադիր մամուլը. Ռոպէի պահանջը, «Արեւ», 3.12.1920, 2): Արդեն երեք օր անց «Ժողովուրդի ձայնից» արտատպումը դրական է ներկայացնում Հ. Քաջազնունու ղեկավարությամբ «խառը կազմով» կառավարություն կազմելու վերաբերյալ նախաձեռնությունը (Պ. Քաջազնունի կը կազմէ Խառն դահլիճը, «Արեւ», 6.12.1920, 3):

Դեկտեմբերի 15-ին «Արեւը» արտատպեց «Ժողովուրդի ձայնի» դեկտեմբերի 1-ի հոդվածը, որում մեղադրվում էր ՀՅԴ-ն՝ միակուսակցական կառավարություն ունենալու, հեղափոխականից պետական կուսակցության չվերածվելու համար. «Եթե մեր վարիչները ...առաջնորդուէին միմիայն ազգին գերագոյն շահերու տեսակէտով, այսօր շատ հաւանական է, որ երեք ժամուան մէջ Կարսը չպիտի յանձնուէր թշնամիին» (Դահլիճի փոփոխութիւն Հայաստանի մէջ, «Արեւ», 15.12.1920, 1):

Նոյեմբերի 30-ին Փարիզի Հայ ռամկավար կուսակցության ակումբում Միքայել Պապաջանյանը մանրամասն ելույթ ունեցավ Հա-

յաստանի կացության վերաբերյալ: Նա զոհերի համար մեղադրում է ՀՅԴ-ին: Մ. Պապաջանյանը նշում է, որ դաշնակցականները չվստահեցին պրոֆեսիոնալ զինվորականներին (Թղթակից, Հրապարակային ժողով Բարիզի մէջ Պ. Պապաջանեան եւ Սաֆրաստեան կը քննադատեն Հ. Յ. Դաշնակցութիւնը ի ներկայութիւն դաշնակցականներու, «Արեւ», 20.12.1920, 1):

Ա. Ահարոնյանը մեղադրվում է նրանում, որ նույնիսկ պատերազմից հետո չի փոխել իր մոտեցումը և իր շրջապատից դուրս անձանց հետ չի փորձում համագործակցել (Ազգ. դաշնակցութեան դիմում, «Արեւ», 31.12.1920, 3):

Պատերազմից հետո ՀՅԴ հասցեին հնչող քննադատության մեջ տեսնում ենք այսպիսի մի այլաբանություն. դրությունը նման է նրան, որ մի պարոն մոտենա փարիզուհի կնոջը և առաջարկի իր թևը պաշտպանելու նրան, այնինչ պաշտպանելու անհրաժեշտություն առաջացավ հենց այն ժամանակ, երբ պարոնը առաջարկեց իր թևը (Մուշեղ արքեպիսկոպոս, Ազգին փրկիչները, «Արեւ», 16.1.1921, 1):

Խ. Գուրեանը վերլուծում է թուրք-հայկական պատերազմն ու ներհայկական հակասությունները. Երևանի հանրապետության հռչակումը Եգիպտոսի Ազգային միության մեջ նոր պայքարի առիթ դարձավ: Ձախակողմյանները, որոնց նույնիսկ միանում էին հայ կաթոլիկ ու ավետարանական առաջնորդները, ուրանում էին Ազգային պատվիրակությունը, թուրքահայ դատը նրանց համար կորսված և թաղված էր, պետք էր նայել Երևանին: Այս վերջինները կարծես միացած Փարիզի թուրքական պատվիրակներին, ասում էին, թե Թուրքիայի արևելյան նահանգների հայությունը բնաջինջ է եղել, արդի իրականությունը Երևանի հանրապետությունն է, որին Վանն ու Էրզրումը կցելով պետք է գոհանանք: Իրադարձությունների զարգացումը, թուրք-հայկական պատերազմում պարտությունը ցույց տվեց, որ Ռամկավար կուսակցությունը շատ ավելի հեռատես է գտնվել, քան Երևանի հանրապետության կառավարությունը: Գիտեն արդյո՞ք հայ կաթոլիկ ու բողոքական հասարակությունները,

որ Ազգային միության մեջ իրենց ներկայացուցիչները, հակառակ Կ. Պոլսի Համազգային ժողովի մեջ իրենց դավանակիցների արած հայտարարություններին, իրենց անձնական ատելությանն են գոհացում տալիս (Գուրեան Խ. Ս., Համազգային ժողով, «Արեւ», 21.1.1921, 1):

ՀՅԴ-ն քննադատվում է նրանում, որ Առաջին հանրապետության գոյության ժամանակ կողմ էր միակուսակցական կառավարություն ունենալուն, իսկ այժմ դաշնակցականները ոգևորված են նրանով, որ խորհրդայնացված Հայաստանում ունենալու են նախարարի երկու տեղ (Պոնդ, Այժմէական նօթեր «Միակամ միատարր դահլիճ», «Արեւ», 24.1.1921, 1-2):

ՀՅԴ-ն մեղադրվում էր նաև գաղութներում հայկական բանակի համար հավաքված գումարների յուրացման մեջ: Գ. Փափազյանը գրում էր. «Ցարդ ո՛չ ոք գիտէ, թէ ինչ նպատակի գործածուեցան բանակի համար հաւաքուած այդ դրամները, որոնց գումարը 1 միլիոն տոլարէ աւելի էր ըստ դաշն. մամուլին, նախկին դաշնակց. կառ.թիւնը և ոչ մէկ ատեն յայտարարեց այն գումարները զոր ստացաւ Ամերիկայէն, հետեւաբար պատճառ ունինք կասկածելու, թէ անոնք գործածուեցան ո՛չ թէ հայ բանակին համար, այլ բանակէն դուրս, նոյն իսկ Հայաստանէն դուրս, տարբեր նպատակներու համար» (Փափազեան Գ., Նորէն դիմենք ժողովուրդին, բայց նախ հաշիւ տանք, «Արեւ», 26.1.1921, 2):

Ա. Ալպոյաճյանը մեղադրում է ՀՅԴ-ին, որ հետո փորձում է խուսափել պատասխանատվությունից ամոթալի պարտությունից հետո մեկուսանալու փոխարեն (Շավարշ (Ա. Ալպոյաճեան), Պոլսական նամականի (սեփական թղթակցութիւն «Արեւ»ի), «Արեւ», 31.1.1921, 1): Իսկ Ավետիս Ահարոնյանը մեղադրում է իր Երևանի ընկերներին նրանում, որ կառավարության կազմում չեն ընդգրկել չեզոք տարրերի, քանզի այդ պարագայում հնարավոր կլիներ բաժանել տեղի ունեցածի պատասխանատվությունը (Իրազեկ, Պ. Ահարոնեանի ստապատում յայտարարութիւնները «քօալիսիօն»ի խնդրոյն շուրջ, «Արեւ», 23.2.1921, 1):

Փոխադարձ մեղադրանքներն ամենևին չեն դադարում պատերազմի ավարտից հետո (տե՛ս, օրինակ, Անճարակ ճարտարութիւն մը, «Արեւ», 21.2.1921, 1, Մկրտիչեան Լեւոն, Հայկական հարցի արդի կացութիւնը եւ մեր հակառակորդները, Ա., «Արեւ», 23.2.1921, 1, տե՛ս նաև Մկրտիչեան Լեւոն, Հայկական հարցի արդի կացութիւնը եւ մեր հակառակորդները Բ., «Արեւ», 25.2.1921, 1):

Ռուսաստանի մասնակցությունը

Քանի որ Խորհրդային Ռուսաստանը էական դերակատարություն ունեցավ թուրք-հայկական պատերազմում՝ պաշտպանելով ու օգնելով քեմալականներին, հետաքրքրիր է նրա մասնակցության ընկալումն ու գնահատումը:

«The Times»-ի Պոլսի թղթակիցը հոկտեմբերի 5-ին հեռագրում է, որ Սարիղամիշի և Սողանլուի գրավումից հետո Հայաստանը ենթարկվեց բոլշևիկների հարձակմանը, որի նպատակն էր կանխել հայկական զորքերի առաքումը դեպի Արևմուտք (Հայաստանը մէկ ամսուան մէջ Պիտի բնաջնջեն եղեր Թուրք եւ Պոլշեւիկ ծրագիրներ, «Արեւ», 1.11.1920, 3):

Նոյեմբերի 3-ին կարդում ենք, որ բոլշևիկները ուժեր են կենտրոնացնում հայկական սահմանի մոտ՝ Աղստաֆա, Թօզ և Զանգեզուր (Հ.Հ. Պաշտօնական զեկոյցը, «Արեւ», 3.11.1920, 3):

Վերլուծվում են հոկտեմբերի 17-ին Խ. Ռուսաստանի Հայաստանին ներկայացված վերջնագրի պայմանները, ու եզրակացվում է, թե որքան ճիշտ է դրանք մերժելը (Մեծ դաւադրութիւնը, «Արեւ», 5.11.1920, 1): Դրությունը լուրջ է Հայաստանի հյուսիսում առկա բոլշևիկյան վտանգի պատճառով, ձմեռը չեղած բոլշևիկները հարձակում են սկսելու: «Թան»ի մեջ կարդում ենք, որ սովետների ծանուցագիրը վերջնագիր է, որը Հայաստանի կողմից ամբողջությամբ մերժվել է (Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 5.11.1920, 3):

Բրիտանիայի խորհրդարանում ԱԳՆ ներկայացուցիչը հայտարարել է, որ թուրքերը զենք են ստանում բոլշևիկներից (Մուսթաֆա Քէմալ եւ Պոլշէվիքները, «Արեւ», 8.11.1920, 3):

Թուրքերի կողմից լուրջ վտանգի չգիտակցման պայմաններում՝ նոյեմբերի 10-ին կարդում ենք, թե ռուսական ուժերը, որոնք մեր միակ վախն են, սկսել են գործողությունների դիմել Հայաստանի դեմ և իրենց ոտքերը առաջ շարժել հյուսիսից՝ խզելով ամեն հաղորդակցություն Վրաստանի հետ (Հայկական ճակատը, «Արեւ», 10.11.1920, 2): Յ. Նալբանդեանը գրում է, թե քանի միայն թուրքն ու թաթարը ունեինք մեր դեմ, վստահ էինք, որ Հայաստանի դատը հայ քաջարի բանակի ձեռքով ուշ կամ շուտ հաջողության կհասնի, բայց այսօր բոլշևիկ Ռուսաստանը իր ռազմական ուժն է տրամադրում մեր թշնամիներին: Հենց հայկական զորքերը հետ են շպրտել թուրքերին, ռուսները ուզում են հարվածել թիկունքից (Նալբանդեան Յ., Վտանգին առջև, «Արեւ», 12.11.1920, 1):

Նոյեմբերի 15-ի «Մշակից» արտատպության մեջ կարդում ենք. «Մեր «եղբայրն» է, որ ուզում է նրան մեզ վրայ, եթէ նա չուզենար, նրա դաշնակից Մ. Քէմալը չէր համարձակուի մի զինուոր անգամ մտցնել Հայաստանի հողը» («Եղբայրները» գործում են, «Արեւ», 15.11.1920, 2):

Իսկ երբեմն որպես ՀՀ դեմ պատերազմող կողմեր ներկայացվում են երեք պետություններ՝ Թուրքիան, Ռուսաստանը և Ադրբեջանը: «Լա Պուրս Էժիբսիէնը» գրում է, որ Հայաստանը ենթարկվել է ռուս բոլշևիկների, ադրբեջանցի թաթարների ու Մուստաֆա Քեմալի միաժամանակյա հարձակման (Զինադադարին պայմանները, «Արեւ», 15.11.1920, 3):

«Էնտէփանտանս պելժը» խմբագրական է նվիրել Հայաստանի դեպքերին. Հայերը, հարձակման ենթարկվելով միաժամանակ ռուս բոլշևիկների, Ադրբեջանի թաթարների և Մ. Քեմալի կողմից, կանգնել են ոչնչացման վտանգի առջև (Հայաստանի խղճալի կացութիւնը, «Արեւ», 22.11.1920, 3):

Նոյեմբերի 24-ին, քննարկելով բոլշևիկների մասնակցության հարցը, «Արեւի» հոդվածագիրը եզրակացնում է, թե նույնիսկ այն, որ հայերը ստիպված էին Ադրբեջանի սահմանին զորքեր պահել, ինչն արդեն իսկ օգնություն է թուրքերին (Կ., Եւրոպան կզբաղի մեզ-

մով, Բ., «Արեւ», 24.11.1920, 1): Սակայն նա եզրակացնում է, որ դա, միևնույնն է, չի կարող արդարացնել դաշնակիցների անտարբեր մնալը:

Նոյեմբերի 26-ին կարդում ենք, թե Թուրքիայի ու Ռուսաստանի հարաբերությունները «ցրտացել» են (Յարաբերութիւնները կը ցրտանան Պոլշէվիկներու եւ Տաճիկներու միջեւ, «Արեւ», 26.11.1920, 3):

Դեկտեմբերին ու հունվարին աստիճանաբար Ռուսաստանի դերակատարումը սկսում է պակաս բացասական ու նույնիսկ դրական ներկայացվել:

Նոյեմբերի 29-ին հրապարակվում է. որ Լենինը հրահանգել է բոլշևիկյան-թուրքական միացյալ զորքերին չմտնել Հայաստանի խորքերը («Արեւ», 29.11.1920, 3):

Դեկտեմբերի 1-ին արդեն Ռուսաստանի քննադատության հետ միասին Յ. Նալբանդեանը գրում է, որ բոլշևիկների վերջին հաջողությունները մղում են ավելի ուշադիր հետևելու նրանց անցուդարձերին, քանի որ Հայաստանի ճակատագիրը կախված է լինելու Ռուսաստանի վարիչներից (Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, «Արեւ», 1.12.1920, 1), հենց Ռուսաստանն է ի վիճակի դադարեցնել Թուրքիայի հարձակումը (Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, Բ., «Արեւ», 3.12.1920, 1): Ուրեմն ինչով էր պայմանավորված Ռուսաստանի դիրքորոշումը. «մեծ յանդգնութիւն մըն ալ չէ ենթադրելը, թէ այս պատերազմին սկիզբը, պոլշևիք կառավարութեան բռնած ընթացքը ուղղակի նպատակ ունէր ստիպելու զմեզ, որ ազգովին իր բազուկներուն մէջ նետուինք» (Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, Գ., «Արեւ», 8.12.1920, 1): Ի վերջո, Յ. Նալբանդեանը իր հոդվածաշարը ավարտում է այսպես. «-Ռուսաստանի բարեկամութիւնը ստիպողականութիւն մըն է այսօր մեզ համար: Ան միայն կարող է դուրս հասնել զմեզ այն տագնապալի կացութենէն, որուն մէջ կը գտնուինք: Անոր օգնութեան շնորհիւ է որ ապահով և բնականոն կեանք մը պիտի կրնանք շարունակել այսուհետև:

Ինչ որ ըրին Դաշնակիցները ի նպաստ մեր դատին, այսքան էր...» (Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, Ե., «Արեւ», 13.12.1920, 1):

Դեկտեմբերի 1-ին, տպելով «The Times»-ի՝ Կ. Պոլսի թղթակիցի հոդվածը, «Արեւը» գրում է, թե ռուսները պահանջել են թուրքերից դադարեցնել Հայաստանի դեմ գործողությունները, քանի որ վախենում են թուրքերի առաջխաղացման պարագայում ադրբեջանցիների ըմբոստացումից (Հեռագրալուրեր, «Արեւ», 1.12.1920, 3):

Նոյեմբերի 27-ին՝ Ազգերի լիգայում քննարկման ժամանակ, ընդգծվում է թուրք-ռուսական համագործակցության հանգամանքը. «Երեւանի հանրապետութիւնը զոհ կըլլայ Մոսկուայի Սովիյէթ կառավարութեան և Էնկիւրիի թուրք ազգայնականներու միջև գոյացած դաշնակցութեան. ենթարկուելով թուրք ոյժերու արշավանքին» (Հայաստան (խմբագրական «Իճիբշըն Կազէթ», 27 նոյ.), «Արեւ», 10.12.1920, 2):

Հայաստանում խորհրդային կարգերի հաստատման մասին լուրը հրատարակվում է դեկտեմբերի 17-ին՝ արտատպելով «The Times»-ի դեկտեմբերի 6-ի տեղեկատվությունը. «Հայաստան ինքզինքը հռչակած է Սովիէթ Հանրապետութիւն» (Հայաստան կարմիր ռեժիմին ներքեւ, «Արեւ», 17.12.1920, 3):

Հայաստանի խորհրդայնացումից հետո առկա էր որոշ լավատեսություն: Դեկտեմբերի 17-ին կարդում ենք, որ ռուսները խոստացել են մեծագույն օժանդակություն տրամադրել. ո՛չ Անգլիան, ո՛չ Վիլսոնը, այլ սովետական կառավարությունը բերեց խաղաղություն Հայաստանին (Ի՞նչ կը խորհին Մոսկվայի մէջ Հայաստանի մասին, «Արեւ», 17.12.1920, 3): Առավել ևս դրան գումարվում է տեղեկատվությունը, որ Ադրբեջանը Նախիջևանը, Զանգեզուրն ու Ղարաբաղը ճանաչել է Հայաստանի մաս: Նույնիսկ ասվում էր, թե Թուրքիային ռուսական պատվիրակությունն ասել է, որ այժմ Հայկական հարցը Ռուսական հարց է (Հայաստան Սովիէթ Հանրապետություն, «Արեւ», 17.12.1920, 3): Սպրդում են տեղեկություններ ռուս-թուրքական հարաբերությունների վատթարացման մասին (Սէվռի Դաշ-

նագրին շուրջ. Տեսակցութիւն մը Թուրքիոյ գահաժառանգին հետ, «Արեւ», 17.12.1920, 3):

Փորձ է արվում գտնել հակասություններ Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև. բոլշևիկյան գաղափարները հետզհետե տարածվում են Ալեքսանդրապոլում, որոնց նպատակն է ռուսական գերակայություն ապահովել Կովկասում և արգելել Թուրքիայի հարաբերությունները Ադրբեջանի ու Թուրքեստանի հետ, ինչը կարող է քեմալա-բոլշևիկյան միջադեպի պատճառ դառնալ (Կովկասեան հարցը, «Արեւ», 20.12.1920, 3):

Դեկտեմբերի 24-ին նշվում է, որ Լեգրանի հետ բանակցությունների արդյունքում որոշվել է, որ Զանգեզուրն ու Շարուր-Նախիջևանը անվիճելիորեն կը միացվեն Հայաստանին (Զանգեզուր եւ Նախիջեւան, «Արեւ», 24.12.1920, 2): Միաժամանակ գրվում է, որ Թիֆլիսի մեջ լուրեր են շրջում, թե Ադրբեջանը որոշել է Ղարաբաղի լեռնային մասը ճանաչել Խորհրդային Հայաստանի մաս (Ղարաբաղի լեռնային մասը, «Արեւ», 24.12.1920, 2):

Դեկտեմբերի 27-ին արդեն տեսնում ենք շնորհակալական խոսքեր բոլշևիկներին Հայաստանում խաղաղության հաստատման համար. բոլշևիկների մեր հայրենիքին մատուցած ծառայությունների վրա պետք է ավելացնել (եթե ստույգ են տեղեկությունները) Ղարաբաղի, Նախիջևանի և Զանգեզուրի միացումը Հայաստանին, որով վերջանում է վեճը Ադրբեջանի հետ: Եզրակացությունը հետևյալն է. բոլշևիկները օգտագործեցին քեմալականներին՝ Հայաստանին ստիպելու համար նետվել իրենց գիրկը: Իսկ այժմ՝ իրենց վարչակարգը հաստատելուց հետո, կուզեն գոհացում տալ հայերի բաղձանքներին (Կացութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 29.12.1920, 1):

Հակառակ Խորհրդային Ռուսաստանի ու բոլշևիզմի նկատմամբ վերոնշյալ դրական արձանագրումներին՝ Ռամկավար կուսակցության դեկտեմբերի 15-ին Ազգերի լիգային ուղղված հիշատակագրում ասվում էր, որ իր ազգային ավանդույթներով, կրոնական ու ընտանեկան հղացումներով հայ ազգը չի կարող հարել համայ-

նավարական վարդապետության: Հայ ժողովուրդը, բացի մի քանի անձերից, մերժում է սովետական ռեժիմը Հայաստանի մեջ: Կուսակցությունը հովանավորություն էր խնդրում ոչ թե Երևանի հանրապետության, այլ Սևրի դաշնագրով Թուրքիայից անջատվելիք նահանգների համար (Յիշատակագիր մատուցուած Ազգերու դաշնակցութեան համաժողովին Հայ սահմ. ռամկավար կուսակցութեան կողմէ, «Արեւ», 31.12.1920, 1):

Արտատպելով «Երկիր» թերթի հոդվածը՝ «Արեւը» գրում է, թե ռուսական բանակը Ադրբեջանից մտավ փրկելու հայկական բեկորները: Ցույց տալու համար, որ որևէ նվաճողական նպատակ չունի, այն իսկույն Հայաստանին կցեց Ղարաբաղը, Զանգեզուրն ու Նախիջևանը: Նոր կառավարությունը հսկողության տակ է առել նախկին ՀՅԴ-ական ղեկավարների, որպեսզի նրանք չկարողանան «ներքին քաղաքացիական պատերազմ» հրահրել: Ռուսներն ասել են թուրքերին, որ հայ-թուրքական թշնամությունը վերացնելու համար Հայաստանին կցեն Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթները: Հայկական հարցը մտել է նոր շրջանի մեջ, որը ավելի փայլուն է թվում (Կացութիւնը Հայաստանի սահմաններուն մէջ, «Արեւ», 31.12.1920, 3):

Հայաստանի խորհրդայնացումից հետո, խոսելով Հայաստանի ինքնուրույնության աստիճանի մասին, Խ. Գուրեանը գրում է. «...Ներկայ պարագաներու տակ Արարատի գաւառը Դաշնակցային Ռուսիոյ մի ինքնավար նահանգը միայն կրնայ ըլլալ» (Գուրեան Խ. Ս., Հայաստանի վերջին պատեհութիւնը, Ա., «Արեւ», 2.2.1921, 1):

Դաշնակիցները

Մեջբերելով Ա. Խատիսյանի՝ Երևանում ամերիկացի հյուրերի ու այլ օտարերկրյա ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ ասված խոսքերը՝ Միքայէլ Ս. Կիւրճեանը հոկտեմբերի 8-ին գրում է, որ Հայաստանը դաշնակիցներից ակնկալում է օգնական զորքեր, ոչ թե քննիչներ: Հայկական հարցը կլուծվի Էնվերի և Մուստաֆա Քեմալ փաշայի կազմակերպած կոտորածներով, եթե

ԱՄՆ-ն կամ դաշնակիցները արագ չգործեն (Մ. Ս. Կ., Սկիզբն է փրկութեան, «Արեւ», 8.10.1920, 1):

Դեկտեմբերի 24-ին լույս է տեսնում Ա. Խատիսյանի հոկտեմբերի 27-ի ելույթը Հայաստանի խորհրդարանում, որտեղ նա, իր արտասահմանյան ուղևորության արդյունքներն ամփոփելով, ասում է, թե օտար պետական պաշտոնյաների հետ հանդիպումներից ստացել է տպավորություն, որ վերջիններս դրական վերաբերմունք ունեն ՀՀ նկատմամբ, բայց գործնական որևէ օժանդակություն չեն պատրաստվում տրամադրել (Պ. Խատիսեանի խիստ կարեւոր յայտարարութիւնները Հայկական խորհրդարանի մէջ, «Արեւ», 24.12.1920, 2):

Նոյեմբերի 24-ին «Արեւը» հայտնում է Վ. Վիլսոնի իրավարար վճռի մասին. «Daily Chronicle»-ի Նյու Յորքի թղթակիցը տեղեկացնում է, որ Սևրի դաշնագրի համաձայն՝ նախագահ Վիլսոնը գծել է Հայաստանի ու Թուրքիայի միջև սահմանը (Նախագահ Ուիլսըն եւ Հայաստան, «Արեւ», 24.11.1920, 3):

Նոյեմբերի 26-ին հաղորդվում է, որ Ազգերի լիգան 6 հոգուց բաղկացած հանձնաժողով է ստեղծել «այս կամ այն կերպով Հայաստանը փրկելու խիստ դժուարին պաշտոնով» (Հեռագրալուրեր, «Արեւ», 26.11.1920, 3):

Այդ մասին իրատեսական գնահատականի ենք հանդիպում արդեն նոյեմբերի 29-ին. «Շիտակը ըսելու համար, Ազգերու Ընկերակցութենէն որքան որ ալ բարի դիտումներով և բարի կամեցողութիւններով տոգորուած ըլլար մեզի հանդէպ, կարելի չէր սպասել դրական անմիջական օգնութիւն մը, քանի որ ան Կաճառ մըն է միայն, միջազգային քաղաքականութեան ակադեմական Կաճառ մը, որ տրամադրութեան տակ ոչ մէկ ուժ ունի կարենալու համար գործել, միջամտել ի նպաստ վտանգի մէջ գտնուող ո՛ևէ ազգի» (Կ., Եւրոպան կզբաղի մեզմով, Դ., «Արեւ», 29.11.1920, 1): Սակայն նույն հոդվածում տեսնում ենք Հայաստանի ուժերի նկատմամբ անիրատեսական լավատեսություն. Հայաստանի համար նախընտրելին, սակայն սեփական ուժերով հաղթելը կլիներ: Եվ Հայաստանը սկսել

է պատասխան տալ՝ Կարսի վերագրավումը մատնանշելով (եթե ի վերջո ստուգվեր այդ լուրը) (Կ., Եւրոպան կզբաղի մեզմով, Դ., «Արեւ», 29.11.1920, 1):

Հունվարի 12-ի «Քաղաքական կացութիւնը» հոդվածում կարծիք է հայտնվում, որ դաշնակիցներից ամենավճռականը Թուրքիայի դեմ քաղաքականություն վարելու հարցում Բրիտանիան է (Քաղաքական կացութիւնը, Ա., «Արեւ», 12.1.1921, 1), որը չի ուզում զիջումներ կատարել Թուրքիային (Քաղաքական կացութիւնը, Բ., «Արեւ», 14.1.1921, 1): Հաջորդիվ ևս հանդիպում ենք կարծիքի, որ Անգլիան ու ԱՄՆ-ն կպահանջեն Թուրքահայաստանի անկախությունը, մինչդեռ Ֆրանսիան ու Իտալիան կպաշտպանեն Թուրքիային (Գուրեան Խ. Ս., Հայաստանի վերջին պատեհութիւնը Բ., «Արեւ», 4.2.1921, 1):

«Արեւի» արտոնատեր Լ. Մկրտիչյանը նշում է, որ Ազգերի լիգայում Հայաստանին օգնելու պատրաստակամություն կար, ինչին խոչընդոտեց Հայաստանի խորհրդայնացումը (Պ. Լեւոն Մկրտիչեանի ճառը Բարիզի հայ ռամկավար ակումբին մէջ, «Արեւ», 26.1.1921, 1-2): Ըստ Պ. Թէրզիպաշեանի ԱՄՆ-ն Հայաստանի մանդատից հրաժարվեց Միացյալ Հայաստանի հռչակման պատճառով, քանի որ դրանով այն պետք է գործ ունենար Ռուսաստանի հետ, ինչն անցանկալի էր (Պողոս Փաշա Նուպարի անուան տօնը Կ. Պոլսոյ մէջ, «Արեւ», 31.1.1921, 2-3):

Հետագայում ևս, խոսելով Հայկական հարցի ապագա լուծման մասին, տեսակետ է զարգացվում, որ մարտավարական տեսանկյունից սխալ է Ռուսահայաստանի հարցը կապել Թուրքահայաստանի հարցի հետ, քանզի Ռուսաստանի հետ դաշնակիցները խնդիրներ ունենալ չեն ցանկանա, ուստի այն չեն ազատագրի, մյուս կողմից ոչ մի դեպքում չեն կամենա Արևմտյան Հայաստանը կցել բոլշևիկյան պետության (Մին առնուլ եւ միւսը չթողուլ, «Արեւ», 16.2.1921, 1, տե՛ս նաև Թրքահայաստանի դատը պէտք է պաշտպանուի թրքահայերու ձեռքով, «Արեւ», 16.2.1921, 1, տե՛ս նաև Մկրտիչեան Լեւոն, Հայկական հարցի արդի կացութիւնը եւ մեր հակառակորդները, Ա., «Արեւ», 23.2.1921, 1):

Ասեկոսեներ

Հանդիպում ենք ասեկոսեների, լուրերի, որոնք հեռու են իրականությունից: Մասնավորապես Լոնդոնից հոկտեմբերի 26-ին հաղորդում են, թե հոկտեմբերի 23-ին հայերը ամբողջ գծով անցել են հարձակման, և նրանց թիվը հավասար է թուրքերին: Վերջիններս չեն կարողացել դիմակայել հայերի հարձակմանը, շատերը փախել են Տրապիզոն (Հայկական յարձակողականը, «Արեւ», 29.10.1920, 3):

Նոյեմբերի 7-ին կարդում ենք, որ հայերը հետ են գրավել Սարիղամիշը (Սարըղամիշի գրաւումը, «Արեւ», 8.11.1920, 3):

Նոյեմբերի 10-ին խոսվում է, որ պատերազմի սկզբում թուրքերը հասել են հաջողությունների առանց լուրջ դիմադրության հանդիպելու: Առաջին իրական ճակատամարտերը տեղի ունեցան Կարսի ու Իգդիրի մոտ, որոնցում հայկական բանակը հաղթեց: Դրանից հետո վերջինս, օգտագործելով ժամանակը պատրաստվելու, կամավորներ հավաքելու համար, ըստ ստացված հեռագրերի՝ Սարիղամիշի ու Իգդիրի մոտ թուրքերին ջախջախել է և այդ քաղաքները վերագրավել: Այսպիսով՝ մեկ ամսում հայկական քաջարի բանակը, կասեցնելով թշնամու առաջխաղացումը, չարաչար փախուստի ու պարտության մատնեց նրան (Հայկական ճակատը, «Արեւ», 10.11.1920, 2):

Նոյեմբերի 8-ին «The Times»-ի՝ Կ. Պոլսի թղթակիցը ասում է, որ ռուսները, առաջանալով Աղստաֆայի ճանապարհի երկայնքով, գրավել են Ղարաքիլիսան (Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 10.11.1920, 3):

Արտատպելով Կահիրեի «Յուսաբերի» նոյեմբերի 24-ի հոդվածը՝ «Արեւը» նոյեմբերի 26-ին գրում է, թե Կարսը ազատագրվել է: Տեղեկությունը ստացվել է Կ. Պոլսից: Ասվում է, թե ազատագրումը եղել է նոյեմբերի 16-ին, ու թուրքերը նոյեմբերի 18-ին նոր զինադադար են խնդրել: Որպես մեկնաբանություն հավելվում է. մինչև թերթը մամուլի դնելը չեղավ ուրախալի լուրը հաստատող որևէ այլ աղբյուր. «Կը կարծենք, թէ Ալեքսանդրապօլի վերագրաւումէն վերջ

շատ հաւանական է որ հայկական բանակը յաղթական գրոհով մը վերագրաւած ըլլայ նաև Կարսը որուն գրաւման մանրամասնութիւնները հաղորդող հեռագրալուրերը անշուշտ չեն ուշանար» (Կարսը վերագրաւուած, «Արեւ», 26.11.1920, 3):

Հետաքրքրական է, որ լուրը չի հերքվում, այլ հաստատվում է: Նոյեմբերի 29-ի համարում, հղում կատարելով «Ճակատամարտի» նոյեմբերի 23-ի տեղեկատվությանը, նշվում է. «Ինչպէս նախորդ օր գրած էինք, Կարսի վերագրաւման մասին շրջող զրոյցները կը հաստատուին: Իրազեկ շրջանակներու մէջ կը հաստատուի թէ հայկական բանակը վերագրաւած է բերդաքաղաքը՝ ամսոյս 16ին» (Կարս վերագրաւուած հայերու կողմէ, «Արեւ, 29.11.1920, 3): Այնինչ նույն համարում կարդում ենք Կարսի գրավման վերաբերյալ թուրքական պաշտոնական զեկուցագիր, որտեղ նշվում է գերեվարված հայ պաշտոնյաների, մեծաքանակ ռազմամթերքի մասին (Քէմալական զեկոյց մը ի՞նչ կըսէ, «Արեւ», 29.11.1920, 3):

Դեկտեմբերի 3-ին, երբ արդեն կնքվել էր Ալեքսանդրապոլի դաշնագիրը, «Արեւը» գրում է, որ Կարսի ազատագրման լուրը հաստատվել է: Բաթումի և Կ. Պոլսի հեռագրական հաղորդակցությունները այդպիսի լուր չեն ստացել, սակայն Պատրիարքարանը իր աղբյուրներով ստուգել ու հաստատել է այն (Կարսի վերագրաւումը պաշտօնապէս կ'ստուգուի, «Արեւ», 3.12.1920, 3): Նույն համարում կարդում ենք, որ 7 հազար թուրքեր մահացել են ցրտից, բոլշևիկները տվել են հավաստիացումներ, որ արևելյան ճակատից վախենալու անհրաժեշտություն չկա, թուրքերի ու ռուսների միջև կան անհամաձայնություններ (Հայ եւ Թուրք նոր զինակցութիւն մը, «Արեւ», 3.12.1920, 3):

Միայն դեկտեմբերի 6-ին «Արեւը» գրում է. «Հայկական հաղթանակների վերաբերյալ լուրերը լրիվ անհիմն են թվում» (Հայ եւ Թրքական առեղծուածը, «Արեւ», 6.12.1920, 3):

Այժմ հանդիպում ենք կացությունը իրականից ավելի բացասական ներկայացնող ասեկոսեների: Մասնավորապես Կ. Պոլսում տարածվել էին լուրեր, թե թուրքերը գրավել են Էջմիածինը (Էջմիածնի մասին, «Արեւ», 8.12.1920, 3):

Դեկտեմբերի 10-ին «Արեւը» արտատպում է «Ժողովուրդի ձայնի» նոյեմբերի 30-ի տեղեկությունը, որում ասվում է, թե նոյեմբերի 28-ին «ճամբորդներէ և թերթերէ կը տեղեկանանք, թէ Կարսի և Ալեքսանդրապօլի հայկական բանակի կողմէ գրաւման զրոյցները որոնց արձագանգը հասած էր մինչև Պոլիս, ճիշդ չեն» (Հայեւթուրք պատերազմ, «Արեւ», 10.12.1920, 3):

Արտատպելով «Արևելյան մամուլի» դեկտեմբերի 5-ի թղթակցություններից հատվածներ՝ «Արեւը» դեկտեմբերի 31-ին գրում է, թե Կարսի վերագրավման լուրը, որ քանի անգամ իբր ամենաստույգ ներկայացվեց, իրականությանը չէր համապատասխանում: Որոշ մարդիկ հատուկ խաբում էին ժողովրդին: Պոլսի հայությունը, որը կարծում էր, թե հայկական բանակները Կարինի դռներն են թակում, այժմ կարծես երազից արթնացած լինի (Անգեղաց Արգամ, Հայ եւ թուրք պատերազմին շուրջը. Յայտարարութիւններ, մանրամասնութիւններ, «Արեւ», 31.12.1920, 2):

Չնայած ամենահիշարժան ապատեղեկատվությունը վերաբերում էր Կարսի վերագրավմանը, սակայն կային նաև այլ բովանդակություն ունեցող ասեկոսեներ: Արտատպելով «Երկիր» թերթի թղթակցությունը՝ «Արեւը» գրում է, որ ռուսական կառավարությունը պահանջել է Անկարայից Հայաստանին թողնել Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգները՝ «վերջ մը տալու համար այն արիւնալի թշնամութեան, որ կը տիրէ հայ և թուրք ժողովուրդներու միջև...» (Կացութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 29.12.1920, 1):

«Ժողովուրդի ձայնից» արտատպությունում կարդում ենք զրույցի մասին, թե Խատիսյանն ու Օհանջանյանը մահվան են դատապարտվել: Բաթումից լուրեր են հայտնում, որ թուրքերը Խատիսյանին վերցրել են իրենց հովանավորության տակ (Խատիսեանի մասին, «Արեւ», 5.1.1921, 3): Հունվարի 7-ին «Արեւում» կարդում ենք «Ժողովուրդի ձայնի» թղթակցությունը, ըստ որի՝ Քարաբեքիրը առաջարկել է Խատիսյանին իր հովանավորությունը, բայց նա չի ուզել: Երկու օր է՝ լուր է շրջում, որ Դրոյին գնդակահարել են: Ասվում է, որ Համազասպն էլ սպանվել է Գորիսում (Կացութիւնը Հայաստա-

նի մէջ, «Արեւ», 7.1.1921, 3): «Աշխատաւորի» դեկտեմբերի 15-ի համարում կարդում ենք, որ Թիֆլիսում համառ լուրեր են պտտվում Դրոյի սպանության մասին (Դրօյի սպանութեան զրոյցը, «Արեւ, 12.1.1921, 3):

Ասեկոսեների բաժինն ամփոփենք հետևյալով. Հայաստանի սահմանները գծող Վիլսոնից հասած լուրերի համաձայն Հայաստանի կազմում են ներառվել ընդարձակ տարածքներ՝ մինչև Կիլիկիա: Դաշնագրի ստորագրումը պետք է ուշանա Վիլսոնի և դաշնակիցների տեսակետները համաձայնեցնելու համար (Հայաստանի սահմանագծումը, «Արեւ», 14.1.1921, 3):

Պարտության պատճառները

Պարտության պատճառների առաջին վերլուծությանը հանդիպում ենք դեկտեմբերի 10-ին: Որպես թիվ մեկ պատճառ նշվում է թշնամու ուժերը թերագնահատելը (Հայկական պատրանքներ թուրքերու իրական զօրութեան մասին, «Արեւ, 10.12.1920, 2): Քննադատվում է Թիֆլիսի «Աշխատավոր» թերթը, որը գրել է, թե. «Այսօր Հայաստան 75,000ի մօտ զօրք ունի, եւ եթէ պոլշէվիքեան վտանգը անցնի (որ կը կարծուի թէ կ՚անցնի), Թուրքերուն հետ չափուիլն Հայուն համար հարսանիք երթալէն աւելի զուարճալի է:

Եւ ըսել թէ այս հոսոսական տողերը գրուելէն 8-10 օր վերջը Կարսը կ՚իյնար, բոլոր յանցանքը՝ ապահովաբար՝ «Վերջին Լուր»ի շրջուն թղթակիցինը չէ. այդ «հոսհոսը» ուրիշ բան չէ ըրած բայց եթէ արտահայտել մտայնութիւնը, որ կը տիրէր Հայաստանի մէջ իրաւ է թէ քիչ մը չափազանցեալ ձեւով...» (Հայկական պատրանքներ թուրքերու իրական զօրութեան մասին, «Արեւ», 10.12.1920, 2):

Հայ-թուրքական առաջին զինադադարից հետո Հ. Օհանջանյանը ՀՀ անունից Հայաստանի ժողովրդին ուղղել է կոչ, որտեղ որպես պարտության պատճառներ նշել է. «Հայ ժողովուրդ ...դու չուզեցիր պետութեան սահմանները պաշտպանել Սարըղամիշի, Ղարսի և Ալէքսանդրապոլի տակ, այսօր թշնամին սպառնում է արդէն ոչ միայն քո ազատութեանը, այլ և կեանքիդ» (Պատմական տօքիման մը, «Արեւ», 10.12.1920, 2):

Դեկտեմբերի 13-ին լույս տեսավ հոկտեմբերի 15-ին «Մշակում» Ա. Նազարեթյանի հեղինակած «Վտանգից առաջ» հոդվածը: Սրանում քննադատվում է կառավարությունը, որը չի կարողացել կանխատեսել պատերազմն ու նախապատրաստական բավարար աշխատանքներ կատարել: Նշվում է, որ պատերազմից առաջ լուրեր էին տարածվում, թե թուրքերը պարպում են Էրզրումը (Նազարէթեան Ա., Վտանգից առաջ, «Արեւ, 13.12.1920, 2):

Դեռևս Կարսի անկման վերաբերյալ պոլսահայության շրջանում առկա տրամադրությունները լուսաբանող նոյեմբերի 21–ի թղթակցության մեջ կարդում ենք պարտության պատճառների մասին. «Այս ահարկու հարուածները, որոնք իրարու կը յաջորդէին, կը սահմռկեցնէին Պոլսոյ հայերը, որոնք յուզումին առաջին տպաւորութեան տակ իսկ այս ձախորդութեանց պատասխանատուութիւնը մենէ դուրս ուրիշներուն վրայ բեռցնել կ՚ուզէին:

Եւ ամէն հայ, որ իր մտքին մէջ պարտականութիւն մը ստեղծած է Եւրոպայի համար, զմեզ ազատելու, Եւրոպայի կողմէ հայերու լքուիլը տեսնելով այս աղէտին բոլոր պատասխանատուութիւնը կ՚ուզէր բեռցնել անոր վրայ: ...Քչերն էին որ կ՚անդրադառնային թէ Եւրոպայի չափ մենք ալ յանցաւոր էին ներկայ կացութեան համար: Մենք քաղաքական հասկացողութենէ զուրկ զգացումներէ […] քաղաքականութիւն մը ունեցած ենք և ատոր համար տուժած ենք և դեռ պիտի տուժենք ապահովաբար» (Շավարշ, Պոլսական նամականի (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 17.12.1920, 2):

Պատերազմից հետո քննարկվում է դավաճանության վարկածը: Պարտության մեջ մեղադրվում են ռուսահայերը. Ռուսահայ ապազգային ոգին կարևոր դեր է կատարել պարտության մեջ: Պատերազմը ցույց տվեց, թե հայկական բանակը չուներ հրամանատարություն: Մինչև Կարսի անկումը հայկական բանակի ոգևորությունը շատ մեծ է եղել, քանի որ լուրեր են տարածել, թե Անդրանիկը հույների հետ Տրապիզոն է գալու: Նույնիսկ ասվել է, թե նա 10 հազար հայ կամավորներով արդեն Բաթում է իջել: Հայերը մտածում էին, թե թուրքական բանակը քայքայված վիճակում է: Դրա համար

սկզբում 50 հազար հոգի զորակոչվեց, բայց երբ տեսան թուրքերի հզորությունը, բարոյալքվեցին (Անգեղաց Արգամ, Հայ եւ թուրք պատերազմին շուրջը. Յայտարարութիւններ, մանրամասնութիւններ, «Արեւ», 31.12.1920, 2):

Դեկտեմբերի 31-ի արտատպությունում հանդիպում ենք կարծիքի, թե պատերազմից կարելի էր խուսափել նախապես Սևրի պայմանագրից հրաժարվելու պարագայում (Հայաստան իրաւունք ուներ Պոլշեւիք ըլլալու (Խմբ. գիտ. «Էճիբշըն Կազէթ»ի Դեկտ 27ի թիւնին), «Արեւ», 31.12.1920, 3):

Կ. Պոլսի Ազգային ժողովի դեկտեմբերի 3–ի նիստում քննարկվեցին Կարսի ու Ալեքսանդրապոլի անկման պատճառները: Տեսակետ զարգացվեց, որ կորուստները Երևանի վարիչների ու զինվորականների ապիկարության պատճառով են: Որոշվում է, որ պետք է պարզել, թե ով հանձնեց բերդերը: Նաթանյանն ու Ալպոյաճյանն ասեցին, որ պատրաստ են մեկնել Հայաստան ու քննել պարտության պատճառները: Այս աղետի պատճառ եղողները դավաճան են: Սրենցն ասում է, փոխանակ զրույցների վրա հիմվելուն՝ մարմին ուղարկեն, որը տեղեկագիր բերի և ժողովը կտա իր եզրակացությունը (Ազգային ժողով Պ. Գ. Ասլանեանի կարեւոր հարցումը Կարսի եւ Աղեքսանդրաբօլի անկման առթիւ, Արեւ, 3.1.1921, 2):

Էջմիածնից Պոլիս եկած Հուսիկ ծայրագույն վարդապետը Կարսի անկման ու պարտության հարցում մեղադրում է Ռուբենին՝ համարելով, որ ռազմական նախարարը այլ մարդ պետք է լիներ (Վերջին դէպքերը Հայաստանի մէջ, «Արեւ», 3.1.1921, 2):

«Արեւի» Կ. Պոլսի թղթակիցը դեկտեմբերի 15-ին գրում է, որ Հայաստանից ստացված լուրերը, որոնց վախով սպասում էր ժողովրդի լրջախոհ մասը առաջ բերեցին տխուր տպավորություն: «Երևանյան վարիչների» քաղաքականության աղետալի հետևանքները կանխատեսելու համար շատ մեծ հմտություն պետք չէր: ՀՅԴ-ն գոռոզաբար մերժում էր գործակցության առաջարկները, բայց դրան արժանի կառավարություն չէր ստեղծել: Ամենավատ վիճակում բանակն էր: ՀՅԴ-ն մերժում է իր պատասխանատվությունը

(Շավարշ, Պոլսական նամականի (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 5.1.1921, 2):

Հետաքրքիր է Ղալաթիայի Ազգային խորհրդարանում կայացած քննարկումը: Նրանք, ովքեր քննադատեցին ՀՀ կառավարությանը, դավաճաններ նկատվեցին: Կառքը կոտրելուց հետո ճանապարհի ցույց տվողները շատ են: Իսկ մինչ այդ քննադատությունների առթիվ ասվում էր, թե ընդդիմադիրները ծափ ու ծիծաղ են անում ազգի դժբախտությունների վրա (Ասպետ Յովհաննէս, Ազգային անցուդարձ. Աղէտք եւ փլուզում, «Արեւ», 5.1.1921, 2):

Անդրանիկ Օզանյանը պատերազմում Հայաստանի պարտության պատճառների մասին նշում է, որ կառավարության կազմը ոչ մի հեղինակություն չուներ հայ ժողովրդի մեջ: Պատերազմական նախարարը վարժապետ էր և չէր հասկանում ռազմական գործից: Գործի գլուխ գտնվող զինվորականները պատասխանատու են, որ նախօրոք ոչ մի աշխատանք չեն կատարել, որ գոնե ուժեղ հարձակման դեպքում կարողանան քայլ-քայլ նահանջել: Նրանք երևի հույսը դրել էին Իզմիրի ճակատի վրա: Հայերը չունեին հետախոզություն, մինչդեռ թուրքերը հետևում էին հայկական զորքերի շարժին (Զօր. Անդրանիկ կը բացատրէ Հայաստանի պարտութեան պատճառները (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 7.1.1921, 1):

Սպաներից դժգոհության հանդիպում ենք հոկտեմբերի 6-ին հայկական բանակի արևմտահայ զինվորի կողմից գրված նամակում, որը հրատարակվել է հունվարի 10-ին: Նշվում է, որ բանակը հեռու է նախանձելի վիճակում լինելուց: Խստապահանջ սպաներ չկան (Հայաստանի վիճակը վերջին աղէտի նախօրեակին, «Արեւ», 10.1.1921, 2):

«Երկիր» թերթից արտատպելով «Աշխատավորի» հոդվածը՝ «Արեւը» գրում է, որ Հայաստանի կառավարությունը պարտավոր է զբաղվել ռազմական անհաջողությունների ու խուճապի հեղինակների պատասխանատվության ենթարկելու հարցով: Ինչքան էլ շատ լինեն հայկական բանակի պարտության օբյեկտիվ պատճառները, կան բազմաթիվ ոճիրների փաստեր, որոնց հեղինակները պետք է

պատժվեն (Դաշնակցականները կը խոստովանին, «Արեւ», 12.1.1921, 2):

Հունվարի 14-ին արտատպվում է «Ժողովուրդի ձայնի» խմբագրականը. Պատերազմի սկզբում տեսակետ հնչեց, որ պատասխանատուներ փնտրելու ժամանակը չէ: Եթե պատճառները չուսումնասիրվեն կարող են իրադարձությունները կրկնվել: Կա մտայնություն որ «եղածը եղած է»: Եթե մեր քաղաքական բախտը մենք ենք ուզում վարել պարտադիր պետք է փոխենք այս մտայնությունը (Պատասխանատուութիւնները չփնտռենք (Խմբագրական «Ժող. Ձայն»ի), «Արեւ», 14.1.1921, 2):

Սմբատ Բորոյանի զինվորներից Լևոն Աշճյանն ու Զաքար Զարդարյանը պարտությունը բացատրում են ռուսահայ-թուրքահայ հակասություններով ու վերջիններիս նկատմամբ բացասական վերաբերմունքով: «Արեւի» խմբագրությունում նրանք պատմում են, որ Կարսում անկման ժամանակ դիոլ-զուռնա ու հարսանիք կար: Այլասերումը շատ էր տարածվել Հայաստանում: Շատ վատ վերաբերմունք կար տաճկահայ կամավորների հանդեպ, որոնք եկել էին Կ. Պոլսից, Կիլիկիայից: Ուտելիք ու նույնիսկ զենք չէին տալիս արևմտահայ կամավորներին (Հայաստանէն լուրեր. Ինչպէս հայ զօրքը նահանջեց Ալէքսանդրապօլի յանձնումը. Թուրքահայ կամաւորներ. Ո՞վ կրկնար փրկել կացութիւնը, «Արեւ», 21.1.1921, 2):

Բացի արևմտահայ-արևելահայ հանգամանքից՝ ՀՅԴ-ն մեղադրվում է գաղութների հետ սերտ կապեր չունենալու ու նրանց ներուժը հաջող չօգտագործելու մեջ (Կ. Պոլսոյ համագումար ժողովին մէջ Պ. Խօճասարեանի խօսած ճառը, «Արեւ», 11.2.1921, 1):

Մուշեղ արքեպիսկոպոսը պատերազմում պարտության մեջ մեղադրում էր ռուսահայերին և ՀՅԴ-ին. Առաջին հանրապետությունը չմեծացավ ու զարգացավ ոչ թե այն պատճառով, որ երկիրը անընդհատ գտնվում էր պատերազմների մեջ, այլ առաջին պատճառը ռուսահայերն էին, որոնք շփացան, նույնիսկ որոշ թերթեր պահանջեցին թուրքահայերին գնալ և իրենց սեփական ուժերով գրավել չազատագրված հայրենիքը, երկրորդ պատճառը ՀՅԴ–ն էր, որը իր

շարքերում չուներ պետական մտածողության մարդիկ ու մենատիրական ձգտումով դուրս թողեց իր շարքերից չգտնվող պետական մարդկանց, և երկիրը մնաց քաղաքական անձանց հույսին: Ասվում է, թե ՀՅԴ-ն հաղթեց հայ ազգին: Ինչո՞ւ էր հնարավոր ՀՅԴ մենիշխանությունը 2 տարի: Ռուսահայերը վերջին 70 տարում կորցրել էին հայրենասիրության զգացումը: ՀՅԴ-ն ու ՍԴՀԿ-ն նրանց սրտում արթնացրել էին օտար և ազգամերժ մոլություններ (Ազգ. գիտակցութեան զարթնումը Մուշեղ արք.ի բանախօսութիւնը ի Գահիրէ, «Արեւ», 24.1.1921, 2):

Եթե ՀՅԴ-ի փոխարեն իշխանության ղեկին լինեին Պողոս Նուբարի, Գ. Նորատունկյանի, Հ. Գույումճեանի նման անձինք, ապա ելքն այլ կլիներ (Փորձագետ, Խորհրդածութիւններ Հայաստանի աղէտին վրայ, «Արեւ», 9.2.1921, 1):

Տիրայր եպիսկոպոսը, որ եղել էր բանակում պատերազմի ժամանակ, պարտության պատճառների թվում նշում էր այն հանգամանքը, որ ուռճացված պետական բյուրոկրատիան ապրում էր հանգիստ այն պայմաններում, երբ զինվորը կռվում էր սոված ու բոբիկ: Նա ասում է, որ Կարսի հրամանատարները անխախտ վստահություն ունեին, որ բերդաքաղաքը մինչև վերջ պետք է դիմադրի. 8 ամսվա պաշար ու ռազմամթերք կար (Վանատուր, Ի՞նչ կխորհին մեր ամերիկացի բարեկամները. Ս. Կաթողիկոսը իր վստահութիւնը կը կրկնէ Պ. Պօղոս Նուպարի. Տիրայր եպսկ.ի ծանրակշիռ յայտարարութիւնները (մեր մասնաւոր թղթակցէն), «Արեւ», 26.1.1921, 1):

Խ. Գուրեանը ևս նշում է, որ պետական պաշտոնյաների «բանակը» զինվորական բանակից մեծ էր, ու դրա նպատակը ՀՅԴ իշխանությունը հավերժացնելն էր (Գուրեան Խ. Ս., Հայաստանի վերջին պատեհութիւնը, Ա., «Արեւ», 2.2.1921, 1):

Կա նաև տեսակետ, որ եղածը պետք չէ բնորոշել պարտություն. «Նախ, պարտութիւն բառը սխալ է գործածել Հայաստանի աղէտին համար: Պարտուած պիտի համարուէր, եթէ կռիւ մղած ըլլար, մինչդեռ զօրքը՝ գնդակ մը իսկ չէ արձակած» (Փորձագետ, Խորհրդածութիւններ Հայաստանի աղէտին վրայ, «Արեւ», 7.2.1921,

1): «Արեւի» խմբագրությունը ծանոթագրությամբ նշում է, որ դա ճիշտ է միայն Կարսի պարագայի համար, այնինչ մյուս վայրերում կռիվներ եղել են գլխավորապես զինվորների թուրքահայ լինելու հանգամանքի պայմաններում:

Հետևություններ

Դեռ պատերազմը չավարտված՝ նոյեմբերի 12-ին կարդում ենք, թե հայն ավելի շատ կռվեց դաշնակիցների դատի համար, քան իր, բայց անհավասար կռվում մնաց միայնակ: Այս կարճատև պատերազմը, սակայն, մեծ դաս է պարունակում. այս ազգը իր փրկության հույսը միայն իր վրա պետք է դնի: Թող նոր մահացած հարյուրավոր երիտասարդների փառավոր մահը բոլորի համերաշխության ու սիրո փրկարար ոգի լինի (Ն. Յ., Զինադադարը, «Արեւ», 15.11.1920, 1):

Կային նաև հետևություններ, որոնք, հեռու լինելով իրականությունից, ըստ էության, անտեսում էին պատերազմի հետևանքները: Հունվարի 3-ին Պողոս Նուբարը պնդում էր Սևրի պայմանագրի իրականացման վրա (Ս. Կաթողիկոսին կոնդակը Պօղոս Նուպար Փաշայի ազգ. պատուիրակութեան նախագահին ճառը, «Արեւ», 24.1.1921, 1): Կամ 1921 թ. փետրվարին հանդիպում ենք ենթադրության, թե Ազգերի լիգան ստեղծելու է կամավորական բանակ, որը ազատագրելու է Հայաստանը, հետևաբար Հայկական հարցը մոտ է լուծման (Գուրեան Խ. Ս., Հայաստանի վերջին պատեհութիւնը, Բ., «Արեւ», 4.2.1921, 1):

Եզրակացություններ

Փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչ աղբյուրներից էր ստանում պատերազմի ու հարակից հարցերի վերաբերյալ տեղեկություններ «Արեւը»: Մեծ թիվ էին կազմում արտատպությունները Կ. Պոլսի, Եգիպտոսի հայկական ու օտար թերթերից, հեռագրական լուրերը կամ թղթակցությունները Լոնդոնից, Փարիզից, Կ. Պոլսից, Երևանից (այդ թվում՝ Հայաստանի հեռագրական գործա-

կալություն), Փարիզից, Թիֆլիսից, ԱՄՆ-ից: Մասնավորապես հաճախադեպ են արտատպությունները և քաղված նյութերը Կ. Պոլսի «Ժողովուրդի ձայնը», «Երկիր», «Ճակատամարտ», «Առաւօտ», Իզմիրի «Արեւելեան մամուլ», Թիֆլիսի «Աշխատաւոր», «Նոր աշխատաւոր», «Մշակ», Լոնդոնի «Reuters» լրատվական գործակալության, «The Times», «The Observer», «The Daily Telegraph», Փարիզի «Ապագայ», Բրյուսելի «L'Indépendance Belge», Ժնևի «Journal de Genève», Կահիրեի «Յուսաբեր», «Ալ Ահրամ», «The Egyptian Gazette», Ալեքսանդրիայի «La bourse égyptienne», Մարսելի «Արմէնիա», Երևանի «Յառաջ» և այլ պարբերականներից:

Լուրերը ստացվում էին մոտ 7-14 օր անց, երբեմն՝ ավելի ուշ: Ակնհայտ է, որ այս ժամանակային խզվածքը նպաստում էր ապատեղեկատվության երկար շրջանառությանն ու դրա ազդեցությանը հանրային տրամադրությունների վրա: Ինչպես տեսնում ենք, հավաստի տեղեկատվության կողքին ոչ սակավաթիվ էին իրականությանը առնչություն չունեցող լուրերը: Եթե սկզբնական շրջանում դրանք մեծ մասամբ խիստ լավատեսական էին, ապա՝ պատերազմի վերջում և անմիջապես դրանից հետո՝ ընդհակառակը:

Եգիպտահայ համայնքում պատերազմի նախօրյակին ու դրա առաջին շաբաթներին տիրապետող էր մեծ հավատը հայկական բանակի ներուժի ու թուրքերի դեմ պատերազմում հաղթանակի հանդեպ: Պատերազմում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության ստացումից հետո ակներև էր խորը հիասթափությունը:

Դիտարկելով «Արեւ» թերթում պատերազմի լուսաբանումը՝ ակնհայտ են զուգահեռներ 2020 թ. Արցախյան երկրորդ պատերազմի հետ: Առաջին հերթին աչքի է զարնում ցանկալին իրականության փոխարեն ընկալելը: Ներկայիս դիտանկյունից զարմանալի է, թե ինչպես էր ակնկալվում, որ նոր ստեղծված հայկական բանակը, պետական համակարգի առաջին քայլերի կատարման, սովի ու համաճարակների, հարյուրհազարավոր գաղթականների առկայության, հարևան չորս պետություններից երեքի դեմ պատերազմած,

բուն պետության տարածքում ադրբեջանական, բոլշևիկյան հակապետական ելույթների պայմաններում, ունի անհամեմատ լայն հնարավորություններ, քան թուրքականը: Ակնկալիքները, որ պատերազմի պարագայում Հայաստանը կազատագրի առնվազն չորս վիլայեթները, հաշվի չէին առնում առկա իրողությունները:

2020 թ. ևս հանրային տրամադրությունները հար և նման էին սրան. ակնկալվում էր, որ հայկական կողմը առնվազն հաջողությամբ կկարողանա դիմագրավել ադրբեջանական հարձակմանը: Ակնհայտ է գիտական հետազոտությունների հիման վրա վերլուծությունների պակասը: Թուրք-հայկական պատերազմին նախորդած շրջանի ադրբեջանական ապստամբ շրջանների նկատմամբ բանակի հաղթանակները հույս էին ներշնչում, որ նույնը լինելու է նաև Թուրքիայի դեմ պատերազմի պարագայում: Արցախյան երկրորդ պատերազմի դեպքում էլ հաշվի չառնվեցին Ապրիլյան պատերազմի դասերը, որը ներկայացվեց որպես հաղթանակ՝ հակառակ նրան, որ առկա էին այդ թեմայով ավելի անկողմնակալ ուսումնասիրություններ (В ожидании бури: Южный Кавказ, под ред.: К. В. Макиенко, Москва, 2018): Հաշվի չառնվեցին Ադրբեջանի կողմից առնվազն երկու տասնամյակ սպառազինության ահռելի ձեռքբերումն ու բանակաշինությունը, որոնք հանգեցրել էին ուժերի հարաբերակցության կտրուկ փոփոխության XXI դարի առաջին երկու տասնամյակներին:

Առկա են զուգահեռներ նաև ապատեղեկատվության տարածման, իրականությանը չհամապատասխանող, սակայն ցանկալի լուրերին հավատալու առումով:

Երկու պարագայում էլ հասարակական-քաղաքական քննարկումներում պատերազմն ու հատկապես պարտությունը օգտագործվում էին ներքաղաքական պայքարում: Ռամկավար տրամադրություններ ունեցող «Արեւ» պարբերականը համարում էր, որ Հայաստանը կխուսափեր կորուստներից, եթե այն ղեկավարվեր Պողոս Նուբարի նման հմուտ գործչի կողմից, ինչ փույթ, թե վերջինս շատ ավելի անիրատեսական պահանջներ էր առաջ քաշում, քան ՀՀ ղե-

կավարությունը (մասնավորապես դժգոհ էր Սևրի պայմանագրից ու պարտադիր էր համարում նաև Խարբերդի ու Կիլիկիայի միացումը):

Ակնհայտ է, որ առողջ ու տրամաբանական քննադատության կողքին երկու դեպքերում էլ առաջ էին քաշվում դավադրապաշտական տեսություններ, պարտության մեղավորների փնտրտուքն իրականացվում էր կուսակցական շահերի առաջմղման համար: 1920 թ. պարտության պատճառների իրատեսական գնահատման ու համակողմանի վերլուծության պակասը, թերևս, որոշ չափով նպաստեց դրանից հարյուր տարի անց մեկ այլ պատերազմին ու դրա մարտահրավերներին Հայաստանի անպատրաստ լինելուն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազատեան Թ. Ս., Թուրք բարբարոսութեան մէկ նոր գիւտը. Գավառի հայութեան վիճակը, «Արեւ», 13.8.1920, 3:
2. Ազգ. գիտակցութեան զարթնումը Մուշեղ արք.ի բանախօսութիւնը ի Գահիրէ, «Արեւ», 24.1.1921, 2:
3. Ազգ. դաշնակցութեան դիմում, «Արեւ», 31.12.1920, 3:
4. Ազգ. պատուիրակութեան մէկ զեկոյցը, «Արեւ», 16.8.1920, 3:
5. Ազգային ժողով Պ. Գ. Ասլանեանի կարեւոր հարցումը Կարսի եւ Աղեքսանդրաբօլի անկման առթիւ, «Արեւ», 3.1.1921, 2:
6. Անգեղաց Արգամ, Հայ եւ թուրք պատերազմին շուրջը. Յայտարարութիւններ, մանրամասնութիւններ, «Արեւ», 31.12.1920, 2:
7. Անճարակ ճարտարութիւն մը, «Արեւ», 21.2.1921, 1:
8. Անուղղելի են, «Արեւ», 26.11.1920, 1-2:
9. Ասպետ Յովհաննէս, Ազգային անցուդարձ. Աղէտք եւ փլուզում, «Արեւ», 5.1.1921, 2:
10. Արամեան Հայկազուն, Պ. Ահարոնեան յիշատակագիր մը կը յանձնէ Բարիզի ամերիկեան դեսպանին (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 13.9.1920, 3:
11. «Արեւ», 23.8.1920:
12. «Արեւ», 13.10.1920:
13. «Արեւ», 18.10.1920:
14. «Արեւ», 29.11.1920:

15. Արշաւանք Հայաստանի վրայ, «Արեւ», 25.10.1920, 3:
16. Գուրեան Խ. Ս., Համազգային ժողով, «Արեւ», 21.1.1921, 1:
17. Գուրեան Խ. Ս., Հայաստանի վերջին պատեհութիւնը, «Արեւ», 2.2.1921, 1:
18. Գուրեան Խ. Ս., Հայաստանի վերջին պատեհութիւնը, Բ., «Արեւ», 4.2.1921, 1:
19. Դահլիճի փոփոխութիւն Հայաստանի մէջ, «Արեւ», 15.12.1920, 1:
20. Դաշնակցականները կը խոստովանին, «Արեւ», 12.1.1921, 2:
21. Դրօյի սպանութեան զրոյցը, «Արեւ», 12.1.1921, 3:
22. «Եղբայրները» գործում են, «Արեւ», 15.11.1920, 2-3:
23. Զանգեզուր եւ Նախիջեւան, «Արեւ», 24.12.1920, 2:
24. Զանգեզուրի գրաւումը, «Արեւ», 23.8.1920, 3:
25. Զինադադարը, «Արեւ», 12.11.1920, 3:
26. Զինադադարին պայմանները, «Արեւ», 15.11.1920, 3:
27. Զօր. Անդրանիկ կը բացատրէ Հայաստանի պարտութեան պատճառները (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 7.1.1921, 1:
28. Զօր. Սեպուհի հեռագիրը Կարսէն «Մեր գործը լաւ է», «Արեւ», 27.10.1920, 1:
29. Զօրակոչի օրէնք Հայաստանի մէջ, «Արեւ», 5.11.1920, 2:
30. Էջմիածնի մասին, «Արեւ», 8.12.1920, 3:
31. Թղթակից, Հրապարակային ժողով Բարիզի մէջ Պ. Պապաջանեան եւ Սաֆրաստեան կը քննադատեն Հ. Յ. Դաշնակցութիւնը ի ներկայութիւն դաշնակցականներու, «Արեւ», 20.12.1920, 1:
32. Թրքական դաշնագրին ստորագրումը, «Արեւ», 13.8.1920, 1:
33. Թրքահայաստանի դատը պէտք է պաշտպանուի թրքահայերու ձեռքով, «Արեւ», 16.2.1921, 1:
34. Թոփուզյան 1978 - Թոփուզյան Հ., Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805-1952), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ, 359 էջ:
35. Թուրք դաշնագիրը վերջապէս ստորագրուեցաւ, «Արեւ», 11.8.1920, 3:
36. Ի՞նչ կը խորհին Մոսկվայի մէջ Հայաստանի մասին, «Արեւ», 17.12.1920, 3:
37. Ինչպէս ինկաւ Կարսը (անկումէն առաջ եւ վերջը), «Արեւ», 24.11.1920, 2:
38. Իրազեկ, Պ. Ահարոնեանի ստապատում յայտարարութիւնները «քօալիսիօն»ի խնդրոյն շուրջ, «Արեւ», 23.2.1921, 1:
39. Լ., Ալէքսանդրոպոլի հաշտութիւնը, «Արեւ», 23.2.1921, 2:

40. Լ., Ալէքսանդրոպոլի հաշտութիւնը, «Արեւ», 25.2.1921, 2:

41. Լութֆի Ֆիքրիի նոր ձեռնարկը, «Արեւ», 25.10.1920, 3:

42. Խատիսեանի մասին, «Արեւ», 5.1.1921, 3:

43. Կ., Եւրոպան կզբաղի մեզմով, Բ., «Արեւ», 24.11.1920, 1:

44. Կ., Եւրոպան կզբաղի մեզմով, Դ., «Արեւ», 29.11.1920, 1:

45. Կ. Պոլսոյ համագումար ժողովին մէջ Պ. Խօճասարեանի խօսած ճառը, «Արեւ», 11.2.1921, 1-2:

46. Կալխաս, Կովկասահայ ընդդիմադիր մամուլը. Որպէի պահանջը, «Արեւ», 3.12.1920, 2:

47. Կարս վերագրաւուած հայերու կողմէ, «Արեւ», 29.11.1920, 3:

48. Կարսը վերագրաւուած, «Արեւ», 26.11.1920, 3:

49. Կարսի Հ. Սպայակոյտի զեկոյցը Հոկտ. 2 թիւով, «Արեւ», 27.10.1920, 1-2:

50. Կարսի վերագաւումը պաշտօնապէս կ'ստուգուի, «Արեւ», 3.12.1920, 3:

51. Կացութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 29.12.1920, 1-2:

52. Կացութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 7.1.1921, 3:

53. Կացութիւնը Հայաստանի սահմաններուն մէջ, «Արեւ», 31.12.1920, 3:

54. Կացութիւնը Նախիջեւանի մէջ, «Արեւ», 23.8.1920, 3:

55. Կացութիւնը ռազմաճակատներու վրայ Մեծ Սպայակոյտին պաշ-տօնական Զեկոյցները, «Արեւ», 27.10.1920, 2:

56. Կէվրէկեան Բերկրուհի Յ., Հայաստանի վրայ Տօքթ. Մէքալըմ իր ականատեսի տպաւորութիւնները կը պատմէ, «Արեւ», 8.9.1920, 2:

57. Կոչ, «Արեւ», 4.10.1920, 3:

58. Կովկասեան հարցը, «Արեւ», 20.12.1920, 3:

59. Կռիւներ հայկական ճակատին վրայ, «Արեւ», 20.10.1920, 2:

60. Հ.Հ. Պաշտօնական զեկոյցը, «Արեւ», 3.11.1920, 3:

61. Համաձայնութիւն Հայերու եւ Քէմալականներու միջեւ, «Արեւ», 13.12.1920, 3:

62. Հայ ժողովուրդը կը պատժէ դասալիքները, «Արեւ», 5.1.1921, 3:

63. Հայ եւ Թրքական առեղծուածը, «Արեւ», 6.12.1920, 3:

64. Հայ եւ Թուրք նոր զինակցութիւն մը, «Արեւ», 3.12.1920, 3:

65. Հայաստ.ի խորհրդարանին օգոստոս 2ի նիստը Վարչապետ Պ. Օհանջանեանի ճառը, «Արեւ»ւ, 13.9.1920, 1-2:

66. Հայաստ.ի խորհրդարանին օգոստոս 2ի նիստը Վարչապետ Պ. Օհանջանեանի ճառը, «Արեւ», 15.9.1920, 2:

67. Հայաստան եւ սօվէթները, «Արեւ», 16.8.1920, 3:

68. Հայաստան իրաւունք ուներ Պոլշեւիք ըլլալու (Խմբ. գիտ. «Էճիբշըն Կազէթ»ի Դեկտ 27ի թիւնին), «Արեւ», 31.12.1920, 3:

69. Հայաստան (խմբագրական «Իճիբշըն Կազէթ», 27 նոյ.), «Արեւ», 10.12.1920, 2-3:

70. Հայաստան կարմիր ռեժիմին ներքեւ, «Արեւ», 17.12.1920, 3:

71. Հայաստան Սովիէթ Հանրապետություն, «Արեւ», 17.12.1920, 3:

72. Հայաստան վերջնագիր կուտայ Վրաստանի եւ Գարապէքիրի. Ամենավէրջին դահլիճին կազմը, «Արեւ», 27.12.1920, 3:

73. Հայաստան պատերազմ կը հայտարարէ թուրք ազգայնականներուն դէմ, «Արեւ», 13.10.1920, 3:

74. Հայաստանը մէկ ամսուան մէջ Պիտի բնաջնջեն եղեր Թուրք եւ Պոլշեւիկ ծրագիրներ, «Արեւ», 1.11.1920, 3:

75. Հայաստանէն լուրեր. Ինչպէս հայ զօրքը նահանջեց Ալէքսանդրապօլի յանձնումը. Թուրքահայ կամաւորներ. Ո՞վ կրկնար փրկել կացութիւնը, «Արեւ», 21.1.1921, 2:

76. Հայաստանէն նամակ մը. Հայրենիքի վիճակի մասին անկողմնակալ տեղեկություններ, «Արեւ», 1.12.1920, 3:

77. Հայաստանէն նոր լուրեր. Հայ եւ Թուրք նոր պատերազմի մը վախը. Թուրքերը կը մերժեն պարպել Ալեքսանդրապօլը. Սովը կ՚սպառնայ դարձեալ հայ ժողովուրդին, «Արեւ», 4.2.1921, 3:

78. Հայաստանի եւ Միլլիճիներու միջեւ կնքուած հաշտութեան ամօթալի դաշնագրին պատճենը. Նոր մանրամասնութիւններ, «Արեւ», 16.1.1921, 2:

79. Հայաստանի խղճալի կացութիւնը, «Արեւ», 22.11.1920, 3:

80. Հայաստանի կացութիւնը, «Արեւ», 12.1.1921, 3:

81. Հայաստանի կացութիւնը յուսալից. Հայ բանակին գրաւումները, «Արեւ», 27.10.1920, 2:

82. Հայաստանի սահմանագծումը, «Արեւ», 14.1.1921, 3:

83. Հայաստանի վիճակը վերջին աղէտի նախօրեակին, «Արեւ», 10.1.1921, 2:

84. Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 3.11.1920, 3:

85. Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 5.11.1920, 3:

86. Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 10.11.1920, 3:

87. Հայ եւ թուրք պատերազմ, «Արեւ», 10.12.1920, 3:

88. Հայ եւ ռուս համաձայնութիւնը խզուած Հայաստանը կը բողոքէ, «Արեւ», 13.9.1920, 3:

89. Հայկական բանակը միշտ բարձր կը մնայ իր դիրքին մէջ, «Արեւ», 13.8.1920, 2:

90. Հայկական զինուց նոր յաղթանակը, «Արեւ», 8.10.1920, 3:

91. Հայկական ճակատը, «Արեւ», 10.11.1920, 2:

92. Հայկական ճակատը, «Արեւ», 12.11.1920, 2:

93. Հայկական ճակատին վրայ, «Արեւ», 1.9.1920, 3:

94. Հայկական յաղթանակ թուրքերու եւ ռուսներու դէմ, «Արեւ», 11.10.1920, 3:

95. Հայկական յաղթանակներ Հայկ. բանակը յարձակման կ'սկսի «Արեւ», 8.11.1920, 3:

96. Հայկական յարձակողականը, «Արեւ», 29.10.1920, 3:

97. Հայկական պատրանքներ թուրքերու իրական զօրութեան մասին, «Արեւ», 10.12.1920, 2:

98. Հայկական սաւառնակներ Նօվօ Սելիմի վրայ, «Արեւ», 25.10.1920, 2:

99. Հայկական փոխառութիւնը. Չորս քաղաքական կուսակցութեանց կոչը թուրքահայերուն, «Արեւ», 17.9.1920, 1:

100. Հեռագրալուրեր, «Արեւ», 26.11.1920, 3:

101. Հեռագրալուրեր, «Արեւ», 1.12.1920, 3:

102. Ղարաբաղի լեռնային մասը, «Արեւ», 24.12.1920, 2:

103. Մ. Ս. Կ., Ազգ. պատուիրակութեան բողոքը վեհաժողովին, «Արեւ», 8.9.1920, 1:

104. Մ. Ս. Կ., Ազգ. պատուիրակութեան բողոքը վեհաժողովին, «Արեւ», 10.9.1920, 1:

105. Մ. Ս. Կ., Ռազմաճակատը եւ թիկունքը, «Արեւ», 3.9.1920, 1:

106. Մ. Ս. Կ., Սկիզբն է փրկութեան, «Արեւ», 8.10.1920, 1:

107. Մ. Ս. Կ., Քննութիւն աշխարհի առջեւ, «Արեւ», 27.9.1920, 1:

108. Մ. Քէմալի կողմէ Հայաստանի առաջարկուած եօթը պայմաններ-ը, որոնք տեղի տուին կռիւներու վերսկսման, «Արեւ», 29.11.1920, 3:

109. Մեծ դաւադրութիւնը, «Արեւ», 5.11.1920, 1:

110. Միլլիճիները յարձակողականի կ'սկսին Հայաստանի դէմ, «Արեւ», 15.10.1920, 2:

111. Մին առնուլ եւ միւսը չթողուլ, «Արեւ», 16.2.1921, 1:

112. Միտք բերենք թէ Հայաստան պատերազմի մէջ է, «Արեւ», 12.11.1920, 1-2:

113. Մկրտիչեան Լեւոն, Հայկական հարցի արդի կացութիւնը եւ մեր հակառակորդները, Ա., «Արեւ», 23.2.1921, 1:

114. Մկրտիչեան Լեւոն, Հայկական հարցի արդի կացութիւնը եւ մեր հակառակորդները Բ., «Արեւ», 25.2.1921, 1:

115. Մկրտիչեան Լեւոն, Ցաւալի թիւրիմացութիւն մը, «Արեւ», 11.4.1919, 1:

116. Մուշեղ արքեպիսկոպոս, Ազգին փրկիչները, «Արեւ», 16.1.1921, 1:

117. Մուսթաֆա Քէմալ եւ Պոլշէվիքները, «Արեւ», 8.11.1920, 3:

118. Յարաբերութիւնները կը ցրտանան Պոլշէվիկներու եւ Տաճիկներու միջեւ, «Արեւ», 26.11.1920, 3:

119. Յիշատակագիր մատուցուած Ազգերու դաշնակցութեան համաժողովին Հայ սահմ. ռամկավար կուսակցութեան կողմէ, «Արեւ», 31.12.1920, 1-2:

120. Յովհանջանեան Ռ., Ի՞նչ կըսէ կովկասահայ ընդդիմադիր մամուլը օրէցօր, «Արեւ», 1.12.1920, 2:

121. Ն. Յ., Զինադադարը, «Արեւ», 15.11.1920, 1:

122. Նազարէթեան Ա., Վտանգից առաջ, «Արեւ», 13.12.1920, 2-3:

123. Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, «Արեւ», 1.12.1920, 1:

124. Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, Բ., «Արեւ», 3.12.1920, 1:

125. Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, Գ., «Արեւ», 8.12.1920, 1:

126. Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, Դ., «Արեւ», 10.12.1920, 1:

127. Նալբանդեան Յ., Պոլշէվիքները եւ Հայաստանը, Ե., «Արեւ», 13.12.1920, 1:

128. Նալբանդեան Յ., Վտանգին առջև, «Արեւ», 12.11.1920, 1:

129. Նախագահ Ուիլսըն եւ Հայաստան, «Արեւ», 24.11.1920, 3:

130. Նախընթաց բանակցութիւնները, «Արեւ», 23.8.1920, 3:

131. Նախիջեւանի գրաւումը, «Արեւ», 23.8.1920, 3:

132. Նոր զինակոչ Հայաստանի մէջ, «Արեւ», 3.9.1920, 3:

133. Շավարշ (Ա. Ալպոյաճեան), Պոլսական նամականի (սեփական թղթակցութիւն «Արեւ»ի), «Արեւ», 31.1.1921, 1:

134. Շավարշ, Պոլսական նամականի (սեփական թղթակցութիւ), «Արեւ», 17.12.1920, 1-2:

135. Շավարշ, Պոլսական նամականի (սեփական թղթակցութիւն), «Արեւ», 5.1.1921, 2:

136. Ոգեւորութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 23.8.1920, 3:

137. Ոգեւորութիւնը Հայաստանի մէջ, «Արեւ», 25.10.1920, 2:

138. Չթենց, Անկախութեան փոխառութիւնը եւ Հայաստանի մամուլը, «Արեւ», 22.9.1920, 1:

139. Պ. Աղեքս. Խատիսեանի ճառը, «Արեւ», 20.8.1920, 2-3:

140. Պ. Լեւոն Մկրտիչեանի ճառը Բարիզի հայ ռամկավար ակումբին մէջ, «Արեւ», 26.1.1921, 1-2:

141. Պ. Խատիսեանի խիստ կարեւոր յայտարարութիւնները Հայկական խորհրդարանի մէջ, «Արեւ», 24.12.1920, 2:

142. Պ. Քաջազնունի կը կազմէ Խառն դահլիճը, «Արեւ», 6.12.1920, 3:

143. Պաշարման վիճակ Հայաստանի մէջ, «Արեւ», 25.10.1920, 3:

144. Պատասխանատուութիւնները չփնտռենք (Խմբագրական «Ժող. Ձայն»ի), «Արեւ», 14.1.1921, 2:

145. Պատմական տօքիւման մը, «Արեւ», 10.12.1920, 2:

146. Պոլսահայ թերթերէն. Կացութիւնը Հայաստանի ճակատին վրայ, «Արեւ», 1.11.1920, 2:

147. Պոնդ, Այժմէական նօթեր «Միակամ միատարր դահլիճ», «Արեւ», 24.1.1921, 1-2:

148. Պօղոս Փաշա Նուպարի անուան տօնը Կ. Պոլսոյ մէջ, Արեւ, 31.1.1921, 2-3:

149. Պօղոսեան Յովհ., Թրքական նոր յարձակումներուն առթիւ Հայկական կառավարութեան բողոքը Դաշնակից պետութեանց, «Արեւ», 29.10.1920, 2:

150. Պօղոսեան Յովհ., Թրքական նոր յարձակումներուն առթիւ Հայկական կառավարութեան բողոքը Դաշնակից պետութեանց (շար. նախորդ թիւէն եւ վերջ) Քօալիսիօնի խնդիրը, «Արեւ», 1.11.1920, 2:

151. Ռամկավար օդային տորմիղը, «Արեւ», 17.9.1920, 3:

152. Ս. Կաթողիկոսին կոնդակը Պօղոս Նուպար Փաշայի ազգ. պատուիրակութեան նախագահին ճառը, «Արեւ», 24.1.1921, 1:

153. Սարըղամիշի գրաւումը, «Արեւ», 8.11.1920, 3:

154. Սեւակ, Պ. Ալ. Խատիսեան Գահիրէի մէջ Պատմական միթինկ Ամերիկեան Քօզմօկրաֆի մէջ, «Արեւ», 3.9.1920, 1:

155. Սէվռի Դաշնագրին շուրջ. Տեսակցութիւն մը Թուրքիոյ գահաժառանգին հետ, «Արեւ», 17.12.1920, 3:

156. Սօվիէթները, Կովկասը եւ թուրք ազգայնականները, «Արեւ», 13.8.1920, 3:

157. Վանատուր, Ի՞նչ կխորհին մեր ամերիկացի բարեկամները. Ս. Կաթողիկոսը իր վստահութիւնը կը կրկնէ Պ. Պօղոս Նուպարի. Տիրայր եպսկ.ի ծանրակշիռ յայտարարութիւնները (մեր մասնաւոր թղթակցէն), «Արեւ», 26.1.1921, 1:

158. Վերջին դէպքերը Հայաստանի մէջ, «Արեւ», 3.1.1921, 3:

159. Ուրիշ յաջողութիւններ, «Արեւ», 23.8.1920, 3:

160. Փափազեան Գ., Նորէն դիմենք ժողովուրդին բայց նախ հաշիւ տանք, «Արեւ», 26.1.1921, 2:

161. Փլէթֆորմ Ազգային Ռամկավարական կուսակցութեան Ամերիկայի շրջանակին ընդունած երկրորդ պատգամաւորական ժողովին մէջ եւ հաղորդուած ընդհանուր պատգամաւորական ժողովին, «Արեւ», 26.11.1920, 2:

162. Փորձագետ, Խորհրդածութիւններ Հայաստանի աղէտին վրայ, «Արեւ», 7.2.1921, 1:

163. Փորձագետ, Խորհրդածութիւններ Հայաստանի աղէտին վրայ, «Արեւ», 9.2.1921, 1:

164. Քաղաքական կացութիւնը, Ա., «Արեւ», 12.1.1921, 1:

165. Քաղաքական կացութիւնը, Բ., «Արեւ», 14.1.1921, 1-2:

166. Քէմալական գործողութիւնները Հայաստանի դէմ, «Արեւ», 13.10.1920, 3:

167. Քէմալական զեկոյց մը ի՞նչ կըսէ, «Արեւ», 29.11.1920, 3:

168. Օլթիի վերագրաւումը, «Արեւ», 25.10.1920, 3:

169. 20,000է աւելի կամաւորներ, «Արեւ», 10.11.1920, 3:

170. В ожидании бури 2018 - В ожидании бури: Южный Кавказ, под ред.: К. В. Макиенко, Москва, 200 с.

Тигран Ганаланян

Освещение турецко-армянской войны 1920 года в александрийской ежедневной газете "Арев"

Ключевые слова: *война, вооруженные силы, пресса, Армения, Турция, падение Карса, Армянская община Египта, 2020 г. Арцахская война*

Подписание Севрского договора, турецко-армянская война, советизация Армении и другие параллельные события получили широкий резонанс в прессе армянской диаспоры. В 1920 году это был незаменимый источник информации, в том числе для тысяч египетских армян.

Ежедневная газета «Арев», издававшаяся в Александрии, публиковала множество статей, анализов, телеграфных сводок, репринтов, связанных с турецко-армянской войной, отношениями между двумя государствами, в том числе Севрским мирным договором, вопросом определения границы и т. д.

Очевидно, что в армянских кругах был необоснованный оптимизм, неправильная оценка действительности, в результате чего ожидалось, что в случае начала войны против Турции – Республика Армения сможет освободить провинции Западной Армения.

Эти настроения продолжались и в первые недели войны, когда преобладали оптимистические новости, тогда как реальность была совершенно противоположной. Интересна история падения Карса, а особенно слухи о его возвращении.

На последнем этапе войны и после этого начинается поиск виновных в поражении. Здесь имели большое значение партийные противоречия.

Восприятие и интерпретация войны 1920 года имеет определенные параллели с Арцахской войной 2020 года (необоснованная переоценка своих сил и недооценка сил противника, поиск предателей и виновных и т.д.).

Tigran Ghanalanyan

Coverage of the Turkish-Armenian war of 1920 in the Alexandria daily newspaper "Arev"

Keywords: *war, armed forces, press, Armenia, Turkey, fall of Kars, Armenian community of Egypt, 2020 Artsakh war*

The signing of the Treaty of Sèvres, the Turkish-Armenian war, the Sovietization of Armenia and other parallel events received a wide resonance in the Armenian diaspora press. In 1920, it was an indispensable source of information, including for thousands of Egyptian Armenians.

Alexandria's daily newspaper "Arev" published many articles, analyses, telegraph summaries, reprints related to the Turkish-Armenian war, relations between the two states, including the Sevres peace treaty, the issue of border determination, etc.

It is obvious that in Armenian circles there was unfounded optimism, an incorrect assessment of reality, as a result of which it was expected that in the event of a war against Turkey, the Republic of Armenia would be able to liberate the provinces of Western Armenia.

These sentiments continued in the first weeks of the war, when optimistic news prevailed, while the reality was completely opposite. It is interesting story of the fall of Karsa, and especially rumors about his return.

In the last stage of the war and after that, the search for the culprits in the defeat begins, where party contradictions were of great importance.

The perception and interpretation of the war of 1920 has certain parallels with the Artsakh war of 2020 (unreasonable overestimation of own forces and underestimation of the enemy's forces, search for traitors and culprits, etc.).

Տիգրան Ղանալանյան

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԲՈՍՏՈՆԻ «ՀԱՅՐԵՆԻՔ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ

Բանալի բառեր՝ *Հայաստան, Թուրքիա, պատերազմ, զինված ուժեր, Խորհրդային Ռուսաստան, մամուլ, Կարսի անկում, ամերիկահայ համայնք:*

1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում թույլ է տալիս մոտավոր պատկերացում կազմել, թե ամերիկահայերը ինչպիսի տեղեկություններ ունեին ռազմական գործողությունների մասին հենց տվյալ ժամանակաշրջանում: Առավել հետաքրքիր են վերլուծություններն ու մեկնաբանությունները: Դրանք ցույց են տալիս, թե ինչպիսին էին տրամադրությունները ամերիկահայ դաշնակցականների շրջանում:

Պատերազմի բացասական հետևանքները հաճախ փորձ է արվում բացատրելու միայն արտաքին գործոններով՝ նշելով, որ ՀՀ կառավարությունն ամեն հնարավորն արել է՝ կանխելու համար պարտությունը: Նշելի է սեփական ուժերի գերագնահատումն ու հակառակորդի թերագնահատումը: Խնդրո առարկա հրապարակումներում մեծ թիվ են զբաղեցնում ՀՅԴ-ին ընդդիմադիր կուսակցությունների քննադատությունը:

Ամենաուշագրավ հոդվածները վերաբերում են կեղծ տեղեկություններին: Հատկապես նշելի է Կարսի հայերի կողմից վերագրավման հանգամանքը: Տեղեկատվություն է շրջանառվում թուրքերի կողմից կռվող հայ բոլշևիկների գերեվարության մասին:

Մուտք

Հոդվածի նպատակն է հետազոտել 1920 թ. թուրք-հայկական պատերազմի լուսաբանումը Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում: Դրանում տեղ են գտել ռազմագործողությունների ու առնչվող իրադարձությունների մասին բազմաթիվ լուրեր, հրապարակախոսական հոդվածներ և այլն: Այն ժամանակի սփյուռքահայ կարևորա-

գույն պարբերականներից էր: Լինելով ՀՅԴ պաշտոնաթերթը՝ բնականաբար, միանշանակ պաշտպանում էր ՀՀ կառավարությանը: Հետևաբար այս պարբերականում թուրք-հայկական պատերազմի լուսաբանման ուսումնասիրությունն օգնում է հասկանալ դաշնակցական, հատկապես այդ կուսակցության ամերիկահայ շրջանակների պատկերացումները քննվող իրադարձությունների վերաբերյալ: Միաժամանակ թեկուզ մոտավոր կերպով կարողանում ենք իմանալ, թե ինչպիսի տեղեկություններ էր ստանում ամերիկահայ համայնքը Հայաստանում ծավալվող իրադարձությունների մասին:

Հետազոտության մեջ առաջին հերթին անդրադառնում ենք հայկական ու թուրքական զորքերի կարողությունների գնահատմանը պատերազմի նախօրյակին ու դրա սկզբնական շրջանում, մինչև տեղի ունեցող իրադարձությունները ցույց տվեցին իրական պատկերը: Դա հնարավորություն է տալիս հասկանալու հայ իրականությունում եղած ակնկալիքները, պատկերացում կազմելու դրանց իրատեսական լինելու աստիճանի մասին: ՀՀ և Թուրքիայի ուժերի հարաբերակցության տեսանկյունից կարևոր են նաև պատերազմի մեկնարկից կարճ ժամանակ անց Սևրի պայմանագրի կնքմանն առնչվող վերլուծությունները:

Ուսումնասիրության խնդիրներից է ներկայացնել լուսաբանման առանձնահատկությունները, որտեղից էր «Հայրենիք» թերթը ստանում տեղեկություններ պատերազմի ու հարակից իրադարձությունների մասին, որքան ժամանակ անց էին դրանք հայտնվում Բոստոնի հայ ընթերցողների սեղանին:

Պատերազմի երկրորդ հատվածում արդեն մեծ տեղ է զբաղեցնում մեղավորների փնտրտուքը, որը հասկանալիորեն շարունակվում է նաև ռազմական հակամարտության ավարտից հետո: Այստեղ աչքառու է ինչպես Խորհրդային Ռուսաստանի, այնպես էլ դաշնակից երկրների ու հայ քաղաքական տարբեր ուժերի դիրքորոշումների լուսաբանումը, նրանց հասցեին քննադատության հնչեցումը:

Ուշագրավ են կեղծ տեղեկությունների ու ասեկոսեների շրջանառումը, որոնք առնչվում են հայերի կողմից Կարսի վերագրավմա-

նը, թուրքերի Երևանը նվաճելուն և այլն: Ինքնին հասկանալի է, որ հետաքրքրություն է ներկայացնում պատերազմի պատճառների վերլուծությունը:

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար օգտագործել ենք Բոստոնի «Հայրենիք» օրաթերթի 1920 թ. օգոստոս-1921 թ. փետրվար ամիսների համարները: Դրանք ենթարկվել են բովանդակային վերլուծության:

Պատերազմի նախօրյակին

Պատերազմի նախօրյակին ՀՀ բանակի առանձին ռազմական գործողությունները Թուրքիայի, ինչպես նաև Հայաստանի ադրբեջանական ապստամբների դեմ ներկայացվում էին որպես հզորության ցուցանիշ[1]: Ընդհանրապես մեծ էր լավատեսությունը: Օրինակ՝ «Ճակատամարտից» արտատպված հոդվածում ներկայացվում էր Ա. Խատիսյանի ելույթը, որտեղ նշվում էր. «*8000 քառ. քիլոմէթրի տարածութիւն մը ունէինք իբր Հայաստան: Այժմ ունինք 56 հազար քառ. քիլոմէթր տարածութեամբ Հայաստան մը: Հայաստանը կազմուեցաւ 600 հազար հայերով. այժմ հոն կան մէկ միլիոն 800 հազար հայեր: Կարսը գրաւեցինք, ուր կային 400 հազար հայեր. բազմաթիվ հայեր ալ եկան արտասահմանէն, իսկ թուրքերը ընդհակառակն կը պակսին մեր երկրէն ու կը հեռանան*» (Խատիսեանի զեկոյցը առեւտրական դասուն, «Հայրենիք», Բոստոն, 3.08.1920, էջ 1): Նույն ելույթում Ա. Խատիսյանը բարձր է գնահատում նաև հայկական բանակի մարտունակությունը. «*Պ. Խատիսեան, անդրա-*

[1] Տե՛ս, օրինակ, Հայկական զօրագունդեր կը գրաւեն Օլթին, «Հայրենիք», Բոստոն, 1.08.1920, էջ 3; Հայկական նոր յաղթանակներ, «Հայրենիք», Բոստոն, 11.08.1920, էջ 1; Զանգիպասարի ճոխ աւարը, «Հայրենիք», Բոստոն, 12.08.1920, էջ 2; Հայկական նոր յաղթանակ Նախիջեւանի ճամբուն վրայ, «Հայրենիք», Բոստոն, 21.08.1920, էջ 4; Արագ յառաջխաղացողութիւն զօրքը հրաշքներ կը գործէ Նախիջեւանի շրջանին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 21.08.1920, էջ 4; Խմբագրական. Հայկական բանակին վերջին յաղթանակները, «Հայրենիք», Բոստոն, 24.08.1920, էջ 2; Հայաստանի բանակը նախանձելի վիճակ մը կը ստանայ, «Հայրենիք», Բոստոն, 02.09.1920, էջ 2; Մերուժան Օզանեան, Արարատեան նամականի Օլթիի յաղթանակը, «Հայրենիք», Բոստոն, 28.09.1920, էջ 1:

դառնալով մեր զինուորական կացութեան, մխիթարական գտած է զայն ու այս առթիւ յիշեր է հայ զօրավարներու եւ սպաներու ձեռնհասութիւնը» (Պ. Խատիսեան կը պատասխանէ հարցումներու հայ առեւտրականներու ժողովին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 4.08.1920, էջ 1) ու ավելացնում. «*Կարելի չէ մեր զօրքը տեսնել եւ չը խանդավառուիլ: Երկու ամբողջ տարիներ կէս-մերկ էր ու կէս-անօթի, բայց ամէն օր յաղթեց այն: Բոլորը վառուած են հայրենիքի սիրով, եւ յաղթելու հաւատքով: Ու հիմա որ անոր պակասները լրացուած են մեծ չափով, դուք վաղը պիտի տեսնեք թէ ի՛նչ կ՚արժէ Հայաստանի բանակը*» (Հայաստան եւ իր դրացիները Հայրենիքը պէտք ունի իր բոլոր զաւակներուն Զօրքը մեր յոյսերուն կռուանն է, «Հայրենիք», Բոստոն, 5.08.1920, էջ 2): Կամ օգոստոսի 25-ին կարդում ենք. «*Ընդհանրապէս, Հայաստանը, նոր օրերու նախօրեակին, աւելի քան կազդուրիչ պատկեր մը կը ներկայացնէ: Կառավարութեան վճռական կամքը եւ մեր ժողովուրդին ներքին աշխատանքը միացած հայ զօրքի անձնուիրութեան, պիտի իրականացնեն մեր, բոլորի իտէալները*» (Հայաստան-Պարսկաստան ճամբան կը հարթուի, «Հայրենիք», Բոստոն, 25.08.1920, էջ 2):

Նշելի է, որ խիստ քննադատության էին ենթարկվում վերոնշյալ լավատեսականին հակառակ գնահատականները: Օրինակ՝ ՌԱԿ-ի ամերիկյան օրգան «Ազգի» Կ. Պոլսի թղթակիցը մեջբերում է Հասկելին. «*Գնդ. Հասքէլ Հայ բանակին դէպի Կարին յառաջխաղացման և Թրքահայաստանը Հանրապետութեան կցելու կարող ըլլալուն վրայ շատ մէծ յոյս չի տածեր: Անիկա կը կասկածէ, թէ հայ բանակը այդ ուղղութեամբ բացարձակապէս ոչինչ կրնայ ընել եւ թէ մինչեւ հիմա ըսուածները պոռոտախօսութիւններ են պարզապէս: Գնդապէտը չի հաւատար թէ արտաքին աջակցութեամբ գրաւման գործը իրագործելու համար ալ առ այժմ կրնայ յոյս մը տածիլ, որով շատ տարտամ եւ մթին կը տեսնէ թրքական Հայաստանի ապագան*» (Խմբագրական. Մեր Ազատագրութեան Ներքին թշնամիները IV, «Հայրենիք», Բոստոն, 19.09.1920, էջ 2): Ի պատասխան վերոնշյալի՝ «Հայրենիքի» խմբագրականը գրում է. «*Ահա նախադասութիւն-*

ներ, որոնք այնքան կը պատշաճին թուրք եւ թաթար լրագրողներու գրչին, որոնց այնքան յաճախ հանդիպած ենք թրքական լրագրերուն մէջ, որոնց փակ, սակայն, այս անգամ սփորագրողը հայկական անուն մը կը կրէ եւ զորս հիւրընկալողը, մի՛ մոռնաք, հայ քաղաքական կուսակցութեան մը օրկանն է, որ օրն ի բուն հայրենասիրութիւն կը յոլովէ թուղթի վրայ» (Խմբագրական. Մեր Ազատագրութեան Ներքին թշնամիները IV, «Հայրենիք», Բոստոն, 19.09.1920, էջ 2):

Այնինչ բանակի մասին պատկերացումները հետևյալն էին. «*Հայաստանի բանակը այն նախախնամական բազուկն է որ հանրապետութեան անունն ու հմայքը կանգուն կը պահէ մեր սահմաններուն վրայ, եւ Հայաստան կը դարձնէ իր թշնամիներուն համար ահարկու եւ պատկառելի*» (Հայաստան ինչպէս որ է (հայու մը տպաւորութիւնները), «Հայրենիք», Բոստոն, 9.10.1920, էջ 1):

Մինչև պատերազմը շատ դրական գնահատականի ենք հանդիպում նաև Ռուբեն Տեր-Մինասյանի որպես ռազմական նախարարի մասին. «*Ռուբէնի՝ պատերազմական նախարար ըլլալը դարձակէտ մը եղաւ մեր պետական փորձառութեան մէջ: Հօրքը եւ ժողովուրդը հաւասարապէս, անկախօրէն եւ կարծես բնազդաբար, զգացին թէ խոշոր եւ լաւ փոփոխութիւն մը կատարուէր մեր իրականութեան մէջ*» (Այն հրատարակվել է հոկտեմբերի 26-ին, բայց հոդվածը գրվել է օգոստոսի 12-ին, Վահէ Արծրունի, Հայրենի լուրեր VI Մեր նոր նշանաբանը, «Հայրենիք», Բոստոն, 26.10.1920, էջ 1):

Ամերիկահայ համայնքում ևս կային խիստ անիրատեսական-լավատեսական ակնկալիքներ հայկական բանակի հնարավորություններից. «*Մօտ ատենէն Հայաստանի սահմանները կը ճշդուին, մենք սակայն չպէտք է բաւականանք, պէտք է երթալ եւ մեր հայրենիքի իրական սահմանները մենք պէտք է ճշդենք, այս է ամէն հայու նուիրական պարտքը*» (Ողջերթի սեղան մը ի պատիվ Հայաստանի անդրանիկ նախարարապետ Յովի. Քաջազնունիի եւ Վեհ. կաթողիկոսի լիզօր Խորէն սրբազանի, «Հայրենիք», Բոստոն, 17.08.1920, էջ 2):

Բացի սեփական ուժերի գերագնահատումից՝ խիստ անիրատեսական կանխատեսումներ կային Թուրքիայի քաղաքական ապագա ճակատագրի, մասնավորապես քեմալական շարժման վերաբերյալ: Սեպտեմբերի սկզբին ասվում էր, որ Քեմալը հույսը կորցրել է, թե մինչև նոյեմբեր կկարողանա պայքարը շարունակել, հույսը կտրել է բոլշևիկներից ստացվելիք օգնությունից: Կարծվում է, թե նա փախչելու է կամ անձնատուր լինի (Քէմալական շարժման վախճանը մօտալուտ, «Հայրենիք», Բոստոն, 08.09.1920, էջ 3):

Եթե սեփական ուժերը գերագանհատվում էին, իսկ թշնամին՝ թերագնահատվում, ապա բավարար հիմքեր չունեցող ակնկալիքներ կային նաև հնարավոր դաշնակիցների վերաբերյալ: Հույս էր հայտնվում, որ երբ հայկական բանակը մտնի Արևմտյան Հայաստան, հունական զորքերը ցամաք կիջնեն Տրապիզոնից (Յ.Ա., Պոլսական նամականի Դաշնագրի ստորագրութնէն յետոյ, «Հայրենիք», Բոստոն, 12.09.1920, էջ 1):

Սևրի պայմանագրի ստորագրման վերաբերյալ տեղեկատվություն առաջին անգամ հրատարակվեց օգոստոսի 12-ին, սակայն դրանում դեռ Հայաստանին վերաբերող դրույթների վերաբերյալ խոսք չկար: Արդեն ամսի 15-ին հրատարակվեց ԱՄՆ-ում ՀՀ դեսպան Գ. Փաստրմաճեանին ուղղված Ա. Ահարոնյանի հեռագիրը (Հայ-թրքական դաշնագիրը ստորագրուած Ահարոնեան կ՚ստորագրէ Հայաստանի Հանրապետութեան կողմէն, «Հայրենիք», Բոստոն, 15.08.1920, էջ 1): Նույն համարում տեղ գտավ համառոտ տեղեկատվություն հայ-ռուսական համաձայնագրի մասին (Հայաստան խաղաղութիւն կը կնքէ Ռուսիոյ հետ, «Հայրենիք», Բոստոն, 15.08.1920, էջ 3):

Երկու օր անց արդեն հանդիպում ենք դժգոհության Խարբերդի ՀՀ-ին չմիացվելու վերաբերյալ: Նշվում էր, որ խարբերդցիները ԱՄՆ-ում պետք է լոբբինգ իրականացնեն, որպեսզի այն ևս միացվի Հայաստանին (Յօնքը շինելու տեղ աչքը չհանենք, «Հայրենիք», Բոստոն, 17.08.1920, էջ 1: Այդ մասին տե՛ս նաև Խմբագրական. Տրապիզոնի եւ Խարբերդի անհրաժեշտութիւնը Հայկական Հանրապետութեան համար, «Հայրենիք», Բոստոն, 22.09.1920, էջ 2):

Չափազանց անիրատեսական է հնչում Ավետիս Ահարոնյանի հայտարարությունը, որը հրատարակվում է պատերազմի նախօրյակին. «*Ինչպէս ասացի, թուրք վարիչների իմաստութենից է կախուած, ժամ առաջ իրագործելով դաշնագիրը, խուսափիլ բոլոր այն ծանր հետեւանքներից, որոնք կարող են նրանց համար կործանարար լինել: ...Հակառակ այն անլուր վայրագութեան եւ այն անասելի խժդժութիւններին, որ Թուրքերը կատարեցին հայ անմեղ ժողովրդի գլխին, ես հաւատում եմ որ եթէ Թուրքերը գէթ այսուհետեւ անկեղծօրէն աշխատեն մեզ մոռցնել իրանց կատարած անորակելի անիրաւութիւնները բարի հարեւանութեամբ, հայ ժողովուրդը, արդար քրտինքի, ամենօրեայ վաստակի, ազնիւ աշխատանքի հետամուտ ըլլալով կամաց կամաց պիտի ընդունի այդ հարեւանութիւնը եւ չպիտի մտածէ երբէք այսքան արիւնի արիւնով պատասխանել*» (Պ. Ահարոնեանի Յայտարարութիւնները, «Հայրենիք», Բոստոն, 21.09.1920, էջ 1):

Արդեն պատերազմի մեկնարկից հետո, ակնհայտաբար դեռևս լուր չունենալով ռազմագործողությունների սկսվելու մասին, հոկտեմբերի 4-ով թվագրվող նյութում կարդում ենք. «*Թուրքերը դեռ կը տիրապետեն Վանի, Պիթլիսի եւ Կարնոյ նահանգներուն, որոնք Դաշնագրի տրամադրութեամբ կը վերաբերին Հայաստանի: Ուրիշ ձմեռ մըն ալ վրայ կը հասնի, եւ հայկական բանակը պիտի ստիպուի յիշեալ նահանգներու գրաւումը յետաձգել յառաջիկայ գարնան*» («Հայաստանը ուժասպառ է, բայց կը շարունակէ կռուիլ», «Հայրենիք», Բոստոն, 05.10.1920, էջ 3):

Պատերազմի սկիզբը, ռազմագործողությունների լուսաբանումը

Պատերազմի մեկնարկի մասին առաջին տեղեկությունը «Հայրենիք»-ում հրատարակվեց հոկտեմբերի 10-ին. «*Քեազիմ Գարապէքիր Փաշան բանակի մը գլուխ անցած՝ Օլթիի ուղղութեամբ կը քալէ Հայաստանի վրայ: Հայկական բանակը քաջաբար կը դիմադրէ: Մուսթաֆա Քէմալ յենուած՝ Պրէսթ Լիթովսքի դաշնագրին վրայ, կը*

պահանջէ Կարսը, Արտահանը, Օլթին» (Քեազիմ Գարապէքիր կը յարձակի Հայաստանի վրայ Հայաստանի բանակին հերոսական դիմադրութիւնը (սեփական հեռագիր), «Հայրենիք», Բոստոն, 10.10.1920, էջ 3):

Պատերազմի սկսվելուց հետո էլ շարունակում էին տեղեկություններ հաղորդվել թուրքական բանակի թույլ լինելու մասին. «*Դաշնակից աղբիւրներէ առնուած լուրերու համաձայն՝ թուրք բանակները գէշ սպառազինուած են եւ եթէ վերջերս պոլշեւիկներէն ռազմամթերք չեն ստացած պիտի չկարենան յաղթել հայկական լուրջ ընդդիմութեան մը: Կողոպուտի սիրոյն՝ թուրք բանակին միացած են բազմաթիւ յելուզակային խումբեր*» (Թուրքերն ու պոլշեւիկները կը գործակցին հայկ. բանակին դէմ, «Հայրենիք», Բոստոն, 14.10.1920, էջ 3): Միևնույն ժամանակ նշվում էր, որ անգլիացիները չեն կիսում հայերի լավատեսությունը (Հայաստանի զինուորական կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 14.10.1920, էջ 3):

Հոկտեմբերի 11-ին հայկական ու թուրքական զորքերի համեմատականում նշվում էր, որ թուրքերը կարող են դուրս բերել 25 հազար, իսկ հայերը՝ 15 հազար զինվոր: Սակայն հայերի առավելությունն էր զորքի բարձր գիտակցությունը, հրետանու գերազանցությունը և սվինամարտում հետևակի առավելությունը (Յ. Ամատունի, Պոլշեւիկ-Իթթիհատ համաձայնութիւնը Յարձակում Հայաստանի վրայ, «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920, էջ 1):

Ռազմական գործողություններից հազարավոր կիլոմետրեր հեռու մեծ էր պատերազմի մեկնարկի առթիվ ոգևորությունը. «*Պատերազմական յայտարարութիւններն էապէս ճնշիչ են եւ փխրազդեցիկ տարբեր ազգերու մէջ եւ տարբեր պարագաներու տակ, բայց մեր պատերազմին հռչակումն իր մէջ ունի անբացատրելի բան մը, որ կը բարձրացնէ հոգիները, կը խթանէ թմրած զգացումները եւ յափշտակութեամբ ու հիացումով կը համակէ ամէն հայու էութիւնը*» (Խմբագրական. Հայաստանի պատերազմը, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920, էջ 2):

Արդեն հոկտեմբերի 15-ին «Հայրենիքը» հաղորդում է, որ թուրքերը գրավել են Սարիղամիշը (Թրքական յառաջխաղացքը կ՚ըն-

թանայ յամրաբար Սարըխամիշ պարպուած հայերէն Ընդհանուր զօրակոչ Հայաստանի մէջ Մուսավաթիսթները կը մերժեն գործակցիլ թուրքերուն, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920, էջ 3): Առաջին պարտությունները, սակայն ներկայացվում են հայկական բանակի հզոր լինելու հավաստիացումների հետ միասին. «*Սփիպուեցանք պարպել Կաղզուանն ու Սարըխամիշը: Թուրքերը Նօվօ Սէլիմի վրայ յարձակում գործեցին հրետանիով, բայց եւ մղուեցան: Կռիվը կը շարունակուի Իկփիրի կողմը: Կամաւորներ կը խուժեն ամէն կողմէ, եւ զինուորներու տրամադրութիւնը շատ բարձր է*» (Պատերազմը սկսած Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ Հայերը կը պարպեն Կաղզուանն ու Սարըխամիշը Թուրքերը եւ մղուած Նօվօ Սէլիմի մօտ (Սեփական հեռագիր «Հայրենիք»ի), «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920, էջ 1):

Հոկտեմբերի 19-ին Տիրան Փաշալեանը իր հոդվածով փորձում է ցրել «վիատությունը»: Նա հայկական բանակի նահանջը համարում է ժամանակավոր, կանխատեսում, որ գյուղատնտեսական աշխատանքների ավարտի մոտեցմամբ զորքերի թիվը կկրկնապատկվի, իսկ թուրքերը արևմտյան ճակատից ուժեր չեն կարողնա բերել (Զինուորական կացութիւնը. Ոյժերու կշիռ, ենթադրութիւններ եւ հաւանականութիւններ, «Հայրենիք», Բոստոն, 19.10.1920, էջ 1): Շարունակելով իր մտքերը՝ նա կանխատեսում է, որ «*Հայաստան պիտի յաղթէ, որովհետեւ իր նիւթական միջոցներով վար չի մնար իր թշնամիներէն, իսկ բարոյապէս՝ անհամեմատ կերպով բարձր է անոնցմէ: Պիտի յաղթէ, որովհետեւ կը կռուի արդար դատի մը համար եւ իրեն իբր զօրավիգ ունի քաղաքակիրթ աշխարհի համակրութիւնը*» (Զինուորական կացութիւնը Ոյժերու կշիռ, ենթադրութիւններ եւ հաւանականութիւններ (շար. երեկուան թիւէն եւ վերջ), «Հայրենիք», Բոստոն, 20.10.1920, էջ 1):

Հոկտեմբերի 14-ին հայերի կազմակերպած հակահարձակման մասին լուրը, որը ստացվել էր Լոնդոնից, հրատարակվում է հոկտեմբերի 26-ին (Հայկական բանակը հակայարձակման կը դիմէ, «Հայրենիք», Բոստոն, 26.10.1920, էջ 3): Հոկտեմբերի 27-ին հրատարակվում է «Associated Press» լրատվական գործակալության

Կ. Պոլսից ստացված տեղեկատվությունը Սուրմալուի ճակատում հաջողությունների մասին (Հայկական բանակը պարտութեան կը մատնէ թուրքերը, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920, էջ 1): Ստացվում են նաև տեղեկություններ Ամերիկյան նպաստամատույցից, որոնք վկայում են այս ճակատում հաջողությունների մասին (Թուրքերը կը պարտուին Իկտիրի վճռական կռուին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 05.11.1920, էջ 3):

Կարսի անկման օրերին կարդում ենք, որ հոկտեմբերի 28-ով թվագրվող Կ. Պոլսից ստացված տեղեկատվության համաձայն բազմահազար թուրքեր էին սպանվել Օլթիի և Սարիղամիշի միջակայքում (Հայկական մեծ յաղթանակ. հազարաւոր թուրքեր սպանուած, «Հայրենիք», Բոստոն, 30.10.1920, էջ 5):

«Հայրենիքում», ինչպես այլ հայկական թերթերում, նշվում է Թիֆլիսի հայերի ցույցի, կամավորական շարժման մասին (Հայաստանի դէմ սարքուած կռիւը Հայրենասիրական բուռն ցոյցեր Անթիւ կամաւորներ, ծեր թէ երիտասարդ, կը դիմեն դէպի ճակատ, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920, էջ 1, նաև Համաժողովրդական ցոյց, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920, էջ 2): Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը կազմակերպում էր քաղաքում գտնվող ՀՀ քաղաքացիների զորակոչ (Հայկական զօրակոչ Վրաստանի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 11.11.1920, էջ 2):

Թուրքիայից Հայաստան որպես կամավոր մեկնողներից հետաքրքիր է 60-ամյա Ասատուր Կարապետ Էֆէնիճեանի դեպքը: Նրա 14 զավակներից 12-ը սպանվել են ցեղասպանության ժամանակ, որդիներից մեկը արդեն ճակատում է, մյուսն էլ պատրաստվում է մեկնել (12 զաւակները կորսնցուցած 60-ամեայ կամաւոր մը, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920, էջ 1): Հետագայում հանդիպում ենք Կ. Պոլսից Հայաստան «*հասած հարիւր քսան պոյ-սքաութներու խումբը, որ միացաւ տեղական խումբերուն: Անոնք Անգլիական Այգիին մէջ, եօթը հազար հանդիսականներու ներկայութեան, աճապարանօք ճակատ մեկնիլ պահանջեցին*» (Լուրեր Հայաստանէն, «Հայրենիք», Բոստոն, 25.12.1920, էջ 4):

Կարդում ենք նաև նոյեմբերի 28-ին Կ. Պոլսում Հայաստան որպես կամավորներ մեկնող բուլղարացիների ու բուլղարահայերի պատվին տրված թեյասեղանի մասին. «*Պուլկար սպաները, որոնք զինուորական դպրոցը աւարտած են, վստահացուցած են ներկաները որ կ՚երթան հայու ոգիով կռուիլ այն երկրին մէջ, ուր դիտեն թէ հանգստաւէտ կեանքը չէ որ իրենց կ՚սպասէ*» (Կամաւոր Պուլկար սպաներ հայկ. բանակին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 28.12.1920, էջ 2):

Երբեմն ռազմագործողությունների վերաբերյալ լուրերը հասնում էին շատ ուշ: Օրինակ՝ նոյեմբերի 11-ին հրատարակվում է հոկտեմբերի 6-ով թվագրվող տեղեկատվություն՝ ստացված Թիֆլիսից, որում ի դեպ, ասվում էր հայկական սավառնակների կողմից հաջող ռմբակոծումների մասին (Հայ սաւառնակներ Նօվօ Սէլիմի վրայ, «Հայրենիք», Բոստոն, 11.11.1920, էջ 2): Կամ նոյեմբերի 13-ին հրատարակվում է հոկտեմբերի 9-ի Երևանից ստացված լուրերը՝ վերցված Կ. Պոլսի «Ճակատամարտից» (Պատերազմական գործողութիւնները (Թղթակցութիւն «Ճակատամարտի»), «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920, էջ 4):

Հոկտեմբերի 31-ին հայկական բանակի պարտությունները որակվում էին որպես մարտավարական նահանջներ. «*Թրքական ոյժերը շատ աւելի լինելով քան ինչ որ ենթադրւում էր սկիզբները, եւ մի շարք այլ նկատառումներով, հայկական բանակը նախատեսեց, առայժմ, պաշտպանական տակտիկի հետեւիլ, սպասելով, որ թշնամին գայ հայկական ամրացուած դիրքերի առաջ*» (Տաճկական ներխուժումը, «Հայրենիք», Բոստոն, 22.12.1920, էջ 1): Այնինչ դեպքերին մասնակից զինվորը գրում էր հակառակը. «*Մեր նահանջը նահանջ չէր, այլ լքում, փախուստ, որի վրայ սաւառնում է անտարբերութեան ոգին եւ դու թեւազուրկ՝ չգիտէիր ի՞նչ անես, որի՞ն կանգնեցնես, ո՞ւմ բերան փակես, ո՞ւմ հետ կռուես եւ ո՞վ սարսափ... ո՞ւմ համար կռուես*» (Զինուոր մը կը պարզէ լքումի պատճառները, «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921, էջ 1):

Կարսի անկումը

Նոյեմբերի 5-ին հրատարակվում է, որ Կարսը պաշարված է (Պաշարման վիճակ՝ Կարսի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 05.11.1920, էջ 2)։ Նոյեմբերի 5-ին Կ. Պոլսից հաղորդված տեղեկատվությունը վկայում է Կարսում ռազմական դրության բարելավման մասին (Հայկ. յաղթանակներ թուրքերու դէմ Կարսի ճակատին վրայ դրութիւնը նպաստաւոր Պոլշէվիկները ետ մղուած Զանկեզուրի մէջ (Սեփական հեռագիր «Հայրենիքի»), «Հայրենիք», Բոստոն, 06.11.1920, էջ 1)։ Նոյեմբերի 10-ին նշվում է Կարսի անկման մասին, ինչն ըստ նոյեմբերի 6-ին Կ. Պոլսից ստացված հաղորդման տեղի էր ունեցել նոյեմբերի 2-ին (Երեւան վտանգի տակ, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920, էջ 3)։ Լոնդոնի հայկական շրջանակները ևս հաղորդում են Կարսի անկման մասին՝ մեղադրելով անգլիացիներին, որ նրանք չեն տրամադրել խոստացված թնդանոթները (Կարս ինկած, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920, էջ 3)։ Մերձավոր Արևելքի նպաստամատույցի պաշտոնյաները զարմանք են հայտնում Կարսի անկման առթիվ, քանի որ ունեին Հ. Օհանջանյանի հաղորդագրությունը, որ վերջին շրջանում հայերի դրությունը բարելավվել է (Նպաստամատոյցը կը տարակուսի ստացուած լուրերու ստուգութեանը, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920, էջ 3)։

Նոյեմբերի 14-ին հանդիպում ենք Կ. Պոլիս թղթակցության, որում Կարսի անկման մեջ մեղադրվում են բոլշևիկները. «*Կարսը պարպուած է պոլշեւիկեան ճնշումին տակ*» (Կարսը պարպուած.- կացութիւնը բաղդորոշ Հայաստանի եւ Վրաստանի համար.- Հաճընի անկումը հաստատուած (Սեփական հեռագիր «Հայրենիքի»), «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920, էջ 1)։ Փարիզից ստացված լուրերը պնդում էին, թե Կարսը չորս օր համառ դիմադրել է թշնամուն (Զինադադարի պայմանները Սեփական հեռագիր «Հայրենիքի», «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920, էջ 1)։ «Հայրենիքի» խմբագրականը հետևյալ կերպ էր բնորոշում Կարսի անկումը նոյեմբերի 16-ին. «*Հայկական բանակը հերոսական դիմադրութիւններէ վերջ պար-*

փաւորուցեցաւ լքել Կարսը» (Խմբագրական. Հայաստանի կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 16.11.1920, էջ 2):

Կարսի անկումից օրեր անց՝ նոյեմբերի 2-ին գրված վերլուծությունում նշվում էր, որ դրա անկման պատճառների թվում են այն պաշտպանական համակարգը, որի համար պետք էր շատ մեծ զինուժ, ինչն ուներ Ռուսական կայսրությունը, սակայն ՀՀ նման փոքր պետությունը չէր կարող այն ունենալ: Բացի այդ՝ խոսվում էր այն մասին, որ անգլիացիները բերդի խոշոր թնդանոթները ուղարկել էին Դենիկինին: Չնայած դրան՝ եզրակացությունն այն էր, որ բերդը հնարավոր էր պահել, եթե չլինեին, որոշ հանգամանքներ, որոնք դեռ պարզ չեն. «*Բայց եւ այնպէս հայ քաջարի ժողովուրդը, յանձին իր բանակին եւ կամաւորներին, կը կարողանար իր ձեռքը պահել բերդը կամ թշնամուն յետ մղել, եթէ չլինէին մի շարք անպատեհ պատճառներ, որոնց մասին, այժմ, չէ կարելի շատ բան ասել, մանաւանդ որ դեռ բոլորովին պարզ չեն*» (GLOBE, Կարսի անկումը, «Հայրենիք», Բոստոն, 12.12.1920, էջ 1):

Կ. Պոլսից նոյեմբերի 14-ին գրում էին. «*Մինչեւ նոյ. 10 մեր ստացած տեղեկութիւնները ցոյց կուտան որ Կարսը թողնուած է շատ ծանր կռիւներէ յետոյ, երբ թիկունքին վրայ ծագեր են ապստամբութիւններ, կազմակերպուած Աղբաբայի թուրքերու, Ղարսի թիկունքի Մալականներու եւ Անիի շրջանի քրդերու կողմէն: Մեր բանակը ապահովութեան համար ստիպուած է եղեր քաշուել աւելի ապահով գծի վրայ*» (Պոլսական նամականի Կարսի անկումը.- ժողովրդական յուզում Պոլսոյ մէջ.- դարձեալ յիշատակագիր, «Հայրենիք», Բոստոն, 12.12.1920, էջ 1):

Բաթումից Կ. Պոլիս եկած Հուսիկ վարդապետը «Ճակատամարտին» տված հարցազրույցում Կարսի անկումը բացատրում էր բոլշևիկների կողմից դասալքության քարոզի հետևանքով հայկական զորքերի չկռվելով (Հայաստանի վերջին անցուդարձերը, «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921, էջ 1-2): «Հայաստանէն Պոլիս հասնող իրազեկ ճամբորդ մը» հավաստիացնում էր, որ Կարսի անկման հիմնական պատճառը բոլշևիկների քարոզչության հետևանքով հայ

զինվորների չկռվելն ու Աղբաբայի ու Զըլդրի շրջանի թուրքերի ապստամբությունն էր (Հալածանք նախորդ կառավարութեան անդամներուն եւ հակապօլշեւիկ տարրերու դէմ «Ըրէք ինչ որ կ՚ուզէք այստեղ, Հայաստանի մէջ», «Հայրենիք», Բոստոն, 22.01.1921, էջ 3):

Պատերազմի ավարտական փուլը

Հանդիպում ենք տեղեկության, թե Կարսի անկումը Ալեքսանդրապոլում ոչ թե վիատություն է առաջ բերել, այլ մղել շատերին մեկնելու ճակատ. «*Կարսի անկման լուրը Ալէքսանդրապոլ է հասնում նոյեմբեր 1-ի երեկոյան ժամը 6-ին: Տաճկական վտանգի ամբողջ սարսափը ուշքի է բերում շատ շատերին եւ շտապել տալիս դէպի ճակատ: Երկաթուղագծի բանուորներն անգամ թողնում են գործը, զէնքը ձեռքին շտապում դէպի ճակատ: Չկայ տրտունջ, այլ վճռականութիւն, չկայ սարսափ, այլ ոգեւորութիւն*» (Ի՞նչպէս ինկաւ Կարսը (Անկումէն առաջ եւ վերջը), «Հայրենիք», Բոստոն, 12.12.1920, էջ 2):

Նոյեմբերի 13-ին, ապա 16-ին հրատարակվում է զինադադարի մասին: Անհաջողությունների մասին լուրերը անհասկանալի էին ամերիկահայ համայնքում (Խմբագրական. Հայաստանի կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 16.11.1920, էջ 2): Զինադադարից հետո վերսկսված ռազմական գործողությունների հետ մեծ հույսեր էին կապվում. «*...Հայկ. բանակը դարձեալ սկսած է կռուիլ անարգ թշնամիներուն անհանդուրժելի պայմաններն ազդուօրէն մերժելու համար*» (Դէպի Սարդարապատ, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920, էջ 2): Այդպիսի ակնկալիքների ենք հանդիպում նաև նոյեմբերի 27-ին. «*Հայաստանի Հանրապետութիւնը քանի մը օրուան զինադադարէն վերջ, դարձեալ շարժման մէջ դրած է իր քաջարի զինուորները թշնամիին դէմ*» (H. Albertus, Նպաստաւոր երեւոյթներ, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920, էջ 2):

Նոյեմբերի 24-ին հանդիպում ենք հոդվածի, որտեղ կարծիք էր հայտնվում, որ Հայաստանի ծանր կացությունից ելքը պետք է լինի Սևրի պայմանագրի իրագործմանը ձեռնամուխ լինելը՝ հույսեր կապելով հունական արշավանքի, Վրանգելի ուժերի հաջողության

հետ: Խմբագրությունը ծանոթագրությամբ նշում է, որ վերջին երկու գործոնները չեզոքացված են (Քաղաքական մոմենտը եւ մեր արտաքին քաղաքականութիւնը Արեւելքի եւ Արեւմուտքի բախումը արեւելեան երկրամասերում.- Արեւելքի հիմնական երկու խոշոր ոյժերը- կոմունիզմ եւ պանթուրանիզմ.- Նրանց գրկախառնումը Հայաստանում.- Եւ այդ փորձալից ժամին մեր արտաքին քաղաքականութեան ուղեգիծը: II, «Հայրենիք», Բոստոն, 24.11.1920, էջ 1):

Նոյեմբերի 27-ին Ա. Միքայելյանը գրում էր, որ եթե նույնիսկ հայկական բանակը պարտվի, այն ենթակա է փառաբանման. «...*Պայքարող բանակ մը թէ գերազանց ոյժերու դէմ պարտուի իսկ, այդ պարտութիւնը փառքի յաղթանակ մը պիտի ըլլայ եւ դարերը պիտի երգեն պարտուածներու յաղթանակը.- «Փա՜ռք պարտուածներուն*» (Արմենակ Մելիքեան, Օրուան կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920, էջ 1):

Հայկական բանակի մարտունակության իրատեսական գնահատականի հանդիպում ենք դեկտեմբերի 4-ին. «...*Հայկական բանակի բարոյականը ինկած է, մինչ ընդհակառակը, թուրքերը աւելի կարգապահ են եւ լաւ պարենաւորուած*» (Հայաստանի կացութիւնը մտահոգիչ Մոսկուայի եւ քէմալականներու յարաբերութիւնները ձգտուած, «Հայրենիք», Բոստոն, 04.12.1920, էջ 5): Հակառակ դրան՝ նույնիսկ դեկտեմբերի 14-ին հանդիպում ենք պարտությունները ժամանակավոր համարող և հայկական բանակը գովերգող տեղերի (Տօքթ. Փ. Ա. Ադամեան, Հայ հերոսական բանակին, «Հայրենիք», Բոստոն, 14.12.1920, էջ 1): Հետագայում արդեն կարդում ենք նաև հայ դասալիքների մասին տեղեկություն: Օշականում տեղի բնակիչները ծեծի են ենթարկել երեսուն դասալիքների (Հայ ժողովուրդը կը պատժէ դասալիքները, «Հայրենիք», Բոստոն, 13.01.1921, էջ 2):

Ս. Վրացյանի կառավարությունը, ի տարբերություն նախորդի, բնականաբար, ստիպված էր փոխել իր հռետորաբանությունը. «*Մեր նշանաբանն է հաշտութիւն Թուրքիոյ հետ եւ համերաշխու-*

թիւն բոլոր դրացիներու հետ» (Վրացեանի դահլիճին յայտարարութիւնը խորհրդարանին առջեւ, «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921, էջ 4):

Դեկտեմբերի 4-ին կարդում ենք տեղեկատվություն, որ դեկտեմբերի 2-ին խորհրդային զինվորները գրավել են Երևանը ու Հայաստանը դարձել է խորհրդային (Պոլշեւիկեան ռէժիմ Հայաստանի մէջ վիճելի հողամասերը կը տրուին Հայաստանի, «Հայրենիք», Բոստոն, 07.12.1920, էջ 3):

Խորհրդայնացումը հույսեր էր ներշնչում, որ տարածքային խնդիրներ կլուծվեն հոգուտ Հայաստանի: Բոստոնի «The Christian Science Monitor»-ի թղթակիցը «հայ հեղինակաւոր անձնաւորութենէ մը հետեւեալ տեղեկութիւնները կը քաղէ». «*Այս քայլին իբր հետեւանք՝ թուրքերը պիտի քաշուին 1914-ի ռուսական սահմանին ետին, եւ Ատրպէճան Հայաստանի պիտի զիջի Զանկէզուրի, Նախիջեւանի եւ Նակորայ-Ղարաբաղի վիճելի նահանգները: Թուրքիա՝ Կարսի, Սարըխամիշի եւ Արտահանի զիջումին փոխարէն՝ երաշխիքներ ստացած է թէ Ռուսիա պիտի օժանդակէ Փոքր Ասիոյ եւ Թրակիոյ իր պահանջներուն իրագործման*» (Հայաստանի համար չկար փրկութեան ուրիշ միջոց, «Հայրենիք», Բոստոն, 11.12.1920, էջ 5):

Ալեքսանդրապոլի դաշնագրի մասին տեղեկատվությունը հասնում է դեկտեմբերի 11-ին. «*Դաշնագրին պայմաններով Հայաստան կը վերածուի շատ փոքր տարածութեան մը՝ պարփակելով միայն Երեւանի շրջանը եւ Կօքչայ լիճը: Ալէքսանտրոպոլ եւ Կարս դուրս կը մնան իր սահմաններէն*» (Խաղաղութիւն կնքուած Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, «Հայրենիք», Բոստոն, 11.12.1920, էջ 5): Մանրամասները Բոստոն են հասնում շատ ավելի ուշ: Օրինակ՝ բանակցությունների մեկնարկի մասին հրատարակվում է միայն հունվարի 8-ին (Հայեւթուրք հաշտութեան ժողովը սկսած է նոյ. 25-ին Ալէքսանդրապոլի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921, էջ 4): Վ. Համբարձումյանը նշում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կարելի է համարել անվավեր, քանզի ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը առանց այն վավերացնելու հաջորդ օրը (ինչպես հայտնի է իրականում իշխանությունը հանձնվել էր նախքան Ալեքսանդրապո-

լի ստորագրումը) իշխանությունը հանձնեցին «Հայաստանի հիւսիսային սահմաններից արշաւող կոմիտէին» (Վահան Համբարձումեան, Ալէքսանդրապոլի պայմանագիրը, «Հայրենիք», Բոստոն, 25.02.1921, էջ 1):

Ռուս-թուրքական համագործակցություն

Անդրադառնալով ռուս-թուրքական համագործակցությանը՝ Նիկոլ Աղբալյանը տալիս է հետևյալ բնորոշումը. «*Խորհրդային Ռուսաստանը՝ մտքով, հոգով եւ էութեամբ աղքատ այդ երկիրը, ցանկանում է յառաջ խաղալ՝ օժանդակ ունենալով Մուսթաֆա Քէմալի ողորմելի զօրքերը*» (Ն. Աղպալեան կը խօսի, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920, էջ 1): Հոկտեմբերի 13-ին Յ. Ամատունին գրում էր, որ որևէ դեպքում հնարավոր չէ Խորհրդային Ռուսաստանի հետ համագործակցությունը (Յ. Ամատունի, Պոլշեւիկ-Իթթիհատ համաձայնութիւնը II, «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920, էջ 1):

Պատերազմից հետո էլ, բնականաբար, Ռուսաստանի հասցեին քննադատությունը չէր դադարում. «*Հայ եւ թուրք-պոլշեւիկ պատերազմը պիտի մնայ պատմութեան մէջ իբրեւ ամենախոշոր դատապարտութիւնը ռուսական պոլշեւիզմի, որ եղբայրացած եւ զինակցած՝ թուրք աւազակներուն, խուժեց Հայաստանի վրայ եւ զայն բռնի կերպով դրաւ իր քօնթրոլին ներքեւ յանուն չհասկցուած յեղափոխութեան մը եւ ընկերվարութեան մը*» (Խմբագրական. Պոլշեւիկեան ճամարտակութիւններ, «Հայրենիք», Բոստոն, 4.1.1921, էջ 2): Ռուս-թուրքական համագործակցությունը դատապարտվեց նաև Թիֆլիսում ՍԴՀԿ ժողովում (ՍԴ Հնչակեաններու ժողովը Թիֆլիսի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921, էջ 2):

Նույնիսկ հանդիպում ենք կարծիքի, որ ամենի նախաձեռնողը Ռուսաստանն էր, իսկ Թուրքիան ընդամենը գործիք էր. «*Բոլոր փաստերը ցոյց կուտան, թէ թուրքերը, լոկ գործիք մը ըլլալով խորհրդային Ռուսաստանի ձեռքը, կատարեցին այն, ինչ որ իրենց յանձնարարուած էր*» (Նեռ, Հայաստանի կացութիւնը ընդհանուր պայքարին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 19.01.1921, էջ 1):

1921 թ. հունվարի 23-ի խմբագրականը, ի պատասխան հակառուսականության մեջ մեղադրանքների, ընդգծում էր, որ ՀՀ կառավարությունը թշնամական դիրք չի գրավել Խորհրդային Ռուսաստանի հանդեպ, այլ հակառակը (Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները IV, «Հայրենիք», Բոստոն, 23.01.1921, էջ 2): Ռուսաստանի հետ բարեկամական հարաբերություններ մշակել չկարողանալու մեղադրանքին ի պատասխան՝ նշվում էր, որ թե՛ զգացական, թե՛ գործնական պատճառներով ՀՀ-ն չէր կարող լինել դաշնակից Խորհրդային Ռուսաստանի հետ (քանզի այն Թուրքիայի դաշնակիցն էր) (Խմբագրական. Մեր գործնական քաղաքականութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 30.01.1921, էջ 2):

Հայ բոլշևիկներ

Ռուս բոլշևիկներից շատ ավելի քննադատության էին արժանանում հայ բոլշևիկները. «*Մենք այս էջերուն մէջ չպիտի ուզէինք մեղադրել ռուս պոլշեւիզմը այնքան որքան հայ պոլշեւիզմը ...Հայ ժողովուրդին ազնիւ, անկեղծ եւ մաքուր զաւակները հերոսական պայքարի բռնուած են մեր ցեղին դարաւոր թշնամիներուն եւ հայ պոլշեւիկներուն խնամիներուն դէմ*» (Հայութեան տականքները, «Հայրենիք», Բոստոն, 23.10.1920, էջ 2):

Հոկտեմբերի 27-ի խմբագրականում նորից հանդիպում ենք հայ բոլշևիկների քննադատության. «*Յաւալի իրողութիւն մըն է, որ Հայաստանի եւ արտասահմանի մէջ գոյութիւն ունին կարգ մը հայեր - հիւանդոտ ուղեղներու տէր հայեր, որոնք մութին մէջ կը գործեն տակաւին իբրեւ պոլշեւիկեան գործակալներ, իբրեւ դաւաճաններ՝ հայ դատին եւ հայ ժողովուրդի անկախութեան, բայց մենք կը հաւատանք, որ այդ կարգի զզուելի տիպերու թիւը շատ փոքր է...*» (Խմբագրական. Ռուս պոլշէվիկները բարեկամ թրքական աւազակապետութեան, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920, էջ 2):

Դեկտեմբերի 9-ին կարդում ենք (անշուշտ, տեղեկատվությունը վերաբերում է ավելի վաղ շրջանի), թե Ղազախի ճակատում որոշ հայ բոլշևիկներ, զղջալով իրենց քայլերի համար, ինքնակամ

հանձնվել են հայկական կողմին՝ ցանկանալով գործել ի շահ Հայաստանի (Հայ պոլշեւիկները կը զղջան եւ անձնատուր կ՚ըլլան, «Հայրենիք», Բոստոն, 09.12.1920, էջ 2):

Հայ բոլշևիկները մեղադրվում էին նաև հայ-ռուսական հարաբերությունների վատթարացման մեջ (Խմբագրական. «Մուսթաֆա եղբայրդ է գալիս», «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921, էջ 2), նրանում, որ Կարսի գրավման ժամանակ հետախուզական տեղեկություններ են հաղորդել թշնամուն: Նրանք թուրքերին «*մատնանիշ ըրած՝ քիչ շատ աչքի ինկող հայ հանրային գործիչները*» (Հայաստանի Հանրապետութեան կողքին կանգնողները Ա., «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921, էջ 1):

1921 թ. հունվարի 19-ին «Հայրենիքում» հրատարակվեց նաև հայ բոլշևիկների կոչը հայկական բանակին թուրքերի դեմ չկռվելու վերաբերյալ, որտեղ ի թիվս ասվում էր. «*Մենք կոչ ենք անում ձեզ չհաւատալ Դաշնակցականների հազարաւոր սուտերին, որովհետեւ եկողները ո՛չ թէ թալանչի աւազակներ են, այլ հայ գիւղացիների, զինուորների եւ բանուորների ընկերներ՝ թուրք աշխատաւորներ են*» (Ինչպէս խաբեցին հայկական զօրքը, «Հայրենիք», Բոստոն, 19.01.1921, էջ 2):

Դաշնակիցներ

Պատերազմի ժամանակ ու դրանից հետո բազմաթիվ են մեղադրանքներն ուղղված դաշնակից երկրներին: Հոկտեմբերի 15-ին «Հայրենիքը» հրապարակում է «Քրիսչըն Սայէնս Մօնիթօրի» հույն թղթակցի հաղորդագրությունը, որի համաձայն՝ Հունաստանը փորձել է Տրապիզոն զորքեր իջեցնել, սակայն Ֆրանսիայի ու Իտալիայի բողոքների պատճառով դա չի իրականացել (Ֆրանսա եւ Իտալիա հակառակ Պոնտոսի յունական արշաւանքին Տրապիզոնի սահմանուած հելլէն ոյժերը Իզմիտի ցամաքը կը դառնան, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920, էջ 3): Երկու օր անց «Հայրենիքը» կրկին մեղադրում է Ֆրանսիային ու Իտալիային այս անգամ արդեն Թուրքիային ուղղակի աջակցելու համար (Խմբագրական. Հայ ժողովուր-

դին պատերազմը եւ եւրոպական դիւանագիտութիւնը I, «Հայրենիք», Բոստոն, 17.10.1920, էջ 2):

Միայն հոկտեմբերի 27-ին է հրատարակվում հոդված, որտեղ Սևրի պայմանագրի իրագործումը դրվում է լուրջ հարցականի տակ. «*Ի՞նչ է իրական եւ օրինական արժէքը այդ դաշնային փրամադրութիւններու, որ կը վերաբերին Հայաստանի եւ Կիլիկիայի: Ինչպէս ասացինք, անոնք այսօր ոչինչ արժէք ունին բացի ձեւականութիւններէ*» (Գ. Քէպապեան, Հայաստանը եւ Սէվրի դաշինքը I, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920, էջ 1): Հեղինակը նաև զարմանք էր հայտնում Պողոս Նուբարի վարքագծի առնչությամբ, որը Սևրի պայմանագրի ստորագրումից մի քանի օր անց պահանջում էր անդրադառնալ Խարբերդի ու Կիլիկիայի հարցին՝ դա համարելով անիրատեսական (Գ. Քէպապեան, Հայաստանը եւ Սէվրի դաշինքը II, «Հայրենիք», Բոստոն, 28.10.1920, էջ 1):

Մեղավոր են մեծ պետությունները, որոնք շատ լավ հասկանում էին, որ ստորագրող կառավարությունը իրական ուժ չունի, հետևաբար «*իրենց ըրածը ցոյց մը եղած է միայն քնացնելու համար քաղաքկիրթ աշխարհի լաւագոյն փարրերուն խղճմտանքը*» (Սէվրի դաշնագրութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 05.11.1920, էջ 2):

Դաշնակիցները, մասնավորապես Ֆրանսիան, մեղադրվում են Հայաստանի պարտությունների համար (Դաշնակիցներու դիրքը հանդէպ Հայաստանի, «Հայրենիք», Բոստոն, 12.11.1920, էջ 3): Բազմաթիվ էին դաշնակիցներին ուղղված քննադատությունները անգործության համար. «*Թուրք աւազակապետութեան, վերջին յարձակումները նորաստեղծ հայկական պետութեան վրայ, կոտորակուած հայ ժողովուրդին մնացորդներուն վրայ, տեսակ մը մարտահրաւէր են եւրոպական քաղաքակրթութեան, որ այլասերած է, մարտահրաւէր մը՝ Եւրոպայի հանրային խղճմտանքին, որ կը քնանայ դադարէ ի վեր եւ արթննալու յուսատու նշաններ ցոյց չի տար*» (Խմբագրական. Երկու տարուան ընթացքին, «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920, էջ 2): Քանի որ Անգլիան ու Ֆրանսիան զորքեր չէին ուղարկում «*հայկական հանրապետութիւնը կը գտնուի իր կործան-*

ման նախօրեակին» (Պետութեանց դիրքը հանդէպ Հայաստանի, «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920, էջ 3)։ Կարծիք էր հայտնվում, որ Հայաստանի պարտությունը մեծապես վտանգելու է Արևելքում Մեծ Բրիտանիայի շահերը՝ կապված բոլշևիկների ազդեցության մեծացմամբ (Արեւելքի դուռը բացուած, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920, էջ 3)։

Քննադատվում է նաև Հունաստանը, որ Հայաստանի վրա Թուրքիայի հարձակումից հետո ցուցաբերեց «անգործություն» (Խմբագրական. Նոր կացութեան առջեւ II, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920, էջ 2)։ Միաժամանակ պոլսահայ շրջանակները դրական վերաբերմունք ունեին Վենիզելոսի հանդեպ։ Նույնիսկ հանդիպում ենք տեղեկության, որ նրանք ուզում են վերջինիս դարձնել Հայաստանի նախագահ (Պոլսոյ հայերը Հայաստանի նախագահ ընտրել կ՚ուզեն Վէնիզէլօսը, «Հայրենիք», Բոստոն, 28.11.1920, էջ 3)։

Պատերազմից հետո, բնականաբար, մեղադրանքները դաշնակիցների նկատմամբ չեն դադարում. «*...Հայաստանի նեղ եւ դժնդակ օրերուն՝ մեր «բարեկամ»ները օգնութեան չհասան։ Անոնցմէ ոմանք, ընդհակառակը, գաղտնի եւ բացահայտ կերպով, օգնեցին հասարակաց թշնամիին*» (Խմբագրական. Պատմութեան համար, «Հայրենիք», Բոստոն, 08.12.1920, էջ 2)։ Կամ կատարվում էր այսպիսի եզրակացություն. «*Անխուսափելին կատարուեցաւ, բայց, հայութիւնը վերջին անգամ մը ալ, թերեւս աւելորդ անգամ մը, շատ ուժեղ փորձի մը ենթարկեց եւրոպական քաղաքակրթութեան խիղճը, ինչպէս նաեւ դաշնակից դիւանագիտութիւնը...*» (Խմբագրական. Վերանկատումներ III, «Հայրենիք», Բոստոն, 11.12.1920, էջ 2)։

Այնուամենայնիվ, դաշնակիցների հանդեպ քննադատությունները չէին դադարում. «*Դաշնակից դիւանագիտութեան հին դպրոցի ներկայացուցիչներէն ոմանք բաւական ժամանակէ ի վեր՝ մոռացած ամէն խոստում եւ սրբութիւն՝ հետեւեցան թեք շաւղի մը, որ խոտոր կը համեմատէր պատերազմի ատենուան պաշտօնական յայտարարութիւններուն*» (Նեռ, Արեւելքի նոր կնճիռները, «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921, էջ 1)։ Մեծ Բրիտանիան մեղադրվում էր տարա-

ծաշրջանից զորքերը հանելու ու «*ռուսական բանակէն հայոց ձեռք անցած զէնքերը՝ մեր ձեռքէն առնելով Ատրպէճանին յանձնելու քրիստոնէական արարողութիւնը*» անելու մեջ (Տօքթ. Փ. Ա. Ադամեան, Հայաստանի Հանրապետության կողքին կանգնողները, Զ. Մեր ասպետական դաշնակիցները զինադադարի ընթացքին, «Հայրենիք», Բոստոն, 15.02.1921, էջ 1):

Ներքաղաքական պայքար

Խորհրդային Ռուսաստանից ու դաշնակիցներից պակաս մեղադրանքների չէին արժանանում ընդդիմադիրները (կարելի է նշել, որ հայ բոլշևիկները դիտարկվում էին որպես նրանցից առանձին, ուղղակի հակապետական, դավաճանական ուժ, ուստի և նրանց ուղղված քննադատությունը տարանջատել ենք առանձին ենթավերնագրով): Ընդդիմությունը մեղադրվում է բանակի հաջողությունները կառավարությունից առանձնացնելու մեջ. «*Կը գրեն որ հայկ. բանակը յաղթական է, բայց, հայ կառավարութիւնը պարտուած*» (Խմբագրական. Հայկ. կառավարութիւնն ու ռուս պոլշեւիզմը, «Հայրենիք», Բոստոն, 7.10.1920, էջ 2): Հետագայում արդեն հնչում են հակառակ մեղադրանքները՝ պարտությունների ու կառավարության նույնացումը:

Խոսելով ամերիկահայ համայնքում միջկուսակցական պայքարի մասին՝ Ա. Ռշտունին քննադատում էր ՀՀ կառավարությանն ընդդիմադիր ուժերին. «*Հայհոյանքնե՛ր, անլսելի բամբասանքնե՛ր կը շարունակուին տեղալ բեմերէն, մամուլէն, տուներու կամ շուակներու անկիւններէ*» («Ապրի Գարապէքիրը», «Հայրենիք», Բոստոն, 01.12.1920, էջ 1): Եվ հակառակը հոկտեմբերի 27-ին «Հայրենիքը» մեծ ուրախությամբ վերահրատարակում է ռամկավար Յ. Ասպետի հոդվածը (Կ. Պոլսի «Վերջին լուրից»), որտեղ դատապարտվում էր աթոռակռիվը. «*Պէտք է զգացնել սխալը, քննադատել կառավարութիւնը ազնուամտօրէն, բայց պէտք չէ զայն վարկաբեկել, անուանարկել պետութեան հետ, ձեռք ձգելու համար աթոռներ, զորս չենք*

կրնար աւելի օգտակարապէս գործածել ու պահել» (Յ. Ասպետ, Աթոռամարտ, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920, էջ 2):

Երբ արդեն, ըստ էության, ակնհայտ էր պատերազմի ելքը՝ Ա. Վանարեանը դնում է այն հարցը, թե եթե Հայաստանը պարտվելու էր, արդյոք ավելի ճիշտ չէր ի սկզբանե ընդունել բոլշևիկների պայմանները: Եվ ապա պատասխանում, որ ո՛չ, դեռ հայտնի չէ, թե բոլշևիկների իշխանությունը որքան կշարունակվի: Նա որպես փաստարկ է բերում ԱՄՆ-ից ստացված սննդօգնությունը, ասում դրա փոխարեն Ադրբեջանի հետ միաժամանակ խորհրդայնացված լինելու պարագայում հայ զինվորները ուղարկվելու էին Լեհաստանի և ռուս բոլշևիկների այլ թշնամիների դեմ կռվելու (Արտաշէս Վանարեան, Ինչո՞ւ դիմադրեց եւ ինչո՞ւ նահանջեց հայ բանակը, «Հայրենիք», Բոստոն, 19.11.1920, էջ 1, Արտաշէս Վանարեան, Ինչո՞ւ դիմադրեց եւ ինչո՞ւ նահանջեց հայ բանակը Հայաստանի կառավարութեան դիրքը պոլշեւիզմի հանդէպ II, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920, էջ 1, Արտաշէս Վանարեան, Ինչո՞ւ դիմադրեց եւ ինչո՞ւ նահանջեց հայ բանակը Հայաստան ինչո՞ւ չընդունեց պոլշեւիզմը III, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920, էջ 1):

«Հայրենիքը» պախարակում էր ՀՀ կառավարության ու բանակի քննադատներին՝ ասելով, որ նրանք արեցին կարելին. «*Մեր կառավարութիւնն ու բանակը ըրին, ինչ որ մարդկօրէն հնարաւոր էր, պաշտպանելու համար հայրենիքին սահմանները, ամէն ճշմարիտ հայ պէտք է ընդունի որ այս աշխարհի մէջ ոչ ոք կրնայ ընել այն, ինչ որ կարելի չէ մարդկօրէն*» (Խմբագրական. Աղմկարարները գործի վրայ, «Հայրենիք», Բոստոն, 15.12.1920, էջ 2):

Պատերազմի ավարտից հետո միջկուսակցական մեղադրանքները միայն թեժանում են, «Հայրենիքը» ամեն ինչ անում է ՀՅԴ-ին արդարացնելու և պարտության մեղքը չընդունելու համար: Այսպես, օրինակ, կարդում ենք. «*Հայաստանի մէջ տեղի ունեցած վերջին փոփոխութիւններուն առիթով՝ հակապետական եւ հակայեղափոխական տարրերը կուսակցական եւ անձնական սնափառութեան շարժառիթներով՝ սկսած են մամուլով եւ բեմով աղմուկ յարուցանել*

եւ հայ կենաքի տխուր դէպքերը իբրեւ զէնք գործածել պետական կուսակցութեան դէմ, արտաքին աշխարհի բոլոր վնասակար ոյժերու գործած չարիքները վերագրելով անոնց, որոնք հայկ. անկախութեան ստեղծումին եւ պահպանման համար ամէն զոհողութիւն եւ դժուարութիւն յանձն առին: ...Քանի որ դժբախտութիւններ եկան հայրենիքի գլխին, հետեւաբար ղեկավար կուսակցութիւնը պէտք է քաշուի գործի՝ տեղի տալով մինչեւ հիմա ո՛չ միայն ընդդմիադրի, այլ ազգադաւորէն խառնակիչ եւ քանդողի դեր կատարող տարրերուն» (Խմբագրական. Կանգնեցէք ժողովուրդին կողքին, «Հայրենիք», Բոստոն, 18.12.1920, էջ 2):

Որպես ՀՅԴ օգտին փաստարկ է բերվում այն, որ այդ կուսակցության դեմ են Հայաստանի անկախությանը դեմ եղող տարրերը (Խմբագրական. Եղերամայրերը, «Հայրենիք», Բոստոն, 12.1.1921, էջ 2): ՀՅԴ-ին քննադատելու համար մեղադրվում էր Հայ ժողովրդական կուսակցությունը. «*Մեզանում մի քանի շրջաններ վայնասուն են բարձրացնում, թէ «այդ բոլորը պարտական ենք կառավարական կուսակցութեան*»: *«Պոյքոթճի» կուսակցութիւնն է (Խորհրդարանի ընտրութիւնների պոյքոթ, դահլիճին մասնակցելու պոյքոթ, Հայաստան մտնելու պոյքոթ, հայ ժողովրդի երեսը տեսնելու պոյքոթ, Հ.Հ. փոխառութեան պոյքոթ) գլխաւորապէս աղմկողը, առանց ոչինչ անելու- առանց աշխատելու Հայաստանի համար գոնէ նիւթական զոհողութեամբ, առանց ըմբռնելու միջազգային ընդհանուր կացութիւնը, առանց հասկանալ ուզելու մեր ազգի ու հայրենիքի այսօրուայ բազմակարօտ պայմաններն ու աննախանձելի տուեալները*» (GLOBE, Ղարսից յետոյ, «Հայրենիք», Բոստոն, 14.01.1921, էջ 1):

Ռամկավարները մեղադրվում էին ՀՅԴ-ին քննադատելու համար. «...*Մինչեւ վերջ Դաշնակցական կառավարութիւնը քննադատեցին եւ ներկայ աղէտին գլխաւոր պատասխանատուն բռնեցին զայն, առանց մէկ րոպէ յիշելու, որ իրենց կուսակցութիւնը ոչինչով օգնած է Հայաստանի կառավարութեան*» (Արազ, Փարիզեան նամականի (Սեփական թղթակցութիւն) Հակադաշնակցական արշա-

ւը.- Պօղոս Նուպար քօմիւնիսթ (?), «Հայրենիք», Բոստոն, 20.01.1921, էջ 1):

1921 թ. հունվարի 25-ի խմբագրականում նորից կարդում ենք, որ ՀՀ կառավարությունը տեղի ունեցածի մեջ մեղավոր չէ. «*...Հայ ժողովուրդին պետական ղեկավարներն ըրին, ինչ որ մարդկօրէն հնարաւոր էր փրկելու եւ պաշտպանելու մեր անձեռնմխելի իրաւունքները: Կռիւն անհաւասար էր եւ մեր ապրած կեանքի պայմանները՝ աննպաստ: Ճիշդ է որ ձախողեցանք, բայց, ճակատաբաց կերպով կրնանք յայտարարել որ ձախողեցանք փղամարդու պէս, յաջողութեան բանալին պահելով մեր գրպանին մէջ*» (Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները V, «Հայրենիք», Բոստոն, 25.01.1921, էջ 2):

ՀՀ կառավարության քննադատներին ասվում է, որ ՀՀ դաշնակցական կառավարությունը իշխանության էր եկել ժողովրդի քվեով, չնայած դրան կոչվում էր ուզուրպատոր, քանի որ այլ ուժերը բավարար ձայներ չէին հավաքել: Իսկ այժմ իրական ուզուրպատորները, ովքեր եկել են իշխանության թուրքերի, թաթարների և ռուսների ռազմական միջամտությամբ նույն մարդկանց կողմից չեն քննադատվում (Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները VI, «Հայրենիք», Բոստոն, 26.01.1921, էջ 2):

ՀՅԴ քննադատությունը նույնացվում էր պետության հիմքերը քանդելուն. «*Մեր հակառակորդները կաշխատին ու ամէն առիթ օգտագործել պայքարելու համար Դաշնակցութեան դէմ, հոգ չէ, թէ այդ կերպով պետութեան խարիսխները կը կործանուին*» (Նէտ, Հայաստանի վերջին անցքերը եւ Պօլսոյ Ազգ. իշխանութիւնները, «Հայրենիք», Բոստոն, 13.02.1921, էջ 1): Եվ նորից քննադատվում են ՀՅԴ ընդդիմադիրները. «*Վերջին քանի մը ամիսներու ընթացքին՝ այնքան շատ հայհոյանք, այնքան շատ լիրբ խօսքեր եւ յայտարարութիւններ լսեցինք հայ հակապետական, հակայեղափոխական եւ յեղադիմական բանակատեղիէն, որ պարտաւորուած ենք մտածելու, թէ գործ ունինք անհարազատ հայերու հետ*» (Խմբագրական. Ախտաւոր երեւոյթներ, «Հայրենիք», Բոստոն, 13.02.1921, էջ 2):

Քննադատվում էր պարտության ամբողջ պատասխանատվությունը ՀՅԴ-ին վերագրելը. «*Այսօր իսկ կան այնպիսիներ որ երէկ հայրենիքի անկախութեան համար արիւն կ՚ուզէին թափել, մինչ այսօրուան մեզ պարտադրուած գոյավիճակէն քաջալերուած կ՚ուզեն մեր անկախութիւնը վերջացած նկատել, եւ ամբողջ պատասխանատուութիւնը նետել դեկավար կուսակցութեան անկարողութեան վրայ*» (Պետրոս Քէհեսեան, Նոր փոփոխութիւններու նախօրեակին, «Հայրենիք», Բոստոն, 26.02.1921, էջ 4):

Կեղծ լուրեր, ասեկոսեներ

Կեղծ լուրերի ու ասեկոսեների շարքում կային ինչպես խիստ «լավատեսական», այնպես էլ «հոռետեսական» իրականությանը չհամապատասխանող նյութեր:

Դեռևս մինչև պատերազմը կային կեղծ լուրեր հայկական կողմի ռազմական հաջողությունների մասին: Օրինակ տարածվում է տեղեկատվություն, թե հայերը գրավել են Նախիջևան քաղաքը, որը իրականությանը չէր համապատասխանում: Մասնավորապես սեպտեմբերի 5-ին կարդում ենք օգոստոսի 2-ով թվագրվող տեղեկատվություն. «*Հայ զօրքը գրաւեց Նախիջեւանը, առանց դիմադրութեան: Քաղաքին մէջ հանդարտութիւն կը տիրէ: Շուտով կը բացուի Շահթախթ-Ջուլֆա գիծը եւ մաքսային հաղորդակցութիւնը*» (Նախիջեւանի գրաւումը, «Հայրենիք», Բոստոն, 05.09.1920, էջ 2):

Արդեն պատերազմի ժամանակ՝ հոկտեմբերի 14-ին, հրատարակվեց երկու օր առաջ Լոնդոնից ստացված տեղեկատվություն, թե հունական զորքերը ցամաք են իջեցվել Տրապիզոնում հայերին օգնելու համար: Ընդ որում՝ նշվում էր, որ սա «զորավոր միջոց» կլինի թուրքերի կողմից Կարսի գրավումը կանխելու գործում (Յունաստան զինուորական գործողութեանց սկսած երկու յունական զօրաբաժին Տրապիզոն ցամաք հանուած Վրաստան Հայաստանի հետ դաշնակցելու կողմնակից, «Հայրենիք», Բոստոն, 14.10.1920, էջ 3):

Հոկտեմբերի 26-ին «Chicago Daily News»-ից արտատպված հոդվածում ասվում է, որ բոլշևիկները գրավել են Նոր Բայազետը ու

մոտ է Հայաստանի անկումը. «*Կառավարութեան անկումը կ՚ակնկալուի ամէն օր եւ նոր րէժիմը պոլշեւիկեան պիտի ըլլայ, անտարակոյս*» (Ռուս պոլշեւիկները կը գրաւեն Նովո-Պայազիտը (Մասնաւոր հեռագիր «Շիքակօ Տէյլի Նիւզ»ի), «Հայրենիք», Բոստոն, 26.10.1920, էջ 3):

Նոյեմբերի 10-ին հրատարակվում է «Associated Press» լրատվական գործակալության նոյեմբերի 8-ի Կոպենհագենից ստացված տեղեկությունը. «*Թիֆլիզէն ստացուած տեղեկութիւններու համաձայն՝ Հայաստան կ՚անցնի պոլշեւիկեան քօնթրոլի տակ: Թուրքերն ու թաթարները յաջողած են միանալ Ալէքսանդրափօլի մէջ, եւ հաւանաբար Քեազիմ Գարապէքիրի բանակը գրաւած է Երեւան քաղաքը*» (Պոլշեւիկ զինուորներ Խրիմէն Կովկաս կ՚անցնին, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920, էջ 3):

Հոկտեմբերի 6-ի Թիֆլիսից թղթակցությունում, որը հրատարակվեց նոյեմբերի 13-ին կարդում ենք թուրքերի կողմից կռվող ու գերեվարված հայ բոլշևիկների մասին. «*Միայն զօրավար Սեպուհի ճակատում թիւրքերը Հոկտ. 2ին տուել են 500-600 գերի (որոնց միջեւ 10 հայ պոլշեւիկներ), իսկ նրանցից սպանուածների ու վիրաւորների թիւն անշուշտ շատ աւելի է*» (GLOBE, Թուրք պոլշեւիկեան խուժումը Հայաստան Հայ պոլշեւիկներ թուրք բանակին մէջ անօրինակ խանդավառութիւն Թիֆլիսի մէջ (Սեփական թղթակցութիւն), «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920, էջ 1): Տասը հայ գերված բոլշևիկ հայերի մասին տեղեկատվության կրկին հանդիպում ենք նոյեմբերի 17-ին (Խմբագրական. Ներկայ օրերու մեհրուժանները, «Հայրենիք», Բոստոն, 17.11.1920, էջ 2): Նոյեմբերի 25-ին այս տասը հոգու մասին կարդում ենք. «*Հայ դիւցազն Սեպուհի կորիւններուն ձեռքը ինկած գերիներուն մէջ՝ տասը հատ «հայ» պոլշեւիկներ գտնուած են, որոնք կը ներկայացնեն մեր մէջ գտնուող հայերուն հրէշներու մոլոր ոհմակը: «Հայ» մարդիկ, անասնացած հոգիներ, կ՚օժանդակեն թշնամւոյն՝ ջախջախելու համար ցեղին դարաւոր յոյսերը*» (Ամուր պահենք մեր սրտերը, «Հայրենիք», Բոստոն, 25.11.1920, էջ 1):

Նոյեմբերի 18-ին կարդում ենք երկու օր առաջ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցից հաղորդված տեղեկատվություն, որ ըստ իրեն հասած հեռագրերի՝ «*հայկական բանակը ռազմամթերքի չգոյութեան պատճառով ստիպուած է պարպել Երեւանը, եւ Արտահանէն դէպի Արտանուշ երկարող ճամբան խռնուած է կիներով ու մանուկներով, որոնք Ճորոխ գետին երկայնքէն փախին դէպի Պաթում*» (Հազարաւոր հայ փախստականներ կ՚ապաստանին Վրաստան Երեւան պարպուած?, «Հայրենիք», Բոստոն, 18.11.1920, էջ 3):

Նոյեմբերի 20-ին հրատարակվեց տեղեկատվություն, թե իբր թուրքերը պահանջել են Հայաստանից որ «*հաստատէ խորհրդային կառավարութիւն մը Թուրքիոյ գերիշխանութեան ներքեւ*» (Թուրքերը վերջնագիր կուտան Հայաստանի Հայաստանէն կը պահանջուի ճանչնալ Թուրքիոյ գերիշխանութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920, էջ 5): Եթե այդ տեղեկատվությունը ստացվել էր նոյեմբերի 16-ին Կ. Պոլսից, ապա երկու օր անց «Associated Press»-ը հաղորդում է, որ Հայաստանը հրաժարվել է կատարել թուրքերի այդ պահանջը, ինչի հետևանքով ռազմագործողությունները վերսկսել են (Հայաստան կը մերժէ թրքական վերջնագիրը, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920, էջ 5):

Պատերազմի ժամանակ հայ մամուլում տեղ գտած ամենաուշագրավ կեղծ լուրը թերևս վերաբերում է հայերի կողմից Կարսի վերագրավմանը: Նոյեմբերի 24-ին հրատարակվում է նոյեմբերի 20-ով թվագրվող Կ. Պոլսից ստացված տեղեկատվություն. «*Հայկական աղբիւրներէ մը առնուած լուրի մը համաձայն՝ հայերը հակայարձակումով մը վերագրաւած են Ալէքսանտրոպոլը եւ թուրք հրամանատարը հարկադրած նահանջելու դէպի Կարս*» (Ալէքսանտրոպոլ վերագրաւուած, «Հայրենիք», Բոստոն, 24.11.1920, էջ 3):

Նոյեմբերի 27-ին հրատարակվում է նախօրդ օրով թվագրվող Փարիզից ստացված տեղեկատվությունը Կարսի վերագրավման մասին. «*Լրագրական լուրերու համաձայն՝ հայկական բանակը վերագրաւած է Կարսը: Թուրքերը կը նահանջեն դէպի հին սահմանագիծը*» (Վերջին լուր յաղթանակներ Հայաստանի մէջ Ալէքսանդրա-

պօլէն վերջ Կարսն ալ վերագրաւուած՝ մեր բանակներուն կողմէ, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920, էջ 4): Նոյն թերթի հաջորդ էջում կա տեղեկատվությունը, որ, ըստ թուրքական աղբյուրների, Քեմալի զորքերը մտել են Երևան: Սակայն խմբագրությունը ծանոթագրությամբ նշում է. «*Դիտել կուտանք մեր ընթերցողներուն, որ վերի լուրը կարելի չէ ընդունիլ առանց վերապահութեան ոչ միայն անոր համար որ առնուած է թրքական անանուն աղբիւրէ մը, այլեւ որովհետեւ չի հաշտուիր ասկէ առաջ հասած լուրերուն հետ*» (Թուրքերը Երեւան կը մտնեն?, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920, էջ 5):

Հաջորդ օրը Կարսի վերագրավման լուրերը վերահաստատվում են. «*Հայկական բանակը նոյեմբեր 16-ին վերագրաւեց Կարսը, հայկական ոյժերը կը քալեն դէպի սահմանագլուխ. թուրքերը զինադադար խնդրած են նոյեմբեր 18-ին*» (Թուրքերը զինադադար կը խնդրեն Կարս վերագրաւուած հայկ. ոյժերուն կողմէ (սեփական հեռագիր «Հայրենիք»ի), «Հայրենիք», Բոստոն, 28.11.1920, էջ 1): Ի շարունակություն այս տրամաբանության՝ դեկտեմբերի 1-ին կարդում ենք, որ հայկական բանակին է անցել նախաձեռնությունն ու այն հետապնդում է թշնամուն (Թշնամին իր կրունկներուն վրայ, «Հայրենիք», Բոստոն, 01.12.1920, էջ 2):

Դեկտեմբերի 1-ին հրատարակվում է նոյեմբերի 29-ով թվագրվող, Հռոմից ստացված տեղեկություն, ըստ որի՝ հայ-թուրքական պայմանագիրը կնքվելու էր Բրեստ Լիտովսկի սահմաններով: Խմբագրությունը, սակայն հրաժարվում է դրան հավատալ. «*Վերի լուրը, որ իբր թէ պաշտօնական հանգամանք ալ ունի. հաւանական չէ որ իրական ըլլայ, որովհետեւ Կ. Պոլիսէն ամերիկեան թերթերու եւ «Հայրենիքի» քաշուած հեռագիրները բոլորովին տարբեր կը ներկայացնէին կացութիւնը: Ըստ մեր սեփական հեռագրին՝ նոյեմբեր 18-ին զինադադարի խնդրած են թուրքերը եւ չենք իսկ գիտեր թէ զինադադար կնքուա՞ծ է եւ եթէ այո՛, ի՞նչ պայմաններով: Բայց որովհետեւ առաջարկը եկած է թշնամիէն, իրաւունք ունինք հաւատալու թէ կնքուած պայմանները չեն կրնար համապատասխանել Պրէսթ-Լիթովսքի դաշնագրին*» (Հաշտութիւն Պրէսթ-Լի-

թովսքի դաշնագրին սահմաններով?, «Հայրենիք», Բոստոն, 01.12.1920, էջ 3):

Դեկտեմբերի 2-ին արդեն կարդում ենք, այն մասին, որ ոչ միայն հաստատվում են Կարսի վերագրավման լուրերը, այլև 7 հազար թուրքեր մահացել են ցրտից: Այդ մասին նոյեմբերի 30-ին հաղորդում էին Կ. Պոլսից. «*Քաղաքիս հայերէն լրագիրները կը հաղորդեն որ հայկական բանակը թուրքերը պարտութեան մատնելէ ետքը վերագրաւած է Կարսը: Թուրք բանակը փոխադրական միջոցներու չգոյութեան եւ ձմեռնային ցուրտին պատճառաւ կրած է ծանր կորուստներ: Ըստ հայերէն թերթի մը հաղորդագրութեան՝ 7,000 թուրքեր սառած են ցուրտէն*» (Կարսի վերագրաւումը կը հաստատուի քէմալական բանակը ծանր կորուստներու մատնուած 7,000 թուրքեր մեռած ցուրտէն, «Հայրենիք», Բոստոն, 02.12.1920, էջ 3):

Դեկտեմբերի 3-ին կասկած է հայտնվում Կարսի ազատագրման մասին (Քօալիսիօն կառավարութիւն Վրացեանի նախագահութեամբ Կարսի վերագրաւումը չի հաստատուիր (Սեփական հեռագիր), «Հայրենիք», Բոստոն, 03.12.1920, էջ 2): Հորդ օրվա խմբագրականում կարդում ենք. «*Հակառակ վերջին շաբաթուան ընթացքին՝ «Հայրենիքի» եւ ամերիկեան թերթերու ստացած յուսադրիչ լուրերու՝ կը թուի որ թուրք ազգայնականները տակաւին տէրն են կացութեան, Կովկասի մէջ*» (Խմբագրական. Թուրքերը Արեւելքի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 04.12.1920, էջ 2):

Նոյեմբերի 30-ին հրատարակվում է նոյեմբերի 27-ով թվագրվող տեղեկատվություն, ըստ որի՝ Մերձավոր Արևելքի Նպաստամատույցի ստացած հեռագրերի համաձայն Հայաստանում հաստատվել են խորհրդային կարգեր, ռուսները հրամայել են թուրքերին կասեցնել առաջխաղացումը Հայաստանի տարածքում (Կարմիր ռէժիմը Հայաստանի մէջ Ամերիկայի դիրքը անփոփոխ կը մնայ հանդէպ Հայաստանի (Մասնաւոր հեռագիր «Նիւ Եօրք Թայմզի»), «Հայրենիք», Բոստոն, 30.11.1920, էջ 3):

Նոյեմբերի 28-ին Կ. Պոլիս հասած Գ. Չալխուշյանը տեղի «Ճակատամարտին» ասում է, որ երբ ինքը նոյեմբերի 14-ին Դիլիջանում

էր՝ տեղի զինվորականները կարծում էին, թե հայերը վերագրավել են Ալեքսանդրապոլը (Պ. Գ. Չալխուշեանի յայտարարութիւնները, «Հայրենիք», Բոստոն, 23.12.1920, էջ 2):

Հունվարի 14-ին հանդիպում ենք տեղեկության, որ Ալեքսանդրապոլում հաշտության բանակցությունների ժամանակ Ա. Խատիսյանը հայ բոլշևիկների կողմից ենթարկվել է մահափորձի (Հայ պոլշեւիկները եւ Խատիսեան, «Հայրենիք», Բոստոն, 14.01.1921, էջ 1):

Հայաստանի խորհրդայնացումը

Ա. Վանարեանը Հայաստանի խորհրդայնացման բռնի կամ կամավոր լինելու վերաբերյալ անցկացնում է հետևյալ համեմատականը. «*Տեղի ունեցածը բռնի դաւանափոխութիւն մըն է, յար եւ նման անոր՝ որ պատահեցաւ 96-ի կոտորածներէն յետոյ՝ Հայաստանի սովալլուկ ժողովուրդին, երբ կաթոլիկ ճիզուիթներն ու բողոքական պատուելիները մեծ գումարներ գրպանած՝ Հայաստան թափուեցան, հոգիներ որսալու, ի փոխարէն հացի եւ հագուստի...*» (Արտաշէս Վանարեան, Սովիէթական Հայաստանը եւ անոր ուշ մնացած ջատագովները I, «Հայրենիք», Բոստոն, 24.12.1920, էջ 1):

Նույն Ա. Վանարեանը դեկտեմբերի 29-ին գրում էր, որ Հայաստանը փաստացի դարձել է Ռուսաստանի մաս. «*Սովիէթ Հայաստան մը եթէ պաշտոնապէս չկցուի իսկ՝ ինքնին արդէն անբաժան մասը դարձած կ՚ըլլայ Մեծն Ռուսաստանին*» (Արտաշէս Վանարեան, Սովիէթական Հայաստանը եւ անոր ուշ մնացած ջատագովները II, «Հայրենիք», Բոստոն, 29.12.1920, էջ 1): «Հայրենիքի» խմբագրականն ասում էր, որ Հայաստանում խորհրդային իշխանությունը պահպանվում է միայն «թուրքին, թաթարին եւ ռուսին զինուորական միջամտութեան շնորհիւ» (Խմբագրական. Հայ պոլշեւիկները հայ հակապետականները, «Հայրենիք», Բոստոն, 13.01.1921, էջ 2):

Խորհրդային Հայաստանի իշխանությունների հասցեին հնչում էին ծանր մեղադրանքներ, մասնավորապես ասվում էր. «*այսօրուան ղեկավարները յափշտակիչներ են, դաւադիրներ, որոնք մեր*

դարաւոր թշնամիներուն միացան կործանելու համար իրական եւ օրինաւոր կառավարութիւնը» (Խմբագրական. Հայկական հարցի ծանրութեան կեդրոնը, «Հայրենիք», Բոստոն, 08.02.1921, էջ 2):

Փետրվարի 9-ին խոսվում էր Հայաստանում ռազմական կոմունիզմի մասին, ասվում, որ երկիրը «*ողողված է կազակներով, որոնք իրենց պահում են բարբարոսների նման*» (Սովիէթական Հայաստանի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 09.02.1921, էջ 1): Այսպիսի իրավիճակ է ներկայացվում Հայաստանի խորհրդայնացումից հետո. «*Երեւանէն Զուիցերիա եկած հայ զօրավարի մը յայտարարութեան համաձայն, պոլշեւիկեան ռէժիմի հաստատումէն ի վեր հազարաւորներ սովամահ կ'ըլլան Հայաստանի մէջ: «Հայկական հանրապետութիւնը խրտուիլակ մըն է միայն, կը շարունակէ նոյն զօրավարը, Հայաստան կցուած է Ռուսիոյ եւ անբաժան մասն է նոր պոլշեւիկեան կայսրութեան: Հայաստան կորուսած է անկախութեան ամենավերջին մասնիկը: ...Պոլշեւիկները Հայաստան մտնելնուն, մեծ քանակութեամբ սննդեղէն գրաւեցին եւ ղրկեցին Օտէսա*» (Հայաստան կցուած է Ռուսիոյ, կ՚ըսէ հայ զօրավար մը Մասնաւոր հեռագիր Պոսթըն Իվնինկ Թրէնսքրիփթի, «Հայրենիք», Բոստոն, 25.02.1921, էջ 3):

Հանդիպում ենք հետևյալ ձևակերպման, որ Հայաստանը ստիպված էր ընտրություն կատարել Թուրքիայի ու Ռուսաստանի միջև ու վերջինիս նախընտրելը հանգեցրեց խորհրդայնացմանը (Հայաստանը ինչպէս խորհրդային դարձաւ, «Հայրենիք», Բոստոն, 19.02.1921, էջ 1):

Հայաստանի խորհրդայնացումից երկու շաբաթ անց չէին իրականացել «*խորհրդային Ռուսաստանի եւ հայ կոմունիստներու հաւաստիացումներին եւ հայ ժողովուրդի մէկ մասին ակնկալութիւններին*», որոնք վերաբերում էին թուրքերի կողմից 1914 թ. սահմանը հետ քաշվելուն, նավթի ու այլ մթերքների երկիր մուտք գործելուն (Կացութիւնը Հայաստանում, «Հայրենիք», Բոստոն, 24.02.1921, էջ 1):

Փետրվարյան ապստամբության մասին տեղեկության հանդիպում ենք փետրվարի 24-ին: Տեղեկությունը հաղորդվել է փետրվա-

րի 21-ին Կ. Պոլսից. «*Հակապօլշեւիկ կառավարութիւն մը հաստատուած է Երեւանի մէջ*» (Վրացական յաղթանակներ.- հակապօլշեւիկ կառավարութիւն՝ Երեւանի մէջ.- հայերը ըմբոստացած, «Հայրենիք», Բոստոն, 24.02.1921, էջ 3):

Պարտության պատճառները

Դեռևս պատերազմը չավարտված՝ նոյեմբերի 16-ին «Հայրենիքի» խմբագրականը հետևյալ կերպ էր մեկնաբանում պարտությունը. «*Ներկայ պատերազմին մէջ ինչ որ կորսնցուցինք, եւ տակաւին ինչ որ կրնանք կորսնցնել վերագրելու ենք այն իրողութեան, որ ռուս պօլշեւիկները զօրքերով եւ ամէն կարելի միջոցներով անհնար դարձուցին մեր բանակին կեդրոնացումը մէկ ճակատի վրայ- թրքական ճակատին վրայ: Հայ ժողովուրդին ազգային դատին ոչ ոք աւելի մեծ հարուած տուած է մինչեւ հիմա, որքան ռուս պօլշեւիզմը, որ թուրքերուն յաղթութեան կը բաղձայ, և հայ ժողովուրդին բնաջնջումը կ՚ուզէ տեսնել*» (Խմբագրական. Հայաստանի կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 16.11.1920, էջ 2):

1921 թ. հունվարի վերջում ևս գնահատականը մոտ է սրան. «*...Հայաստանի վերջին ձախողանքին գլխաւոր պատասխանատուն ռուսական պօլշեւիզմն էր, որովհետեւ թուրքերն ու թաթարները իրենց այժմեան զինուորական միջոցներով, առանց Ռուսաստանի ծածկուած գործակցութեան՝ չպիտի համարձակէին հայ ժողովուրդին անկախ հայրենիքին վրայ յարձակիլ*» (Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները III, «Հայրենիք», Բոստոն, 22.01.1921, էջ 2):

Դեկտեմբերի 19-ին կարդում ենք կարծիք, որ, ըստ էության, պարտությունից խուսափել անհնար էր. «*Մեր ժողովուրդը բարձր հայրենասիրութեամբ մը կանգնեցաւ թշնամիներուն դէմ, պաշտպանելու իր անկախութիւնը: Բայց, կարելի չէր մարդկօրէն ընել այն, ինչ որ թերեւս չկրնար ընել մեծ պետութիւն մը*» (Անկախութեան ոգին, «Հայրենիք», Բոստոն, 19.12.1920, էջ 2):

Ե. Սահակեանը դեկտեմբերի 29-ին գրում էր, որ պարտության հիմնական պատճառներից էր այն, որ Հայաստանը իր 35-հազարանոց բանակից Կարսի ուղղությամբ ուներ միայն 5 հազար զինվոր, քանի որ մյուս ուժերը ստիպված էր պահել պաշտպանվելու Խորհրդային Ռուսաստանից: Նա նաև նշում է, որ ՀՀ կառավարությունը չէր կարող կանխատեսել ռուս-թուրքական համագործակցությունը (Եդուարդ Սահակեան, Նոր կացութիւնը I ինչպէս սկսաւ, «Հայրենիք», Բոստոն, 29.12.1920, էջ 1-2), որը եղավ Հայաստանի պարտության հիմնական պատճառը (Եդուարդ Սահակեան, Նոր կացութիւնը III ինչպէս սկսաւ, «Հայրենիք», Բոստոն, 1.1.1921, էջ 1-2):

«Հայրենիքի» խմբագրականը գրում էր, որ քաղաքական սխալները ոչ թե կոնկրետ անձանց, այլ ազգային նկարագրին. «*Սխալ է լաւ քաղաքագէտներու եւ դիւանագէտներու պակասին վերագրել ամբողջութեամբ մեր ձախողութիւններն ու դժբախտութիւնները: Անոնց գլխաւոր պատճառը մեր ազգային անտեղիտալի նկարագիրն է, որ այնքան վճռականութեամբ եւ անտեղիտալի կերպով կը գործէ եւ գործած է մեր պատմական կեանքի մէջ: Մեր ազգային ցանկութիւններէն, պահանջներէն եւ իրաւունքներէն բնաւ չենք ուզեր զիջիլ վերահաս վտանգներն ու ձախորդութիւնները արգիլելու համար, կը մնանք անդրդուելի, վճռական, կը գործենք անդիմադրելի ոյժերու եւ հոսանքներու դէմ եթէ ո՛չ ֆիզիքական, գոնէ բարոյական յաղթանակի հաւատքը մեր կուրծքին տակ*» (Խմբագրական. «Պոլշեւիկ Հայաստան», «Հայրենիք», Բոստոն, 7.1.1921, էջ 2):

Չնայած հունվարի 21-ի խմբագրականում կարդում ենք այն մասին, որ Հայաստանի պարտության մասին իրական գնահատական կտան հետագա պատմաբանները, սակայն իրականում նախանշվում է, թե ինչպիսին պետք է լինի այն. «*Հայ ժողովուրդի վերջին ձախողանքին մասին շատ բան գրուեցաւ եւ կրնայ տակաւին շատ բան գրուիլ. բայց, գլխաւոր խօսքը պիտի ըսեն պատմիչներն ու այն սերունդը, որ պիտի գայ շուտով արժանաւորապէս գնահատելու հայ ժողովուրդի անկախութեան եւ պետական կեանքի հիմերը կերտող ու զանոնք պահպանող ղեկավար անձնաւորութիւննե-*

ռուն եւ պետական կուսակցութեան վսեմ գործերը» (Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները II, «Հայրենիք», Բոստոն, 21.01.1921, էջ 2):

Մանչեսթերի «The Manchester Guardian»-ը, դեկտեմբերի 30-ին վերլուծելով ՀՀ պարտության պատճառները, նշում էր երեքը՝ 1. կանոնավոր զորքեր կազմավորել չհասցնելը և անկանոն խմբերի վրա հույսը դնելը, 2. անգլիացիների կողմից Կարսի զենքի հանձնումը Դենիկինին ու Ադրբեջանին, 3. երկրի տնտեսական ծանր կացության հետևանքով գյուղատնտեսական աշխատանքներին միաժամանակ զորակոչ անելու անհնարինությունը (Նոր դրութիւնը Հայաստանում. Զինուորական անկման պատճառները, «Հայրենիք», Բոստոն, 29.01.1921, էջ 1):

Զորավար Սեպուհը, խոսելով այն մասին, թե ով է մեղավոր պատերազմում պարտության համար, նշում էր. «*Յանցաւոր կը գտնեն կառավարութիւնը, զօրավարները, զինուորը եւն.: Ես ժամանակ չունիմ մանրամասնօրէն պարզելու թէ ո՞վ է մեղաւորը: Միայն սա կ՚ըսեմ որ պատասխանատուութիւնը պէտք է բաժնել ամբողջ ազգին վրայ... Չմոռնանք որ, եօթը տարիէ ի վեր կռիւ կը մղենք եւ ուժասպառ էինք: Ի հարկէ յանցաւորներ կան, բայց ապով չի լուծուիր ամբողջ խնդիրը*» (Տեսակցութիւն մը Սեպուհի հետ Զօր. Սեպուհ «Ճակատամարտ»ի Թիֆլիսի թղթակցին հետեւեալ յայտարարութիւններն ըրած է, «Հայրենիք», Բոստոն, 08.02.1921, էջ 2):

Հետևանքները

Չի կարելի ասել, որ պատերազմի ավարտը ունեցավ միայն սթափեցնող հետևանքներ: Օրինակ՝ հունվարի 13-ին կարդում ենք Ե. Սահակյանի վերլուծությունը, որը կանխատեսում է ռուս-բրիտանական համագործակցություն, որի արդյունքում կիրագործվի Սևրի պայմանագիրը. «*Կը հետեւցուի ուրեմն, որ անգլո-ռուսական համաձայնութեամբ Սէվրի դաշնագրութիւնն ալ կը դառնայ իրագործելի, եւ հայկական չորս նահանգներն ալ իրականապէս եւ իրաւապէս կը կցուին Հայաստանի Հանրապետութեան*» (Եդուարդ Սահակեան, Նոր կացութիւնը VII Լուսաւոր ապագան, «Հայրենիք», Բոստոն, 13.01.1921, էջ 1):

Ընդհանուր առմամբ, պարտությունը հանգեցրեց հուսահատության, որը տարածվում էր նաև սփյուռքահայ համայնքներում: Դեկտեմբերին «Հայրենիքում» կարդում ենք, որ պարտություն մասին լուրերը «ծայր աստիճանի յուսահատ կացութեան» էին մատնել ԱՄՆ ու Կանադայի հայությանը (Հեռու մեզմէ յուսահատութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 16.12.1920, էջ 1):

Եզրակացություններ

Բազմազան էին պատերազմական գործողությունների մասին լուրերի աղբյուրները: Դրանք էին սեփական թղթակցությունները, Թիֆլիսում ՀՀ ներկայացուցչությունը, Կ. Պոլսից, Թիֆլիսից, Լոնդոնից, ինչպես հայկական, այնպես էլ օտար շրջանակներից ստացված լուրերը:

Պատերազմի նախօրյակին ու սկզբնական շրջանում խիստ գերագնահատվում էին հայկական բանակի ու թերագնահատվում թուրքական զորքերի հնարավորությունները: Կային չհիմնավորված լավատեսական սպասելիքներ հայ-թուրքական խնդրի կարգավորման վերաբերյալ: Սևրի պայմանագրով Հայաստանին տրվելիք տարածքները համարվում էին սահմանափակ: Կարծիքներ էին հնչում, որ Հայաստանը սեփական ուժերով կարող է ազատագրել իրեն հատկացվելիք տարածքները:

Ռազմական գործողությունների մասին տեղեկությունները հասնում էին բավականին ուշ, հաճախ երկու շաբաթ (կամ 3-4 շաբաթ) ուշացմամբ: Առաջին պարտությունները ներկայացվում են որպես մարտավարական նահանջներ, ոչ թե ռազմական անհաջողություններ: Կարսի անկման մասին նշվում էր, որ այն տեղի է ունեցել միայն համառ կռիվներից հետո ու դրանում հիմնականում մեղավոր են բոլշևիկները:

Հետագայում ևս պատերազմում պարտության անխուսափելիությունը միանշանակ չի համարվում, կային հույսեր, որ հայկական բանակը հետ է նվաճելու կորցրած տարածքները: Այս տրամադրությունները, սակայն, աստիճանաբար սկսում են փոխարին-

վել պարտություններում մեղավորներ գտնելու ջանքերով, որոնք գերազանցապես միտված էին պատասխանատուներին ՀՀ իշխանություններից դուրս մատնանշելուն: Այդ իմաստով մեծ տեղ էր հատկացվում ռուս-թուրքական համագործակցությանը: Սակայն առանձնակի հետևողականությամբ «Հայրենիքը» դատափետում է հայ բոլշևիկներին: Սուր քննադատությունից չեն խուսափում նաև ՀՀ դաշնակից արևմտյան պետությունները:

Պատերազմի իրադարձությունները մեծապես ազդում էին ներքաղաքական պայքարի վրա: Մասնավորապես «Հայրենիքը» քննադատում էր իր ընդդիմադիրներին՝ ասելով, որ ՀՅԴ-ն ու ՀՀ կառավարությունը արել են ամեն հնարավորը, ողբերգական իրադարձությունների պատճառները արտաքին են, իսկ իրենց հասցեին մեղադրանքներ հնչեցնողները ոչ թե իշխանության, այլ անկախ պետության դեմ են:

Կան մի շարք ուշագրավ ասեկոսեներ, որոնք տեղ են գտել «Հայրենիքի» էջերում ու թույլ են տալիս առավել ամբողջական պատկերացում կազմել ամերիկահայ համայնքում պատերազմի ժամանակ գոյություն ունեցող տեղեկացվածության մասին: Ասեկոսեները վերաբերում են տասը հայ բոլշևիկների, որոնք կռվելիս են եղել թուրքական զորքերի հետ ու գերի վերցվել հայերի կողմից, Երևանը թուրքերի կողմից գրավելուն: Ամենահետաքրքիր ու համառորեն սփյուռքահայ տարբեր օրգաններում շրջանառված տեղեկությունը վերաբերում է Կարսի վերագրավմանը հայերի կողմից:

Հայաստանի խորհրդայնացումը «Հայրենիքը» նույնացնում է միացմանը Ռուսաստանին ու քննադատում հաստատված կարգերը:

Պարտության պատճառների մասին խոսելիս հիմնական շեշտադրումը արվում էր Խորհրդային Ռուսաստանի կողմից Թուրքիային տրամադրված օժանդակության վրա: Կառավարության սխալների վերլուծության, ըստ էության, չենք հանդիպում: Պատերազմից հետո էլ կային իրատեսությունից դուրս վերլուծություններ ու հույսեր, որ Սևրի պայմանագիրը կիրագործվի: Ընդհանուր

առմամբ, սակայն պատերազմի հիմնական հետևանքը հասարակական տրամադրություններում խիստ հիասթափությունն էր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. 12 զաւակները կորսնցուցած 60-ամեայ կամաւոր մը, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920:
2. Ալէքսանտրօպոլ վերագրաւուած, «Հայրենիք», Բոստոն, 24.11.1920:
3. Ամուր պահենք մեր սրտերը, «Հայրենիք», Բոստոն, 25.11.1920:
4. Անկախութեան ոգին, «Հայրենիք», Բոստոն, 19.12.1920, էջ 2:
5. «Ապրի Գարապէքիրը», «Հայրենիք», Բոստոն, 01.12.1920:
6. Արագ յառաջխաղացողութիւն զօրքը հրաշքներ կը գործէ Նախիջեւանի շրջանին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 21.08.1920:
7. Արագ, Փարիզեան նամականի (Սեփական թղթակցութիւն) Հակադաշնակցական արշաւը.- Պօղոս Նուպար քօմիւնիսթ (?), «Հայրենիք», Բոստոն, 20.01.1921:
8. Արտաշէս Վանարեան, Ինչո՞ւ դիմադրեց եւ ինչո՞ւ նահանջեց հայ բանակը, «Հայրենիք», Բոստոն, 19.11.1920, էջ 1:
9. Արտաշէս Վանարեան, Ինչո՞ւ դիմադրեց եւ ինչո՞ւ նահանջեց հայ բանակը Հայաստանի կառավարութեան դիրքը պոլշեւիզմի հանդէպ II, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920:
10. Արտաշէս Վանարեան, Ինչո՞ւ դիմադրեց եւ ինչո՞ւ նահանջեց հայ բանակը Հայաստան ինչո՞ւ չընդունեց պոլշեւիզմը III, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920:
11. Արտաշէս Վանարեան, Սովիէթական Հայաստանը եւ անոր ուշ մնացած ջատագովները I, «Հայրենիք», Բոստոն, 24.12.1920:
12. Արտաշէս Վանարեան, Սովիէթական Հայաստանը եւ անոր ուշ մնացած ջատագովները II, «Հայրենիք», Բոստոն, 29.12.1920:
13. Արեւելքի դուռը բացուած, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920:
14. Արմենակ Մելիքեան, Օրուան կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920:
15. Գ. Քէպապեան, Հայաստանը եւ Սէվրի դաշինքը I, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920:
16. Գ. Քէպապեան, Հայաստանը եւ Սէվրի դաշինքը II, «Հայրենիք», Բոստոն, 28.10.1920:

17. Դաշնակիցներու դիրքը հանդէպ Հայաստանի, «Հայրենիք», Բոստոն, 12.11.1920:

18. Դէպի Սարդարապատ, «Հայրենիք», Բոստոն, 21.11.1920:

19. Եդուարդ Սահակեան, Նոր կացութիւնը I ինչպէս սկսաւ, «Հայրենիք», Բոստոն, 29.12.1920:

20. Եդուարդ Սահակեան, Նոր կացութիւնը III ինչպէս սկսաւ, «Հայրենիք», Բոստոն, 1.1.1921:

21. Եդուարդ Սահակեան, Նոր կացութիւնը VII Լուսաւոր ապագան, «Հայրենիք», Բոստոն, 13.01.1921:

22. Երեւան վտանգի տակ, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920:

23. Զանգիպասարի ճոխ աւարը, «Հայրենիք», Բոստոն, 12.08.1920:

24. Զինադադարի պայմանները Սեփական հեռագիր «Հայրենիք»ի, «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920:

25. Զինուոր մը կը պարզէ լքումի պատճառները, «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921:

26. Զինուորական կացութիւնը. Ոյժերու կշիռ, ենթադրութիւններ եւ հաւանականութիւններ, «Հայրենիք», Բոստոն, 19.10.1920:

27. Զինուորական կացութիւնը Ոյժերու կշիռ, ենթադրութիւններ եւ հաւանականութիւններ (շար. երեկուան թիւէն եւ վերջ), «Հայրենիք», Բոստոն, 20.10.1920:

28. Թշնամին իր կրունկներուն վրայ, «Հայրենիք», Բոստոն, 01.12.1920:

29. Թրքական յառաջխաղացքը կ՚ընթանայ յամրաբար Սարըխամիշ պարպուած հայերէն Ընդհանուր զօրակոչ Հայաստանի մէջ Մուսավաթիսթները կը մերժեն գործակցիլ թուրքերուն, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920:

30. Թուրքերը Երեւան կը մտնեն?, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920

31. Թուրքերը զինադադար կը խնդրեն Կարս վերագրաւուած հայկ. ոյժերուն կողմէ (սեփական հեռագիր «Հայրենիքի»), «Հայրենիք», Բոստոն, 28.11.1920:

32. Թուրքերը կը պարտուին Իկտիրի վճռական կռուին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 05.11.1920:

33. Թուրքերը վերջնագիր կուտան Հայաստանի Հայաստանէն կը պահանջուի ճանչնալ Թուրքիոյ գերիշխանութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920:

34. Թուրքերն ու պոլշեւիկները կը գործակցին հայկ. բանակին դէմ, «Հայրենիք», Բոստոն, 14.10.1920:

35. Ի՞նչպէս ինկաւ Կարսը (Անկումէն առաջ եւ վերջը), «Հայրենիք», Բոստոն, 12.12.1920:

36. Ինչպէս խաբեցին հայկական զօրքը, «Հայրենիք», Բոստոն, 19.01.1921:

37. Լուրեր Հայաստանէն, «Հայրենիք», Բոստոն, 25.12.1920:

38. Խաղաղութիւն կնքուած Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ, «Հայրենիք», Բոստոն, 11.12.1920:

39. Խատիսեանի զեկոյցը առեւտրական դասուն, «Հայրենիք», Բոստոն, 3.08.1920:

40. Խմբագրական. Ախտաւոր երեւոյթներ, «Հայրենիք», Բոստոն, 13.02.1921:

41. Խմբագրական. Աղմկարարները գործի վրայ, «Հայրենիք», Բոստոն, 15.12.1920:

42. Խմբագրական. Եղերամայրերը, «Հայրենիք», Բոստոն, 12.1.1921:

43. Խմբագրական. Երկու տարուան ընթացքին, «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920:

44. Խմբագրական. Թուրքերը Արեւելքի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 04.12.1920:

45. Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները II, «Հայրենիք», Բոստոն, 21.01.1921:

46. Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները III, «Հայրենիք», Բոստոն, 22.01.1921:

47. Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները IV, «Հայրենիք», Բոստոն, 23.01.1921:

48. Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները V, «Հայրենիք», Բոստոն, 25.01.1921:

49. Խմբագրական. Ըմբռնենք իրողութիւնները VI, «Հայրենիք», Բոստոն, 26.01.1921:

50. Խմբագրական. Կանգնեցէք ժողովուրդին կողքին, «Հայրենիք», Բոստոն, 18.12.1920:

51. Խմբագրական. Հայ ժողովուրդին պատերազմը եւ եւրոպական դիւանագիտութիւնը I, «Հայրենիք», Բոստոն, 17.10.1920:

52. Խմբագրական. Հայ պոլշեւիկները հայ հակապետականները, «Հայրենիք», Բոստոն, 13.01.1921:

53. Խմբագրական. Հայաստանի կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 16.11.1920:

54. Խմբագրական. Հայաստանի պատերազմը, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920:

55. Խմբագրական. Հայկ. կառավարութիւնն ու ռուս պոլշեւիզմը, «Հայրենիք», Բոստոն, 7.10.1920:

56. Խմբագրական. Հայկական Բանակին վերջին յաղթանակները, «Հայրենիք», Բոստոն, 24.08.1920:

57. Խմբագրական. Հայկական հարցի ծանրութեան կեդրոնը, «Հայրենիք», Բոստոն, 08.02.1921:

58. Խմբագրական. Մեր Ազատագրութեան Ներքին թշնամիները IV, «Հայրենիք», Բոստոն, 19.09.1920:

59. Խմբագրական. Մեր գործնական քաղաքականութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 30.01.1921:

60. Խմբագրական. «Մուսթաֆա եղբայրդ է գալիս», «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921:

61. Խմբագրական. Ներկայ օրերու մեհրուժանները, «Հայրենիք», Բոստոն, 17.11.1920:

62. Խմբագրական. Նոր կացութեան առջեւ II, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920:

63. Խմբագրական. Պատմութեան համար, «Հայրենիք», Բոստոն, 08.12.1920:

64. Խմբագրական. «Պոլշեւիկ Հայաստան», «Հայրենիք», Բոստոն, 7.1.1921:

65. Խմբագրական. Պոլշեւիկեան ճամարտակութիւններ, «Հայրենիք», Բոստոն, 4.1.1921:

66. Խմբագրական. Ռուս պոլշէվիկները բարեկամ թրքական աւազակապետութեան, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920:

67. Խմբագրական. Վերանկատումներ III, «Հայրենիք», Բոստոն, 11.12.1920:

68. Խմբագրական. Տրապիզոնի եւ Խարբերդի անհրաժեշտութիւնը Հայկական Հանրապետութեան համար, «Հայրենիք», Բոստոն, 22.09.1920:

69. Կամաւոր Պուլկար սպաներ հայկ. բանակին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 28.12.1920:

70. Կարմիր ռէժիմը Հայաստանի մէջ Ամերիկայի դիրքը անփոփոխ կը մնայ հանդէպ Հայաստանի (Մասնաւոր հեռագիր «Նիւ Եօրք Թայմզի»), «Հայրենիք», Բոստոն, 30.11.1920:

71. Կարս ինկած, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920:

72. Կարսը պարպուած.- կացութիւնը բաղդորոշ Հայաստանի եւ Վրաստանի համար.- Հաճընի անկումը հաստատուած (Սեփական հեռագիր «Հայրենիքի»), «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920:

73. Կարսի վերագրաւումը կը հաստատուի քէմալական բանակը ծանր կորուստներու մատնուած 7,000 թուրքեր մեռած ցուրտէն, «Հայրենիք», Բոստոն, 02.12.1920:

74. Կացութիւնը Հայաստանում, «Հայրենիք», Բոստոն, 24.02.1921:

75. Հազարաւոր հայ փախստականներ կ՚ապաստանին Վրաստան Երեւան պարպուած?, «Հայրենիք», Բոստոն, 18.11.1920:

76. Հալածանք նախորդ կառավարութեան անդամներուն եւ հակապօլշեւիկ տարրերու դէմ «Ըրէք ինչ որ կ՚ուզէք այստեղ, Հայաստանի մէջ», «Հայրենիք», Բոստոն, 22.01.1921:

77. Համաժողովրդական ցոյց, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920:

78. Հայ ժողովուրդը կը պատժէ դասալիքները, «Հայրենիք», Բոստոն, 13.01.1921:

79. Հայ պօլշեւիկները եւ Խատիսեան, «Հայրենիք», Բոստոն, 14.01.1921:

80. Հայ պօլշեւիկները կը զղջան եւ անձնատուր կ՚ըլլան, «Հայրենիք», Բոստոն, 09.12.1920:

81. Հայ սաւառնակներ Նօվօ Սէլիմի վրայ, «Հայրենիք», Բոստոն, 11.11.1920:

82. Հայ-Թրքական Դաշնագիրը Ստորագրուած Ահարոնեան կ՚ստորագրէ Հայաստանի Հանրապետութեան կողմէն, «Հայրենիք», Բոստոն, 15.08.1920:

83. Հայաստան եւ իր դրացիները Հայրենիքը պէտք ունի իր բոլոր զաւակներուն Ձօրքը մեր յոյսերուն կռուանն է, «Հայրենիք», Բոստոն, 5.08.1920:

84. Հայաստան ինչպէս որ է (հայու մը տպաւորութիւնները), «Հայրենիք», Բոստոն, 9.10.1920:

85. Հայաստան խաղաղութիւն կը կնքէ Ռուսիոյ հետ, «Հայրենիք», Բոստոն, 15.08.1920:

86. Հայաստան կը մերժէ թրքական վերջնագիրը, «Հայրենիք», Բոստոն, 20.11.1920:

87. Հայաստան կցուած է Ռուսիոյ, կ՚ըսէ հայ զօրավար մը Մասնաւոր հեռագիր Պօսթըն Իվնինկ Թրէնսքրիփթի, «Հայրենիք», Բոստոն, 25.02.1921:

88. Հայաստան-Պարսկաստան ճամբան կը հարթուի, «Հայրենիք», Բոստոն, 25.08.1920:

89. Հայաստանը ինչպէս խորհրդային դարձաւ, «Հայրենիք», Բոստոն, 19.02.1921:

90. «Հայաստանը ուժասպառ է, բայց կը շարունակէ կռուիլ», «Հայրենիք», Բոստոն, 05.10.1920:

91. Հայաստանի բանակը նախանձելի վիճակ մը կը ստանայ, «Հայրենիք», Բոստոն, 02.09.1920:

92. Հայաստանի դէմ սարքուած կռիւը Հայրենասիրական բուռն ցոյցեր Անթիւ կամաւորներ, ծեր թէ երիտասարդ, կը դիմեն դէպի ճակատ, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920:

93. Հայաստանի զինուորական կացութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 14.10.1920:

94. Հայաստանի կացութիւնը մտահոգիչ Մոսկուայի եւ քէմալականներու յարաբերութիւնները ձգտուած, «Հայրենիք», Բոստոն, 04.12.1920:

95. Հայաստանի համար չկար փրկութեան ուրիշ միջոց, «Հայրենիք», Բոստոն, 11.12.1920:

96. Հայաստանի Հանրապետութեան կողքին կանգնողները Ա., «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921:

97. Հայաստանի վերջին անցուդարձերը, «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921:

98. Հայեւթուրք հաշտութեան ժողովը սկսած է նոյ. 25-ին Ալէքսանդրապոլի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921:

99. Հայկ. յաղթանակներ թուրքերու դէմ Կարսի ճակատին վրայ դրութիւնը նպաստաւոր Պոլշէվիկները ետ մղուած Զանկեզուրի մէջ (Սեփական հեռագիր «Հայրենիքի»), «Հայրենիք», Բոստոն, 06.11.1920:

100. Հայկական բանակը հակայարձակման կը դիմէ, «Հայրենիք», Բոստոն, 26.10.1920:

101. Հայկական բանակը պարտութեան կը մատնէ թուրքերը, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920:

102. Հայկական զօրագունդեր կը գրաւեն Օլթին, «Հայրենիք», Բոստոն, 1.08.1920:

103. Հայկական զօրակոչ Վրաստանի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 11.11.1920:

104. Հայկական մեծ յաղթանակ. հազարաւոր թուրքեր սպանուած, «Հայրենիք», Բոստոն, 30.10.1920:

105. Հայկական նոր յաղթանակներ, «Հայրենիք», Բոստոն, 11.08.1920:

106. Հայկական նոր յաղթանակ Նախիջեւանի ճամբուն վրայ, «Հայրենիք», Բոստոն, 21.08.1920:

107. Հայութեան տականքները, «Հայրենիք», Բոստոն, 23.10.1920:

108. Հաշտութիւն Պրէսթ-Լիթովսքի դաշնագրին սահմաններով?, «Հայրենիք», Բոստոն, 01.12.1920:

109. Հեռու մեզմէ յուսահատութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 16.12.1920:

110. Մերուժան Օզանեան, Արարատեան նամականի Օլթիի յաղթանակը, «Հայրենիք», Բոստոն, 28.09.1920:

111. Յ. Ա., Պոլսական նամականի Դաշնագրի ստորագրութենէն յետոյ, «Հայրենիք», Բոստոն, 12.09.1920:

112. Յ. Ամատունի, Պոլշեւիկ-Իթթիհատ համաձայնութիւնը Յարձակում Հայաստանի վրայ, «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920:

113. Յ. Ամատունի, Պոլշեւիկ-Իթթիհատ համաձայնութիւնը II, «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920:

114. Յ. Ասպետ, Աթոռամարտ, «Հայրենիք», Բոստոն, 27.10.1920:

115. Յունաստան զինուորական գործողութեանց սկսած երկու յունական զօրաբաժին Տրապիզոն ցամաք հանուած Վրաստան Հայաստանի հետ դաշնակցելու կողմնակից, «Հայրենիք», Բոստոն, 14.10.1920:

116. Յօնքը շինելու տեղ աչքը չհանենք, «Հայրենիք», Բոստոն, 17.08.1920:

117. Ն. Աղպալեան կը խօսի, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920:

118. Նախիջեւանի գրաւումը, «Հայրենիք», Բոստոն, 05.09.1920:

119. Նեռ, Արեւելքի նոր կնճիռները, «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921:

120. Նեռ, Հայաստանի կացութիւնը ընդհանուր պայքարին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 19.01.1921:

121. Նէտ, Հայաստանի վերջին անցքերը եւ Պոլսոյ Ազգ. իշխանութիւնները, «Հայրենիք», Բոստոն, 13.02.1921:

122. Նոր դրութիւնը Հայաստանում Զինուորական անկման պատճառները, «Հայրենիք», Բոստոն, 29.01.1921:

123. Նպաստամատոյցը կը տարակուսի ստացուած լուրերու ստուգութեանը, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920:

124. Ողջերթի սեղան մը ի պատիվ Հայաստանի անդրանիկ նախարարապետ Յովի. Քաջազնունիի եւ Վեհ. Կաթողիկոսի լիզօր Խորէն սրբազանի, «Հայրենիք», Բոստոն, 17.08.1920:

125. Պ. Ահարոնեանի Յայտարարութիւնները, «Հայրենիք», Բոստոն, 21.09.1920:

126. Պ. Գ. Չալխուշեանի յայտարարութիւնները, «Հայրենիք», Բոստոն, 23.12.1920:

127. Պ. Խատիսեան կը պատասխանէ հարցումներու հայ առեւտրականներու ժողովին մէջ, «Հայրենիք», Բոստոն, 4.08.1920:

128. Պաշարման վիճակ՝ Կարսի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 05.11.1920:

129. Պատերազմական գործողութիւնները (Թղթակցութիւն «Ճակատամարտ»ի), «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920:

130. Պատերազմը սկսած Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ Հայերը կը պարպեն Կաղզուանն ու Սարըխամիշը Թուրքերը եւ մղուած Նօվօ Սէլիմի մօտ (Սեփական հեռագիր «Հայրենիք»ի), «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920:

131. Պետրոս Քէհեսեան, Նոր փոփոխութիւններու նախօրեակին, «Հայրենիք», Բոստոն, 26.02.1921:

132. Պետութեանց դիրքը հանդէպ Հայաստանի, «Հայրենիք», Բոստոն, 14.11.1920:

133. Պոլսոյ հայերը Հայաստանի նախագահ ընտրել կ՚ուզեն Վէնիզէլոսը, «Հայրենիք», Բոստոն, 28.11.1920:

134. Պոլշեւիկ զինուորներ Խրիմէն Կովկաս կ՚անցնին, «Հայրենիք», Բոստոն, 10.11.1920:

135. Պոլշեւիկեան ռէժիմ Հայաստանի մէջ վիճելի հողամասերը կը տրուին Հայաստանի, «Հայրենիք», Բոստոն, 07.12.1920:

136. Պոլսական նամականի Կարսի անկումը.- ժողովրդական յուզում Պոլսոյ մէջ.- դարձեալ յիշատակագիր, «Հայրենիք», Բոստոն, 12.12.1920:

137. Ռուս պոլշեւիկները կը գրաւեն Նօվօ-Պայազիտը (Մասնաւոր հեռագիր «Շիքակօ Տէյլի Նիւզ»ի), «Հայրենիք», Բոստոն, 26.10.1920:

138. ՍԴ Հնչակեաններու ժողովը Թիֆլիսի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 16.01.1921:

139. Սէվրի դաշնագրութիւնը, «Հայրենիք», Բոստոն, 05.11.1920:

140. Սովիէթական Հայաստանի մէջ, «Հայրենիք», Բոստոն, 09.02.1921:

141. Վահան Համբարձումեան, Ալէքսանդրապօլի պայմանագիրը, «Հայրենիք», Բոստոն, 25.02.1921:

142. Վահէ Արծրունի, Հայրենի լուրեր VI Մեր նոր նշանաբանը, «Հայրենիք», Բոստոն, 26.10.1920:

143. Վերջին լուր յաղթանակներ Հայաստանի մէջ Ալէքսանդրապօլէն վերջ Կարսն ալ վերագրաւուած՝ մեր բանակներուն կողմէ, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920:

144. Վրացական յաղթանակներ.- հակապօլշեւիկ կառավարութիւն՝ Երեւանի մէջ.- հայերը ըմբոստացած, «Հայրենիք», Բոստոն, 24.02.1921:

145. Վրացեանի դահլիճին յայտարարութիւնը խորհրդարանին առջեւ, «Հայրենիք», Բոստոն, 8.1.1921:

146. Տաճկական ներխուժումը, «Հայրենիք», Բոստոն, 22.12.1920:

147. Տեսակցութիւն մը Սեպուհի հետ Զօր. Սեպուհ «Ճակատամարտի» Թիֆլիսի թղթակցին հետեւեալ յայտարարութիւններն ըրած է, «Հայրենիք», Բոստոն, 08.02.1921:

148. Տօքթ. Փ. Ա. Ադամեան, Հայ հերոսական բանակին, «Հայրենիք», Բոստոն, 14.12.1920:

149. Տօքթ. Փ. Ա. Ադամեան, Հայաստանի Հանրապետության կողքին կանգնողները Զ. Մեր ասպետական դաշնակիցները զինադադարի ընթացքին, «Հայրենիք», Բոստոն, 15.02.1921:

150. Քաղաքական մոմենտը եւ մեր արտաքին քաղաքականութիւնը Արեւելքի եւ Արեւմուտքի բաղծումը արեւելեան երկրամասերում.- Արեւելքի հիմնական երկու խոշոր ոյժերը- կոմունիզմ եւ պանթուրանիզմ.- Նրանց գրկախառնումը Հայաստանում.- Եւ այդ փորձալից ժամին մեր արտաքին քաղաքականութեան ուղեգիծը: II, «Հայրենիք», Բոստոն, 24.11.1920:

151. Քեազիմ Գարապէքիր կը յարձակի Հայաստանի վրայ Հայաստանի բանակին հերոսական դիմադրութիւնը (սեփական հեռագիր), «Հայրենիք», Բոստոն, 10.10.1920:

152. Քէմալական շարժման վախճանը մօտալուտ, «Հայրենիք», Բոստոն, 08.09.1920:

153. Քօալիսիօն կառավարութիւն Վրացեանի նախագահութեամբ Կարսի վերագրաւումը չի հաստատուիր (Սեփական հեռագիր), «Հայրենիք», Բոստոն, 03.12.1920:

154. Ֆրանսա եւ Իտալիա հակառակ Պոնտոսի յունական արշաւանքին Տրապիզոնի սահմանուած հելլէն ոյժերը Իզմիտի ցամաքը կը դառնան, «Հայրենիք», Բոստոն, 15.10.1920:

155. GLOBE, Թուրք պոլշեւիկեան խուժումը Հայաստան Հայ պոլշեւիկներ թուրք բանակին մէջ անօրինակ խանդավառութիւն Թիֆլիսի մէջ (Սեփական թղթակցութիւն), «Հայրենիք», Բոստոն, 13.11.1920:

156. GLOBE, Կարսի անկումը, «Հայրենիք», Բոստոն, 12.12.1920:

157. GLOBE, Ղարսից յետոյ, «Հայրենիք», Բոստոն, 14.01.1921:

158. H. Albertus, Նպաստաւոր երեւոյթներ, «Հայրենիք», Բոստոն, 27.11.1920:

Тигран Ганаланян

Освещение турецко-армянской войны 1920 года в бостонской ежедневной газете "Айреник"

Ключевые слова: *Армения, Турция, война, вооруженные силы, Советская Россия, пресса, падение Карса, армянская община США*

Освещение турецко-армянской войны 1920 года в бостонской газете «Айреник» позволяет составить приблизительное представление о том, какой информацией располагали американские армяне о военных действиях в данный период времени. Самое интересное – это анализы и комментарии. Они показывают, какими были настроения среди членов партии АРФД в США.

Негативные последствия войны часто пытаются объяснить только внешними факторами, отмечая, что правительство РА сделало все возможное, чтобы предотвратить поражение. Обращает на себя внимание переоценка собственных сил и недооценка сил противника. В рассматриваемых публикациях большое количество занимает критика в адрес оппозиционных АРФД партий.

Наиболее заметные статьи посвящены ложной информации. Особо примечательно обстоятельство возвращения Карса армянами. Распространяются сведения о пленении армянских большевиков сражавшихся на стороне Турции.

Tigran Ghanalanyan

Coverage of the Turkish-Armenian war of 1920 in the Boston daily newspaper "Hayrenik"

Keywords: *Armenia, Turkey, war, armed forces, Soviet Russia, press, fall of Kars, Armenian community in the USA*

An analysis of the coverage of the 1920 Turkish-Armenian war in the Boston-based "Hairenik" daily newspaper provides insights into the information available to Armenian-Americans regarding military operations during that era. The analyses and commentaries are of particular interest. The articles demonstrate the prevailing sentiments among Armenian-American Dashnaks.

There are frequent attempts to explain the negative consequences of the war solely by external factors. These attempts note that the government of the Republic of Armenia did everything possible to prevent defeat. It is notable that there is a tendency to overestimate one's own forces and to underestimate the opponent. A significant proportion of the publications in question are devoted to the criticism of parties that are opposed to the ARF (Armenian Revolutionary Federation).

The most noteworthy articles relate to the dissemination of false information. One particularly notable example is the recapture of Kars by Armenians. Information is circulated about the capture of Armenian Bolsheviks who were fighting on the Turkish side.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

1920 Թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Գիտական հոդվածների ժողովածու

Հրատ. պատ. խմբագիր՝ Լ. Հովհաննիսյան
Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Խմբագիր՝ Մ. Հովհաննիսյան

Կազմողները հաստատում են, որ ծանոթ են «ԵՊՀ գրահրատարակչական քաղաքականությանը», և գրքում առկա փաստերը, դիրքորոշումները, կարծիքները շարադրված է հեղինակային իրավունքի և էթիկայի միջազգայնորեն ընդունված սկզբունքների պահպանմամբ:

Ստորագրված է տպագրության՝ 05.09.2024:
Չափսը՝ 60x84 1/16: Տպ. մամուլը՝ 14.875:
Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.ysu.am